ՊՐՈՖ. ԴՈՔ Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՆՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՌԱՋԱԲԱՆ

Անանիա Շիրակացին հայ մաաենագրության վեպչուն գեմքերից մեկն է: Նա իրավամբ համարվում է թվաբանության, տիեզերագիտության և տոմարագիտության հիմնադիրը հայոց մեջ: V դարի ոսկեդարնեկ հայ մատենագրերից հետո, դրական դիտությունների գծով, համարձակ կարելի է ասել, որ նա ամենախոշոր հեղինակն է հայ իրականության մեջ: Ինչպես որ Խորենացին անվիճելիորեն հայ պատմագրության հայրն է հանդիսանում, այնպես էլ Շիրակացին հայ դրական դիտությունների հայրն է:

Շիրակացու աշխատությունները անսպառ դանձարան են հանդիսացել դիտությամբ զբաղվող միջնադարյան բազմաթիվ հայ հեղինակների համար: Նրանք Շիրակացու աշխատությունների մեջ գտել են ժամանակի հուզող դիտական շատ ու շատ հարցերի պատասխանները: Ուստի և զարմանալի չէ, որ Շիրակացուց մեծ չափով օգտվել, երբեմն անգամ տատացի արտագրել են այնպիսի աչքի ընկնող հայ գիտնականներ, ինչպիսին՝ Կոգեռն է, Գրիգոր Մագիստրոսը, Հովհաննես Երզնկացին, Որոտնեցին, Տաթևացին և այլ հեղինակներ: Ինչպես որ Դիոնիսիոս Թրակացու քերականությունը հիմք է հանդիսացել միջնադարյան բազմաթիվ հայ քերականների մեկնությունների համար, այնպես էլ Շիրակացու Տոմարը, Թվաբանությունը և Տիեզերագիտությունը հիմք են հանդիսացել տոմարական, թվաբանական գիտություններով զբաղվող միջնադարյան հայ հեղինակների համար: Սխալված չենք լինի եթե անգամ ասելու լինենք, որ Շիրակացուց հետո հայերենով գրված տոմարական, տիեզերագիտական և թվաբանական աշխատությունների մեծ մասն, այս կամ այն չափով, մեկնություններ են կամ հասարակ վերարտադրություններ՝ Շիրակացու գիտական աշխատությունների:

Այս խոշոր և լուսամիտ հեղինակը, ցավալի է ասել, որ ըստ արժանույն չի գնահատվել ու մնացարվել ո՛չ ժամանակակիցների և ո՛չ էլ ուշ շրջանի հայ մատենագրների կողմից: Շիրակացին իր ինքնակենսագրության մեջ գանգատված գանգատվում է ժամանակակիցների անշնորհակալ վերաբերմունքի համար՝ դեպի իր գիտական-գրական աշխատությունները. «Եւ արդ՝—գրում է Շիրակացին—եւ տրուպս ի Հայաստանեաց ուսայ ի նմանէ (այսինքն Տյուքիկոսից—Ա. Ա.) հզօր արուեստս զոյս, որ թագաւորաց է ցանկալի եւ բերի յաշխարհս մեր՝ առանց ուրուք լինելոյ ձեռնտու, մինչեւ ցայսմ ժամու անձինս... Թէպէտ և ոչ ոք եղեւ շնորհակալ և մեծապաղ իմոյ աշխատութեան... (Ընդգծումն մերն է Ա. Ա.)»[1]:

---

[1] Մատենագրութիւնք Անանիայի Շիրակացւոյ, Ինքնակենսագրութիւն:

Ուշ շրջանի հայ մատենագիրները, որոնք հաճախ Շիրակացու աշխատությունների արտագրություններ են անում ամբողջ գլուխներով, ո՛չ միայն պահանջվող չափով չեն դնահատում և բարձրացնում Շիրակացուն, այլ և հաճախ երախտամոռությամբ լուռ են անցնում իրենց օգտված աշխատության հեղինակի անվան վրայով: Միակ մատենագիրը, որ հատուկ ուշադրություն է դարձրել Շիրակացու աշխատությունների վրա ու դնահատել նրանք,—հանդիսանում է XI դարի մեծ գիտնական Գրիգոր Մագիստրոսը: Նա Պետրոս Գետադարձ կաթողիկոսին գրած իր նամակում դայրացած դատապարտում է ժամանակակիցներին՝ նրանց անհոգ և անշնորհակալ վերաբերմունքի համար՝ դեպի մեծ գիտնական Շիրակացու աշխատությունները: «Սովորելով առատաստուր պարգևից, կարևորը և պիտանին ձեզ թողնելով—գրում է Մագիստրոսը Պետրոս Գետադարձ կաթողիկոսին—թուլ եմ տալիս խնդրել ձեզ, որ չդանդաղեցնես Անանիա Շիրակացու դործերը, որոնք մեծագործ աշխատությամբ թափառումներով և դեղերանքով հավաքել է նա բազմազան և բովանդակությամբ հարուստ մատյաններից... որը ձեղնից առաջ թողված էր անուշադրության և դրժանի տակ էր թաղցված... Շիրակացին՝ Շնորհելի իր լմացությամբ, փոշի հավաքող դրդամաևը մեղվի նման, իր մեղեղանոցն է ամբարել (նյութեր) քաղցեցվոց, հունաց և այլ ազգերի բովանդակալից մատյաններից...»[1]:

Հետաքրքիր է, որ հայ մատենագիրների կողմից Շիրակացու նկատմամբ ցուցաբերվող այս անուշադիր վերաբերմունքն առիթ է տվել հատարակ ժողովրդի շրջանում ստեղծել մի ավանդություն, ըստ որի Շիրակացին նկատելով ժամանակակիցների քշնամական վերաբերմունքը, հեռացել է հայրենիքից և իր կյանքի արևմտյան օտարության մեջն անցկացրել: Ղ. Ալիշանն իր «Հայ-վենետ.» աշխատության մեջ է բերել այդ ավանդությունը: «Անանիա Շիրակացին՝ դրված վենետիկ հայրենիքում իրեն ցույց տված վերաբերմունքից, հետանում է հայրենիքից: Վենետիկի թաղավորին նա առաջնեցնում է քիմիայի մեջոցով երկաթից ոսկի ստանալու դաղանիքը: Սակայն՝ երբ թաղավորը յուրացնում է այդ դաղանիքը, մտածում է սպանել Շիրակացուն: Բայց Շիրակացին խնդրում է իրեն չսպանել, այլ ոսկի դրամի երեսին իր նկարը քանդակել և դրանով նա բավարարված կլինի: Այդ պայմանի համաձայն յեղյզ ոսկեդրամի մեկ երեսին դրոշմած կնկոզով պատկերը Շիրակացունն է»[2]:

Շիրակացին պահանջված չափով չի դնահատվել և բարձրացվել նոր ժամանակներում էլ: Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանները, Իմմանեանի և Երուսաղեմի մի շարք քանասեր միաբաններ, Ռուսաստանի և Եվրոպայի օրիենտալիստ-հայագետները, որոնք վիթխարի և անդնահատելի աշխատանք են կատարել հայ մատենագրությունն ուսումնասիրելու, նրանց տեքստերը հրատարակելու և, ընդհանրապես հայ կուլտուրան համաշխարհային դիտության ներկայացնելու ուղղությամբ, հարկ եղած չափով ուշադրություն չեն դարձրել հայ մատենագրության այս խոշոր և լուսամիտ հեղինակի վրա: Բավական է թեկուզ մատնացույց անել այն փաստը, որ գրեթե հայ մատենագրերի երկերն ամբողջությամբ հրատարակված են, որոշ

---

1) Գրիգոր Մագիստրոսի թղթերը՝ հրատ. Կ. Կոստանյանցի, Ակնթալ, 1910 թ., էջ 8:
2) Ղ. Ալիշան, «Հայ-վենետ», Վենետիկ 1896 թ. էջ 191, (մեջ բերումը գրաբարից թարգմանված է):

մատենագրեր հրատարակված են մի քանի անգամ (կան և հայ մատենագրեր, որոնք ունեցել են տասնյակ հրատարակություն, այսպես, օրինակ, Եղիշեն ունեցել է 49 հրատարակություն, Նարեկացին 30 հրատարակություն և այլն), սակայն Շիրակացու աշխատությունների մեծ մասը դեռևս մնում է չհրատարակված վիճակում:

Չնայած հայագիտության մեջ Շիրակացու նկատմամբ դոյություն ունեցող այս ընդհանուր բացասական վերաբերմունքին, սակայն եղել են առանձին գիտնականներ, որոնք զբաղվել են Շիրակացու երկերի ուսումնասիրությամբ:

Հատկանշական է, որ Շիրակացու աշխատություններով զբաղվող և այդ աշխատություններն այս կամ այն կողմնակցությամբ հրատարակող գիտնականների ցանկումն են հայագիտության մեջ մեծ անուն և համարում ունեցող գիտնականների անունները: Այդ գիտնականների շարքումն են օրինակ՝ աղբյուրագետ Հ. Ալիշանյանը, պրոֆ. Ֆ. Պատկանյանը, բանասեր Բ. վ. Սարգիսյանը, բանասեր Գ. Տ.-Մկրտչյանը և պրոֆ. Քոնիբեարը: Այսպես՝ Հ. Ալիշանյանն իր «Բացատրութիւն հաւատոց եւ կրօնից նախնեաց առաջնորդութեամբ Եկեղեցւոյ Տրդնացւոյ և Շիրակացւոյ»[1] աշխատության մեջ առաջին անգամ հրատարակել է Շիրակացու չափ ու կշռների տեքստը: Պրոֆ. Ֆ. Պատկանյանը կազմել և հրատարակել է Շիրակացու մի քանի աշխատությունների ժողովածուն՝ «Անանիայի Շիրակունւոյ մնացորդք բանից» խորագրով[2]: Ժողովածուի մեջ մտնում են Շիրակացու հետևյալ աշխատությունները՝ 1) «Որպիսութիւն կենաց», 2) Հայտնութեան ճառը, 3) Զատկի ճառը, 4) Չափ ու կշռների տեքստը, 5) «Քարդադս երկնի» տեքստը և 6) Աստղաբաշխությունը: Բանասեր Գ. Տ. Մկրտչյանը «Արարատ» հանդեսում հրատարակել է Շիրակացու «Ցաղդադս հարցմանն և լուծմանն», «Ցաղդադս ամպոց և նշանաց» և «Ցաղդադս չորքատրութեանն երկնից» աշխատությունները[3]: Բանասեր Բ. վ. Սարգիսյանը հրատարակել է Շիրակացու ժամանակագրությունը՝ «Անանուն ժամանակագրութիւն համարեալ յօրինեալ յէ դարուս» վերնագրով[4]: Անգլիացի խոշոր գիտնական Քոնիբերն անգլերեն է թարգմանել և հրատարակել Շիրակացու Հայտնության և Զատկի ճառերը «The Expositor»-ի և «Byz. Zeitschrift»-ի մեջ[5]: Համեմատաբար, շատ է հրատարակվել Շիրակացու «Աշխարհացոյց»-ը:

Շիրակացու աշխատությունների խոր ուսումնասիրությունը և արժեքավորումը մեծապես կապված է հայագիտության սովետական շրջանի հետ: Ուսումնասիրության այս շրջանը բացվում է ակադ. Հ. Օրբելու 1918 թ. Լենինգրադում հրատարակած «Вопросы и решения»[6] աշխատությամբ (Շիրակացու «Հարցմունքներ»-ի ռուսերեն թարգմանությունը), ուր ակադ. Հ. Ա. Օրբելին իր այդ աշխատության մեջ, բացի բովանդակալից դրած առաջաբանում, արել է տեքստի անդամահատման հետ կապված արժեքավոր կռահումներ, որոնք, ինչպես հետո կտեսնենք, մեծ չափով նպաստավոր եղան Շիրակացու տեքստերի ուսումնասիրության գործում:

---

1) Հրատարակվել է Վենետիկում 1821 թ. Մխիթարյան միաբանության տպարանում:
2) Հրատարակվել է Պետերբուրգում 1877 թ. Կայսերական գիտությանց ճեմարանում:
3) Տես «Արարատ» հանդեսի 1896 թ. համարները:
4) Հրատարակվել է Վենետիկում 1904 թ. Մխիթ. միաբանութ. տպարանում:
5) Տես «The Expositor» 1896, pp 311-337 և «Byz. Zeitschrift» 1897, էջ 572—584:
6) И. А. Орбели, Вопросы и решения, Петроград 1918 г.

Վերջին շրջանում Տիրակացու հրատարակված աշխատություններից առանձնապես աչքի են ընկնում ակադ. Հ. Մանանդյանի «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում»[1] և «Մորենացու առեղծվածի լուծումը»[2] աշխատությունները: Առաջին աշխատության մեջ Հ. Մանանդյանը գիտական մեծ հմտությամբ վեր է հանել Տիրակացու չափական աշխատությունների արժեքը հին Արևելքի պատմության մեջ և բազմաթիվ ուղղումներ առաջարկել Տիրակացու կշիռների և չափերի աղյուսում: Երկրորդ աշխատության մեջ ակադ. Հ. Մանանդյանը քննության է առել Մորենացու և Տիրակացու հետ կապված մատենագրական մի շարք հարցեր: Զնայած ակադ. Հ. Մանանդյանին այսօրեղ «Աշխարհացույցի»-ի հեղինակի հարցում եկել է մանդամայն սխալ եզրակացության, սակայն նրա քննած հարցերը, ըստ էության, մեծ չափով օգտակար եղան «Աշխարհացույց»-ի հեղինակի հարցի պարզաբանման համար և առաջ մղեցին Տիրակացու աղբյուրների ուսումնասիրությունը:

Տիրակացու աշխատությունների հիման վրա կատարված ուսումնասիրություններից առանձնապես դնահատելի է պրոֆ. Մկրտչեան-Բիկի «К истории точных наук в Армении и Грузии» աշխատությունը, ուր հեղինակը գիտական մեծ բարեխղճությամբ ցույց է տվել Տիրակացու չափերի և քվարանական խնդիրների մեծ արժեքը հայ և վրաց ժողովուրդների գիտության և կուլտուրայի պատմության համար:

Տիրակացու աշխատությունների վերջին տարիներում կատարված ուսումնասիրություններից աչքի են ընկնում հատկապես դոց. Ա. Մովսիսյանի «Հայտիվը պլրոցի ծագումը»[3] և «Ա. Տիրակացին որպես մանկավարժ»[4] աշխատությունները, ուր նա բարեխիղճ աշխատանք է կատարել Տիրակացու պլրոցը, նրա կատարած մանկավարժական մեթոդը և այլ հարցեր պարզաբանելու ուղղությամբ:

Եվ, վերջապես, Տիրակացու աշխատություններն, ըստ իրենց մասնագիտությունների, երկար ժամանակ է ինչ ուսումնասիրում են և արժեքավոր աշխատանք են կատարել՝ պրոֆ. Լ. Մեմյոնովը, հանգուցյալ պրոֆ. Ս. Հայրապետյանը և դոց. Հ. Թումանյանը: Պրոֆ. Լ. Մեմյոնովը ռուսերեն է թարգմանել մեր հրատարակած «Տիրակացու Տիեզերագիտությունը և տոմարը»-ը: Նա, որքան մեզ հայտնի է, մեծ ուշ է հատկացրել նաև Տիրակացուն՝ իր կազմած հայ տոմարի և ադադաբաշխության պատմության մեջ[5]: Հանգուցյալ պրոֆ. Ս. Հայրապետյանն ուսումնասիրել է Տիրակացու պլրոցը և նրա կիրառած մանկավարժական մեթոդը[6]: Դոց.

---

1) Հ. Մանանդյան, Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում, Երևան 1930 թ.:

2) Տես նույնի «Մորենացու առեղծվածի լուծումը», Երևան 1934 թ.:

3) Ա. Մովսիսյան, Հայտիվը պլրոցի ծագումը և նրա հետագա վիճակը (տես Երևանի Պետ. համալ. «Գիտ. աշխ.»-ի 13-րդ հատոր էջ 345—464:

4) Նույնի «Անանիա Տիրակացին որպես մանկավարժ» (տես «Սով. մանկավարժ», 1940 թ. № 11, էջ 96—103):

5) Պրոֆ. Լ. Մեմյոնովի թված աշխատությունները մեզ են չհրատարակված վիճակում:

6) Պրոֆ. Ս. Հայրապետյանի ուսումնասիրությունը ևս դեռ չի հրատարակված, եթե չհաշվենք Տիրակացու անձնավորության մասին նրա գրած բանասիրական բովանդակություն ունեցող փոքրիկ հոդվածը:

Հ. Թումանյանը մեր հրատարակած Շիրակացու թվաբանական աղյուսակների հման վրա դրել է իր թեկնածուական դիսերտացիան[1]):

Վերջերս, մաթեմատիկայի պատմության կապակցությամբ, Շիրակացուն լուրջ սկսել է ուսումնասիրել դոց. Գ. Պետրոսյանը:

Շիրակացու դրական ժառանգության դործի ուսումնասիրությունը լրիվ պատկերացնելու համար անհրաժեշտ է հիշել նաև Շիրակացու աշխատությունների համար կազմված բիբլիոդրաֆիաները: Այդ կարդի աշխատություններից առանձնապես արժեքավոր է Գ. Զարբհանեյանի «Հայկական հին դպրության պատմություն» աշխատությունը, որի 1897 թ. հրատարակության 456—465 էջերն ամբողջովին հատկացված են Շիրակացու մատենադրությանը: Ա. Ղազիկյանի «Հայկական նոր մատենագրություն և հանրագիտական հայ կյանքի» աշխատությունը, հրատարակված Վենետիկում 1909—12 թ. թ. (տես այնտեղ «Անանիա Շիրակացու» անվան տակ դրած բիբլիոդրաֆիան): Հ. Պետրոսյանի «Հայ հին և միջնադարյան դրականության համառոտ բիբլիոդրաֆիա»-ն (Երևան 1941 թ., էջ 62—64): Եվ, վերջապես, ամենից կատարյալը—մեծանուն պետական ակադ. Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարան»-ը, որն այժմ դտնվում է հրատարակության պրոցեսում և հեղինակը մեծ պատիվ չընծայեց մեզ՝ թույլ տալով առաջին անդամ օդտվել նրա ձեռագրից[2]):

Շիրակացու մատենադրությանը նվիրված մեր ներկա աշխատությունը, որոշ ընդհատումներով, ունի մոտ տասը տարվա պատմություն:—1933 թվին Մանկավարժական Ինստիտուտը (ներկայիս Պետական համալսարանը) ավարտելուց հետո, երբ մենք ՀՍՍՌ Լ.ԺԿ-ի կողմից դործուղվեցինք աշխատանքի ՀՍՍՌ Մատենադարան՝ որպես դիտական աշխատող, մեր դիտական ուսումնասիրությունը, կարելի է կասել, սկսվեց Շիրակացուց: Ակադ. Հ. Մանանդյանի «Խորենացու առեղծվածի լուծումը» աշխատությունը տաք վիճեր էր առաջացրել այն ժամանակ մեր երիտասարդության շրջանում: Մեր երիտասարդներից չատերը չէին ուղում հաշտվել այն մտքի հետ, որ պատմահայր Խորենացին կարող է կեղծած լինել իր ժամանակը, ուստի և ամեն մեկը փորձում էր իր ուժերը՝ պատմահոր ժամանակի հարաբերական հարցը լուծելու դործում: Այդ երիտասարդների թվումն էինք մենք և:

Հետևելով ակադ. Հ. Մանանդյանի ուսումնասիրության մեթոդին, որը փորձել էր Խորենացու ժամանակը որոշել «Աշխարհացույց»-ի հիման վրա, մենք և մեր ուսումնասիրությունն սկսեցինք «Աշխարհացույց»-ից՝ հիմնվելով հատկապես մեր Մատենադարանի ձեռագիր աշխարհացույցների վրա:

1933—34 թ. թ. ընթացքում այդ ուղղությամբ մեզ հաջողվեց բավականաչափ նյութեր հավաքել ՀՍՍՌ Մատենադարանի հին և արժեքավոր ձեռագրերի «Աշխարհացույց»-ներից: Մեր հավաքած այդ նյութերը հետագայում

---

1) Ընկ. Հ. Թումանյանի դիսսերտացիան դեռևս չի հրատարակված:

2) Բացի նշված տպագիր ցուցակներից, մենք օգտվել ենք նաև Մեսրոպ եպ. Մաշտոցի ձեռագրաց ցուցակից և ՀՍՍՌ Մատենադարանի թեմատիկ ցուցակից, որոնք դտնվում են ձեռագրի վիճակում: Վերջինս մենք ենք կազմել Մատենադարանի աշխատակից Ն. Հարությունյանի օժանդակությամբ: Մեր կազմած ցուցակի վրա վերջին տարիներս, մի քանի երիտասարդ աշխատողների կողմից, կատարվել են որոշ լրացումներ:

ուսումնասիրության նյութ դարձան Մոսկվայում, ասպիրանտուրայում մեր սովորելու տարիներին: Ասպիրանտուրան ավարտելուց հետո, երբ 1937 թ. վերադարձանք նորից Մատենադարան, չարունակեցինք այդ թեմայի մշակումը: Աշխատանքն ավարտեցինք 1939 թվականին, որը և հրատարակվեց 1940 թ. ՍՄՄՆՄ-ի մէջոցով (տե՛ս մեր «Խորենացուն վերադրվող «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի չուրջը» աշխատությունը): Ըստ որում, «Աշխարհացոյց»-ի ուսումնասիրության ընթացքում մենք եկանք վճռական այն համոզման, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը ո՛չ թե Խորենացին է, այլ Անանիա Շիրակացին, ինչպես այդ իր ժամանակին ճիշտ կռահել էր պրոֆ. Ռ. Պատկանյանը[1]):

Նշված թեմայի կապակցությամբ անհրաժեշտ եղավ մեզ մոտից ծանոթանալ Շիրակացու ղրական ժառանգության հետ, իսկ այդ, իր հերթին, պատճառ հանդիսացավ, որ մենք թեքվինք դեպի Շիրակացին: Մեր հետաքրքրությունն ավելի մեծացավ, երբ ծանոթացանք Շիրակացու մի չարք անտիպ աշխատությունների հետ: Այնուհետև մենք հաստատ որոշեցինք՝ զբաղվել Շիրակացու աշխատություններն ուսումնասիրությամբ, նպատակ ունենալով և մի հավաքել և հրատարակության հանձնել Շիրակացու անդամահատված աշխատությունների ամբողջական ժողովածուն: Մեր վերցրած թեման մեծ չափով չահեց, երբ Մատենադարանի ղեկավարությունը մեզ միաժամանակ հանձնարարեց կազմել մեր Մատենադարանի գրչագրերում եղած պատմա-դիտական բովանդակություն ունեցող տեքստի թեմատիկ ցուցակը: Այդ մեզ հնարավորություն տվեց մոտից ծանոթանալ մեր Մատենադարանի մոտ 10 հազար գրչագրերի ժողովածուին:

Գրչագրերի ուսումնասիրության ընթացքում մեզ հանդիպեցին Շիրակացու մի քանի նոր աշխատությունները, որոնց թվում և թվաբանական. երեք գործողությունների աղյուսակները (Ընդունելություն, Բացդրություն, Բազմապատիկը), և «Որպիճանականք»-ը, որոնք հրատարակեցինք Երևանի Պետական Համալսարանի «Գիտական աշխատություններ»-ի 11-րդ հատորում: Այնուհետև հայտնաբերվեց «Ա. խոտացնալն» աշխատությունը, որը հրատարակեցինք Մատենադարանի մէջոցով պրոֆ. Հ. Ա. Ճանոյանի խմբագրությամբ:

ՀՍՍՌ Մատենադարանի հարուստ ժողովածուի մեջ կատարած մեր հետագա ուսումնասիրությունների ընթացքում մեզ հաջողվեց հանդիպել Շիրակացու չհրատարակված և ամենևին անհայտ այլ աշխատություններ (աստղաբաշխության չարունակությունը, «Բաղդատ արեգական»-ը, ՇԼԲ աղյուսակը, «Զղջման ճառը», Տոմարի պատճենը, Վեցհազարյակի տեքստը, թվերի պրոդրեսը, «Բաղդատ ՇԼԲ»-ի և այլն): Գրչագրերում մեզ հանդիպեցին նաև Շիրակացու անունով հրատարակված աշխատությունների այնպիսի գրչագրեր, որոնք ընտիր տեքստեր էին և նրանց հիման վրա հնարավոր էր մի չարք ուղղումներ առաջարկել հրատարակված տեքստերում: Շիրակացու այս ամբողջ աշխատությունների ուսումնասիրությունից հետո, մենք որոշեցինք դրել մեր ներկա աշխատությունը՝ ներկայացնելով այն Երևանի Պետական Համալսարանին որպես դիսերտացիա՝ պատմական գիտությունների դոկտորի կոչում ստանալու համար:

[1]) Տե՛ս նրա «Армянская география VII в.» աշխատության առաջաբանը, հրատ. СПБ 1877 թ.

Երևակայում մասնագրությանը նվիրված նեղկա ուսումնասիրության մեջ մեր նպատակն է եղել՝ ա) պետական լայն շրջաններին ներկայացնել Երևակայում անհայտ, կամ բանասեղծների նեղ շրջաններում միայն հայտնի, բայց չհրատարակված աշխատությունները, բ) տալ այդ աշխատությունների գրչագրերի բիբլիոգրաֆիան, գ) որոշել թե Երևակայում առանձին աշխատությունները, եթե, իհարկե, հասել են մեզ մի քանի համապրությամբ, որն է հինը և նախնականը, դ) հրատարակված տեքստերում կատարել գրչական ուղղումները, ե) պարզել Երևակայում ազբյուրները և, վերջապես, զ) փորձել տեղադրել Երևակայում առանձին աշխատությունները ըստ ակզբնական շրջանում եղած կարգի:

Անանիա Երևակայուն նվիրված նեղկա աշխատությունը մենք բաժանել ենք յոթ հիմնական բաժինների՝ 1) կենսագրական, 2) թվաբանական, 3) չափագիտական, 4) տոմարագիտական, 5) տիեզերագիտական, 6) պատմական, 7) աշխարհագրական և 8) կրոնական–բարոյախոսական: Թված բաժիններից 7-րդը՝ աշխարհագրականը, ինչպես վերևում ասացինք, հրատարակված է «Մովսեսյան վերապրվող «Աշխարհացույց»-ի հեղինակի հարցի չուրջը» վերտառությամբ: Բայց մեր նեղկա ուսումնասիրությունն ամբողջացնելու համար բերում ենք այստեղ մեր այդ աշխատության հիմնական թեզերը: Աշխատության վերջում նշված են Երևակայում աղբյուրները:

Թված հիմնական բաժիններից, մենք հնարավորություն չենք ունեցել մանրամասն խոսել Երևակայում կրոնական–բարոյախոսական աշխատություններ մասին: Այդ պիտի բացատրել այն հանգամանքով, որ դրչագրերում կրոնա–բարոյախոսական նյութերն այնքան էին խառնված և այնքան շատ էին նրանց վերնագրերում չփոթվում Անանիա Երևակայում անունը Անանիա Նարեկացու, Անանիա Մանահնեցու և այլ Անանիանների հեղինակությունների հետ, որ մենք նպատակահարմար համարեցինք վերջին բաժինը ժամանակավորապես հետաձգել՝ հատուկ ուսումնասիրության թեման դարձնելու նպատակով՝ տալով այստեղ նրանց մասին միայն համառոտ անհրաժեշտ տեղեկություններ:

Երևակայում մասնագրությանը նվիրված նեղկա ուսումնասիրության մեջ մենք նպատակ չենք ունեցել որոշել Երևակայում այս կամ այն աշխատության տեղը տվյալ դիտության պատմության մեջ: Մենք խուսափել ենք այդ հարցը քննելուց, որովհետև այդ հարցը չի մտնում մեր նպատակի մեջ և հետու է մեր մասնագիտությունից: Այդ հարցով անհրաժեշտ է որ զբաղվեն դիտության առանձին ասպարեզներում զբաղվող համապատասխան մասնագետները—տոմարները՝ տոմարագետը, տիեզերագիտությունը՝ տիեզերագետը, աստղաբաշխինը՝ աստղաբաշխը, թվաբանությունը՝ մաթեմատիկոսը, մանկավարժությանը՝ մանկավարժը և այլն: Մեր նպատակն է եղել Երևակայում աշխատություններին մոտենալ և քննել նրանք զուտ գրչագրությունագիտական–բանասիրական տեսակետից:

Մենք հավակնություն չենք ունեցել, և չունինք, այս աշխատության մեջ լուծել Երևակայում աշխատությունների հետ կապված բոլոր առեղծվածները: Կան շատ հարցեր, որ դեռ մութն են մեզ համար ևս: Կան նաև հարցեր, որոնց մենք առաջ ենք քաշել, սակայն խուսափել ենք նրանց քննությունից, որովհետև մեր ձեռքի տակ եղած նյութերը մեզ այդ հնարավորությունը չեն տվել: Բայց նման հարցերը մենք

նպատակահարմար ենք համարել դնել, որպեսզի ավելի ճեռնհաս աղբյուրագետներին հնարավորություն տանք Մատենադարանի դրչագրերի հիման վրա զբաղվել և լուծել դրանք:

Մեր ներկա աշխատությանը զուգընթաց՝ մենք կազմել ենք Ներսիսյան աշխատությունների ժողովածուն: Այդ ժողովածուի մեջ մտնում են գրեթե բոլոր մեզ հայտնի, և անվիճելի կերպով Ներսիսյան հեղինակությանը պատկանող գործերը: Ժողովածուից դուրս են մնում միայն Ներսիսյան «Տիեզերագիտությունը և տոմարը»-ը, որը հրատարակված է մեր Մատենադարանի կողմից առանձին և կրոնա-բարոյախոսական այն տեքստերը, որոնք անհրաժեշտ է հրատարակել՝ նրանց Ներսիսյան պատկանելու հարցը վերջնականապես ճշտելուց հետո:

Ի վերջո, մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Մատենադարանի դերեկցիային և Համալսարանի ռեկտորին, որոնք հնարավորություն տվին մեր ներկա ուսումնասիրությունը հասարակական պաշտպանության դնել: Շնորհակալություն նաև մեր հարգելի ընդդիմախոսներ՝ ակադեմիկոս Ս. Մալխասյանին, ակադեմիկոս Հ. Աճառյանին և պրոֆ.-դոկտ. Մելիքսեթ-Բեկին, որոնք բարձր գնահատելով մեր աշխատությունը, արժանի համարեցին մի քնորդելու համալսարանի դիտական խորհրդի առջև՝ շնորհել մեզ պատմական դիտությունների դոկտորի կոչում:

10 դեկտեմբերի 1943 թ. Երևան

Ա.Շ. ԱՓՐԱՀԱՄՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(Շիրակացու ժամանակաշրջանի պատմական համառոտ տեսությունը)

Ռուս մեծ գիտնական ու պոետ Վ. Յ. Բրյուսովն իր «Поэзия Армении» աշխատության ներածության մեջ, խոսելով հայ ժողովրդի պատմական մխիթարի մասին, հետևյալ ձևով է բնորոշում այն. «Հայաստանը— Եվրոպայի և Ասիայի սահմանագրին է—այս վաղուց առալարկված փորմուլան ճիշտ է բնորոշում հայ ժողովրդի դրությունը մեր աչքաբերում: Հայ ժողովրդի պատմական մխիթարը, որը քիչ տրված է եղել նրա զարգացման ողջ ընթացքով— փնտռել և ճանք բերել Արևելքի և Արևմուտքի սինթեզը»[1]): Վ. Յ. Բրյուսովն այնուհետև չեչտում է հայ ժողովրդի ստեղծած օրիգինալ այն մեծ կուլտուրան, որը ներդրվել է համաշխարհային կուլտուրայի գանձարանում:

Վ. Յ. Բրյուսովի վերև բերված դնահատականը՝ նրա հայ ժողովրդի նկատմամբ ունեցած սիրալիր վերաբերմունքի ներքոդը չէ, այլ սկզբնաղբյուրների վրա տարիներ շարունակ կատարած դիտական ուսումնասիրության ծանրակշիռ մի եզրակացություն: Նման եզրակացության են հանդել, պետք է ասել, Արևելքի և Արևմուտքի պատմության հետ մոտից ծանոթ գրեթե բոլոր ռուս և եվրոպացի պոետները:

Պատմության մեջ չեն եղել և չկան ընդունակ և անընդունակ ժողովուրդներ: Ուսած և հայ ժողովրդի Արևելքի և Արևմուտքի միջև ստանձնած պատմական այս դերը պիտի բացատրել ո՛չ թե նրա առանձնահատուկ ընդունակություններով, այլ նրա զարգացման առաջնորդով, Արևելքի ու Արևմուտքի մեջ նրա ունեցած դիրքով ու պայմանով:

Սակայն հայ ժողովուրդը՝ Արևելքի և Արևմուտքի ոսկյա օղակը լինելու այս պատվավոր կոչման կոդքին, ունեցել է մի պժբախտություն, որ նրա պատմական կյանքը զարգացել է մեծ դևդչնելով:

Ն. Յ. Մառը, կովկասագիտության այդ խոշոր վերաբերյալ իր նշանավոր «Ани» աշխատության մեջ, խոսելով հայ ժողովրդի զարգացման ընթացքի մասին, հետևյալն է գրում. «Հայաստանի բնակիչների պատմական կյանքն անցյալում էլ ամենևին դի հոսել մի հունով—նա է բնե խորթ է եղել օրգանական զարգացման անընդհատականության»[2]):

---

1) В. Я. Брюсов, Поэзия Армении, Москва 1916 г., стр. 23.
2) Н. Я. Марр, Ани, Л.—М. 1934 г., стр. 4.

Իր նույն աշխատության հետևյալ դրվատում Ն. Յ. Մառն ավելի է խոր քանում իր եղրակացության մեջ և պնդում, որ ո՛չ մի այլ հայ ժողովրդի պատմության ընթացքում ամբողջությամբ առած, այլև նրա առանձին սահմանափակված շրջանում անգամ, չի կարելի տեսնել զարգացման համաչափ ու նորմալ ընթացք: Հայ ժողովրդի պատմության մեջ հաճախ տեղի են ունենում աչքաթափվեր այնպիսի վերթռիչներ, որ թվում է թե կտրվեց հայ ժողովրդի ստեղծագործական թելը: Բայց հենց որ անցնում է փոթորիկը, ավերակների և մոխիրների տակից առկայծում է մի կայծ, ստեղծագործական նոր կրակ է վառվում՝ «Մանգաղվողը բարձրանում է, մահացողը հարություն է առնում և տեղի է ունենում երբեմն վայրկյան պրոցես եթե ոչ բոլորի, ապա շատ շատերի մեջ»[1]:

Հայաստանի հաճախակի ավերվելու այս վտանգը հանրածանոթ փաստ է եղել անգամ հնում: Օտար մատենագիրներից ոմանք հաճախ հիշում են Հայաստանը ավերակների վերածված ձևով: Այս կարգի մատենագիրների պատկերացման տիպիկ օրինակը մեզ տալիս է արաբացի աշխարհագրագետ Իբն-ալ Ֆակիհ ալ-Համադանին: Նա դրում է. «Մահկուլ Սիրեացին ասաց.—Հայաստանը մշտապես ավերակներով է ծածկված: Հարցրին.—Ի՞նչն է նրան կործանողը: Պատասխանեց.—Հնձելյալները ձիաների ոտքերի»[2]:

Հայաստանի ավերվելու վերաբերմամբ հայագիտության մեջ գոյացան բացատրություններ են տրվել: Սակայն եղած այդ բացատրություններից ամենից դիտականը և համոզեցուցիչը մենք գտնում ենք Ն. Յ. Մառի վերև հիշված աշխատության մեջ: Հայաստանը գտնվելով առևտրական և ռազմական ճանապարհների հանդուգյլ վրա, դրում է նա, վիր է ածվել անվերջ առաստակատարությունների մրցարանի[3]:

Հայաստանի ռազմագիտական նշանակության վրա, իր ժամանակին, կանգ է առել նաև Մարքսը «New-York Daily Tribune» թերթի առաջնորդողում. «Ռազմական տեսակետով Ռուսաստանի և Տաճկաստանի միջև ընկած սահմանամերձ շրջանները,— դրում է Մարքսը,— այնտեղ բաժանվում են երկու սուբ դծված օպերացիոն շրջանների: Լեռնաշղթան, կամ՝ ավելի ճիշտ, լեռների շղթաները, կազմում են Կովկասը կենտրոնական Հայաստանից հարթավայրի հետ և կազմում շրջաժան գիծ՝ Սև ծովի մեջ թափվող գետերի և այն ջրերի, որն Արաքսը տանում է դեպի Կասպից ծով կամ Եփրատը դեպի Պարսից ծոց»[4]: Մարքսի այս սրժեքավոր ցուցումը Հայաստանի ռազմագիտական նշանակության մասին տալիս է վերև բերված հարցի սպառիչ պատասխանը:

Առևտրական և ռազմական նշանակություն ունեցող ռազմագիտական այդ կարևոր հանգույցը մրցարանի տապարել է դարձել հայ ժողովրդի պատմության դրեթե բոլոր շրջաններում: Նույն պատճառով Հայաստանն առաստակատարությունների մրցարան է դարձնում մեր ուսումնասիրած հեղինակի՝ Անանիա Շիրակացու ապրած ու նրա նախորդ շրջանում:

---

1) Н. Я. Марр, Ани, Л.—М, 1943 г, стр. 7.

2) Հրատ. Goeje (=Biblioth. Geograph. arab, v), *1855*, էջ 257 (Համ. Ն. Յ. Մառի վերև հիշված աշխատությունը), էջ 8։

3) Н. Я. Марр, Ани, стр. 7.

4) К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, стр. 553.

Չնայած Հայաստանում կրկնվող այս ավերածություններին, հայ ժողովուրդը, այնուամենայնիվ, առևդում է կուլտուրական բարձր արժեքներ և իր պատվավոր տեղը բռնում անցյալի կուլտուրական ժողովուրդների շարքում:

Ծանոթանանք՝ թե ինչ քաղաքական կացության մեջ էր Հայաստանը Եփրատյան ժամանակաշրջանում:

Տիգրանի և Բյուզանդիոնի մեջ կնքված 387 թվի զաշնագրով, ինչպես հայտնի է, Հայաստանը բաժանվում է երկու մասի — Հայաստանի արևմտյան մասն ընկնում է Բյուզանդիոնի դերիշխանության տակ, իսկ արևելյանը՝ Տիգրանի: Բաժանված Հայաստանի սահմանագիծն է պառնում Տրապիզոն—Նեփրիկեա—Մծբին գիծը: Թեոդոսուպոլիսը մնում է Արևմտյան Հայաստանի տերիտորիայում, իսկ Մծբինը՝ արևելյան: Տիգրանի և Բյուզանդիոնի միջև կատարված այս բաժանումը հետագայում վերահաստատվում է 422 թվին կնքված նոր զաշնագրով:

Տիգրանի և Բյուզանդիոնի մեջ կնքված այս պայմանագրերից հետո չնայած առևդվում է խաղաղության մի երկար շրջան, բայց թշնամություն չի պատրաստ նրանց մեջ, որովհետև կողմերից յուրաքանչյուրը պաշտնի կամ բացահայտ ճանապարհով աշխատում է նախապատրաստվել՝ տիրանալու ամբողջ Հայաստանին, որի ռազմավարական և տնտեսական նշանակությունը լավ գիտակցում էր ամեն մեկը[1]:

Պարսկաստանի և Բյուզանդիոնի միջև Հայաստանի համար սկսած այս պայքարն ավելի է սրվում Հուստինիանոս առաջինի գահակալության ժամանակ (527—565) և տևում տալիս նոր պատերազմի, որը վերջանում է 562 թվին: Խոսրով Նուշիրվանի (531—579) և Հուստինիանոսի միջև կնքվում է խաղաղության նոր պայմանագիր, ըստ որի Բյուզանդիան պարտավորվում է որոշ ժամանակի ընթացքում խոշոր ռազմատուգանք վճարել Տիգրանին:

Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև կնքված այս պայմանագիրը տևում է տաս տարի, մինչև որ Բյուզանդիոնի ձեռքերն ազատվում են հյուսիսից և արևմուտքից անհանգստացնող իր մյուս թշնամիներից և նա հնարավորություն է ստանում դադարեցնել ռազմատուգանքի վճարումը և նորից սկսել պատերազմը Պարսկաստանի դեմ[2]:

Պատերազմն սկսվում է 572 թվին և տևում քսան տարի: Այս արյունոտ և երկարամյա պատերազմը խիստ ծանր է անդրադառնում հատկապես Արևմտյան Հայաստանի վրա, որը ոտնակոխ է լինում կռվող բանակների ոտքերի տակ: Պատերազմը վերջանում է 591 թվին Բյուզանդիոնի հաղթանակով Մորիկ կայսեր օրոք: Բյուզանդիոնը պատերազմը չհոգում է ոչ այնքան իր զորքի տարած հաղթանակների շնորհիվ, որքան Պարսկաստանի ներսում տեղի ունեցած խռովությունների[3]: Պարսից թագավոր Որմիզդ

---

1) Այս մասին մանրամասն տես Ф. И. Успенский, История Византийской империи, т. I, СПБ 1913 г., стр. 482—493.

2) Մարքսիստական նորագույն ուսումնասիրությունների մեջ Հուստին. II կայսրից հետո եկող շրջանը Բյուզանդիայի պատմության մեջ դրվում է որպես կրկնակի շրջան (տես M. В. Лозченко, История Византии, Москва 1940 г., стр 100).

3) P. M. Sykes, A History of Persia, London 1915, էջ 519—520.

դեմ հպատակություն է պարսկաստանի կովկասյան բանակի հրամանատար Վահրամ Չոբինը: Ապստամբները չարժվում են դեպի Տիզբոն, վերցնում մայրաքաղաքը, սպանում Որմզդին և Վահրամ Չոբինին թագավոր հայտարարում: Որմզդի որդին, Խոսրովը, ապաստանում է Մորիկի մոտ և դահ բարձրանալու համար օգնություն է խնդրում նրանից: Ի միջի այլոց, Խոսրովը Մորիկին խոստանում է դահ բարձրանալուց հետո Բյուզանդիային դեջել Հայաստանի և Միջագետքի մի չարք շրջաններ: Մորիկն օգնական դրջք է տալիս Խոսրովին և դահ բարձրացնում նրան: Այս մասին Եվագրիոսը իր ժամանակագրության մեջ գրում է. «Ի սորա առուրս (այսինքն Մորիկի ժամանակ—Ա. Ա.) սպանին զՈրմիզդ Պարսից արքայ. եւ Խոսրով, որդի Որմզդի, փախստական եղեալ՝ անգամ առ Մաւրիկ. եւ հնդեցաւ որդի նորա: Եւ յետ ժամանակի թագաւորեցոյց զԽոսրով՝ Պարսից աշխարհին»[1]:

591 թվին Մորիկի և Խոսրովի մեջև կնքվում է պայմանագիրը, ըստ որի Արևելյան Հայաստանից Բյուզանդիային է անցնում նրա տերիտորիայի մեծ մասը: Ստեղծվում է նոր սահմանագիծ — Գաւառն և Կոտայքը՝ վերին սահմանում, Մոկսը՝ ներքին սահմանում, իսկ Արեւտ ավանը լճի ափին, մեջին սահմանում: Այդ բաժանման մասին Սեբեոսը հետևյալն է գրում. «... և (Խոսրով) պիտուացնել պարգևան կայսերն կառարեաց. եւ նոցա զԱրեւտառան դամենայն մինչև ցմծրին, և զերկիրն Հայոց, որ ընդ իւրով իշխանութեամբն էր, զոտունն Տանուտէրական մինչև ցդևան Հուրպազան, և զգաւառն Կոտէից մինչև ցաւանն Գաւնի և ցեղր ծովուն Բզնունեաց, և ցԱրեւտ աւան եւ զկոզովիտ գաւառ մինչև ցՀացիւն եւ ցմակու»[2]:

591 թվին՝ այս պայմանագրից հետո, Հայաստանի համար ստեղծվում է, համեմատաբար, խաղաղության մի շրջան: Մորիկի գահակալության այս խաղաղ շրջանը հետազոտում առանձին նյութ է գտնում ժամանակակիցների մոտ: Այսպես՝ Շապուհ Բագրատունին[3] այդ մասին հետևյալն է գրում. «Եւ առհասարակ խաղաղացոյց (Մորիկ) զերկիրն ամենայն, զոր ոմանք յառաջս արկեալ ասեն, թէ «զինչ ի ժամանակին Մաւրիկայ, որ նոտեալ է անհոգս»[4]:

591 թվից ստեղծված այս խաղաղ շրջանը, ինչպես և արևելյան Հայաստանի մեծ մասի պարսկական դերիշխանության տակից դուրս գալու հանգամանքը, հնարավորություն ստեղծեցին, ինչպես հետո կտեսնենք, որպեսզի հելլենիստական կուլտուրան արագ և լայն շրջանակներով տարածվի Հայաստանում և չխոչ տեղական կուլտուրայի հետ:

Պարսկաստանի և Բյուզանդիայի մեջև ստեղծված խաղաղությունը նորից խանգարվում է 602 թվին՝ Բյուզանդիոնում տեղի ունեցած քաղաքական խռովությունների հետևանքով:— Բյուզանդիոնում սպանվում է Մորիկը և նրա տեղ գահ է բարձրանում Փոկասը (602—610):

Օգտվելով Բյուզանդիոնում սկսված խռովություններից, Խոսրովը Մո-

---

1) Անանուն ժամանակագրութիւն, խմբագիր յօրինեալ յե դարու, Վենետիկ 1904 թ., էջ 76:

2) Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, հրատ. դոկտ. Ս. Մալխասյանի, Երևան 1939 թ., էջ 47:

3) Մենք լիապես համոզված ենք, որ Սեբեոսով եպ. Մագիստրոսի հրատարակած «Հացունեաց խաչի» այս պատմությունը ոչ մի կապ չունի Շապուհ Բագրատունու հետ, բայց հետևելով արագիցիային, նրա հեղինակը հիշում ենք որպես Շապուհ Բագրատունի:

4) Պատմութիւն Շապհոյ Բագրատունւոյ, Էջմիածին, 1921 էջ 4—5:

բնիկ կարծեցյալ սրտուն, Թեոդոսոսին, դահ բարձրացնելու պատրվակով, հարձակվում է Բյուզանդիայի արևելյան նահանգների վրա: 605 թվին պարսից բանակին հանդուգվում է վերցնել Դարան, իսկ 609 թվին հասնել մինչև Քաղկեդոն և սպառնալ Կոստանդնուպոլսին, Արևելքի և արևմուտքի այդ ոսկյա կամուրջին, ինչպես սովորաբար ընդունված է ասել պատմության մեջ[1]): Կրկնակի այդ չրջանում, Բյուզանդիոնում տեղի է ունենում քաղաքական նոր խռովություն — գահընկեց են անում Փոկասին և գահ բարձրացնում Հերակլին (610—641 թ. թ.):

Հերակլը վարձում է խաղաղություն կնքել Խոսրովի հետ, բայց իր կանքերն ապարդյուն են անցնում: Վերսկսվում է նորից պատերազմը և տարբեր հաջողություններով չարունակվում մինչև 622 թվականը: Պատերազմն ընթացքը մոտավոր վոխվում է 622 թվին, երբ Հերակլն լինքն է առանձնում Բյուզանդիայի արևելյան զորքերի հրամանատարությունը և նոր ուժեր տեղափոխում պարսկական ֆրոնտ: Պատերազմը վերջանում է 627 թվին, Հերակլի հաղթանակով:—Հին Նինվեի մոտ Բյուզանդական բանակը չարդում է Պարսից բանակը և չարժվում Տիգրոնի վրա: Խոսրովը սպանվում է և նրա վոխարեն գահ է բարձրանում Կավատը: 628 թվին կնքվում է հաշտության պայմանագիրը և Բյուզանդիոնը նորից տեր է դառնում իր նախկին սահմաններին[2]): Սակայն 628 թվականին կնքված այս հաշտությունից հետո Բյուզանդիային և Պարսկաստանին վիճակված չէր խաղաղության երկար չրջան տալել—Արևելքում սկսվում է սարսափելի մի նոր վոխորիկ — հարևան երկրները զրավելու մեծ պրեստիժով քաղաքական բեմ են դուրս գալիս սրարները և բաղխել սկսում Պարսկաստանի և Բյուզանդիայի առանց այն էլ խարխլված դարբասները:

Խալիֆաթի արշավանքները դեպի Հայաստան սկսում է 7-րդ դարի 40-ական թվականներին, Պարսկաստանի վերջնական նվաճումից հետո: Արշավանքի առաջին չրջանը վերջանում է 653 թվականին, երբ հայ նախարարները Թեոդոսոս Ռշտունու գլխավորությամբ Մոավիայի հետ կնքում են հաշտության պայմանագիր և վասալական կախվածության մեջ մտնում խալիֆաթի գերիշխանության տակ: Ըստ կնքված պայմանագրի, որը բերում է իր պատմության մեջ Սեբեոսը, Հայաստանը երեք տարի ժամանակով ազատվում է խալիֆաթին հարկ վճարելու պարտականությունից: Երեք տարին լրանալուց հետո հայ նախարարները պարտավոր էին հարկը վճարել ըստ իրենց հայեցողության: Հայաստանում պահվում է 15 հազար հոգուց բաղկացած հայկական բանակ, ըստ որում, սա պահվում է ի հաշիվ խալիֆաթի: Խալիֆաթը խոստանում է հայոց բանակը ուրիշ տեղ չտեղափոխել: Հայաստանին արտաքին թշնամուց վտանգ սպառնալու դեպքում խալիֆաթը խոստանում է զալ Հայաստանին օգնության: Եվ, վերջապես, խալիֆաթը խոստանում է ոչ մի արաբացի պաշտոնյա չուղարկել Հայաստան[3]):

Հայաստանի համար այս նպաստավոր պայմանագրից հետո՝ համեմատաբար, ստեղծվում է խաղաղության մի նոր չրջան, որը տևում է մինչև 682 թվականը, Մաղարական արշավանքը:

---

1) Գոլսի նշանակության մասին տես К. Маркс, Традиционная политика России, Сочинения т. IX, стр. 441:
2) P. M. Sykes, A. History of Persia, London 1915, էջ 252—526:
3) Տես այս մասին «Սեբէոս եպիսկոպոսի Պատմութիւն», էջ 140—141:

Ի մեջ այլոց, ակադեմիկոս Հ. Մանանդյանն, իր «Народные восстания в Армении против арабского владычества» աշխատության մեջ[1], խալիֆաթի հայոց թողած ինքնուրույնության այս վատառ բացատրում է նրանով, որ իբր խալիֆաթը դիմամարտ է թողնում հայ նախարարների ինքնուրույնությունը, որպեսզի այդ հանգամարհով կարողանա նախարարների ուժն օգտագործել խաղարների և Բյուզանդիայի դեմ: Ակադ. Հ. Մանանդյանի այս պնդումը, մեր կարծիքով, հիմնավոր չէ: Նախ՝ միտքս կլիներ խալիֆաթի դիմամարտությունը, եթե այդպիսի հույսեր դներ հայ նախարարների վրա: Եվ ապա, համարյա կլիներին հայ նախարարները, եթե այդպիսի մի հնարավոր դարձիք հանդիսանային խալիֆաթի ձեռքում: Խալիֆաթն իր դիրքը պահպանելու սկզբնական շրջանում թողեց հայոց նախարարների ինքնուրույնությունը ոչ թե նրա համար, որ հույս ուներ, որ կարող է օգտագործել նախարարներին խաղարների կամ Բյուզանդիայի դեմ, այլ որ նա հայ ժողովրդի քաղաքական անկախությունը այդ ժամանակ ի վիճակի չէր վերացնել: Նա ակամա ստիպված էր հաշվի այս դրության հետ:

Հայաստանը հետագայում, խաղարական արշավանքից հետո, ծանր դրության մեջ է ընկնում հատկապես 688 թվականին, երբ բյուզանդական բանակը մտնում է Հայաստան և ավերածություններ սկսում հայության դեմ:

Հայոց պատմության 6—7-րդ դարերի վերաբերմամբ, հայագիտության մեջ, մինչև վերջերս, այն անսակական է դիտիչել, որ իբր այդ դարերը Հայաստանի համար եղել են ամենածանր ավերածության դարերը: Սակայն փաստերի լուրջ ուսումնասիրությունը մեզ բերում է միանգամայն հակառակ եզրակացության: Այսպես, երբ մենք վերցնում ենք 6-րդ դարի 80-ական թվականներից մինչև 7-րդ դարի 80-ական թվականները ընդհատ-ժամանակաշրջանը և համեմատում նախորդ կամ հաջորդ դարերի հետ, տպա տեսնում ենք, որ Հայաստանն, այս ժամանակաշրջանում, մյուս դարերի համեմատությամբ, դանվել է բարեկեցիկ պայմաններում: Մոտավորապես մի չորս տարեց Հայաստանը մինչև Մարվիկի ասպատակությունը: Երբ Բյուզանդիայի և Պարսկաստանի մեջ սկսվեց երկարամյա պատերազմները, այս պատերազմների ընթացքում Հայաստանը, հատկապես Հայաստանի արևելյան շրջանները, հումաղաչեց դուրս էին և համարյա չտուժեցին: 623—24 թվերին հերակլ կայսեր բանակները, ճիշտ է, անցան Արևելյան Հայաստանով՝ պարսից դերքի դեմ կռվելու, բայց Հայաստանի տնտեսական կյանքն ամբողջովին չկազմալուծվեց: 30-ական թվականներին Հայաստանում նորից խաղաղություն ստեղծվեց մինչև արաբների արշավանքը: 40-ական թվին արաբների արշավանքները սկսվեցին, որոնք ծանր հարվածներ հասցրին Հայաստանին, սակայն նրանք, պետք է ասել, այնքան կատաստրոֆիկ չեղան Հայաստանի համար, ինչպես այդ սովորաբար դիտվում է[2]): Արաբները թալանեցին Հայաստանի մի շարք շրջանները, դերի-

---

1) Я. А. Манандян, Народ. восст. в Армении против арабского владычества, Ереван 1939 г., стр. 5.

2) Այս խնդրի մասին ճիշտ մոտեցում ունի պրոֆեսոր Ռ. Աճարեկյանը (տես նրա «Հայաստանը արաբական տիրապետության առաջին շրջանում...» աշխատությունը» Научный сборник Арм. ФАН-а, 1937):

Ներ տարան, բայց այդ հարվածից առանձին քաղաքներ և շրջաններ միայն վնասվեցին, իսկ Հայաստանի տնտեսական և կուլտուրական կյանքը զարձյալ ամբողջությամբ չկաթվածահարվեց: 653 թվին Մոավիայի և Թեոդորոս Ռշտունու միջև կնքված պայմանագրից հետո, Հայաստանի համար նորից ստեղծվեց խաղաղության մի երկար շրջան մինչև 783 թվականը: Այս վերջին խաղաղության շրջանումն է, որ ստեղծագործեց Շիրակացին իր հիմնական աշխատությունները:

Խաղաղության լավագույն շրջանը հանդիսացավ հատկապես Գրիգոր Մամիկոնյանի կառավարչության 24 տարիների շրջանը (558—582), որի մասին Ղևոնդը գրում է. «Եւ եղեւ բազում խաղաղութիւն յաւուրս նորա (այսինքն Գրիգորի — Ա. Ա.)»[1]:

Տեսնենք թե ինչ սոցիալ-տնտեսական հարաբերության մեջ էր Հայաստանը V—VII դարերում:

627 Հայաստանի տնտեսական կյանքին վերաբերող նյութերը, հատկապես տակացու ժամանակաշրջանին վերաբերվող նյութերը, շատ կցկտուր են և դժվար են ենթարկվում դիտական ընդհանրացման: Այդ դժվարությունները մեծ չափով հաղթահարել է հազիհատարել ակադեմիկ. Հ. Մանանդյանին, իր արժեքավոր «Ֆեոդալիզմը հին Հայաստանում» աշխատության մեջ[2]:

Ակադեմիկ. Մանանդյանը, նշված աշխատության մեջ, սկզբնաղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրության հիման վրա ցույց է տվել, որ Հայաստանի Արշակունիների և մարզպանության շրջանում գոյություն է եղել ֆեոդալական հասարակա-տնտեսական ֆորմացիայի շրջանում[3]:— Ակադեմիկ. Հ. Մանանդյանը կոնկրետ նյութերի հիման վրա ցույց է տվել չհաղթահարված հիմնական գաստակարգի — գյուղացիության սոցիալ-իրավական դրությունը, «խոստակ»-ի և «փեսոդ»-ի նմանությունը, ֆեոդալական հարաբերության տարբեր աստիճանները և ֆեոդալական հասարակության հետ կապված բազմաթիվ այլ խնդիրները, որոնց վրա կանգ առնելը մեր նպատակից դուրս է:

Ակադ. Հ. Մանանդյանն իր մյուս՝ «О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен» աշխատության մեջ, ցույց է տվել հին Հայաստանի խոշոր դերը տրանզիտ առևտրի ապարիզում. «Արևելքի համաշխարհային առևտրի մեջ—գրում է նա նշված աշխատության մեջ—հին Հայաստանը, ինչպես տեսանք վերևում, խաղացել է զգալի դեր: Նա ծառայել է որպես տրանզիտ ուղիտարիա՝ ինչպես բնական մետաքսի, այնպես և այլ արժեքավոր ապրանքների նեղմուծման համար, որոնք բերվում էին Արևմուտք՝ Չինաստանից, Միջին Ասիայից և հյուսիսային Հնդկաստանից[4]: Ի միջի այլոց, «Հին Հայաստան» ասելով ակադ. Հ.

1) Ղևոնդ. Պատմութիւն, ՍՊԲ 1880 թ., էջ 14:

2) Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում (Արշակունիների և մարզպանության շրջան). Երևան 1934 թ.:

3) Ֆեոդալիզմի հարցը Հայաստանում և Վրաստանում կովկասագիտության մեջ առաջին անգամ քննված է հանգուցյալ ակադեմիկ Ջավախիշվիլու „Госуд. строй древней Грузии и древней Армении" աշխատության մեջ, որը լույս է տեսել 1904 թ.: Ֆեոդալիզմի հարցը Հայաստանում քննված է մանրամասն Ն. Ադոնցի «Армения в эпоху Юстиниана» աշխատության մեջ:

4) Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван 1930. г., стр 81.

III 23397 А

Մանանդյանն ի նկատի ունի Հայաստանի ինչպես Սասանյան, այնպես և Մարզպանության շրջանը:

Ակադ. Հ. Մանանդյանի ևղրակացությունը լիովին հաստատվում է Շիրակացու «Աշխարհացույց»-ին կից պահված «Մդոնաչափք»-ի մի արժեքավոր տեղեկությամբ: Այնտեղ հիշվում են 7-րդ դարում Հայաստանից անցնող առևտրական մայխաբալի վից կարևոր ուղղություններ:— 1) Դվին — Կարին — Կոլոնիա՝ դեպի Կոստանդնուպոլիս, 2) Դվին — Այրթ —Ուռհա՝ դեպի Երուսաղեմ, 3) Դվին — Բերդկան — Պարսից՝ դեպի Կասպից ծով, 4) Դվին — Նախիջևան՝ դեպի Գանձակ Շահաստան, 5) Նախիջևան — Արտաշատ — Վարդանակերտ — Փայտակարան՝ դեպի Կասպից ծով և, վերջապես, 6) Դվին — Կողբ — Կոստակյուղ՝ դեպի Տրիլիսի[1]:

Առևտրական այս վից գլխավոր մայխաբալների վրա 6—7-րդ դարերում բարձրանում են մի շարք քաղաքներ, որոնք իրենց ժամանակի առևտրական կարևոր կենտրոններն էին հանդիսանում: Այդ քաղաքներից իր նշանակությամբ հատկապես աչքի է ընկնում Դվինը, ուր վոխանակության համար ապրանքներ էին բերվում ո՛չ միայն Հայաստանի հարևան, այլև Արևելքի և Արևմուտքի հեռավոր երկրներից: Քաղաքի չորքը, ճանապարհների վրա, գտնվելիս են եղել առևտրով զբաղվող բազմաթիվ դյուղեր: Պրոկոպիոս պատմիչը Դվինի մասին հետևյալ տեղեկությունն է հաղորդում՝ «Դվինը շատ բերրի երկիր է: Նա ունի բարեխառն օդ և լավ ջուր: Թեոդոսուպոլսից դանվում է ութ օրվա ճանապարհի հեռավորության վրա: Այստեղ դաշտերը հարթ են և հարմար ձիու երթևեկության համար: Իրար մոտիկ բազմաթիվ դյուղեր կան, որոնք զբաղեցրված են առևտրականներով, որովհետև Հնդկաստանից, հարևան Իբերիայից, Պարսկաստանից և Հռոմի գերիշխանության տակ գտնված զրեթե բոլոր ժողովուրդներից քերվում էին այստեղ ապրանքներ, որոնցով և առևտուր էին անում[2]): Դվինն իր նշանակությունը պահում է մինչև արաբական գերիշխանության հաստատումը Հայաստանում[3]):

Հայաստանի գերը սակայն չի սահմանափակվել միայն միջազգային առևտրի համար իր արտնիտ ակրիտորիայի ծառայությամբ.— նա ինքը ևս ակտիվ մասնակցել է այդ առևտրի մեջ: Այդ մասին ուշագրավ տեղեկություններ մենք գտնում ենք Շիրակացու «Աշխարհացույց»-ում: Նա այստեղ հիշատակություններ ունի Հայաստանի առանձին շրջանների աչքի ընկնող արտադրանքի մասին: Այսպես՝ Բարձր Հայքում նշվում է ազը, Ջորրորդ Հայքում՝ «բյուրեղ» կոչվող քանկագին քարը, Աղձնիքում՝ երկաթը և գղիոքը, Տուրուբերանում՝ պղինձը, նավթը, երկաթը և մեղրը, Մոկսում՝ «մանրագործ» կոչվող մերդը, Կորճիքում՝ գառիկը և չահնդակը (каштан), Վասպուրականում՝ ձուկը, Սյունիքում՝ նուռը, Արցախում՝ քարախունկը, Փայտակարանում՝ բամբակը, Ուտիում՝ ձիթենին, Արտաշատում՝ որդան կարմիր ներկը, Գուգարքում՝ սերկեվիլը, Տայքում՝ թու-

---

[1]) *Ագուանագիրք, Մաթեն 1668, էջ 65—69:*

[2]) Прокопий Кесарийский, История войн римлян с персами, кн. II, СПБ 1880, стр. 181—182:

[3]) *Այս մասին տես* А. Шахназарян-ի «Двин» *աշխատությունը* Ереван, 1940 г., стр. 58—74.

զը, նուռը, ախտորը, պալախունկը, նուշը[1]) և այլն։ Նշված արտադրանքի մեծ մասը, պարզ է, որ սպառվում էր ոչ թե ներքին շուկայում, այլ արտահանվում էր։ Զննք խոսում Հայաստանից արտահանված մի շարք այլ ապրանքների մասին, որոնց վերաբերմամբ հիշատակություններ կան և այլ աղբյուրներում, և որոնց վրա կանդ է առել ակադ. Հ. Մանանդյանը։

Առևտրի այսպիսի զարդացումը առիթ է տալիս այն հողը, ուր մեծ չափով զարդանում են, ինչպես ցույց է տվել պրոֆ. Մելիքսեթ-Բեկը իր մի արժեքավոր աշխատության մեջ, կիրառական դիտություններ[2])։

Հայաստանի քաղաքների և առևտրական կյանքի այսպիսի աշխուժացումը, պարզ է, որ չէր կարող չունենալ իր անմիջական հետևանքները սոցիալական կյանքում։ Մատենադրության մեջ պահված որոշ տեղեկություններից երևում է, որ որոշ աշխարհիկ և հոգևորական ֆեոդալներ քաշվում են առևտրի մեջ։ Հայաստանի քաղաքներն են գալիս բնակվում դրսից որոշ առևտրականներ։ Ուժեղանում է վաշխառությունը։ Ներսես կաթողիկոսը և Ներշապուհ Մամիկոնենից եպիսկոպոսն իրենց կանոններում, որը կարգել են 554 թվականին, արձանագրել են անօրինական դիտվող հետևյալ երևույթը. «Եղին ոմանք և զվաշխս դահեկանաց իւրեանց, կէսք վաճառեցին ընկերաց իւրեանց որպէս ծառայս, և այլքն նոյնս վարձանս կանանց իւրեանց ամբարշտեալք ի բռնութեան, անարժանութեամբ անձանց իւրեանց մեղան»[3])։

Հոգևորականության շրջանում վաշխառությունն այնպիսի ծայրահեղության է հասնում, որ հարկ է լինում կանոնդրքում վաշխառության դեմ հատուկ կանոն կարգել. «Քահանայք դահեկանս վաշխել ամենևին մի՛ խշխեսցին...»[4])։

Գնալով սոցիալական հակասությունը երկու հիմնական դասակարգի մեջ ավելի է խորանում և սրվում։ Շինականների և քաղաքի ռամիկների դրությունը ծանրանում է։ Առաջանում են սոցիալական չարժումներ։ Սոցիալական չարժումները Հայաստանում, այդ ժամանակ, հանդես են գալիս աղանդավորական քողով։

Աղանդավորական չարժման սոցիալական էության մասին, ինչպես հայտնի է, պարզ ցուցում ունի Էնգելսը. «Ռեֆորմացիոն օպոզիցիան ընդհանուր ֆեոդալիզմի ընթացքում է ամբողջ միջնադարով։ Կախված ժամանակից և պայմաններից նա՝ մեկ հանդես է գալիս մխիթարչի ձևով, մեկ՝ բացարձակ հերետիկոսության ձևով, մեկ՝ բացահայտ ապստամբության ձևով»[5])։ Հայաստանում, 7-րդ դարում, նա ընդունում է երկրորդ, հերետիկոսության ձևը։

7-րդ դարում, Շիրակացու ժամանակ, Հայաստանում դրծող նման աղանդավորական չարժումներից անհրաժեշտ է հատկապես մանանացւյց

---

1) «Աշխարհացոյց», Սուքրյանի հրատարակություն, Վենետիկ 1881 թ., էջ 29—35։

2) Տես այս մասին պրոֆ. Մելիքսեթ-Բեկի «К истории точных наук в Армении и Грузии» աշխ.-ներ, տպագր. „Вопросы философии и социологии марксизма" изд. ЗКУ, кн. I, Тифлис 1930, стр. 191—193։

3) Կանոնագիրք Հայոց, Տփխիս, 1913 թ., հրատ. Ա. եպ. Ղազիկյանի, էջ 108։

4) Կանոնագիրք Հայոց, էջ 113։

5) Ф. Энгельс, Крестьянская война в Германии (см. К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. VIII стр. 128—129).

անել Պավլիկյան շարժումը: Մենք նպատակ չունենք այստեղ մանրամասն խոսել Պավլիկյան շարժման մասին որպես այդպիսին, բայց ցույց տալու համար՝ թե նա Հայաստանում ինչ չափով է սարսափեցրել ժամանակի դասակարգ շրջանները, անհրաժեշտ ենք համարում բերել Հովհան Օձնեցու 719 թվին կարգած կանոններից մի հատված միայն. «Ոչ է պարտ չարաղանդ մծղնէիցն, որ կոչին Պաւլիկեանք, տեղի օթել ումեք եւ կամ յարել եւ խօսակից լինել եւ երթեւեկութիւնս առնել, այլ ամենեւին հեռանալ ի նոցանէ, պարշել եւ առել զնոսա, զի որդիք սատանայի են... եթէ ոք իցէ, որ յարիցէ ի նոսա, եւ ի սիրելութեան եւ ի բարեկամութեան իշխալ է, պարտ է զայնպիսին խոչտանգել եւ ծանր պատուհաս ի վերայ աֆել, մինչեւ դպատասացին եւ առողջասցին...»[1]):

Այս կապակցությամբ հարց է առաջանում, Շիրակացին չի՞ հարել արդյոք Պավլիկյաններին կամ մի այլ աղանդավորական չարժման և պայքարել ֆեոդալական կարգերի դեմ: Հայագիտական գրականության մեջ եղել են նման կարծիքներ: Այսպես, հանգուցյալ պրոֆ. Ս. Հայրապետյանը, իր «Անանիա Շիրակացու կյանքն ու գործունեությունը» հոդվածում, գրում է. «Փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հոգևորական դևկավար շրջանների կողմից Շիրակացին դիտվել է իբրև քաղաքական հերետիկոս...»[2]): Ու այժմ, պրոֆ. Ս. Հայրապետյանի մատնացույց արած փաստերը, մեր կարծիքով, հիմք չեն տալիս նման համարձակ եզրակացության:

Որպեսզի պարզ տեսնենք Շիրակացու քաղաքական և կրոնական հայացքները, անհրաժեշտ է որ ծանոթանանք V—VII դարերում հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի կարևոր փաստերի հետ:

Հայաստանի 387 թվի բաժանումից հետո՝ հայ Արշակունիների գլխավորությամբ Արևմտյան Հայաստանում շատ չուտ վերանում է, իսկ Արևելյան Հայաստանում հարուստում իր գոյությունը մինչև Աբասյանների մահը, 429 թվականը:

387 թվի բաժանումից հետո՝ Հայաստանն անդամահատվում է, նրա հզորությունը թուլանում, հայ իշխանները վասալական կախման մեջ են ընկնում օտարերկրյա տերություններից, բայց հայ ժողովուրդը դեռ չի կորցնում քաղաքական իր անկախությունը այն չափով, ինչ չափով դրված է Եվրոպական օրինականության որոշ պատմարանների աշխատությունների մեջ: Այս կարգի պատմարանների չարքում կարելի է հիշել Գյուտերբրոկին, որը պնդում է, որ իրը 387 թ. բաժանումից հետո Հայաստանը վեր է անվում նվաճողներին ենթակա հասարակ բյուզանդիայի կցորդ նահանգներէ (տե՛ս նրա «Römisch—Armenien und die römischen Satrapieen» աշխատությունը[3]): Հարցի նման դրվածքը բացարձակ սխալ է: Հայաստանը դեռ վեր չի անվում Պարսկաստանի և Բյուզանդիայի տոլորական կցորդ նահանգի: 387 թվի բաժանումից հետո է միայն, որ Բյուզանդիոնը և Տիզբոնն սկսում են սիստեմատիկ աշխատանք տանել Հայաստանի իրենց բաժին-

---

1) Կանոնագիրք հայոց, էջ 148:

2) ՀՍՍՌ Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու» № 1, Երևան 1941 թ., էջ 13:

3) Guterbrok, Römisch—Armenien und die römischen Satrapieen, Königsberg 1900, էջ 13:

Ներում՝ հայ ժողովրդին քաղաքականապես նվաճելու, նրանց լիովին յուրացնելու ուղղությամբ։ Եվ ապրեսորների այդ ձգտումների դեմ է ուղղվել, ինչպես հետո կտեսնենք, հայ ժողովրդի ազատագրական ողջ պայքարը։ Ուսումնասիրողներից ոմանք ապստամբություններն պատճառն են համարում կրոնական հալածանքները և սուլթանների դործադրած բռնությունները։ Կրոնական հալածանքների և բռնությունների մասնական անկասկած նշանակություն ուներ և խոշոր նշանակություն ուներ, սակայն նրանք, վերջին հաշվով, բղխում և միահյուսվում են ապստամբության հիմնական պատճառի հետ, որը, մեր կարծիքով, հայ ժողովրդի օտար լծի դեմ մղած ազատագրական պայքարն է հանդիսացել։ Բյուզանդիոնը և Տիգրոնը Հայաստանի բաժանումից հետո իրենց համար ստեղծված միջազգային հարաբերությունների ամեն մի հարմար մոմենտին փորձել են իրագործել իրենց քաղաքական վազելի ծրագիրը Հայաստանում՝ կաղմալուծելու նրանց քաղաքականապես, իսկ ազատասեր հայ ժողովուրդը ոտքի է կանգնել, զենքը վերցրել և մարտի բռնվել իր ազատությունը ոտնահարող օտարերկրյա բռնակալների դեմ։ Եվ, պիտի ասել, 5-րդ դարից մինչև նախախալիֆայական շրջանը՝ հայ ժողովրդի Բյուզանդիոնի և Տիգրոնի դեմ բարձրացրած ապստամբությունները ազատագրական բարձր պայքարով են իմաստավորված։ Մեր կարծիքով, այդ նույն պատճառով են առաջացել 450—51 թ. թ. Վարդան Մամիկոնյանի դլխավորած ապստամբությունը, 481—484 թ. թ. Վահան Մամիկոնյանի դլխավորած ապստամբությունը, 572 թ. Երվրորդ Վարդանի դլխավորած ապստամբությունը[1]), Արտավան Արշակունու դլխավորությամբ Բյուզանդիայի դեմ բարձրացրած ապստամբությունը և այլն։

5—7-րդ դ. դ. հայ ժողովրդի մղած ազատագրական այդ պայքարում ջիչ թվով հոմանական և պարսկական դորավարների դլուխներ չեն կտրվել հայ հայրենասերների ձեռքով։ Կարելի է թվականդ հիշել հոմանական սարաոեզ Սիատայի, Հայքի պրոկոնսուլ Ակակիոսի, պարսիկ մարզպաններ՝ Աորլշնասպի, Սուրենի, Միհրանի և այլոց դլուխները։

Ո՛չ մի բան հայ ժողովրդի համար այնքան թանդ չի եղել, որքան հայրենիքի պաշտպանությունը օտարերկրյա դավիչների հարձակումներից։ Ո՛չ մի բան նրա համար այնքան ատելի չի եղել, որքան վախկոտությունը, փոքրոդությունը և դավաճանությունը։ Եվ Արևելքի պատմության թոհ ու բոհի մեջ, ուր տասնյակ ժողովուրդներ անհետացել են պատմության բեմից, հայ ժողովուրդն իր ֆիզիկական դոյության համար պարտական է, առաջին հերթին, իր հենց այդ դավիչ հատկություններին։

Հայ ժողովրդի դլխադրական ուժը կոտրելու համար՝ Բյուզանդիոնը և Տիգրոնը դլխում են ամեն տեսակ նենդություններ։ Նրանք աշխատում են պատահարում մոցնել հայ իշխանների չարքում, դավեր սարքել հայ անվանի իշխանների դեմ և այլն։ Թե ինչ հրեշավոր քաղաքականություն են վարել Տիգրոնը և Բյուզանդիոնը Հայաստանի նկատմամբ, կարելի է պարդ պատկերացում կազմել Մորիկի մի նամակից, որը նա ուղարկել է պարսից Հոսրով Նուշիրվանի թաղավորին։ Նամակում, ի միջի այլոց, ասված է. «Ազգ

---

1) Նորագույն ուսումնասիրողներից 572 թվի ապստամբության վրա կանգ է առել գոց. Հ. ՀԱՐՈՒԹՈՒՆՅԱՆ իր՝ «Մի էջ հայ ազատագրական պայքարի վերաառության ունեցող աշխատությունը (ասես «Մանկ. Ինստ. գիտ. ժողովածու» 1940, № 1)։

մի խոտոր և անհնազանդ էն, ասէ, կան ի մէջէ մերում եւ պղտորէն (խոսքը հայերի մասին է— Ա. Ա.)։ Բայց ե՛կ, ասէ, ես դիմս ժողովեմ և ի Թրակէ դուսարեմ. և դու դքոյդ ժողովէ և հրամայէ յԱբեղեա տանել։ Չի եթէ մեռանին՝ թշնամիք մեռանին. և եթէ ապրանանն՝ դիշնամիս ապրնանն, եւ մեք կեցցուք խաղաղութեամբ։ Չի եթէ գոքա յերկրի իւրեանց լինիցին՝ մեզ հանդչել ոչ լինի»[1])։

Մօրիկի այս ցինիկ հայտարարութիւնը տալիս է Բիւզանդիոնի՝ Հայաստանի նկատմամբ վարած նենգ քաղաքականութեան պարզ պատկերը։

Մօրիկի այս հայտարարութիւնը սակայն չի մնում լոկ հայտարարութիւն, այլ իրագործվում է կեանքում։ Արեւմտեան Հայաստանից բազմաթիւ հայ իշխաններ աքսորվում են Բիւզանդիայի արեւմտեան նահանգները կամ քչվում հովիւ՝ ավարնելի դեմ, ուր և սպանվում են։

Հայ ժողովրդի օտարկրկրյա դավիճիների դեմ 6—7-րդ դարերում մղած պայքարը մեծ չափով դրել է իր արտացոլումը ժամանակակից դրականութեան մէջ։ Այդ մասին վկայութիւն էլ ունի դրած Մամիկոնեան հեղինակ տան պատմիչ Հովհան Մամիկոնյանը՝ իր «Պատմութիւն Տարօնոյ» աշխատութեան մէջ։

Հայ ժողովրդի ազատասիրութեան բարձր ոգին պատկերող մի օրինակ մեզ է բերում Հովհաննի պատմութիւնից։

Պարսից սպանված Վախթանգ գորավարի բարեկամներից մեկը գալիս է Հայաստան Վահանի մոտ՝ դերութիւնից ազատելու Վախթանգի կնոջը և որդուն։ Նա դիմում է Վահանին հետևյալ խոսքերով. «Իշխան հզոր ի վերայ Հայոց, տա՞ս դդոսա (այսինքն Վահանի կնոջը և որդուն Ա. Ա.)... արքային տուր»[2])։ Վահանը կատուկ պատասխանում է. «... Մեռեալ չուն մի ոչ տամ (արքային ձեր), որ ճաշ ուտէ առանց դնոյ, թո՛ղ քէ դդոսա»[3])։

Հայ ազատասեր իշխանների օտար թշնամու դեմ վարած պայքարի պատկերավոր օրինակը կարող է հանդիսանալ Մուշեղ Մամիկոնյանի համառոտ կենսագրութիւնը, որը բերվում է Հովհաննի մոտ — Մուշեղ Մամիկոնյանը տեսնելով, որ ծերացել է ինքը և չի կարողանում կառավարել երկիրը, կանչում է Վահաննին և նրան հանձնում իր իշխանութիւնը հետևյալ արտառուչ կտակով. «Որդեա՛կ Վահան, դու դիտես զաւուրս կենաց իմոց, դէ այս հարիւր եւ քսան ամ է՝ որ պատերազմ եմ մղեալ, եւ սլաքով եմ սրբեալ զարիւնն ի ճակատէս վիրանակ քրտանցն. ութսուն և երեք ռազմ անձամբ իմով եմ կարգեալ և մղեալ. և այժմ ծեր եմ և դողդոջուա... Երկիրս քեզ նվիրեմ, եւ զաւակիդ քում յետ քո»[4])։

Հայ ժողովրդի օտարկրկրյա դավիճիների դեմ մղած ազատագրական այս պայքարը, պարզ է, որ չէր կարող այս կամ այն չափով և իր արտահայտութիւնը չգտնել նաև Շիրակացու աշխատութիւնների մէջ։ Եվ իրոք, Շիրակացու գրեթե բոլոր աշխատութիւնների մէջ, կարմիր թելի նման,

---

1) Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն, էջ 49։
2) Հովհան Մամիկոնեան, «Պատմութիւն Տարօնոյ» (մեր հրատարակութիւնը), Երևան 1942 թ., էջ 230։
3) Նույնը, էջ 230։
4) Նույնը, էջ 176։

անցնում է հայ ժողովրդի օտարերկրյա զավթիչների դեմ մղած հերոսական պայքարը: Թե ինչ չափով է այդ պայքարը նույնչ ազդել Շիրակացուն, այդ կարելի է տեսնել նրա «Յաղագս հարցման եւ լուծման» աշխատությունից, ուր թվաբանական խնդիրների նյութն անպակաս վերցված է հայոց զորքերի թվաքանակ դեմ զորձած քաջագործություններից: Շիրակացու խնդրագրքի սկզբում է Զորակ Կամսարականի քաջագործությանը նվիրված հետևյալ խնդիրը· «Այսպէս լուայ ի հաւրէն իմմէ, եթէ ի ժամանակի պատերազմացն Հայոց ընդ Պարս սաստիկ քաջութիւնք լինէին ի Կամսարականէն Զաւրակայ, որպէս թէ ամսաւրեայ աւուրք երիցս յարձակեալ ի վերայ զաւրացն Պարսից՝ եւ հարկանէր յառաջնումն դիէս զաւրուն, եւ ի հետ մտեալ հարկանէր յերկրորդումն զչորրորդ մասն զաւրուն, եւ յերրորդումն՝ զմնասասնեւրորդն: Եւ մնացեալքն անկանէին փախստեայ ի Նախճաւան՝ քուով մզ»[1]):

Շիրակացու ուսմնասրդ խնդիրը նվիրված է Հայոց՝ Պարսից դեմ ուղղված ազատամարտությանը, ուր սպանվում է Սուրեն մարզպանը. «Ի ժամանակի ազատամարտութեանն Հայոց ի Պարսից, եւ սպանանելոյն Կամսարականին Զաւրակայ զՍուրէն, զնախան արձակեաց ոմն յաղտատաց հայոց առ թագաւորն պարսից զո՞յժ արկանել նմա. եւ զնայր աւուրն յիսուն մղոն: Եւ զկնի ժե աւուր խնացեալ Կամսարականի Զաւրակայ հետամտիկս առաքէր զկնի ունել զնա, որք զնային աւուր 3 մղոն: Արդ զիտեա՛ եթէ քանի՞ աւուրն հասանէին նմա»[2]):

Շիրակացին իր ժամանակի մեծ հայրենասերներից մեկն է հանդիսացել: Պարզենք մի հարց ևս—ինչ տեղ ունի VII դարի հայ մատենագրությունը հայ գրականության պատմության մեջ և որն է Շիրակացու դերը:

Բյուզանդիոնը և Տիգրոնը՝ հայ ժողովրդին քաղաքականապես լծվելու համար, գործում են ոչ միայն զենքի, այլ և իդեոլոգիական նուրբ միջոցներով: Այդ տեսակետից կարևոր նշանակություն ուներ իհարկե կրոնը: Կողմերից ամեն մեկն աշխատում էր վերացնել Հայաստանի կրոնական-գաղափարական այն տարբերությունները, որ գոյություն ունեին Հայաստանում՝ իրենց երկրում պաշտոնական ճանաչված կրոնի համեմատությամբ: Նրանք աշխատում էին հայ աշխարհիկ և հոգևոր ամենաբարձր շրջանում ստեղծել քաղաքական մուր հենարան և մեկ ընդ միշտ իրենց վրա ամրացնել Հայաստանի տիրապետությունը՝ հանդարտություն ստեղծելով հայ ժողովրդի հետագա ճնշման համար:

Մինչև Հուստինիանոսի գահակալությունը, պետք է ասել, Բյուզանդիոնը նման քաղաքականության դիմելու կարիքն այնքան էլ չէր զգում, որովհետև հայերը կրոնական ժողովուրդ էին համարվում: Դեռ ավելին, Բյուզանդիոնը չատ ճարպիկ ձևով կարողանում էր ժամանակ առ ժամանակ չարաչահման ենթարկել այդ վասոը: Սակայն դրությունը հիմնովին փոխվում է 554—555 թ.թ. հետո, երբ հայ եկեղեցին, Դվինի եկեղեցական ժողովում, որոշում է ընդունում և բաժանվում քաղկեդոնական

---

1) Անանիայի Շիրակունւոյ, «Յաղագս հարցման և լուծմանն», հրատ. Գ. Տ.-Մկրտչյանի, Էջմիածին 1898 թ., էջ 20։

2) Նույնը, էջ 22։

եկեղեցուց: Այնուհետև հայոց և քաղկեդոնական եկեղեցու միջև սկսում են դոգմատիկ հարցերի շուրջը կատաղի վեճեր:

Հայոց և քաղկեդոնական եկեղեցիների միջև սկսած այդ վեճերն, բուն իրենց բովանդակության, կրոնական սխոլաստիկ վեճեր էին, ճիշտ այնպիսի վեճեր, ինչպիսին Նիկիայի տիեզերական ժողովից հետո քրիստոնեության շրջանում սկսված կրոնական վեճերը: Սակայն Հայաստանում, դնալով, այդ վեճը ստանում է քաղաքական սուր բովանդակություն: Դիմելի ժողովից հետո Բյուզանդիոնն ամեն ջանք գործ է դնում իր քաղաքական դրաքերն իրագործելու համար լեզու դնել քաղկեդոնական եկեղեցու վրա, հաստատել այն Հայաստանում: Իսկ հայոց եկեղեցին, իր հերթին, աշխատում է պաշտպանվել՝ իր շուրջը համախմբելով ժամանակից հայրենասեր մտավորականությանը:

Բյուզանդիոնը, քաղկեդոնական եկեղեցին Հայաստանում հաստատելու համար, դիմում է ամեն տեսակ նենգ միջոցների: Նա աշխատում է կեղծ խոստումներով համոզել հայ հոգևորականության վերնախավին (այդ նպատակով են հրավիրվում Պոլիսի ժողովը 589 թ.), Թեոդոսուպոլսի երկը ժողովները և այլն: Նա փորձում է օգտագործել Արևելյան Հայաստանի՝ Պարսկաստանի դերիշխանության տակ գտնված ծանր կացությունը՝ խոստանալով օգնել հայոց, եթե նրանք քաղկեդոնության ընդունեն: Փորձում է Հայաստանում հակաթոռ կաթողիկոսություն ստեղծել (Հովհաննես կաթողիկոսին՝ հակաթոռ օրինական կաթողիկոս Մովսես Եղվարդցուն): Փորձում է մինչև անդամ կաշառելու հայ եկեղեցու որոշ կաթողիկոսներին (օրինակ, Եղբ կաթողիկոսին, որին նվեր է տրվում Կողբի ադամանդի կիսը) և բազմաթիվ այլ խորամանկ միջոցներ, որոնց մեջ վաղուց վարժվել էր բյուզանդական նենգ դիվանագիտությունը: Սակայն այս ամենը չեն տալիս ապատված արդյունքները[1]):

Մինչև 451 թվի ժողովրդական ապստամբությունը, Տիրոնը ևս ընթանում է Բյուզանդիոնի ճանապարհով: Նա ևս իր հերթին աշխատում է հաստատել զրազաշտական կրոնը Հայաստանում: Սակայն Տիրոնը հանդիպելով հայոց անօրինակ համառությանը, չատ չուտ փոխում է իր քաղաքականությունը և վերցնում նոր կուրս— աշխատում է խրախուսել Հայաստանի հակաքաղկեդոնական չարժումը, որպեսզի այդ միջոցով դոնե թուլ չտա հայոց և քաղկեդոնական եկեղեցիների միավորումը:

Քաղկեդոնական եկեղեցու դեմ սկսված պայքարը, կրոնական հագուստ հագած քաղաքական մյուս բոլոր հոսանքների չարքում, հայոց մոտ մնում է հիմնականը: Քաղկեդոնականության դեմ է ուղղվում հայ առաջավոր և հայրենասեր մտավորականության ողջ պայքարը: Զարմանալի չէ, որ ժամանակակից հայ գրականության գլխավոր թեման այդ է հանդիսացել: (Այդ՝ ի միջի այլոց, ավելի ընդգծված ձևով արտահայտվել է հատկապես կրոնական—կանոնական գրականության մեջ):

Շիրակացին, որպես իր ժամանակի խոշոր և անվանի մի անձնավորություն, պարտ է, որ չէր կարող անտարբեր դտնվել իր շուրջը կատարվող քաղաքական այս կարևոր իրագործությունները:

Պատմական գրականության մեջ այն կարծիքն է հայտնվել, որ իբր

---

1) Տես այս մասին Մ. Օրմանյանի «Ազգապատում»-ի I հատ., § 374—557:

Շիրակացին հանդիսացել է քաղկեդոնական եկեղեցու հետևող: Այդ կարծիքն է զարգացրել հատկապես Բ. Սարգիսյանն իր ժամանակագրության առաջաբանում, որի վրա դեռ մենք հարկ կունենանք կանգ առնել: Բարձր գնահատելով վենետիկյան միաբանի մատենագրական աշխատանքը, բայց ավյալ հարցում նրա մտքին կասենք, որ նրա եղրակացությունը բղխում է ոչ թե նրա ծանոթ սկզբնաղբյուրներից, այլ կուսակցական նեղ հաշվումներից:

Շիրակացին իր բոլոր աշխատություններն մեջ չատ պարզ արտահայտել է իր բացասական վերաբերմունքը քաղկեդոնական եկեղեցու նկատմամբ: Դրանում համոզվելու համար բավական է թեկուզ թերթել Շիրակացու Հայանության և Զատկի ճառերը, ուր Շիրակացին տոմարական իր ամբողջ դիտությունը դրած է գնում՝ ապացուցելու քաղկեդոնական եկեղեցու տոմարական հաշվումներում սխալ լինելը: Բավական է այստեղ բերել նրա արհամարհական խոսքը Բյուզանդիայի դիտնականներին. «Ցունաց[2] զայս արասցուք պատասխանի, ոչ հրամայէք զործ ճշմարտութեան, այլ միշտ իշխանութեան, բռնութեան...[3]): Խոսքը վերաբերում է ո՛չ միայն նրանց կատարած տոմարական սխալ հաշվումներին, այլ և դիտության նկատմամբ բռնած տենդենցիոզ ուղղությանը:

Սամուել Անեցու մի տեղեկությունից երևում է, որ Շիրակացին մոտից հեռացրել է իր այն աշակերտներին, որոնք հարել են քաղկեդոնական եկեղեցուն: Անեցին գրում է. «Աշակերտք Անանիայի՝ Հերմոն, եւ Տրդատ, եւ Ազարիա, եւ Եղեկիէլ, եւ Կիրակոս, եթեալ յերուսաղէմ՝ հաւանեցան երկաբնակացն, եւ ի զարձին ոչ ընկալաւ զնոսա ճշմարիտ վարդապետն Անանիա»[4]:

Շիրակացու հակաքաղկեդոնական լինելու մասին տեղեկություններ կան անդամ կաթոլիկ գրականության մեջ: Այսպես, կաթոլիկ Կղեմես վարդապետը (17-րդ դ. հեղինակ) Շիրակացու մասին խոսելիս հետևյալն է գրում. «Անանիա Շիրակացի. զրով եւ անդրէ ջանայր սերմանել ի մէջ հայոց չար որոմն աղանդոց միաբնակաց եւ հետացուցանել զաղգն իւր ի կաթոլիկէ եկեղեցւոյն»[5]:

Հայ ժողովրդի հողևոր կյանքում կուլտուրական խոշոր փաստ հանդիսացավ մեր ներկա հայկազյան գրականության ստեղծումը 5-րդ դարի առաջին քառորդում՝ Մեսրոպ-Մաշտոցի նախաձեռնությամբ[6]: Այդ գրության 5-րդ դարում ծաղկում, գարգանում է հայ օրիգինալ և թարգմանական գրականությունը: Այդ գրության անմիջական արդյունքները հանդիսացան՝ Կորյունը, Խորենացին, Եղիշեն, Փարպեցին և բազմաթիվ այլ

---

1) Վենետիկյան Մխիթարյանների որոշ միաբանների տենդենցիոզ այս մտեցումը նկատել է նաև Մխիթար Նալբանդյանը, տես Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, III հ., Աբմֆանի հրատ., Երևան 1940 թ., էջ 225:

2) Շիրակացին «յոյն» ասելիս ի նկատի ունի բյուզանդական դիտնականներին:

3) Ան. Շիրակացու Յայտնության ճառը (Մատենադրան, էջ 13):

4) Սամ. Անեցի (տես ՀՍՍՌ մատ. № 5619, թ. 80 ա.):

5) Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հռոմայ, Կղեմես վարդապետի, II հատոր, 1 մաս, էջ 9:

6) Մեսրոպից առաջ հայ գրականության գոյության մասին վերջերս հետաքրքիր է գրականագետ Ա. Կարինյանի հոդվածը:

հեղինակներ, որոնցով հայ ժողովուրդը լիովին իրավունք ունի պարծենալ։ 5-րդ դարի հայ մատենագրության բարձր որակը և նրա ահեղելիկ լեզուն անդամ հիմք է տվել որոշ հայագիտների 5-րդ դարը դրականությունը համարել հայոց դրականության պատմության ոսկի դարը։

5-րդ դարի այս ծաղկած դրականության դարին, սակայն, հայ դրականության ամբողջության, կամ՝ ինչպես ընդունված է եղել ասանց կոմիտաս, «Ձեխադարյան» դրականության դարերը չեն հաջորդել։ Ն. Ց. Մառն իր «Ани» աշխատության մեջ, միանգամայն իրավացիորեն քննադատում է քաղաքագիտություն սուտացած այս տրադիցիոն տեսակետը և համոզցուցիչ փաստերով ցույց տալիս, որ հետագայում ևս, հայկական կուլտուրական կյանքը, որոշ ելևէջներով, իր վերելքն է տալիս։ «Բրահանում, 5-րդ դարից մինչև Անիի անկումը,— գրում է Ն. Ց. Մառը,— Հայաստանում կյանքը հորդում է աղբյուրի նման»[1]։

6-րդ դարում, հատկապես 6-րդ դարի երկրորդ կեսում, նկատվում է դրական մի նոր երևույթ — դիտական-թարգմանական դրականության առկայծումը Հայաստանում լայն ծավալով։ Այդ շրջանին են վերաբերում փիլիսոփայական, քերականական և ճարտասանական մի շարք աշխատությունների հայերեն թարգմանությունները հունարենից։ Այդ ժամանակ է թարգմանվում Աբիստոտելի «Ճաղատ ստորոգութեանց»-ը, «Պերիարմենաս»-ը «Ճաղատ աշխարհի» և «Ճաղատ վերլուծութեան»-ը։ Այդ ժամանակ են թարգմանվում Պորփյուրի «Ներածությունը», Էլիասի և Ոլիմպիոդորոսի փիլիսոփայական մեկնությունները, Զենոնի և Հերմեսի փիլիսոփայական աշխատությունները[2], Դիոնիսիոս Թրակացու քերականությունը, Թեոնի ճարտասանական աշխատությունը և այլն։ Եվ վերջապես, այս ժամանակ են սկսվում հայ հեղինակների կողմից դրվել դիտական այդ աշխատությունների մեկնությունները։ Դրական-դիտական այս հատանքը մեզ մոտ հայտնի է հունաբան կամ հելլենոֆիլ հոսանք անունով[3]։

Ն. Ադոնցը, իր «Армения в эпохе Юистиниана» աշխատության մեջ, խոսելով 6-րդ դարի երկրորդ կիսում հայ մտավոր կյանքում նկատվող դրական այս նոր երևույթների մասին, հետևյալն է գրում. «(Հունաբան) այդ հոսանքը սկսվում է Հուստինիանոսի ժամանակից և սերտ կերպով կապված է նրա վերանորոգումների հետ։ Մենք իրավասու ենք 6-րդ դարի երկրորդ կեսը համարել հայոց մտավոր կյանքի նոր շրջանի սկիզբը։ Թեև որքան խոշոր է հունաբան շրջանի նշանակությունը հայ դպրության պատմության մեջ, կարելի է դատել այն փաստից, որ նրա արդյունքներն են հանդիսանում, ի մի ժողով, Դավիթ Անհաղթի տրակտատները և նշանավոր մեկնիչ Անանիայի աշխատությունները...»[4]։

Հայ դիտական դրականության սկզբնավորումը, իհարկե, 6-րդ դարից չէ։ Նա դոյություն ուներ և նախորդ դարում։ Այսպես, անկասկած փաստ է, որ Եղիշե Վաղարշին իր պոլեմիկական «Եղծ աղանդոց» աշխատության մեջ,

---

1) Н. Я. Марр, Ани, стр. 7.

2) Զենոնի և Հերմեսի տեքստերը հայտնաբերվել են մեր Մատենադարանում Ն. Կ. Ակինյանի կողմից։ Ըստ մեր նախնական ուսումնասիրության, Զենոնը և Հերմեսը թարգմանված են 6-րդ դարում։

3) Տես այս մասին ակադ. Հ. Մանանդյանի «Հունաբան դպրոցը և նրա գործունեության շրջանները», Վիեննա 1928 թ.։

4) Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПБ 1908, стр. 208

հանրապետական մեծ վարպետությամբ ըրանարել է իր դարաշրջանի փիլիսոփայական, սիմվոլաբանական և ճարտասանական դիտությունները: Սակայն դիտական դրականությունն իր նատակնությունն ատացավ 6-րդ դարի վերջին քառորդում, հատկապես 591 թվի պարսկա-բյուզանդական դաշնադրության հետո, երբ Հայաստանի մեծ մասը դարձ եկավ Պարսկաստանի գերիշխանության տակից, տեղծված խաղաղության կարճատև շրջանում Հայաստանը չունչ քաշեց և հնդկեվրոպական կուլտուրան անարգել ճամբով սկսեց մուտք գործել Հայաստան և շփման մեջ մտնել տեղական կուլտուրայի հետ:

Ի միջի այլոց, Ն. Յ. Մառը, նկատելով որ ծանոթ չի եղել Շիրակացու մի շարք կարևոր աշխատությունների հետ, բայց հրատարակված ու հայտնի աղբյուրների հիման վրա եկել է միանդամայն ճիշտ եզրակացության: Նա իր հրատարակած «Բարուախոս»-ի առաջաբանում հետևյալ կարծիքն է հայտնել. «Ինձ անձամբ ավելի և ավելի է ան խուսափելի թվում այն կարծիքը, որ հայ դրականության նոր էրան վրա է հասնում ինչ որ 6—7-րդ դարերի սահմաններում»[1]: Շիրակացու նորահայտ աշխատությունները, ինչպես կտեսնենք, դալիս են լիովին հաստատելու Ն. Յ. Մառի կարծիքը:

Շիրակացին, իրապես, չէր կարող Շիրակացի լինել առանց հունարան հոսանքի ստեղծած դրականության: Հունարան հոսանքի ստեղծած դիտական դրականությունը մեծ չափով անունդ ավից Շիրակացուն: Գուցե և Շիրակացին ավելի շատ է պարտական հունարան հոսանքի ստեղծած այդ դիտական դրականությանը, քան այդ մեզ է վիճակել մեզ հասած Շիրակացու նախորդ դրականության հիման վրա: Սակայն Շիրակացու դրական ուղղություններ հունարան հոսանքի որդեգրված «նյութական», «տատացի» թարգմանությունը չէ, ինչպես դատում է Ն. Ադոնցը: Օգտվելով հունարան հոսանքի ստեղծած դրականությունից, Շիրակացին ամեն կերպ աշխատում է պարզեցնել, հնարավոր չափով հասկանալի դարձնել այն, և, ամենից կարևորը,— ավելացնել իր սեփականը, օրիգինալը: Շիրակացին հայ մատենադրության 7-րդ դարի հեղինակ է, իսկ 7-րդ դարի հայ մատենադրության առանձնահատկությունը կայանում է, մեր կարծիքով, հենց նրանում, որ նա հիմնականում զարգացավ ո՛չ թե միակողմանի հունարան հոսանքի տրադիցիայով, այլ սինթեզից ոսկեղենիկ 5-րդ և հունարան 6-րդ դարերը:

7-րդ դարում, Հայաստանում, փայլում էին մի շարք դպրոցներ: Մաշտոց Կաթողիկոսն իր «Թղթում» այդ մասին հետևյալն է գրում. «...Ընդարձակ Հայաստան եկեղեցիքս ըստ բազմամարտ չինութեան նախանձավառ եւ ջանասիրս ուսմանց առատութիւնք եւ արուեստուորք եւ դպրոցք կանգնուն էին յաշխարհս...»[2]: Այդ դպրոցների մեջ դասախարակություն են ստացել ժամանակի հայտնի դրիչն բոլոր մատենադրները: 7-րդ դարի դպրոցներից նշանավոր են՝ 1) Սյունյաց դպրոցը, որն՝ ըստ Ստեփանոս Օրբելյանի վկայության, կոչվում էր դպրոցների «դլուխ և հրամանատար» դպրոց, 2) Դպրեվանքի դպրոցը՝ Շիրակում, 3) Արշարունյաց դպրոցը (մատենադրության մեջ հիչվում է նաև Վարդիհերի դպրոց)՝ Երասխաձոր գավառի

---

1) Н. Я. Марр, Физиолог (Армяно-груз. издат.), СПБ 1904, стр. XLIXI.

2) Տես «Ազբատ» ամսագիր, 1902, էջ 749.

Վարդիկ Հայր կոչվող վանքում, 4) Մայրոյ վանքի դպրոցը Բջնիից հյուսիս և, վերջապես, 6) Գլակա վանքի դպրոցը՝ Տարոնում:

Դարի խոշոր մատենագրերից են՝ Կոմիտաս կաթողիկոսը, որը հայտնի է Հովհաննես Մանդակունու վրա գրած քնարական բանաստեղծությամբ, Մամիկոնյան, Սյունյաց դպրոցի վեհապետը, որը մատենագրության մեջ հիշվում է «Մեծ քերթող» և «Անհաղթ փիլիսոփա» տիտղոսներով, Հովհան Մայրագոմեցին, Մայրավանքի դպրոցի հիմնադիրը, Մովսես Կաղանկատվացին, «Պատմութիւն Աղուանից աշխարհի» հեղինակը, Դավիթ Բաղիշեանցին, որին Առաղիկը հիշում է «Մեծ փիլիսոփա» տիտղոսով, Վրթանես քերթողը, «Ճառագայթ պատկերամարտից»-ի հեղինակը, Թեոդորոս Բժիշկովրը, որի մի քանի ճառերն են, ժամանակագրը, հասել մեզ, Բարսեղ Ճոնը, Դպրեվանքի աչքի ընկնող դեկավարը և այլն[1]):

7-րդ դ. հայ մատենագրության ալիքը ցույց տալու համար մենք չենք ցանկանում թված մատենագրների աշխատությունները համեմատության մեջ դնել ոչ 5-րդ դարի հետ, որը համարվում է հայ գրականության «ոսկեդարը», և ոչ էլ 10—12-րդ դարերի հետ, որոնք վերջերս գրվում են որպես վերածննդի շրջան: Ընդհանրապես, անիմաստ համեմատություններ և հակադրություններ կատարելը հաճախ ոչ թե օգնում, այլ վնասում է հարցի լուսաբանությանը: Ձգտենք մի արժեք բարձրացնել՝ նվաստացնելով մյուսը: 5-րդ դարի հայ մատենագրությունն ունի իր արժեքը, 10—12 դարերինը՝ իր: 7-րդ դարի մասին խոսելիս սակայն պիտի ընդգծել, որ 7-րդ դարի հայ մատենագրությունն աչքի է ընկնում իր դիտական օրիգինալ գրականությամբ: Հիմնականում 7-րդ դարումն է ստեղծվում արժեքավոր հայ դիտական գրականությունը:

Ուշադրության արժանի է, որ 7-րդ դարում ստեղծված դիտական այդ գրականությունն իր որակով ու արժեքով անհամեմատ ավելի բարձր է կանգնած, քան միջին դարերում Հայաստանում ստեղծված դիտական գրականության որևէ դարի գործ:

Այսպես, հին հայ հեղինակների աշխարհագրական բովանդակություն ունեցող աշխատություններից մեզ հասել են՝ Ստեփանոս Սյունեցու «Աշխարհացոյց»-ի հատվածը, Լամբրոնացու «Աշխարհացոյց»-ը, Կարապետ Տարոնացի ոտանավոր «Աշխարհացոյց»-ը, Հովհաննես Անկյուրացու «Աշխարհացոյց»-ները և այլն: Սակայն սրանցից ո՛չ մեկն իր բովանդակությամբ չի կարող համեմատվել Շիրակացու կազմած «Աշխարհացոյց»-ի հետ:

Տոմարի գծով մեզ հասել են՝ Հովհաննես Կոգեռնի, Հովհաննես Սարկավագի, Սամուել Անեցու, Ստեփաննոս Երեցի, Հակոբ Ղրիմեցու, Հակոբ Ջուղայեցու, Աղաթայի, Սիմեոն Երևանցու և այլոց տոմարները, սակայն քրեց դիտականությամբ և արժեքով, սրանցից ոչ մեկը չի կարող համեմատվել Շիրակացու տոմարի հետ:

Մաթեմատիկայի վերաբերյալ աշխատություններ ունին գրած՝ Նարեկացին, Սարկավագը, Մխիթար Անեցին, Պետրոս Երեցը, Մարտիրոս Ղրիմեցին, Զաքարիա Սարկավագը, սակայն թված հեղինակների մաթեմատի-

---

1) Այս մասին տես Գ. Զարբհանեյանի «Հայկական հին դպրության պատմությունը», III տպ. էջ 435—471:

կական աշխատությունների ոչ մեկը դարձյալ չի կարող համեմատվել Շիրակացու կազմած մաթեմատիկական աշխատությունների հետ:

Նույնը պիտի ասել նաև տիեզերագիտության մասին: Մեզ հասած՝ Սարկավագի, Շնորհալու, Հովհաննես Երզնկացու, Թորոսի, Առաքել Սյունեցու և այլոց տիեզերագիտությունները մեծ մասամբ Շիրակացու տիեզերագիտության մեկնություններ են հանդիսանում և, հաճախ, վատ մեկնությունները:

Ուշադրության արժանի է նաև, որ Շիրակացին իր աշխատություններում մեծ չափով հիմնվում է կլասիկ հունական դիտության վրա, կլասիկ հույն դիտնականներից հաճախ մեջբերումներ է անում՝ անվանելով նրանց «արտաքին դիտնականներ»[1]: Շիրակացու հունական այս առաջավոր դիտության վրա հիմնվելու փաստն անհրաժեշտ է ընդգծել, որովհետև Ե-րդ դարում, Բյուզանդիայում, հունական կլասիկ դիտությունը ոչ միայն հարկ եղած ուշք չուներ, այլև բացարձակ հալածվում էր: Որպես փաստ կարելի է թեկուզ հիշել Աթենքի համալսարանի փակումը Հուստինիանոսի օրոք, հունական դիտական դիսցիպլինաների կրճատումը Բյուզանդիայի համալսարանում և այլն[2]): Իզուր չէ, որ Բյուզանդիայի պատմության մեջ Ե-րդ դարը համարվում է «խավարի դար»:

Շիրակացու մեծությունը, մեր կարծիքով, կայանում է սակայն ո՛չ միայն նրանում, որ նրա աշխատությունները բարձր ուսակի երկեր են, որ Շիրակացին լինքը լավ հայրենասեր է հանդիսացել, որ նա հակաբյուզանդական օրիենտացիա է ունեցել և այլն: Հայ մատենագրության մեջ բազմաթիվ հեղինակներ կարելի է թվել, որոնք աչքի են ընկել այդ գովելի հատկություններով: Շիրակացու մեծությունը, նչված մատենագրերի համեմատությամբ, մեր կարծիքով, կայանում է նրանում, որ նա հիմնադիր հանդիսացավ հայկական դիտական դրականության և հնարավորություն տեղծեց դիտությունն օգտագործել հայ ժողովրդի ինքնուրույնությունը պաշտպանելու գործում: Ձգիտի մոռանալ, որ եթե հայ մարդիկը օտար բռնակալի դեմ կռվում էր որով, ապա հայ մտավորականությունը բռնակալի դաղափարախոսության դեմ կռվում էր դրչով: Եթե Մաշտոցը հիմք դրեց հայաստան ներկա դրականությանը, որպեղի հայ ժողովրդին ազատի հոմանական, ասորական և օտար այլ ազդեցություններից[3]), ապա Շիրակացին հիմք դրեց հայկական դիտական դրականությանը՝ դնեք մատակարարելով հայ մատավորականությանը՝ պաշտպանելու հայ ժողովրդի ինքնուրույնությունը, պայքարելու բյուզանդական և այլ օտար ազդեցությունների դեմ: Դրանումն է Շիրակացու աշխատությունների քաղաքական խոր իմաստը:

Շիրակացու դիտական աշխատություններից հետագայում օգտվեցին բազմաթիվ հայ մատենագիրներ և օգտագործեցին այն՝ բյուզանդական և այլ թշնամական դաղափարախոսությունների դեմ մղած պայքարում: Շիրակացուց մեծ չափով օգտվեցին՝ Հովհաննես Սարկավագը, Հովհաննես Երզնկացին

---

1) Այս մասին մանրամասն տես դոց. Ա. Առաքելյանի դիսերտացիան՝ «Հելլենոֆիլ հոսանքի և հունարան դպրոցի հարցի շուրջը» վերնագրով:

2) Տես այս մասին մեր «Նախամիջնադարյան դրականության առեղծվածի հարցի շուրջը» հոդվածը, որը տպվել է ՀՍՍՌ Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու»-ում:

կացին, Մաթեմբրոս Ղրիմեցին և բազմաթիվ այլ հեղինակներ: Համարձակ կարելի է ասել, որ Հայաստանում, մինչև դարերում, դրական գիտությունների զծով, Շերբակաց մաթեմատիկական, տիեզերագիտական, տոմարական, աշխարհագրական աշխատությունները, հետագայում այդ գիտությունների զծով ըրված աշխատությունների հիմնաքարերը հանդիսացան[1]):

Ը-րդ դարը, հայ կուլտուրայի պատմության մեջ, փայլուն է ոսկյան ա՛չ միայն իր գրագիտությամբ, այլև իր ճարտարապետական կոթողներով: Ճարտարապետ Թ. Թորամանյանը, իր «Հայկական ճարտարապետություն» աշխատության մեջ, Ը-րդ դարը համարում է հայ ճարտարապետության ոսկե դարը. «... Ը-րդ դարը իր բոլոր որոնումներով—դրում է նա,—և գանազանակերպ պատկառանքի մղումներով նախորդին է մի չքեղ վերածնության, որ տևողի է ունենալ Ը-րդ դարուն և իսկապես կոչված էր հայ ճարտարապետության ոսկե դարը լինելու...»[2]): Ոգևորված կարեվոր հուշարձաններով, նա, դարի արժեքների մասին խոսելիս, հետևյալն է գրում. «... Հայ ճարտարապետությունը Ը-րդ դարում այնպիսի գլուխ գործոցներ ունի, որոնք դիշով նկարագրել գրեթե անկարելի է, և նորից աշխատանքիս անձուկ սահմանը չի ներեր պատկերներ և համապատասխան դծագրություններ ավելացնել՝ փոքր ի շատե հասկանալի դարձնելու համար... Ամեն տեսակ քննադատություններից բարձր պիտի կանգնեն Մրեն, Թալինի, Թալիշի և Զվարթնոցի հոյակապ տաճարները... Վերջապես, այս երկրորդ վերածնությունն է, որ իր հուշարձանները կանգնել է գործարևելյան՝ ավելի ճիշտ գործ հայկական ոճով առանց օտար խառնուրդի»[3]):

Այսպիսով, Ը-րդ դարի մեր մատենագրական և նյութական կուլտուրաների կոթողները գալիս են լրացնելու, բացատրելու իրար:

Ը-րդ դարը, համոզված կարելի է ասել, որ հայ կուլտուրայի «ցնծադարը» էր, այլ նրա վերելքի, ծաղկման դարը: Ը-րդ դարի մինչնագրյան խավարում Հայաստանն է, որ ա՛չ միայն պահում և զարգացնում է հելլենիստական կլասիկ կուլտուրայի առաջավոր տրադիցիոնները, այլ և առնում է իր ուժական, օրիգինալ կուլտուրան: Հայկական կուլտուրայի լավագույն արժեքների դրսեի մասը Ը-րդ դարի արդյունքն են:

Ահա այսպիսի լուսավոր դարում է, որ հանդես է գալիս Անանիա Հովհաննեսի Շիրակացին: Նա իր դարաշրջանի լուսամիտ մատենագրների դեղեցիկ պլեադայի ամենափայլուն դեմքերից մեկն է: Նա հայ մատենագրության պարծանքն է:

---

1) Որպես օրինակ կարելի է հիշել Հովհ. Երզնկացու տիեզերագիտական տեքստը:
2) Թ. Թորամանյան, Հայկական ճարտարապետություն, Երևան 1942 թ., էջ 87.
3) Նույնը, էջ 90.

I. ՇԻՐԱԿԱՑՈՒ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ԴՐՉԱԳՐԵՐԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱՆ

Շիրակացու ինքնակենսագրության, կամ ինչպես սովորաբար ընդունված է ասել, «Վասն որպիսութեան կենաց իւրոց» աշխատության հետևյալ ըբչագիր ընդօրինակություններն են մեզ հայտնի:

1. *ՀՍՍՌ մատեն.* № 699 (*Կ.* 582), *թ.* 178*բ.* «Անանիայի Շիրակուեացւոյ երիցս երանեալ վարդապետի վասն որպիսութեան կենաց իւրոց:— *Ես Անանիա Շիրակացի ի յԱնանիայ դեղջ...»:* Գրչագիրն ընդօրինակված է 16-րդ դարում: Գրիչն ու գրչության վայրը հայտնի չէ:

2. *British Museum*-ի № 136, *թ.* 210 «Անանիայի Շիրակվանցոյ երիցս երանեալ վարդապետին վասն որպիսութեան կենաց իւրոց:— *Ես Անանիա Շիրակացի ի յԱնանիայ դեղջէն...»:* Գրչագիրն ընդօրինակել է *Աստվածատուր գրիչը* (*Հովսեփի որդի*) 1611 *թվին:* (*Տես Կոնիբերի ցուցակը «A catalogue of the arm. Manuscripts in the British Museum», London* 1913, *էջ* 397):

3. *ՀՍՍՌ մատեն.* № 511 (*Կ.* 500) *թ.* 1 *ա.* «Անանիա Շիրակացոյ երիցս երանեալ վարդապետին վասն որպիսութեան կենաց Անանիայ Շիրակացւոյ...» Գրիչն ու գրչության վայրը հայտնի չէ: Ձեռագիրն ունի 17-րդ դարի գրչություն:

4. *ՀՍՍՌ մատեն.* № 772 (*Կ.* 745), *թ.* 234*ա:* *Փոքրիկ հատված Շիրակացու ինքնակենսագրությունից:* Վերնագրված է. «Թանիֆ պիտանիֆ հաւաֆեալ»: *Տեքստն սկսվում է. «Ցորժամ ուսանէի...»:* Գրիչն ու գրչության վայրը հայտնի չէ: Ձեռագիրն ունի 17-րդ դարի գրչություն:

5. *ՀՍՍՌ մատեն.* № 8953, *թ.* 21*ա*—22*բ:* Անթոռագիր: *Սկզբից թերի է:* Սկսվում է. «...*րութիւն մերոյս ազգիս Հայաստանեայց և հմուտ եղեալ ասուածաշունչ գրոց և օր ըստ օրէ յուսաւորէի զաչս մտաց իմոց...»:* Գրիչը և գրչության ժամանակը հայտնի չէ: Ձեռագիրն ունի 18-րդ դարի գրչություն:

6. *Վիեննայի մատեն.* № 30, *թ.* 1*ա:* «Անանիայի Շիրակացւոյ երիցս երանեալ վարդապետի: Վասն որպիսութեան կենաց իւրոց:— *Ես Անանիայ Շիրակացի ի յԱնանիա դեղջ...»:* *Ընդօրինակող գրիչը և գրչության վայրը հայտնի չէ:* Ձեռագիրն ունի 19-րդ դարի գրչություն: (*Տե՛ս Հ. Տաշյանի կազմած Վիեննայի հայերեն ձեռագրաց ցուցակը, էջ* 174—176):

7. *Վենետիկի Մխիթ. մատեն.* № 968, *թ.* 427 «Անանիայի Շիրակուեացոյ երիցս երանեալ վարդապետին, վասն որպիսութեան կենացն...» Գրչ-

չութ յան ժամանակը պարզ չէ: Գրչագրի նկարագրությունը տես
Н. Адонц, Дионисий Фракийский и Армянские его толкователи, Петербург, 1913 г. стр. XI:

8· *Արմաշու վանքի մատեն.* № 40 «Անանիայի որպիսութիւն կենաց»: *Չեռագիրն ունի* 18-րդ *դարի գրչություն:* (*Գրչագրի մասին բիբլիոգրաֆիկ տեղեկություններ քաղել ենք Մեսրոպ Մաշտոցոսի ցուցակից*):

9· *Պոլսի ազգային մատեն.* № 234 «Անանիայի Շիրակունւոյ որպիսութիւն կենաց»: *Գրչագրի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ չունենք:* (*Գրչագրի մասին փոքրիկ հիշատակություն հանդիպում ենք Մեսրոպ Մաշտոցոսի ցուցակում*):

2· ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շիրակացու ինքնակենսագրությունն առաջին անգամ հրատարակել է պրոֆ. Ֆ. Պատկանյանն՝ իր կազմած «Անանիայի Շիրակունւոյ Մնացորդք բանից» ժողովածուում 1877 *թվին, Պետերբուրգում* (*էջ* 1—4): *Տեքստն ունի հետևյալ վերնագիրը.* «Անանիայի Շիրակվանցւոյ երից եռաւեալ վարդապետին վասն որպիսութեան կենացն»: *Պրոֆ. Ֆ. Պատկանյանը, Շիրակացու ինքնակենսագրության իր հրատարակած տեքստը, ըստ իր վկայության, առացել է Ղ. Ալիշանից:*

Շիրակացու ինքնակենսագրության երկրորդ հրատարակությունը լույս է ընծայել Հ. Տաշյանը՝ իր կազմած Վիեննայի Մխիթ. մատեն. ձեռագրաց ցուցակում (*տե՛ս էջ* 174—176):

Հետագայում Շիրակացու ինքնակենսագրությունը հրատարակել է նաև Ղ. Ալիշանը՝ իր կազմած «Հայապատում» աշխատության մեջ: Շիրակացու ինքնակենսագրության տեքստն այստեղ վերնագրված է. «Անանիայի Շիրակունացւոյ վասն որպիսութեան կենացն» (*տե՛ս Ղ. Ալիշան, «Հայապատում», Վիեննաիվ* 1901 *թ., էջ* 232—233):

Շիրակացու ինքնակենսագրությունն աշխարհաբար թարգմանվել է «Փորձ»-ի մեջ[1]): *Անգլերեն է թարգմանել Կոնիբերը*[2]): *Ռուսերեն է թարգմանել պրոֆ. Ֆ. Պատկանյանը՝ «Աշխարհացոյցի» ռուսերեն թարգմանության առաջաբանում*[3]):

3· ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շիրակացու ինքնակենսագրության տեքստը մեզ հասել է երկու խմբագրությամբ—մեկը համառոտ, իսկ մյուսը՝ ընդարձակ: Պրոֆ. Ֆ. Պատկանյանի և Հ. Ղ. Ալիշանի հրատարակած տեքստերը պատկանում են համառոտ խմբագրությանը, իսկ Հ. Տաշյանինը՝ ընդարձակ:

Շիրակացու ինքնակենսագրության այս երկու տեքստերի հարաբերության հարցը հայագիտության մեջ, որքան մեզ հայտնի է, ուսումնասիրված և պարզաբանված չէ, բայց Հ. Տաշյանը Վիեննայի № 30 *գրչագիրը նկարագրելու ժամանակ, նկատել է, որ այդ գրչագրում եղած Շիրակացու ինքնակենսագրության և պրոֆ. Ֆ. Պատկանյանի հրատարակած տեքստե-*

1) «*Փորձ*» *1877 թ., IV, էջ 317—330.*
2) F. C. Conybeare, Ananias of Shirak («Byz. Zeitschrift» 1897, *էջ 372—374*).
3) Армянская география VII века (*տես Երա առաջաբանը*).

քի մեջև զգալի տարբերություն կա, ուստի և անհրաժեշտ է համաձայնել այդ տեքստի ամբողջությամբ բնթերցել իր ցուցակում և նշել այդ մասին հետևյալը. «Հետաքրքրական այս կենսագրականն... բավականին կուտբերելի Պատկանյանի հրատարակություններն»[1]):

Շիրակացու ինքնակենսագրության երկու խմբագրություններից լավագույնը, ինչպես հետո կտեսնենք, Տաշյանի հրատարակած տեքստն է:

4. ՎԵՐՆԱԴԻՐ ՀԱՐՑԸ

Շիրակացու ինքնակենսագրության այս երկու խմբագրության տեքստերի վերնագրերի ուսումնասիրություններից պարզվում է, որ երկու խմբի վերնագրերից ո՛չ մեկն էլ իրենը, հեղինակինը չէ, այլ ուրիշ մեկի դրածը: Շիրակացու ինքնակենսագրության Տաշյանի հրատարակությունը, ինչպես հայտնի է, վերնագրված է. «Անանիայի Շիրակունւոյ երիցս երանեալ վարդապետի: վասն որպիսութեան կենացս իւրոյ»[2]): Պրոֆ. Ֆ. Պատկանյանը՝ «Անանիայի Շիրակվանցոյ երիցս երանեալ վարդապետի վասն որպիսութեան կենացն»[3]): Իսկ Ղ. Ալիշանինը՝ «Անանիայի Շիրակուանցւոյ վասն որպիսութեան կենացն»: Շիրակացին, պարզ է, ինքն իր մասին չէր ասի «երիցս երանեալ» վարդապետ: Այդպես կարող էին նրան հիշել հետագայում միայն նրա աշխատությունն ընթերցողները և նրան հարգող երիցները: «Երանելի» հնում դրել է ածվել միայն մահացածի նկատմամբ, որը համապատասխանում է «հանգուցեալ», «ողորմած հոգի» արտահայտություններին:

5. ԸՆԴԱՐՁԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽՆԱԿԱՆՆ Է

Շիրակացու ինքնակենսագրության երկու խմբագրության տեքստերի համեմատական ուսումնասիրությունից պարզվում է, որ նրանցից նախնականը, լավագույնը, ինչպես նշել ենք վերևում, ընդարձակ խմբագրության տեքստն է: Ընդարձակ խմբագրության տեքստը պահել է Շիրակացու աշխատության նախնական բնագրի մի շարք կարևոր մանրամասներ, որոնք կրճատված են համառոտ խմբագրության տեքստում: Բացի այդ, համառոտ խմբագրության տեքստում կան բավականին աղավաղված նախադասություններ, որոնք մարդու վիճակում հասել են մեզ ընդարձակ խմբագրության տեքստում: Բերենք մի քանի օրինակ:

Շիրակացին իր ինքնակենսագրության մեջ պատմում է, որ Տյուքիկոսի մոտ սովորելու գնացած ժամանակ՝ ուսուցիչը չար է ուրախանում, որ իր մոտ սովորելու է եկել մի հայ աշակերտ և հայտնում է, որ ինքը երկար ժամանակ ապրել է Հայաստանում. «Եւ առաւել ուրախ եմ, զի չինէն աշակերտի աշխարհն այն, զի ես ի մանկութեանն ժամանակի հա-

---

1) Հ. Տաշյան, Վիեննայի ձեռ. ցուցակ, էջ 174:

2) Նույնը. 174:

3) Ֆ. Պ. Ան. Շիր. Մնացորդք բանից, էջ 1:

4) Ղ. Ալիշան, Հայապատում, էջ 191, Ղ. Ալիշանը, Շիրակացու վերնագրի կազակությամբ, ներքին լուսնկցում ավել է հետևյալ ծանոթությունը. «Ամանիա Շիրակացի կոչեն՝ յանուն գաւառին, այլ Շիրակաւանցի յանուն Շիրակաւանին: Մեզ ծանոթ գրչագրերից ոչ մեկը տակայն չտվեց Ղ. Ալիշանի նշած ձևով:

բուսած ամս կացի ի բարիս յերկրին Հայոց և ցնծամ՝ զերթալ զիտուբիւնս ի նա, զի ի ժամանակս յայս ազխուժիչն էր ի նմա»: (ՀՍՍՌ մատ. № 699, թ. 181 ա.): Անկյունաւոր փակագծի տեքստը Շէրակացու համառոտ խմբագրության տեքստում կրճատված է (Համմտ. «Մեսրոպեան բանից», էջ 2, տող 17—20):

Շէրակացին իր ինքնակենսագրության մէջ հայտնում է, որ ինքը՝ Տյուքիկոսի մոտ ուղարկուելուց հետո, լիովին յուրացրել է համաբռղական արվեստը՝ մանաւանդ չափով սովորելով նաև այլ գիտութիւններ. «... Եւ արարեալ իմ առ նա ամս ութ, ուսայ լիով [զարուեստ համարողութեան, նաև՝ դոյզն ինչ զայլոցն տեղեկացայ գիտութեանց»]: (ՀՍՍՌ մատ. № 699, թ. 181ա.): Անկյունաւոր փակագծի տեքստը կրճատված է համառոտ խմբագրության մէջ (տե՛ս, էջ 2, տող 22—23):

Շէրակացին իր ուսուցչի կենսագրությունը պատմելուց առաջ ընթերցողներին ծանոթացնում է իր նպատակի հետ՝ թէ ինչու է ուզում ինքը նրա մասին մի քանի խոսք ասել. «Բայց կամիմ ոչ տգետս ձեզ լինել ամենահմուտ առն լաւութեան, այլ գիտութիւն ձեզ հասուցից պատմութեամբն» (ՀՍՍՌ մատեն. № 699, թ. 182ա.): Ընդգծված նախադասությունն ամբողջությամբ կրճատված է Շէրակացու համառոտ խմբագրության տեքստում:

Ի միջի այլոց, Շէրակացու ընդարձակ խմբագրության տեքստում Տյուքիկոսի մասին պատմվում է ոչ թէ առաջին դեմքով, այլ երրորդ, որն ավելի է համապատասխանում ինքնակենսագրության տեքստի ընդհանուր շարահյուսությանը:

Տյուքիկոսը Հայաստանում եղած ժամանակ, ըստ Շէրակացու համառոտ ինքնակենսագրության մէջ եղած տեղեկութեան, սովորել է լեզու և դպրութիւն: Համառոտ խմբագրության տեքստից պարզ չէ՝ թէ նա ի՞նչ լեզու է սովորել և կամ ի՞նչ դպրութիւն է ուսումնասիրել (տե՛ս «Մեսրոպ. բանից», էջ 3, տող 2—3): Ընդարձակ խմբագրության մէջ այդ մութ հետը պարզաբանված է. «Եւ ուսաւ մեր (այսինքն հայերէն— Ա. Ա.) լեզու և դպրութիւն»: (ՀՍՍՌ մատեն. № 699, թ. 182ա): Շէրակացու ինքնակենսագրության մէջ պահված այս տեղեկությունը կարևոր տեղեկութիւն է, որովհետև հայ աշակերտներն Սրբոմուտք կրթության դնալիս սովորում էին մշտեղ հունարէն, իսկ Շէրակացին սովորել է այնպիսի ուսուցչի մոտ, որը դիտցել է հայերէն:

Տյուքիկոսի հիվանդության տևողության, ինչպես և նրա կորցրած ապրանքների համար ունեցած կսկիծի մասին ո՛չ մի հիշատակություն չունի համառոտ խմբագրությունը (տե՛ս «Մեսրոպ. բանից», էջ 3, տող 2), այն ինչ, ընդարձակ խմբագրության մէջ կոնկրետ հիշված է այդ մասին. «Եւ երբն բազում աւուրս անցուցաներ ի հիւանդութեանն՝ ունելով և զկսկիծ կորստեան ընչից» (ՀՍՍՌ մատեն. № 699, թ. 182բ):

Կարելի է բերել բազմաթիվ այլ օրինակներ ևս, բայց բերածը, կարծում ենք, բավական է ընդարձակ խմբագրությանը նախապատվություն տալու համար:

Անհրաժեշտ է նշել, որ համառոտ խմբագրությունը՝ ընդարձակ խմբագրության համեմատությամբ ոչ մի լրացում չի կատարում: Միայն մի տեղ, Քրիստոսատուրի մասին խոսելիս, համառոտ խմբագրության տեքս-

ոը ընդարձակի համեմատությամբ ունի մի քանի ավելի բառեր. «Եւ տեսի զի ոչ ունէր պրովանդակութիւնն արուեստին, [այլ ասէի և անտի ծայրատիպ]»: («Մնաց. բանից», էջ 2, տող 1—2): Համառոտ խմբագրության տեքստում անկյունավոր փակագծի տեքստը ընդարձակի համեմատությամբ ավելի է: Սակայն սա աննշան ավելացումն է և, հավանական է, նախնական դրշագրից չի գալիս, այլ ուշ շրջանում ավելացրած ընդմիջարկություն է հանդիսանում:

Գրչական ընտիր և անթերի ընթերցումներից բացի, Շիրակացու կենսագրության ընդարձակ խմբագրության տեքստը հնարավորություն է տալիս այժմ լուսաբանել Շիրակացու և իր ուսուցչի անձնավորության հետ կապված որոշ մութ խնդիրներ: Փորձենք նրանց մի քանիսի վրա կանգ առնել:

6. ՇԻՐԱԿԱՑՈՒ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ.

Շիրակացու ինքնակենսագրության ընդարձակ խմբագրությունն՝ սկսելից առաջ, պահել է Շիրակացու ծննդավայր գյուղի անունը, Այստեղ Շիրակացին ինքն իր ծննդավայրի մասին պարզ ասում է. «Ես Անանիա Շիրակացի յԱնանիա գեղջէ···»[1] (ՀՍՍՌ Մատեն. № 699, թ. 178բ): Համառոտ խմբագրության տեքստը Շիրակացու ծննդավայր գյուղի անունը պահել է աղավաղված՝ «Շիրակվանցի» ձևով:

Ի միջի այլոց, պրոֆ. Ս. Հայրապետյանն իր «Անանիա Շիրակացու կյանքն ու գործունեությունը» հոդվածում, որը տեղավորել է ՀՍՍՌ Մատենադարանի «Գիտական նյութերի ժողովածու»-ի № 1-ում, Շիրակացու ծննդավայր գյուղն է համարում Անին և ենթադրում, որ այդ Անի գյուղը «գտնվել է Անի քաղաքին նախորդող համանուն բերդի պաշտպանության գոնայում»[2]: Պրոֆ. Ս. Հայրապետյանի պնդումը վիճելի է, որովհետև Շիրակացու ընդարձակ խմբագրության մեջ նախ ասված է ո՛չ թե «Անի գեղջէ», ինչպես բերում է պրոֆ. Ս. Հայրապետյանը, այլ, «Անանիա գեղջէ» (տե՛ս նաև Տաշ. ցուցակ, էջ 174): Ապա՝ եօթնապրյանքի վերջում Շիրակացու անձնավորության մասին եղած տեղեկության մեջ, որը բերվում է որպես իր գրած թեզին տալացույց, ասված է ո՛չ թե «Ես Անանիա Շիրակացի ի գեղջէ Անիից», ինչպես մեջ է բերում պրոֆ. Ս. Հայրապետյանը, այլև «Ես Անանիա Շիրակացի ի գեղջէ Անենից···» (Տե՛ս ՀՍՍՌ Մատեն. № 4066, թերթ 10բ): Եվ, վերջապես, Անեցու տեղեկությունը, որի վրա հենվում է պրոֆ. Ս. Հայրապետյանը, աղավաղված է: ՀՍՍՌ Մատենադարանում գտնվող Անեցու ժամանակագրության լավագույն մի ընդօրինակված է 1178 թվին և համանական է նշված, որ ընդօրինակված է Անեցու իրեն կենդանության օրով և նրա աչակերտի ձեռքով, ասված է ո՛չ թե «կոչէ առ իւր մեծ վարդապետն Անանիա յԱնիէ գեղջէ», ինչպես Անեցու սպագիր տեքստում է, այլ «Հայրապետն Անանիան կոչեաց առ իւր զմեծ վարդապետն Անանիայ յԱնենէից գեղջէ» (տե՛ս ՀՍՍՌ Մատեն. № 5619,

---

[1] Պիտի ենթադրել, որ հետո Անանիա անունը գործ է ածվել որպես գյուղի անուն:
[2] ՀՍՍՌ Մատեն. «Գիտական նյութերի ժողովածու» № 1, էջ 4:

քերք 78 բ)։ Նման սխալ տեղեկությունների հիման վրա պնդել, որ Առաքելա գյուղը Անի գյուղն է և Անի գյուղը գտնվել է հետագայի Անի քաղաքի տեղում, համոզեցուցիչ չէ։ Համենայն դեպս, այդ հարցը համոզեցուցիչ փաստերի հիման վրա դեռ կարող է ապացուցման։

Մեր կարծիքով, սխալ է նաև հայագիտության մեջ քաղաքացիության գաղափարի կարծիքը, որ իբր Շիրակացու թղթակիցներից մեջ Առաքելան երբեմն «Շիրակավանցի» կամ «Շիրակաւանց»-ցի է կոչվում, երբեմն՝ «Անեցի», ուստի և այդ անունները նույնն են։ «Անի»-ն, ավելի ճիշտ՝ «Անանիան» հիշվում է որպես ծննդավայրը գյուղի անունը, իսկ Շիրակացի, դրչագրերում ավելի հին ձևը՝ «Շիրակունին» նրա տոհմանունն է, գուցե և ակիզբ առած տեղանունից։ Շիրակացին հավանական է ազնվական ծագում է ունեցել և Շիրակի Շիրակունիների իշխանական տոհմից է։ Ճիշտ կլինի նրա մականունը դործ ածել ո՛չ թե Շիրակացի, այլ Շիրակունի։

7. ՇԻՐԱԿԱՑՈՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ՈՒՂԵՎՈՐՎԵԼՈՒ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Ըստ Շիրակացու կենսագրության համառոտ խմբագրության՝ Շիրակացին Թեոդոսուպոլսում և Զորրորդ Հայքում իր ցանկացած ուսուցիչը չգտնելուց հետո, ուղևորվում է Կոստանդնուպոլիս։ «Եւ անտի—ասված է համառոտ խմբագրության տեքստում—գնացի ի Կոստանդնուպոլիս»։ Նույն տեքստի հետագա շարադրությունից անհասկանալի է մնում Շիրակացու ծանոթներին հանդիպելը, նրանց ասված խորհուրդը՝ Տյուքիկոսի մոտ գնալու վերաբերյալ, և, ամենից կարևորը, Փիլաքրի մասին ասված տեղեկությունը, «...այժմ ետևակից եղեւ մեզ Փիլաքր սարկաւագն հայրապետին Կոստանդնուպոլսոյ և քաղում մանկունս ածէր առ նա յաչակերտութիւն»։ Փիլաքրը աշակերտների հետ գալիս էր Պոլսից և ոչ հակառակը, ուրեմն Շիրակացին նավակից էր լինելու հակառակ ուղղությամբ։ Այս հակասությունը նկատել է Հով. Թորոսյանը՝ իր «Անանիա Շիրակացին և «Ալարատ» թերթին մեկ հավելվածը» հոդվածում. «Արդ, որովհետև Անանիայի անունը չատ սեռա կերպով միացած է Տյուքիկոսի տոմսի հետ—գրում է նա,—այն պատճառով չատ տարակուսանքներ և խնդիրներ կծագին նաև Շիրակացվո մինչև ի Բյուզանդիոն կամ Տրապիզոն ըղած ուղևորության մասին... օրինակ մին Շիրակացին մինչև Կ. Պոլիս կերթա, անցնելով անշուշտ Տրապիզոնեն և չիմանար թեև Տյուքիկոսի հոն գտնվելը, ապա Կ. Պոլսո մեջ ծանոթից... կհանդիպի...»[1])։

Շիրակացու ընդարձակ խմբագրությունը հնարավորություն է տալիս մեզ պարզել այդ հակասությունը։ Այս խմբագրությունից երևում է, որ Զորրորդ Հայքից հետո Շիրակացին չտապալել է դնալ Կոստանդնուպոլիս, իջել է ծովափ, բայց հանդիպել է Պոլսից եկող իր ծանոթներին, որոնք և խորհուրդ են տվել նրան դնալ Տրապիզոն։ Շիրակացին այս մասին պատմում է. «Այնուհետև (այսինքն՝ Քրիստոսատուրից բաժանվելուց հետո) աճապարեցի երթալ ի Կոստանդնուպոլիս և պատահեաց ինձ ի ծանուցիկս ինոց, որք անտի էին ուղևորեալք...» (ՀՍՍՌ մատեան. № 699, թերթ 179 բ.)։ Շիրակացին լսում է Պոլսից եկած իր ծանոթների խորհուրդները («որք անտի էին ուղևորեալք») և ճանապարհվում Տյուքիկոսի մոտ։ Այս-

[1]) «Բազմավէպ», 1896 թ., էջ 215։

պիտով, հայրապետության մեջ քաղաքացիության ստացած այն ենթակայությունը, որ Երեմիացին սովորելու գնալիս, Յորբորդ Հայքից հետո, մնել է Կոստանդնուպոլիս և ապա հետ վերադարձել, Երեմիացու ինքնակենսագրության ընդարձակ խմբագրության տեքստով չի հաստատվում:

Ի միջի այլոց, ըստ ընդարձակ խմբագրության, Երեմիացին չոտպում է և Պոլսից բերված իր աշակերտակից ընկերներին հանում այն ժամանակ առեվտրական կարևոր նշանակություն ունեցող Սինոպ քաղաքում: «Եւ եկեալ մեր ի Սինոպ՝ պատահեալ ընկերակցաց մերոց, գտուցեալ ի ճմաճկ (ի նոցանէ?) եանաղարհորդեցաք ի ցամաք» (ՀՄՄՌ մատեն. № 699, թերթ 180 ա): Այս ամբողջ հատվածը, դժբախտաբար, չի պահվել հայտնա խմբագրությունը:

Որ Երեմիացու դուած աշակերտակից ընկերները իրոք Փիլաքրի կոստանդնուպոլսից բերած աշակերտներն էին, այդ երևում է և ընդարձակ խմբագրության տեքստի մի այլ նախադասությունից, որը դարձյալ կըրճատված է համառոտ խմբագրության տեքստում: Երեմիացու ծանոթները Փիլաքրի Պոլսից աշակերտներ բերելու մասին պատմելիս՝ ավելացնում են պոր ի՛ երաւ երաւ երթցես, գոցես անդ գՓիլաքր» (ՀՄՄՌ Մատեն. № 699, թերթ 180 բ): Երեմիացին լսելով նրանց խորհուրդը, չոտպում է և իրոք գանում է Փիլաքրին:

8. ՏՅՈՒՔԻԿՈՍԻ ՈՐ ՁԱԿԱՏԱՄԱՐՏՈՒՄ ՎԻՐԱՎՈՐՎԵԼՈՒ ԵՎ ԻՆՉ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Երեմիացու ինքնակենսագրության համառոտ խմբագրության տեքստից երևում է, որ Երեմիացու ուսուցիչը, Տյուքիկոսը, վիրավորվում է պարսկահպատակ պարսպապահների հյուդանդացների վրա հարձակվելու ժամանակ, միայն պարզ չէ՝ ճակատամարտի տեղը: Ընդարձակ խմբագրության տեքստում այդ հարցը որոշված ճակատամարտի տեղը—Անտիոք քաղաքի մոտերքը: «... ի ժամանակի յարձակման զաւրացն Պաքսից ի վերայ Յունաց, որ եղև մերձ յԱնտիոք» (ՀՄՄՌ մատեն. № 699, թերթ 182 ա):

Համառոտ խմբագրությունից չի երևում, թէ Տյուքիկոսն առաջնորդելուց հետո Երուսաղեմ, Աղեքսանդրիա և Հռոմ քաղաքներում ինչքան ժամանակ է մնացել: Ընդարձակ խմբագրության տեքստում կոնկրետ նշված է՝ որ Երուսաղեմում նա մնում է մի ամիս, Աղեքսանդրիայում՝ երեք ամիս, Հռոմում՝ մեկ տարի. «դնաց (Տյուքիկոսը—Ա. Ա.) ողջացեալ ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: Եւ արարեալ[1]) անդ ամիս մի, փոխեցաւ յԱղեքսանդրիա: Եւ ամս երիս կայր անդ ի հրահանգի: Եւ ապա չոգաւ ի Հռոմ եւ արարեալ անդ տարեւոր ժամանակս, գայ ի Կոստանդնուպոլիս...» (ՀՄՄՌ Մատեն. № 699, թերթ 182 բ—183 ա):

9. ԵՐԱԿԱՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Երեմիացու ինքնակենսագրության ընդարձակ խմբագրությունն օգնում է մեզ որոշել նաև Երեմիացու ապրած ժամանակը: Երեմիացու ժամանակի վերաբերությամբ, ինչպես հայտնի է, տարբեր կարծիքներ գոյություն

[1]) «Արարեալ» գոթ է ածված Յայու խմաստով:

ունեին: Ըստ պրոֆ. Ֆ. Պատկանյանի, Շիրակացին ապրել է 7-րդ դարի սկզբներում: «...Անանիա, որդի Ցովհաննէսի Շիրակունւոյ,—պրում է նա —եկայց ի սկզբան է դարու, յաւուրս Մօրկայ և Արքուէդ Ոսպովոյ»[1]): Ղ. Ալիշանը[2]), ակադեմիկ. Ն. Մառը[3]) և ակադ. Հ. Օրբելին[4]), Շիրակացուն համարում են 7-րդ դարի երկրորդ կիսում ապրած հեղինակ: Ակադ. Հ. Աճառյանն իր «Անձնանունների բառարան»-ում Շիրակացու ծնունդը դրել է VII դ. 10-ական թվերին[5]): Պրոֆ. Ս. Հայրապետյանն իր «Անանիա Շիրակացու կյանքն ու գործունեությունը» հոդվածում[6]) Շիրակացուն չարժոռմ է մինչև 8-րդ դարի առաջին քառորդը: Կոնիբևրը Շիրակացու ժամանակը դնում է 600—650 թ.թ.[7]):

Շիրակացու ժամանակի որոշման խնդրում կարևոր նշանակություն ունի Շիրակացու ուսուցչի՝ Տյուքիկոսի ժամանակի որոշումը— բյուզանդական ո՞ր կայսեր ժամանակակից անձնավորություն է նա և ո՞ր պատեպազմում է վիրավորվել: Այդ հնարավորություն կտա մոտավոր ճշտով հենման կետ ստեղծել՝ Շիրակացու ժամանակը որոշելու խնդրում:

Բանասեր Հ. վ. Թորոսյանի կարծիքով Տյուքիկոսը մասնակցել է Որմիզդ IV-ի ժամանակ տեղի ունեցող պատերազմին[8]): Հակառակ եղրակացության է հանգել պրոֆ. Ս. Հայրապետյանը: Սրա կարծիքով Տյուքիկոսը մասնակցել է ո՛չ Որմիզդ 4-րդի (579—589 թ.թ.) ժամանակ տեղի ունեցող պատերազմներին, այլ Մորիկից հետո (602-ից հետո) տեղի ունեցող հուշ-պարսկական պատերազմներին. «Մնչուչտ,—գրում է նա,— Տյուքիկոսի նկարագրությունները վերաբերվում են բյուզանդական կայսեր Մորիկի ողբերգական վախճանին հաջորդող պարսկա-հունական ամենից ու երկարատև պատերազմներին» (604—628)»[9]):

Շիրակացու ինքնակենսագրության ընդարձակ տեքստը, բաբելբախտաբար, պահվել է այն կայսեր անունը, որի ժամանակ Տյուքիկոսը վինվոր է եղել: Այնտեղ ասված է. «Մանկութենեան ժամանակաւ վինեորեալ է դուն Ցովհաննու զօրավարի Տիբեր կայսեր՝ որ ի Հարս» (ՀՍՍՌ Մատեն. № 699, թ. 182 ա): Տիբերիոս կայսրը գահակալել է 578—582 թ.թ.[10]): Տյուքիկոսը Տիբերիոս կայսեր ժամանակ վինվոր է եղել իր երիտասարդ հասակում, ուրեմն նա ծնված պետք լինի 6-րդ դարի 60-ական թվերին: Այդ հաշվով Շիրակացին պետք հանդիպած լինի Տյուքիկոսին ամենաուշը նրա 55—60 տարեկան հասակում, այսինքն՝ 7-րդ դարի 15—20 թ.թ.: Հայտնի է, որ Շիրակացին Տյուքիկոսի մոտ գնացել է իր երիտասարդ հասակում, համենայն է 20 տարին լրացրած, ուրեմն՝ Շիրակացին ծնված պետք լինի 6-րդ դարի վերջերում, և ամենաուշը— 7-րդ դարի սկզբներում:

---

1) Ֆ. Գ. Մնացորդք բանից Անանիայի Շիրակունւոյ, էջ 1.
2) Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ 1881, էջ 37, 96.
3) Н. Я. Марр, Ани, Л.—М 1934 г., стр. 20.
4) И. А. Орбели, Вопросы и решения, Пет-град, 1918, стр. 9.
5) Պրոֆ. Հ. Աճառյան, Անձնանունների բառարան, տես «Անանիա Շիրակացի».
6) ՀՍՍՌ Մատեն. «Գիտական նյութերի ժողովածու», էջ 9.
7) F. C. Conybeare, Ananias of Shirak (A. D. 600—650) (տես „Byz. Zeitschrift" 1897, էջ 572).
8) «Բազմավէպ» 1896 թ., էջ 214—215.
9) ՀՍՍՌ Մատեն. «Գիտական նյութերի ժողովածու», էջ 8.
10) K. Krumbacher, Geschichte der Byz. Litteratur, München, 1897, էջ 1145.

Շիրակացու տպած ժամանակի երկրորդ կարևոր հենակը—այդ Անաստաս Ակոռեցի կաթողիկոսի հանձնարարությամբ նրա կազմած տոմարի փաստն է: Անաստասն իր կաթողիկոս եղած ժամանակ կանչում է Շիրակացուն և հանձնարարում կազմել հայոց անշարժ տոմարը: Այս մասին Ստեփանոս Ասողիկը հայտնում է. «Իսկ Անաստաս խորհեալ Հայաստանեայ կարգել տոմար անշարժ ըստ այլոց աղղաց՝ և հրամայէ Անանիայի Շիրակացւոյ կարգել զքրոնիկոնն հրաշապատ, յորում գտոմարս մեր կարգեաց անշարժ: Անաստասեայ խորհեալ ժողովով և եպիսկոպոսօք հաստատել զքրոնիկոնն և վախճանի, կացեալ յաթոռս ամս վից»[1]): Անաստասի կաթողիկոսության տարիները են—661—667[2]): 7-րդ դարի վերջաուսնական-յոթանասնական թվերին, պիտի ենթադրել, որ Շիրակացին բավականի տարիքով ու ճանաչված անձնավորություն էր, այլապես կաթողիկոսը չէր կանչի նրան և չէր հանձնարարի տոմար կազմելու կարևոր գործը: Ուրեմն, 661—667 թ.թ. Շիրակացին գոնվում էր տարիքավոր հասակում:

Եվ, վերջապես, Շիրակացու ժամանակը որոշելու համար կարևոր է ՀՍՄՌ մատեն. № 4066 ձեռագրում մնացած Շիրակացու մի հիշատակությունը, որն առաջին անգամ մեր մատենադրության մեջ բերում է պրոֆ. Ս. Հայրապետյանը իր «Անանիա Շիրակացու կյանքն ու գործունեությունը» աշխատության մեջ: Այդ հիշատակության մեջ ասված է. «Եւ սկիզբն քանիանութեան բերման Թուիս՝ յորժամ լցեալ էր ՈԿԸ ա(մ)ի կուսական յարգանդէ Աստուածն բանի. եւ ի մեռսանաներորդ չրջադայութեանն, եւ ի ԺԹ ամի [կոս]տանդիանոսի...»[3]): Կոստանդիանոս 2-րդը գահ է բարձրացել 642 թվին, ուրեմն՝ նրա 19-րդ տարին կլինի ոչ թե 608 թվականը, այլ 661 թվականը: Մեզ թվում է, որ նախնական տեքստում եղել է Ա, իսկ ընդօրինակող գրիչները «Ա»-ն աղավաղել են «Ը»-ի:

Վերև բերված նախադասության մեջ «եւ ի մեռսանաներորդ չրջադայութեանն» բառերը՝ պրոֆ. Ս. Հայրապետյանը հասկանում է որպես Շիրակացու ուսմանն դնալու և չրջադայելու տարիներ և ենթադրում որ 699 թվին է Շիրակացին վերադարձել Տյուքիկոսի մոտից: Այդպիսի համարձակ ենթադրություն անել վերև բերված մութ ակնարկից, մեր կարծիքով, դժվար է: Նախ՝ մեզ թվում է, որ այստեղ Շիրակացու խոսքը ո՛չ թե իր չրջադայությանն է վերաբերում, այլ տոմարի ԺԱ երիկին: Եւ ապա՝ եթե անգամ ընդունելու լինենք, որ Շիրակացին իր չրջադայության մասին է ակնարկում և հետագայում գրիչները աղավաղել են, այնուամենայնիվ հիմք չկա ենթադրելու, որ Շիրակացին մի անգամ է դնացել Արևմուտք և միայն դրա մասին կարող էր գրել:

Ավելի քան վիճելի է պրոֆ. Ս. Հայրապետյանի այն պնդումը, որ իբր Անանիա Շիրակացին կենդանի է եղել մինչև 712 թվականը: Պրոֆ. Ս. Հայրապետյանի կռվանը ասյալ հարցում Սամուել Անեցու հետևյալ տեղեկությունն է. «Զծ՚ի. Աչակերտք Անանիայի՝ Հերմոն և Տրդատ՝ և Ազարիա, Եզեկիէլ եւ Կիրակոս՝ երթեալ յերուսաղէմ հաւաքեցան երկրնականացն և ի դարձին ո՛չ ընկալաւ զնոսա ճշմարիտ վարդա-

---

1) Ստեփ. Տարօնցի, Պատմութիւն տիեզերական, ՍՊՀ 1885, էջ 99:
2) Մ. Օրմանյան, Ազգապատում, 1-ին հատոր, էջ 746—754:
3) ՀՍՄՌ մատեն, № 4066, թերթ 10բ:

պետն Անանիայ»[1]: Անեցու հրատարակության մեջքին այսպես խիստ պահառավոր է: ՀՄՄՌ մատեն. № 5619 ընդհ դրչագրում այդ հատվածը հեռացել ճեղքվ է ընդօրինակվածից:

Թվ		Պարսից Արծլ-Մելիք	Սմբատ	Տր. Եղիշէ	Թուական հայոց
ՉԺ	Դ Յուսուֆ-նահանոս	ԺԹ	ԺԹ	ԺԹ	ՃՄԼ
ՉԺԱ	Ա	Ի	Ի	Ի	ՃՄՀ

«Աշակերտ Անանիայի՝ Հերմոն եւ Տրդատ եւ Ազարիա, Եղիկիէլ եւ Դիրակոս, երթեալ յերուսաղէմ հաւանեցան երկարնակային, եւ ի զարձին ոչ ընկալաւ զնոսա ճշմարիտ վարդապետն Անանիայ. քանզի նշ<աւ>ա ուր հասանէ<ին> զնա, ասէ<ին> պատճառս հայհոյութեան, զոր մի՛ ոք իշխեցէ ասել կամ հաւատալ»[2]:

Անեցու այս տեղեկության մեջ նկատվում է պատմական վիպասանքի և ժամանակի հետևյալ շփոթությունը:— ա) Հուսուֆնահոս II կայսեր առաջին տարին ո՛չ թե 711-ն է, այլ 685-ը[3]: Հուսուֆնահոսի պահակալության ժամանակն Անեցին, այսպիսով, սխալվում է 26 տարի ժամանակով: բ) Աբգլմելիքը, ավելի ճիշտ՝ Աբդուլ Ռահմանը, պարսիկ չէ, այլ արաբացի: գ) Նա մահացել է 705 թվին, այսինքն՝ Անեցու ցույց տված ժամանակից վեց տարի առաջ: Եվ, վերջապես, Եղիշե անունով կաթողիկոս այդ ժամանակ չի եղել: Հայոց եկեղեցու պատմության մեջ Եղիշե անունով միայն մի կաթողիկոս է հայտնի— Եղիշե Ռշտունին, որը 10-րդ դարի սկզբներին է (941—946 թ. թ.)[4]: Անեցին, հավանական է, Եղիշեին շփոթում է Եղիա Աբեղյանցու հետ, որը կաթողիկոս է եղել 703—717 թ. թ.: Սակայն նրա ժամանակ բյուզանդական դահի վրա Հուսուֆնահոսը կայսր չէր:

Անեցու ժամանակի շփոթությունը, ինչպես տեսնում ենք, ապազակոչ է: Անզգուշություն կլիներ, Անեցու անախրոնիզմով լրջի այս տեղեկության վրա հիմնվել և պնդել, որ Շիրակացին ապրել է ավելի քան 113 տարի:

---

1) Սամուէլի քահ. Անեցւոյ, «Հաւաքմունք ի գրոց պատմագրաց», Վաղարշապատ 1893, էջ 85:

2) ՀՄՄՌ Մատեն. № 5619, թերթ 80 ա:

3) K. Krumbacher, Geschichte d. Byz. Lit., էջ 1145:

4) Մ. Օրմանյան, Ազգապատում, I հատոր, էջ 1081—1084:

10. ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԱՐՁԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հարց է առաջանում, Շերլակացու ինքնակենսագրության ընդարձակ քաթադրության տեքստը իղեալակա՞ն ձևով է մեզ հասել, նա թերի չէ՞ աթոյլոք: Պրոֆ. Մ. Հայրապետյանի կարծիքով նա թերի է[1]): Դժբախտաբար պրոֆ. Ս. Հայրապետյանը այդ առթիվ վիճաբեր չի բերում: Բայց մեր կարծիքով Շերլակացու ինքնակենսագրության ընդարձակ տեքստը թերի չէ:

Շերլակացու ինքնակենսագրության ընդարձակ տեքստում սակայն նկատելի է մի նախադատության հետևանաջություն, որն անհրաժեշտ է չափել նոր հրատարակության ժամանակ: Նախադատության հետևանաջության այդ վիճաբը նկատվում է Շերլակացու ինքնակենսագրության տեքստի այն մասում, ուր Շերլակացու ծանոթները պատմում են փիլսաբ սարիավարդ աշակերտներից հետ լրենց նամակից լինելու վիճաբի մասին. «Ընաւակից մեզ եղեւ Փիլսաբ՝ սարկաւագ հայրապետին Կոստանդնուպաւլսէ, ոք բազում մանկունս ածէր առ նա յաշակերտութիւն: [Ել եկեալ մեր ի Սիճեւպ, պատահեալ ընկերաց մերոց, գատուցեալ ի նմանէ ճանապարհորդեցաք ի ցամաք] զոր եթէ երազ երազ երթիցես, զոցես անդր զփիլսաբ: Զայս լուեալ ընդալից սրտիւ վճռաւորեցի զնախախնամողն Աստուած, որ առաձնն պատրաստ ունի զիմաստաբ իւրոց, որպէս եւ ասեն իսկ՝ եթէ հայցէք եւ գտջիք: Եւ երթայ իմ դուի զնա ի վկայարանի սրբոյն Եւդիմեա...»: Անկյունավոր փակագծի տեքստը, մեր կարծիքով, պիտի տեղադրել «զտջիք» բառից հետո:

11. ՇԻՐԱԿԱՑՈՒ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԸ

Շերլակացու ինքնակենսագրությունն իր տեսակի մէջ բացառիկ երկ է հին հայկական մատենագրության մեջ: Հին հայ ո՛չ մի գրողից մեզ չի հասել նման կենսագրական: Հայ օրիգինալ և թարգմանական մատենագրության մեջ, ճիշտ է, կան մեծ թվով վարքաբանական աշխատություններ, որոնք ամփոփված են «Հարանց վարքեր»-ում, «Ոսկեփորիկ»-ներում, «Ճառընտիրներ»-ում և նման այլ ժողովածուներում, բայց սրանք ավելի կրոնական-կանոնական գրականության շարքի երկեր են, քան ինքնակենսագրություններ մեր ներկա հասկացողությամբ: Վարքաբանական այդ աշխատությունները գրված են մեծ մասամբ ուշ շրջանում և նպատակ են ունեցել առանձին սրբացված և հրաշապատում ձև տված վարքերի վրա քրիստոնեական ուղով սերունդներ դաստիարակել:

Կենսագրական որոշ նյութեր պարունակում են նաև ընդօրինակող գրիչների հիշատակարանները, բայց սրանք էլ ունին մի այլ պահպանություն, որ հիշատակագիրը գրիչը շատ քիչ է կանգ առնում իր անձնավորության վրա: Լավագույն դեպքում, նա հիշատակարանի իր անձնավորության վերաբերվող մասը ընդարձակում է իր բարեկամների անունների հիշատակությամբ:

---

1) Ս. Հայրապետյան «Ան. Շերլակացու կյանքն ու գործունեությունը» ՀՍՍՌ Գտաէն. «Գիտ. նյութերի ժողովածու», էջ 17:

Շիրակացու նպատակադրումը ամփոփ միանգամայն այլ է: Նրա ինքնակենսագրությունը—կենսագրություն է մեր նեղկա հասկացողությամբ: Նա իր ինքնակենսագրության մեջ նպատակ է դնում ծանոթացնել ընթերցողներին իր կյանքի, իր անձնավորության հետ:

Ս.յսպիսով. ա) Շիրակացու ինքնակենսագրությունը մեզ հասել է երկու խմբագրությամբ, որից նախնականը—ընդարձակ խմբագրության տեքստն է: բ) Շիրակացու ընդարձակ խմբագրության տեքստի հիման վրա հնարավոր է այժմ պարզել Շիրակացու և իր ուսուցչի կենսագրության հետ կապված մի շարք մութ հարցեր: գ) Շիրակացու ինքնակենսագրությունը մեզ հասել է լրիվ տեքստով: դ) Շիրակացու ինքնակենսագրությունն իր տեսակի մեջ, բացառիկ երևույթ է հին հայ մատենագրության մեջ:

III. ՇԻՐԱԿԱՑՈՒ ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԳՐՉԱԳԻՐԵՐԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱՆ

ա) Խոստումն աշակերտացն

1. *ՀՍՍՌ մատենադարանի* № 4066 (*ՏՓ*· 17), *էջ* 1*ա*: *Առանց վերնագրի*: *Սկսում է «Բազմապատիկ»-ի դործողություններց*:

ՀԱ	Ա	Ա
Բ	Ա	Բ
Բ	Բ	Դ
Բ	Գ	Գ

և այլն:

Ներքին լուսանցքում սեփական դուդընթաց ընդօրինակված է «Եօթնադրեանք»-ը: *Զուգի նաև «Բացատրութիւն»-ի և «բազմապատիկ»-ի ներքածականները*: *Այս սեփական ի տարբերություն մյուս դրչագրերի, իր շարունակության մեջ ունի «Դար» և «Կոճատ» թվերն ու «Վեցհազարեակ»-ը*: *Դրչագիրն ընդօրինակված է* 1238 *թվին*:

2· *ՀՍՍՌ մատենադարանի* № 1711 (*Կ*· 1833)» *էջ* 3*բ*: *Առանց վերնագրի*: *Պակասում է նաև Շիրակացու ներածական խոսքը*: *Տեղավորված է Թամգրքին կից*: *Դրչագիրն ընդօրինակված է* 1463 *թ*·: *Պատվիրատուն է Հանդիսացել ոմն Դավիթ*: *Սեփական դպրի ավազանան է ենթարկվել*: *Վերջում ունի Շիրակացու վերջարանը, որը պակասում է մյուս դրչագրերում*:

3· *ՀՍՍՌ մատենադարանի* № 1770 (*Կ*· 1666), *թ*· 385 *բ*· «Անանիայի խոստումն աշակերտացն և առաջին գլուխ.—*Պատճառ վարկանիմք, ո՛վ սիրոդք իմաստութեան···*» *վերջանում է «Բազմապատիկ»-ով «ք ք իե՛»*: *Դրչագիրն ընդօրինակված է* 1589 *թվին Աստվածատուր դրչի ձեռքով*: *Պատվիրատուն է Հանդիսացել Հայրապետ Ջուղայեցին*: *Այս դրչագրի սեփական է հիմք ծառայել մեր հրատարակության համար (Հմմտ*· *Երևանի Պետ*· *Համալսարանի Գիտ*· *աշխատություններ», Հ*· *XI, 1939 թ*·, *էջ* 249—274):

4· *Բրիտանական Թանգարանի հայկ*· *դրչագրեր* № 136: «Անանիայ Շիրակացւոյ խոստումն աշակերտացն, եւ առաջին գլուխ· *Պատճառ վարկ-*

կանխմ, ով սերոզք խոստուածեան...»: Գրչագիրը մանրամասն նկարագրված է անգլիացի գիտնական կանխքերի կողմից (տե՛ս նրա կազմած ցուցակը «A Catalogue of the armenian Manuscripts in the British Museum», էջ 327—328): Տեքստի վերաբերյալ նա ասել է հետևյալ ծանոթությունը. «There follow tabeles of figures arranged in three chapters»: «Խոստումն աշակերտացն» տեքստին հաջորդում են հովհաննես քահանայի անկյունավոր թվերը:

5. Ազգային մատեն. № 234 «Գ. Անանիայի խոստումն աշակերտացն»: Գրչագիրն ընդօրինակված է գոլսում 18-րդ դարում: Օգտվել ենք Մեսրոպ եպ. Մաղխասյանի ցուցակից (№ 240):

6. ՀՍՍՌ մատեն. № 5913: Անվերնագիրը: Փոքրիկ հատված է «Բազմատառիկ» դլխից: Ընդօրինակող հրիչն անհայտ է: Տեքստն սկսվում է էջ 118 ա-ից:

7. Ազգային մատենադարան № 262 «Գ. Անանիայի խոստումն աշակերտացն»: Գրչագիրն ունի 19-րդ դարի դրչություն: Օգտվել ենք Մեսրոպ եպ. Մաղխասյանի ցուցակից (№ 240):

բ. վեցհազարյակ)

1. ՀՍՍՌ մատեն. № 1711 (կ. 1666. թերթ 14ա) (բոլորակ՝ մեջը դրբերով): «Այս է դուռն վեց հազարեկին»: Ընդօրինակված է 1463 թվին: Գրիչը հայտնի չէ:

2. ՀՍՍՌ մատեն. № 8242 (եր. 7869 թերթ 44ա «Դուռն վեց հազարեակի, զոր արարեալ է Անանիայ Շիրակացին աստուածիմաստ զգօն վարդապետին»: Ընդօրինակել է Գևորգ դրիչը 1785 թվին, Թամզարա քաղաքում:

3. ՀՍՍՌ մատեն. № 566 (կ. 504), թերթ 311 «Այլ դուռն համարոգահաւք, որ ասի. ԶՌ-եակ, զոր շինեալ են եւ խոստատեալ են ընտրողութեամբ»: 18-րդ դարի ընդօրինակություն է: Գրիչը հայտնի չէ:

4. ՀՍՍՌ մատեն. № 8528 (եր. 751), թերթ 192ա «Դուռն վեց հազարեակին, զոր արարեալ է Անանիայ Շիրակացին:— Գիտելի է կերպիւ իմն համարողութեամբ որ ասի. ԶՌ-եակ...»: Վերջանում է բացահայտ ազբիւրքով. «... Թ. բաժին արա, Ը. ձդէ, ան դրէ եւս ամենեցունցով լուսնոտի համար...»: Ընդօրինակված է 18-րդ դարում: Գրիչը հայտնի չէ: (Համմ. Մա. կանայեան ցուցակ, էջ 27):

5. ՀՍՍՌ մատեն. № 5952 թ. 1 ա «Վեցհազարեակ, զոր արարեալ է Դաւիթ վիրհատեայէ եւ... ուսեալ ի Սարգիս քահանայէ...»:— Գիտելի է կերպիւ իմն համարողութեան, որ ասի վեցհազարեակ...» Հիշատակարան չունի: Ընդօրինակված է 18-րդ դարում:

6. ՀՍՍՌ մատեն. № 3233 (Գ. 634), թ. 128 «Դուռն ԶՌ-եակին:— Գիտելի է կերպիւ իմն համարողութեան, որ ասի վեց հազարեակ...»: Վերջանում է ախթաբքով. «... լուսնոտի համար գրես՝ նա թ-չիւ տասուհոգի»: Ընդօրինակված է 1804 թվին: Գրիչը հայտնի չէ:

---

1) Մենք բերում ենք մեր Մատենադարանից մեզ հայտնի բոլոր «Վեցհազարեակ» տեքստերը՝ անկախ նրանց ախթարք լինել-չլինելու հանգամանքից. Վեցհազարյակի երկու տեքստերի նկարագրության Վենետ. Մխիթ. մատեն-ից, տվել է Ադոնցը իր „Дионисий Фракийский...“ աշխատության նախաբանում:

7. ՀՍՍՌ մատեն. № 8334 (եր. 949) «Դ[ու]ռն համարողականիս, որ ասի վեց հազարեակ»: Ընդօրինակված է 1800 թվին, Տիկոր գյուղում:

8. ՀՍՍՌ մատեն. № 2906 (Գ. 673) Վեցհազարեակ աղյուսակներով: Ընդօրինակված է 1867 թվին:

9. ՀՍՍՌ մատեն. № 4566, թ. 161բ.: Ամանց վերնագրի: Տնքան սկսում է. «Գիտելի է կերպիւ իմն համարողութեան, որ ասի վեց հազարեակ...»: Ընդօրինակել է Կյուրեղ վ. Սրապյանը Հառիճի վանքում, 1880—1887 թ. թ. ընթացքում:

10. ՀՍՍՌ մատեն. № 8996, թ. 2ր «Այլ դուռն համարողականին, որ ասի վեցհազարեակ»: Հիշատակարան չունի: Ընդօրինակությունը 19-րդ դարի է:

11. ՀՍՍՌ մատեն. № 9040, թ. 13բ. «Գիտելի իմն համարողութեան, որ ասի վեցհազարեակ, զոր չիննալ և հաստատեալ են առաջք քեզ-դրութեամբ հոգւոյն սբոյ, որ զզօրութիւնս զրոց եւ զհնարագիտութիւնս ի յայտ ածին...»: Ընդօրինակել է Հարություն գպիր Ղևոնյանը 1821 թ. Առաթաղում:

գ. Յաղագս հարցման եւ լուծման

1. ՀՍՍՌ մատեն. № 1770 (Կ. 1666), էջ 159ա. «Անանիա Շիրակացւոյ յաղեցեալ հանելուկ:—Համատարական Ջուրակ եհար ի գարսից. յառաջնումն զկէս...»: Շերեփացու «Հարցումն»-ներից և «Խրախճանականի»-ներից մեկն 12-ն է բերված և խնամքով ճշտված ձևով: Գրչագիրն ընդօրինակել է Աստվածատուր գրիչը Հայրապետ Ջուղայեցու պատվերով: Ընդօրինակված է 1589 թ.:

2. ՀՍՍՌ մատեն. № 573 (Հ. 524), թ. 264ա «Անանիայ Շիրակացւոյ յաղեցեալ հանելուկ:—Համատարականն Ջուրակ եհար ի գարսից՝ յառաջնումն զկէս զօրուն...»: Կրճատված ձևով բերված են Շերեփացու «Հարցումն»-ներից և «Խրախճանականք»-ներից մեկոյն տասներեքը: Գրչագիրը հիշատակարան չունի: Ձեռագրի դրչության 16-րդ դարի է: Տնքան իր բովանդակությամբ նմանվում է ՀՍՍՌ մատեն. № 1770 գրչագրի տեքստին:

3. ՀՍՍՌ մատեն. № 3078 (Գ. 267), թ. 73ա: «Անանիայի վարդապետի Շիրակունւոյ. Յաղագս հարցման եւ լուծման: Այսպէս լուայ ի հօրէն իմմէ. ի ժամանակի հայոց ընդ պարսս...»: Ընդօրինակել է Աստվածատուր գրիչը՝ Հովհաննես կաթողիկոսի աշակերտը, 1589 թվին, Կաթնաքարաքաղաքում: (ՀՄՄ. Գ. Տ.—Մկրտչյանի «Յաղագս հարցման և լուծման» աշխատությունը, էջ 12—13):

4. ՀՍՍՌ մատեն. № 699 (Գ. 596, կար. 582), թ. 185ա «Անանիայի յաղագս կատարման համարողութեան եւ կերպից հարցման:— Զամենայն տասց իմաստունն...»: Գրչագրի դրության 16-րդ դարի է: Գրիչն ու դրչության վայրը հայտնի չեն: (ՀՄՄ. Գ. Տ.— Մկրտչյանի «Յաղագս հարցման եւ լուծման», էջ 12):

5. ՀՍՍՌ մատեն. № 503 (Կ. 520), թ. 167բ. «Անանիայի Շիրակունւոյ յաղագս կատարման համարողութեան եւ կերպից հարցման: Զամենայն տասց իմաստունն եւ ասկաւ ի բազմաց...»: Ընդօրինակել է Ավետիս գրիչը 1601 թվին Կ. Գոլսում:

6· *ՀՍՍՌ մատեն.* № 3461 (*թ.* 65), *թ.* 402 «Յաղագս կատարման համարողութեան և կերպից հարցման»: *Զամենայն ասաց իմաստունն թէպէտ և սակաւ ի բազմաց...»*: *Ընդօրինակել է Հովհաննես երեց Բաբերդցին 1662 թվին, Թոխաթում*:

7· *Վիեննայի մատեն.* № 130, *թ.* 99*ա*: *Սկիզբը թերի է: Սկսվում է երրորդ խնդրից.* «*Գ. Այս լուսոյ ի վարպապետէն՝ եթէ գողանան մարդն...*» *Գրչագրի գրութիւնը 17—18-րդ դ.դ. է: Գրիչն ու գրչության վայրն անհայտ է: (Հմմ. Հ. Տաշյանի ցուցակ, էջ 419)*:

8· *ՀՍՍՌ մատեն.* № 3457 (*Թ.* 41), *թ.* 315*ա*: *Առանց վերնագրի: Տեքստն սկսվում է.* «*Ա հարցումն: Այսպէս լուայ ի հօրէն իմմէ՝ եթէ ի ժամանակի պատերազմացն Հայոց ընդ Պարս...*»: *Գրիչն ու գրչության վայրը հայտնի չեն: Գրչութիւնը 17-րդ դարի է: Բերված են 24 հարցումներն իրենց պատասխաններով*:

9· *Վիեննայի մատեն.* № 30, *թ.* 4*ա*. «Ընաւիայի յաղագս կատարման համարողութեան եւ կերպից հարցման:— *Զամենայն ասաց իմաստունն, թէպէտ և սակաւ ի բազմաց...*»: *Գրչութիւնը 19-րդ դ. է: (Հմմ. Հ. Տաշյանի ցուցակ, էջ 176)*:

10· *Երուսաղեմի մատենադարանում, ըստ Մեսրոպ եպ. Մադիսարոսի ցուցակում եղած տեղեկութեան, Շիրակացու հարցումներից կան հետևյալ ձեռագրերում՝* № № 68, 111, 733, 835, 1105, 1573:

դ· Խրախճանականք

1· *ՀՍՍՌ մատենադարանի* № 699 (*Կ.* 582), *թ.* 195*ա*. «Գրեմ ձեզ եւ խրախճանականաւ) յորժամ ի կերակուրս և յըմբեռլիս զուարճանայք...»: *Հայտնի է «Ճաղագս հարցման և լուծման»-ին: Ա—Զ խրախճանքներն են: Գրչագրերն ընդօրինակված է 16-րդ դարում: Գրիչն ու գրչության վայրը հայտնի չէ: (Հմմ. Աշ. Աբրահամյանի «Շիրակացու թվաբանության դասագիրքը», Երեվ. Պետ. Համալս. «Գիտ. աշխատություններ» XI հատոր)*:

2· *ՀՍՍՌ մատեն.* № 3461 (*Թ.* 65), *թ.* 407*բ*. «Գրեմ ձեզ եւ խրախճանականաւ՝ յորժամ ի կերակուրս եւ յըմպելիս զուարճանայք...»: *Ա—Զ խրախճանականքներն են: Գրչագրերն ընդօրինակված է 1662 թվին Հովհաննես երեցի ձեռքով, Թոխաթում*:

3· *Վիեննական Մխիթ. Մատենադարան* № 278, *թ.* 17*ա*. «Մանաւանդ պահ վասն ժամուց խրախճանաց: Գրեմ խրախճանականաւ· յորժամ ի կերակուր և յըմպելիս զուարճանայք...»: *Ա—Զ խրախճականները: Գրչագրերն ընդօրինակված է 1655—56 թ. թ. Ամթոս Երզնկացու ձեռքով Տրապիզոնում՝ (Հմմ. Բ. Սարգիսյանի ցուցակ, հտ. Բ էջ 942)*:

4· *ՀՍՍՌ մատեն.* № 3457 (*Թ.* 41), *թ.* 319*ա*. «Գրեմ ձեզ և խրախճանականաւ յորժամ ի կերակուրս. և յըմպելիս զուարճանայք և կամիք խաւսել բանս զուարճականս...»: *Վերջանում է ուրիշերորդ խրախճականքի կեսում:— Մյուս գրչագրերի համեմատությամբ ավելի ունի երկու խրախճական: Գրչագրերն ընդօրինակված է 17-րդ դարում: Գրիչն ու գրչության վայրն անհայտ է*:

5· *Վիեննայի Մխիթ. մատեն.* № 130, *թ.* 101*ա*: *Անխորագիր: Տեքստ*

---

1) *Մենք ամենուրեք թողնում ենք բնագրի խրախճանական ձևով*:

ակռում է. «Ասասջիր ցընկեր քո՝ մէկ կարող եմ դէտել յորում ժամու կամիցես ուտել...»: Ա—Զ խրախճանքները: Գրչագիրն ունի 17-րդ դ. դըրչություն: Գրիչն ու դրչության վայրն անհայտ են: (Համմ. Հ. Տաշյանի ցուցակ, էջ 419):

6. Վիեննայի Մխիթ. մատեն. № 30, թ. 8բ. «Գրեմ ձեզ խրախճականս յորժամ ի կերակուրս և յըմպելիս գուարճանայք և կամիք խօսել բանս գուարճացուցիչս...»: Ա—Զ խրախճանքները: Գրչագիրն ունի 19-րդ դարի դրչություն: Գրիչն ու դրչության վայրն անհայտ է: (Համմ. Հ. Տաշյանի ցուցակը, էջ 176):

7. Տյուբինգենի համալսարանի մատեն. № 137, թ. 139ա—141ա: Վեց խրախճանական: Sechs Unterhaltungsaufgaben zur Tafel v. Ananias von Schirak: (Ստ'ս Sistem Alpfabetischer Hauptkatalog der Königlichen Universitätsbibliothek zu Tübingen», էջ 136):

2. ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շիրակացին՝ որպես մաթեմատիկոս, հանրածանոթ անձնավորություն է հայ մատենագրության մէջ: Մէջնադարյան գրեթէ բոլոր հայ մատենադրերը հիշում են նրան «Համարող» տիտղոսով:

Առաջին հեղինակը, որ հանդամանորեն խոսում է Շիրակացու թվաբանական աշխատությունների մասին, ինչպես մենք ասել ենք արդեն,— 11-րդ դարի նշանավոր դիտնական Գրիգոր Մագիստրոսն է: Նա իր մի նամակում՝ ուղղված Պետրոս Գետադարձ կաթողիկոսին, առանձնապես չեչտում է Շիրակացու «Քառից արհեստ»-ի, այսինքն «Թուաբանութեան» մեծ արժեքը[1]):

Շիրակացու թվաբանական բովանդակություն ունեցող աշխատությունները մինչև վերջին ժամանակները, հայտնի էին միայն նրա «Հարցումն» ները: Դրանք Շիրակացու կազմած քսան և չորս խնդիրներն են իրենց լուծումներով: Այդ խնդիրներից վեցն առաջին անգամ հրատարակվել է «Բազմավէպ»-ում 1853—1855 թ. թ.[2]): Ամբողջությամբ տպվել է Երուսաղեմի «Սիոն» ամսաթերթում 1886 թ.[3]): Խնդիրների համեմատական տեքստը երկու դրչագրի հիման վրա կազմել է Գ. Տ.-Մկրտչյանը և հրատարակել «Ազարատ»-ում 1896 թ. (էջ 143—156, 199—208), որից և արտատպվել է: Խնդիրներից չորսը ռուսերեն թարգմանությամբ լույս է ընծայել պրոֆ. Գ. Խալաթյանը իր «Армянский эпос» աշխատության մեջ[4]): Հետագայում ակադեմիկոս Հ. Ա. Օրբելին ամբողջ խնդրագիրքը թարգմանել է ռուսերեն ու հրատարակել 1918 թ.՝ կցելով նրան դրաբար տեքստն՝ արժեքավոր ծանոթագրություններով[5]): Ակ. Հ. Օրբելու ռուսերեն թարգմանությունը վերահրատարակել է պրոֆ. Լ. Մելիքսեթ Բեկը[6]):

---

1) Գրիգոր Մագիստր. Թղթերը, հրատ. Կ. Կոստանյանցի, Ալեքսոյ 1910 թ., էջ 8.
2) «Բազմավէպ», 1853 թ., էջ 48, 144, 335, 1854 թ., էջ 160, 256, 1855 թ., էջ 30.
3) «Սիոն» երուսաղեմի 1886 թ., էջ 78, 91, 108—9, 157—158, 174—175.
4) Проф. Г. Халатянц, Армянский эпос в истории Моисея Хоренского, Москва 1896, стр. 223.
5) И. А. Орбели, Вопросы и решения, Пет. 1918 г.
6) Л. М. Меликсет-Беков, К истории точных наук в Армении и Грузии, Тбилиси 1930, стр. 224—232.

3. ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌԱՆՁԻՆ ԲԱՆԱՍԵՐՆԵՐԻ ՄՈՏ

Հայագիտության լայն շրջանում հայտնի չէին և չէին հրատարակված Շերակացու խնդրագրքին նախորդող ու հաջորդող թվաբանական մյուս աշխատությունները: Սակայն նրանց մասին առանձին հեղինակների կողմից զանազան ժամանակներում հիշատակություններ և կուահումներ եղել են:

1814 թ. *մանկավարժ Երեմիայի պրացուցակում մենք հանդիպում ենք այսպիսի մի հիշատակության. «Ձեռագիր տետրակ (ց) Անանիայի այբբենական համարողության, այլ և տոմար մի լեվոնի, չարժէ դին մի լմոնի»*[1]: *Երեմիայի հիշատակած Անանիայի համարողության այբբենական տետրակում, անկասկած, Շերակացու թվաբանական գործողություններն էին շարադրված:*

Գ. Տ.—*Մկրտչյանը Շերակացու խնդիրների համեմատական ուսքաոի նախաբանում, Շերակացու խնդիրների Բ դրչագրի վերնագիրը քննելիս, հանդել է այսպիսի մի ծանրակշիռ եզրակացության. «Թեև ս Շերակացին, ուներ և մի դլուխ խոսում «Ցաղագս կատարման համարողութեանն և կերպից հարցման» վերնագրով, որի մէջ խոսում էր թվաբանական չորս գործողության՝ դումարման, հանման, բազմապատկության և բաժանման մասին (Ընդունելութիւն, Բացատրութիւն, Բազմապատիկ, և Բաժանմունք), որոնց մեկայն վերնագրերն են պահվել Ա-ի այս հատվածում*[2]:

Ավելի արդիա կուահում է արել ակադ. Հ. Ա. Օրբելին՝ Շերակացու խնդիրների ուսերեն թարգմանության առթիվ դրած առաջաբանում.

«Задачник Анании—դրում է նա—как и другие его сочинения, дошел до нас не в целом виде; незначительный об'ем задачника и однообразие подбора задач, дают основание полагать, что это лишь отрывок учебника, включавшаго, судя по его заглавию и обрывку предисловия, и теоретическую часть»[3]:

Շերակացու թվաբանական չորս գործողությունների անհայտ ուսքառակ փոքրիկ հատվածներ է բերված Բարքեն վ. Դյուլիսեթյանի՝ «Հայ ոդու առաջին դասագրքերը» հոդվածում[4]: *Սակայն նա չի նշել իր օգտված ձեռագրերը, ուստի և նրա արժեքավոր աշխատությունը մնացել է անուշադրության մատնված:*

Շերակացու թվաբանական չորս գործողությունների մասին փոքրիկ հիշատակության մենք հանդիպում ենք Conybeare-ի կազմած British Museum-ի ձեռագրաց ցուցակում՝ №136 ձրչագրի նկարագրության հատվածում[5]:

Շերակացու թվաբանական երեք գործողությունների ամբողջական ուսքառը հայտնաբերվեց մեր կողմից ՀՍՍՌ մատենադարանում 1939 թվին և հրատարակվեց Երևանի Պետական Համալսարանի «Գիտական աշխատու-

---

1) *ՀՍՍՌ մատեն. արխիվային բաժին, 1814 թ. գործ № 120.*

2) *Գ. Տ. Մկրտչյան, Ան. Շերակացի (արտատպություն 1896 թ. «Արարատ»-ից), էջ 11—12.*

3) И. А. Орбели, Вопросы и решения, Пет. 1918 г. стр. 10.

4) *«Անահիտ» ամսագիր, 1911 թ., էջ 72—76.*

5) F. C. Conybeare, A. Catalogue... *էջ 327—328.*

թյուններ»-ի 11-րդ հատորում «7-րդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացու թվաբանության դասագիրքը» վերնագրով[1]): Թվաբանական երեք գործողությունների և «Հարցում»-ների հետ միասին մենք առաջին անգամ հրատարակեցինք նաև Շիրակացու «Մրախճանականք»-ը, որի մասին մեզ նից առաջ հայագիտության մեջ հիշատակություններ եղել են:

Այսպիսի լրացումներ կատարելուց հետո ևս, Շիրակացու թվաբանության դասագիրքը, այնուամենայնիվ, մնում էր թերի — բացակայում էր բաժանման գործողությունը: Բոլոր տվյալներից երևում էր, որ այդպիսի դլուխ Շիրակացու դասագրքում եղել է, բայց նա անդամահատվել է հետագայում: Մեր պրպտումները ՀՍՍՌ մատենադարանում Շիրակացու բաժանման գործողությունը դտնելու հույսով՝ հասցրին մեզ մի անգամայն դրական արդյունքների:— Մեզ հաջողվեց դտնել և վերծանել Շիրակացու բաժանման գործողությունը: Այժմ արդեն, մեր կարծիքով, հնարավոր է ամբողջացնել Շիրակացու թվաբանության դասագիրքը:

Անհրաժեշտ ենք համարում ՀՍՍՌ մատենադարանի մեզ հայտնի նյութերի հիման վրա կանգ առնել Շիրակացու թվաբանության դասագրքի առանձին մասերի վրա և ցույց տալ այն կապը, որը դոյություն ունի նրա առանձին մասերի միջև:

4. ԽՈՍՏՈՒՄՆ ԱՇԱԿԵՐՏԱՑՆ

Շիրակացին թվաբանության իր դասագիրքն սկսել է աշակերտներին ուղղած մի փոքրիկ ներածականով, որի վերնագիրն է «Անանիայի Շիրակացւոյ խոստումն աշակերտացն և առաջին գլուխ»: Այդ ներածականը պահվել են ՀՍՍՌ մատենադարանի № 1770 ձեռագրում[2]), և British Museum-ի հայերեն ֆոնդի № 136 ձեռագրում[3]): Շիրակացին այստեղ մատնացույց է անում իր օգտագործած աղբյուրը և ծանոթացնում աշակերտներին իր շարադրման մեթոդի հետ. «Զհնարկութեանս նպատակը — դրում է նա,— ո՛վ իմաստութիւն սիրողներ և ինձ մոտ գիտութիւն սովորել ցանկացողներ, պատկերել ձեղ նախնյայ ջանքը — համարողության արվեստը՝ իբրև կենդանի ձայն՝ <նվիրված> բարի ուսուցչի կողմից: Սովորեցե՛ք իմ աշխատութիւնից, չնայած որ համառոտված է ընդարձակից, որպեսզի հաճախակի կրկնողությամբ ձեղ ձանձրութիւն չպատճառեմ: Մասամբ <և> հնչացրի նախնյայ աշխատությունը, որպեսզի հնարավորություն ունենաք սրանով իմանալ հաշվելն ու նրա բովանդակությունը: Եվ արդ՝ ես սկսում եմ ամենացածրից և հասարակից՝ մանուկներիդ և անվարժների <իմացության> մակարդակի համեմատ»[4]):

Շիրակացու ներկա ներածականից նախ պարզ երևում է, որ Շիրակացու թվաբանական այս աշխատությունը դասագիրք է: 7-րդ դարից առաջ և 7-րդ դարում գրված կան մի շարք հայերեն օրիգինալ և թարգմանական

---

1) Երևանի Պետ. Համալսարանի Գիտ. աշխատությունների ժողովածու, հ. XI, Երևան, 1939 թ., էջ 245—274:

2) Նույնը, էջ 248:

3) F. C. Conybeare, A Cataogue..., էջ 327—328:

4) Երևանի Պետական Համալսարանի «Գիտ. աշխատութ.» հ. XI, էջ 248:

աշխատությունները, որոնց վերաբերյալ ենթադրություններ են եղել՝ Նրանց դասագիրք հանդիսանալու վերաբերյալ (Դիոնիսիոս Թրակացու քերականությունը, «Աչխարհացույց»-ը, Ագեքսանդրի վեպը, Թևոնի ճարտասանությունը և այլն), սակայն Շիրակացու ներկա աշխատությունը մեզ հասած ու հայտնի ամենահին մատենագրական երկն է հայերենով, որի դասագիրք հանդիսանալն անկասկած է: Շիրակացին այդ մասին պարզ ասում է իր աշխատության վերնագրերում՝ «Մոսատումն աշակերտացն», «Հրաման աշակերտացն»:

Շիրակացու ներածականից երևում է նաև, որ նա իր դասագրքի նյութը քաղել է ավելի ընդարձակ ուղղություններից և պարզեցրել է այն: «Կարճառոտ կարդեցի սակաւս ի բազմաց»,—«Հեչտօրինակի նախնեաց գիրս»— ասում է Շիրակացին: Ի՞նչ ուղղություր է հանդիսացել Շիրակացու այդ ուղղությունը— հայկական, թե՞ հունական— ասել այժմ դժվար է, որովհետև Շիրակացուց առաջ գրված մաթեմատիկական լուսանդակություններ հայերեն ո՛չ մի երկ մեզ չի հասել, իսկ հունականն այնքան փոքրաթիվ ձևով է մեզ հասել և ուշ շրջանի հեղինակների ձեռքով այնքան վերամշակված, որ այժմ անհնար է որևէ համեմատություն կատարելը: Հին հունական հեղինակներից, հավանական է, Շիրակացին օգտված լինի Պապոս Ագեքսանդրացուց, որն ունեցել է թվաբանական նման մի աշխատություն և որը, դժբախտաբար, մեզ չի հասել: Սակայն եթե ընդունելու լինենք անդամ Շիրակացու հունականից թարգմանելու վարսը, այդ թարգմանությունը չպիտի դիտվի որպես տեխնիկական հասարակ աշխատանք—Շիրակացին մեծ աշխատանք պիտի կատարած լինի հունական այբուբենի կարդով դասավորված թվաբանական աղյուսակները վերածելով հայկական այբուբենի, որը՝ ինչպես հետո կտեսնենք, ունի մի հանդամայն այլ դասավորություն, քան հունականն է:

Եվ, վերջապես, Շիրակացու ներածականից երևում է նրա գիտական մոտեցումը դեպի կուբըի չարագրման մեթոդիկան: Սկսնակ ուսումնասիրողների մատչելի դարձնելու համար նա թվաբանության կուբրը սկսում է ամենապարզ և հասարակ գործողություններից. «Ես արդ սկսանիմ ի կրտսերագունէս եւ ծանծաղագունէս ասել զպարակս մանկանցն և զանհմտագունից»: Ե՞րբ դարում մեթոդական նման մոտեցումը՝ անկասկած, դասախարակության գործում առաջադիմական խոշոր քայլ է:

5. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Շիրակացու ներածականին հաջորդել է դասարանի գործողությունը, որը նրա մոտ կոչվել է «Ընդունելութիւն»՝ մի թվի վրա նոր թիվ ընդունելու, վրան ավելացնելու իմաստով:

Ընդունելությունը Շիրակացու թվաբանության դասագրքում նախատեսված է եղել առաջին կուբրի կամ դասարանի համար: Այդ կուբրը կամ դասարանը կոչվել է «նախավարժում»: «Ընդունելության» վերնագիրն է. «Նախավարժումն. գլուխ առաջին համարողութեան, որ կոչի ընդունելութիւն»:

Շիրակացին իր խոսման համաձայն, «Ընդունելությունը»-ը սկսում է մեկանիշ պարզ թվերի գործողություններից:

ա	ա	բ	1+1=2	բ	բ	գ	2+2=4
ա	բ	գ	1+2=3	բ	գ	դ	2+3=5
ա	գ	դ	1+3=4	բ	դ	ե	2+4=6
ա	դ	ե	1+4=5	բ	ե	զ	2+5=7
ա	ե	զ	1+5=6	բ	զ	է	2+6=8
ա	զ	է	1+6=7	բ	է	ը	2+7=9
ա	է	ը	1+7=8	բ	ը	թ	2+8=10
ա	ը	թ	1+8=9	բ	թ	ժ	2+9=11
ա	թ	ժ	1+9=10				

Այս ձևով ազգուսակի մեջ միանիշ բոլոր թվերի գումարումը կատարելով մինչև լինը թիվը, Շերակացին անցնում է տասնավորներին, հարյուրավորներին և ավելի բարձր թվերին՝ յուրաքանչյուր հաջորդ ազգուսակում մեծացնելով թվանիշը և պակասեցնելով թվակարգը: Գումարման ազգուսակի թվակարգը վերջանում է լինը հազարի գումարումով· «ք + ք = ևի» (9000+9000=18000):

6· ԲԱՑՏՐՈՒԹՅՈՒՆ

Շերակացու գումարման գործողությանը հետևում է հանումը: Նա կոչվում է «բացատրություն» (բաց տալու իմաստով): Որոշ դրչագրեր այդ բառը տալիս են և «բացդրություն» ձևով (բաց դնելու իմաստով): Ճիշտ չէ՝ սակայն, Գ. Տ. Մկրտչյանի «Ճաղատս հարցման եւ լուծման» նախաբանում բերած «բացատրութիւն» ձևը,[1]: ՀՍՄՌ մատեն № 4066 դրչագրում հանման գործողությունը վերնագրված է «Բացերթութիւն»:

Հանման գործողությունը Շերակացու դասագրքում համարվում է երկրորդ գլուխը և վերնագրված է «Գլուխ Բ· հաւարողութեան, որ կոչի բացտրութիւն»:

Հանման գործողությունը Շերակացու թվաբանության դասագրքում նախատեսված է եղել երկրորդ կուրսի կամ խմբի համար, որը կոչվել է «Գերավարժուն»:

Հանման գործողության ուսվում Շերակացին չարադրել է ընդամենը մի քանի տող ներածական՝ «Անանիայի Շերակացւոյ խոստումն աշակերտացն եւ երկրորդ գլուխ» վերնագրով: Ներածականում ասված է· «Զմտաղոյ յարուեսաս և յանձն առնողաց աշակերտութեան, ընդարձակացուցանեմ առաջիկայիւս: Գերավարժուն»:

Շերակացու հանման գործողությանը բնորոշ է նվազելին հանելիից առաջ դնելու միասը, որը, մեր ժամանակում, հաշվարկման համար խիստ անռավոր է: Շերակացու հանման գործողության ժամանակ չէ ասվել այսքանից հանած այս թիվը հավասար է այսինչէ, այլ այսքանը հանած այսքանից հավասար է այսինչէ:

«Բացատրությունը» ևս Շերակացու մոտ սկսվում է միանիշ պարզ թվերի գործողությունից:

---

[1]) Գ. Տ., Մկրտչյան, «Ճաղատս հարցման և լուծման», էջ 11.

ա	բ	ա	1-ը—2-ից = 1
ա	գ	բ	1-ը 3-ից=2
ա	դ	գ	1-ը- 4-ից = 3
ա	ե	դ	1-ը—5-ից=4
ա	զ	ե	1-ը—6-ից=5
ա	է	զ	1-ը—7-ից=6
ա	ը	է	1-ը—8 ից=7
ա	թ	ը	1-ը—9-ից=8
ա	ժ	թ	1-ը—10-ից=9

ը	ժա	թ	2-ը—11-ից = 9
բ	ժ	ը	2-ը—10-ից=8
բ	թ	է	2-ը—9-ից=7
բ	ը	զ	2-ը—8-ից=6
բ	է	ե	2-ը—7-ից=5
բ	զ	դ	2-ը—6-ից=4
բ	ե	գ	2-ը—5 ից=3
բ	դ	բ	2-ը—4-ից=2
բ	գ	ա	2-ը—3-ից=1

Շիրակացին իր հանման աղյուսակում հայկական այբուբենի թվահամարի կարգով մի առ մի չարադրելով միանիշ և բազմանիշ բոլոր թվերը՝ հասցնում է մինչև հայկական այբուբենի վերջին տառանիշը—«ք» (9,000) ը ա՛+ռ, այսինքն՝ 9000-ը հանած 10,000-ից հավասար է 1000-ի:

7· ԲԱԶՄԱՊԱՏԻԿԸ

Շիրակացու թվաբանական աշխատության ավելի ընդարձակ մասն են հազմում բազմապատկման աղյուսակները, որոնց թիվը 156 է: Այս գլուխը վերնագրված է «Անանիայի Շիրակացւոյ հրամամբ աշակերտացն»: Բազմապատկման աղյուսակներին նախորդում է Շիրակացու հետևյալ վոգբրիկ ներածականը. «Վարժվելով թվերի մեջ, այժմ համարձակ ընթացիք ա՛յն ուղիով, որ տաբածում եմ ձեր առջև՝ ինչպես բաց կապույտ և վոգբրիկ ալիքներն արագընթաց նավի առջև, որոնք ճնհոգ են կատաբածի նկատմամբ: Շահը ղյուրըմբռնելի կլինի ժրաջան աշխատանքով»:

Շիրակացու «բազմապատիկք»-ը նախատեսված է եղել երրորդ կուրսի համ դասարանի համար ու կոչվել է «Եռավարժում». «Եռավարժումն գլուխ իրրորդ համարողութեանց, որ կոչի բազմապատիկէ»:

Բազմապատկման աղյուսակը Շիրակացին սկսում է մեկից[1]) և թվակարգով մեծացնում մինչև «ք» տառը (9000-ը): Դասագրքում հայկական այբուբենի ամեն մի տառին հատկացված է չորս աղյուսակ: Բազմապատկվում է հերթով՝ միավորներով, տասնավորներով, հարյուրավորներով և հազարավորներով: Բազմապատկման գործողությունը № 1770 դրչագրում սկսում է հետևյալ աղյուսակներով:

ա	բ	բ	1×2=2
բ	բ	գ	2×2=4
գ	բ	գ	3×2=6
դ	բ	բ	4×2=8
ե	բ	ժ	5×2=10
զ	բ	ժբ	6×2=12
է	բ	ժգ	7×2=14
ը	բ	ժդ	8×2=16
թ	բ	ժը	9×2=18

ժ	բ	ի	10×2=20
ի	բ	լ	20×2=40
լ	բ	կ	30×2=60
խ	բ	ձ	40×2=80
ծ	բ	ճ	50×2=100
կ	բ	ճի	60×2=120
հ	բ	ճխ	70×2=140
ձ	բ	ճկ	80×2=160
ղ	բ	ճձ	90×2=180

[1]) *Մեկի բազմապատկությունն ունի միայն ՀՄՄՌ Մատեն. № 4066 դրչագիրը և մեր նախորդ հրատարակության մեջ չի մտել:*

(Մի էջ ձեռագ. № 1770 գրչագրի «Բացատրութիւն»-ից)։

Այս կարգով բազմապատկվում են երեք, չորս և մյուս թվերը մինչև 9000:

Շերակացու բազմապատկման կապակցությամբ անհրաժեշտ է նշել մի կարևոր փաստ, որ խոշոր նշանակություն ունի ընդհանրապես մաթեմատիկայի պատմության համար—այդ չորս գերույի դործածությունն է «՛» նշանով: Այդ նշանով դործածված ա՛ հավասար է ո՛չ թե մեկի, այլ տասը հազարի, կամ մեկ բյուրի: Այդ հետևողականությամբ բ՛ հավասար է 20,000-ի, գ՛ հարյուր հազարի, դ՛՝ մեկ միլիոնի, ո՛՝ տասը միլիոնի և այլն: Այդ նշանը դործածելու դեպքում հայկական այբուբենի տառանիշները ստանում են հետևյալ թվական նոր նշանակությունները:

ա՛ = 10,000	ժ՛ = 100,000	ն՛ = 1,000,000	շ՛ = 10,000,000
բ՛ = 20,000	ի՛ = 200,000	շ՛ = 2,000,000	ո՛ = 20,000,000
գ՛ = 30,000	լ՛ = 300,000	ո՛ = 3,000,000	չ՛ = 30,000,000
դ՛ = 40,000	խ՛ = 400,000	պ՛ = 4,000,000	պ՛ = 40,000,000
ե՛ = 50,000	ծ՛ = 500,000	ջ՛ = 5,000,000	ջ՛ = 50,000,000
զ՛ = 60,000	կ՛ = 600,000	ռ՛ = 6,000,000	ռ՛ = 60,000,000
է՛ = 70,000	հ՛ = 700,000	ս՛ = 7,000,000	ս՛ = 70,000,000
ը՛ = 80,000	ձ՛ = 800,000	վ՛ = 8,000,000	վ՛ = 80,000,000
թ՛ = 90,000	ղ՛ = 900,000	տ՛ = 9,000,000	տ՛ = 90,000,000


Բյուրի նշանակությամբ դործ ածված այս նշանի մասին խոսել է նաև մեծանուն բանասեր Ստ. Մալխասյանցը՝ Սերեոսի 1939 թ. հրատարակության ծանոթագրության մեջ[1]):

Միավորից հետո չորս գերույի նշանակությամբ դործ ածված այս նշանը Շերակացու մոտ և հին հայկական մատենագրության մեջ կոչվում է բյուր: Նա շատ նման վում է կատարակի համար դործ ածված նշանին, բայց և տարբերություն նրա, դրվում է ո՛չ թե տառանիշի աջկից, այլ հետևից: Որպեսզի պարզ լինի՝ թե Շերակացին այդ նշանի դործածության հիման վրա ինչպիսի բարդ բազմապատկումներ է կատարում, կարելի է բերել նրա բազմապատկման երկու նախավերջին ադյուսակները:

---

1) *Սերեոսի եպ. Պատմություն, Երևան 1939 թ., էջ 197:*

Մի էջ Շիրակացու «Տոմարագրության» գլխից Հովհ. մատենադ. № 1771 ձեռագրից։



Բյուրի նշանի գործածությունը Հայաստանում տասը հազարի նշանակությամբ VII դարում, արաբներից առաջ, մեծ դյուրություն է ստեղծել մեծ թվերի գործածության համար: Այդ, անկասկած, Շիրակացուց չի սկսվում և դյուրություն է ունեցել Հայաստանում նրանից առաջ[1]):

8. ԴԱՐ ԵՎ ԿՈՃԱՏ ԹՎԵՐԸ

Շիրակացու բազմապատկման գործողությանը հաջորդել են նրա «Դար» և «Կոճատ» թվերը: «Դար» նշանակում է դույզ թիվ, իսկ «Կոճատ»՝ կենտ թիվ: «Դար» և «Կոճատ» այդ թվերը մեզ հայտնի գրչագրերից պահել է միայն ՀՄՄՌ մատեն. № 4066 գրչագիրը (թերթ 8 ա), որը 1238 թ. ընդօրինակություն է: «Դար» և «Կոճատ» այդ թվերի տեքստը այս գրչագրում, «Բազմապատիկ»-ի անմիջական շարունակությունն է կազմում, այնպես որ ոչ մի հիմք չունենք նրա վրա կասկածելու: Շիրակացու մոտ «դար» թվերն են հաշված՝ 2-ը, 4-ը, 6-ը, 8-ը, 20-ը, 40-ը, 60-ը, 80-ը, 200-ը, 400-ը··· 60,000-ը, 80,000-ը, 200 հազ., 400 հազ., 600 հազ., 800 հազ., 2 մլ. և այդ շարքով հասնում մինչև 9 մլ իարդը:

«Կոճատ» թվերն են՝ 1-ը, 3-ը, 5-ը, 7-ը, 9-ը, 10-ը, 30-ը, 50-ը, 70-ը, 90-ը, 100-ը, 300-ը, 500-ը, 700-ը, 900-ը, 1000-ը, 3000-ը, 5000-ը, 7000-ը, 9000-ը, 10,000-ը, 30,000-ը, 50,000-ը, 70,000-ը, 90,000-ը, 100

---

1) Ի միջի այլոց, նման նշան գործ են ածել և հուդիները, որը կոչվել է «անթուա».

հազարը, 300 հազարը, 500 հազարը, 700 հազարը, 900 հազարը, 1 միլիոնը և այդ չարքով մինչև 9-ը միլիարդը:

«Դար» և «Կոճատ» թվերը չարադրված են որոշ քառակուսի չրջանակի մեջ, բայց կայուն սկզբունք չի պահպանված: Այսպես՝ չրջանակներ կան, որոնք պարունակում են չորս թվանշան, չրջանակներ կան, որոնք ունեն միայն մի թվանշան: Այդ աղյուսակներն ունին հետևյալ ձևը:—

բ	դ	զ	ը
ի	լ	կ	ձ
մ	ն	ո	պ
ս	տ	ց	փ
իա	խա		
կա	ձո		
մա	նա		
իճո			
խճո			

Թվակարգի այսպիսի խառնաչփոթություն, անկասկած, ընդօրինակող գրիչների մեղքով է:

Հետաքրքիր է այստեղ Շերակացու յուրատեսակ մոտեցումը զույգ ու կենտ թվերին: Այսպես՝ նրա մոտ 10-ը, 30-ը, 50-ը, 70-ը, 90-ը և այլն ոչ թե զույգ թվեր են, այլ կենտ: Շերակացին զույգ ու կենտ թվերը որոշում է ըստ նրանց առաջին թվանշանի զույգ կամ կենտ լինելու հանգամանքի:

«Դար» և «Կոճատ» թվերը Շերակացու աղյուսակներում չարադրված են որոշ հետևողականությամբ: Նրանք սկսում են միանիշ պարզ թվերից և աստիճանաբար բարձրանում են ավելի բարձր թվերի:

9. ՎԵՑՀԱԶԱՐՅԱԿԸ

ՀՍՍՌ մատենադարանի № 4066 ձեռագրում «Դար» և «Կոճատ» թվերին հետևում է Շերակացու «Վեցհազարեակ»-ը, որը՝ ինչպես պարզվում է մեր ուսումնասիրությունից, բաժանման աղյուսակն է:

«Վեցհազարեակ»-ի անքսոի վրա կանգ են առել և մի քանի անգամ ձեռքով խոսել հայագիտության մի շարք ականավոր գեմքեր: Սակայն նրանք բոլորն էլ ծանոթ են եղել ո՛չ թե Շերակացու իսկական «Վեցհազարեակ»-ի հետ, այլ «Եօթնազրանք» կամ կնդ «Վեցհազարեակ» կոչվող աշխատության հետ և այդ ուսումնասիրության հիման վրա եկել են վճռական այն համոզման, որ այդ աշխատությունը Շերակացունը լինել չի կարող: «Եօթնազրանք»-ի անքսոը բացահայտ ալեխաբ է, իսկ Շերակացին լուսամիտ մաթեմատիկ է և նա այդպիսի անմտություն չէր չարադրի— իրավացիորեն ենթադրել են նրանք: Բացի այդ, «Եօթնազրանք»-ի մեջ գործ ածված լեզուն միանգամայն այլ է, քան Շերակացու լեզուն է: Մնում էր ենթադրել, որ ուշ չրջանի մի խավարամիտ հեղինակ է կազմել այդ ու իր անք-

տին ավելի հեղինակություն տալու նպատակով, ի չարն է դրծ դրել Շիրակացու անունը— հիշել է նրան որպես այդ աշխատության հեղինակ:

Գ. Զարբհանելյանն իր կազմած «Հայկական հին դպրության պատմության»-ը աշխատության մեջ, խոսելով Շիրակացու վերև հիշված «Եօթնադրեանք»-ի մասին, հետևյալն է գրում. «Վեցհազարյակ կամ եօթնադրեանքը.— գրվածք մը. որուն հորինողը ուզեր է Շիրակացվույն անունով իր երկասիրության հարգ մը տալ. դիտենալով տղին մեջ անոր վայելած համարումն և մեծարանքը: Բայց այս դիրքը այնչափ հեռու է Շիրակացվույն ընդայելու հավակնություններն, որչափ որ լուսավորյալ էր անոր միտքը, և անկարելի, որ այդպիսի անոճ երկասիրություն արտադրեր»[1]:

«Եօթնադրեանք»-ի վերաբերյալ ճիշտ նման եղրակացության է հանգել Ն. Ադոնցը իր „Дионисий фракийский и армянские его толкователи" աշխատության մեջ. „Конечно,—գրում է նա—нельзя и думать, чтобы столь почтенные писатели были причастны к такому вздору. Но сочинителю его нужны были громкие имена, чтобы придать веру нелепице в глазах доверчивых людей. И он, естественно, остановился на признанных в грамматике и математической литературе авторитетах, на Давиде, Мойсее, Анании и даже Гомере"[2]).

Շիրակացուն վերագրվող «Վեցհազարեակ»-ի նկատմամբ այս տեսակետը գերիշխող է հանդիսացել մինչև այժմ: Շիրակացու այդ աշխատությունը դիտվել է, որպես ախթարք, նրա տեքստը որոշ թվեր դրծ են տալ գրքացներն իրենց փիլիսիներում, իսկ իրեն, Շիրակացուն, համարել են որպես ամեն տեսակ դաշտնիքների դիտցող ու մեկնող մի հեղինակ: ՀՍՍՌ մատեն. 18—19 դարերում ընդօրինակված «Վեցհազարեակ»-ի տեքստերը լիքն են ամեն տեսակ ցնդաբանություններով, որոնք ավելացվել են ուշ շրջանում ու վերագրվել Շիրակացուն:

Շիրակացին և Ախթարքը իրոք չատ հեռու են իրարից: Վերջերս Մատենադարանի հրատարակած Շիրակացու «Մեծ խոստացարան» աշխատությունից երևում է, որ Շիրակացին ո՛չ մեկին տեղ չի տալիս ախթարքին, այլ և սաստիկ քննադատության է ենթարկում ախթարքով գրգռվող քաղդեացիներին: Նա հարձակվում է քաղդեացի աստղաբաշխների վրա, որոնք աստղերի հիման վրա գուշակություններ են անում՝ ծնված երեխայի չար կամ բարի, բախտավոր կամ անբախտ լինելու վերաբերյալ: Ինչպե՞ս կարող է մանկաբարձուհին իմանալ, թե երեխան որ ժամանակ ինչ աստղ տակ է ծնվել, վիճում է Շիրակացին քաղդեացի աստղաբաշխների հետ, երբ երեխան ծնվելու ժամանակ մանկաբարձուհին չատ-չատ կարող է իմանալ ո՛չ թե երեխայի ծնդյան ժամանակը, այլ՝ երեխան կենդանի է, թե մեռած, ապա է, թե աղջիկ: Եթե երեխայի բախտը կապված է ժամանակի և աստղի հետ, ապա ինչպե՞ս է որ թագավորի տոհմի բոլոր անդամները, որոնք ծնվում են տարբեր ժամանակներում և տարբեր աստղերի տակ, միևնույն

---

1) Գ. Զարբհանելյան, Հայկական հին դպրութ. պատմ, 3-րդ հրատ. Վենետիկ, 1897, էջ 464:

2) Н. Адонц, Дионисий фракийский и армянские толкователи, Пет. 1915, стр. LXI.

բախտավոր են լինում: Եթե մարդիկ ի բուն անբախտ են ծնված, ուրեմն անհեղի՞ն են աղքատները չարչարվում, ձգտում բախտավոր կյանք ստեղծելու համար: Եթե մարդիկ ի բուն չար են ծնվում, այն դեպքում ինչո՞ւ համար են դատարանները, որոնք դատապարտում են հանցավորներին չարության համար— չէ՞ որ չարագործները բնածին չար են ծնվել և իրենց կամքից անկախ պիտի չարություն անեն: Եվ, վերջապես, եթե վոքրիկ, անմեղ երեխայի մեջ ի բուն չարություն է դրվում, ուրեմն չար է նրա առեղծող աստվածը: Շիրակային սպանիչ քննադատության է ենթարկում այս թեթևաբոլ դրաղվող քաղղեացի աստղաբաշխներին և արհամարհական տոնով վերջացնում. «Բավական է խոսել անհամ բաներից մասին»[1]): Այսպիսի մտածող և դատող լուսամիտ Անանիա Շիրակացին և այս թեթևաբոլը—իրաբ ժխանդամային հակադիր են:

Բայց այնուամենայնիվ, հարց է առաջանում,— ինչպե՞ս է, որ Շիրակացին Լոմման թժշկի կամ Կիպրիանոսի կարգի այս թեթևաբոլով դրաղվող անձ է ճանաչվել: Ինչպե՞ս է որ «Վեցհազարյակ»-ը կապվել է Շիրակացու անվան հետ: Այս հարցը, դժբախտաբար, մեր բանասերներից ոչ մեկը չի դրել իր առջև, չի փորձել պատասխանել նրան: Շիրակացու աշխատությունների և ուսումնասիրության կապակցությամբ անհրաժեշտ եղավ մեզ ծանոթանալ ՀՍՍՌ մատեն. դրչյալիր «Եօթնապրեանք» կամ կեղծ «Վեցհազարեակ» կոչվող տեքստերի հետ: Մեր հետազոտությունները բերին մեզ հետևյալ եղրակացության:—

Ամենից առաջ պարզվեց, որ «Եօթնապրեանք»-ը միանդամայն տարբեր տեքստ է «Վեցհազարեակ»-ից: Առաջինը քերականական, դուշակողական բովանդակություն ունեցող տեքստ է, իսկ երկրորդը—թվաբանություն է: ՀՍՍՌ մատենադարանում «Եօթնապրեանք»-ի (կամ երբեմն՝ «Եւթնապրեանք»-ի մի չարք տեքստեր կան: Նրանք, սովորաբար, վերնագրված են լինում. «Բերականութիւն, որ կոչի եօթնագրեանի՝ զուգեալ ի Դաւթէ Անյաղթ փիլիսոփայէ և ի հռոմոց Փիւնիկ կոչեցեալ» (ՀՍՍՌ մատեն, №№ 3233, թ. 154, 1771, թ. 11բ, 1980, թ. 382, 6033, թ. 180բ, 2528, թ. 213, 8952, թ. 22 ա և այլն):

Դրչագրերում հաճախ պատահում է քերականական մի այլ տեքստ, որտեղ դարձյալ հիշվում են Դավիթ Անհաղթի, Փյունիկ վարդապետի (այստեղ ավելի ճիշտ ձևով—«Փիլիկայ Հռոմոց վարդապետի») անունները և նրանց վրա ավելացնում Հոմերոսի և Մովսես Քերթողի անունները, «Դաւթի հայոց փիլիսոփայի եւ հռոմոց վարդապետի եւ Հոմերեայ արուեստաւորի եւ Մովսէսի քերթողի իմաստութիւն քերթողական տաղից» (ՀՍՍՌ մատեն. № № 599 թ. 1ա, 7117, թ. 3ա և այլն), սակայն այդ միանդամայն այլ տեքստ է և կապ չունի «Եօթնապրեանք»-ի հետ:

Եօթնապրեանք»-ի այդ խմբի տեքստերից ո՛չ մեկի վերնագրում մեզ չի հանդիպում Անանիա Շիրակացու անունը: Ուշ շրջանի ընդօրինակողներն անգամ այդ տեքստը դեռ չեն ճանաչում Շիրակացու անունով: Որ Շիրակացին «Եօթնապրեանքի» հեղինակը չէ և կապ չունի այդ տեքստի հետ, այդ երևում է «Եօթնապրեանք»-ի հեղինակի՝ Շիրակացու «Վեցհազարեակ»-ից օգտվելու և Շիրակացուն որպես Վեցհազարյակի հեղինակ մատնացույց

---

1) Անանիա Շիրակացի, «Տիեզերագիտություն և տոմար», Երևան, 1941 թ. էջ 20 32:

անելու միտքից: «Եօթնապրեանք»-ի հեղինակը բերում է Շիրակացու «Վեց-հազարեակ»-ից մի փոքրիկ հատված և հետևում. «Այս է արուեստ ճեկին, (Վեցհազարեկին), զոր գովէ Անահիտ Շիրակացին եւ ասէ. Դանճ ծածկեալ էիր յերկրիս հայոց եւ ակն թաղուցեալ ի տանս Թորգոմայ, ոմ մայր եւ ամենայն իմաստութեանց...»[1]:

«Եօթնապրեանք»-ի տեքստն իրապես անթարք է և պարունակում է բազմահայտ դուշակութիւններ: Հիմքը վերցրում է հայկական այբուբենի ձայնաւորները՝ Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ի, և նրանց տրւում առանձին խորհրդաւորութիւն: Նրանց որոշ դուշակութիւնների, հատուկ ընտրած թիւերի հետ, ըստ հեղինակի հայտարարութեան, կարելի է թափանցել ամեն տեսակ դաղտնիքի մէջ, անգամ կարելի է իմանալ Աղամից մինչև Քրիստոս և Քրիստոսից մինչև «մյուս անգամ» գալը ընկած ընդոծ դաղտնիքները. «Գիր է՝ —դրում է «Եօթնապրեանք»-ի հեղինակը— Ա, Ե, Է, Ը, Ի, Ո, Ի, 'զդուզին այսպես՝ բանայ զմիտս՝ ճանաչել զոր կամի յԱդամայ ի Մովսէս, Մովսէսէ ի Դաւիթ, Դաւթայ ի Քրիստոս և Քրիստոսէ մինչև ի միւս անգամ գալուստ կարէ դիտել եօթն գրովս»[2]: Ծածուկ դաղտնիքներ հանկանալու համար խորհուրդ է տրւում հատկապես «Ճ», «Ր», և «Ա» տառերի զուդակցութիւնը. «Եթէ կամիցիս՝ զի բանայցեն միտք քո եւ հասու լինիցես համայնից.—ասված է «Եօթնապրեանք»-ի տեքստում, կալ զճեն ճարտասանացն եւ զքեն քննիկոնին եւ զայլն արարածոցն...»[3]:

Լոնդոնի British Museum № 136 ձեռագրի «Եօթնապրեանք»-ի վերջում պահվել է մի փոքրիկ հիշատակութիւն, որտեղ հիշվում է «Եօթնապրեանք»-ի հեղինակը. «Այս խորանս,— ասված է «Եօթնապրեանք»-ի վերջում—չարագրեալ է բազում աշխատութեամբ ի Վարդան վարդապետէ կարողութեամբ աստուծոյ»[4]: Այստեղ տարակուսելի է «խորան» բառի դործածութիւնը, որովհետև այստեղ աղյուսակ դոյութիւն չունի:—Ինչո՞ւ է ասում «այս խորանս», մինչև նա չդիտեր «խորան»-ի նշանակութիւնը: Համենայն դեպս, շատ հավանական է, որ Վարդանը լինի «Եօթնապրեանք»-ի հեղինակը:

Մեր ուսումնասիրութիւններից պարզվեց, որ սկզբնական չորանում «Վեցհազարեակ» է կոչվել Շիրակացու Թվարանութեան դասադրքի բաժանման դործողութիւնը: Այդ տեքստից մաքուր վիճակում պահվել են ՀՍՄՄ մատենադ. № 4066 ձեռագրերը[5]: Նա Շիրակացու Թվարանութեան դասադրքում տեղավորված է «Դար» և «կոճաւոր» թվերից հետո:

Այդ տեքստի մասին՝ որպես Շիրակացու բաժանման աղյուսակ, մեզնից առաջ, որքան մեզ հայտնի է, ոչ ոք չի խոսել և ոչ ոք չի զբաղվել նրա վերծանութեամբ: Եվ պիտի խոստովանենք, մի քանի տարիա համառ աշխատանքից հետո մեզ հաջողվեց վերծանել այն:

Շիրակացու բաժանման դործողութիւնը դասավորված է առանձին վանդակների մեջ: Դործողութեան ամեն մի վարժութիւն ունի մի վանդակ:

---

1) ՀՍՄՄ մատենադար. № 599, թ. 46 ա:
2) Նույնը, թ. 46 ա:
3) Նույնը թ., 46 ա,
4) F. Conybaere, A Catalogue..., էջ 327,
5) Այս ձեռագրի մանրամասն նկարագրութիւնն ունի Մեսրոպ եպ. Մաղիսթրոսն իր թուականում:

Բաժանման գործողության մեջ հետաքրքիր է թվերի դասավորման ձևը: Նախ գրվում է քանորդը, ապա՝ բաժանելին և վերջում բաժանարարը: Ամբողջ բաժանման գործողությունը շարադրված է հարյուր վաթսուն և հինգ վանդակների մեջ: Բաժանարար թիվն ամենուրեք վեցհազարն է: Նա հերթով բաժանվում է նախ միավոր թվերի վրա, ապա տասնավոր, հարյուրավոր և հազարավոր թվերի: Բոլոր դեպքերում, երբ բաժանարարն առանց մնացորդի չի բաժանվում բաժանելիի վրա, քանորդը տրվում է կլոր թվերով: Բերենք փոքրիկ օրինակ՝

ա	ց	ց	6000:1=6000
բ	վ	ց	6000:2=3000
գ	ս	ց	6000:3=2000
դ	[ռ՝]շ	ց	6000:4=1500
ե	ռմ	ց	6000:5=1200
զ	ռ	ց	6000:6=1000
է	պծէ	ց	6000:7=857 (կլոր թվով)
ը	չծ	ց	6000:8=750
թ	ոկե	ց	6000:9=665 (կլոր թվով)

Հիմք կա ենթադրելու, որ «Վեցհազարեակ»-ի այս աղյուսակներում բաժանելի «ց» թիվը դրվել է ոչ թե վերջում, այլ առջևում: ՀՍՍՌ մատենադարանում, բարեբախտաբար, մնացել է «Վեցհազարեակ»-ի մի տեքստ, որի երկրորդ և չորրորդ աղյուսակները, անշուշտ, բաժանման աղյուսակներ են և բաժանելի թիվը դրվում է առջևում:

Այդ տեքստը վերնագրված է «Ց. եակ»: Առաջին աղյուսակում բերված են № 4066 դրշադրի առաջին աղյուսակը, իսկ երրորդ և չորրորդ աղյուսակները երկուսի բաժանումն է: Այդ երկու աղյուսակները շարադրված են հետևյալ ձևով՝—

Ց. եակ					
ա	ց	ց	ա	[բ]	ա
c	[ց]	ց	բ	[բ]	ա
բ	[ց]	ա	գ	[բ]	աc
գ	[ց]	ս	դ	[բ]	բ
դ	[ց]	ռշ	ե	[բ]	բc
ե	[ց]	ռմ	զ	[բ]	գ
զ	[ց]	ռ	է	[բ]	դc
ը	[ց]	չծ	ը	[բ]	դ
թ	[ց]	ոկզ	թ	[բ]	դc
ժ	[ց]	ո	ժ	[բ]	ե
ժբ	[ց]	շ	ի	[բ]	ժ

և այլն:

Որ այդ երկու աղյուսակները «Ցեակ»-ի մասերն են, այդ անվիճելի է: Անվիճելի է նաև դրանց բաժանում հանդիսանալու փաստը: Ուրեմն մնում է ենթադրել, որ վեցհազարյակի մյուս բոլոր աղյուսակներում ևս Ց տառը դրված է եղել ո՛չ թե վերջում, այլ երկրորդ սյունյակում:

Շեբաթակացու բաժանման գործողության տեքստը ՀՍՍՌ մատեն. №

4066 դրչագրում խիստ աղավաղված է և մեծ դժվարությամբ մեզ հաջողվեց վերականգնել այն: Հաճախ միևնույն գործողության կնսը մնացել է մի վանդակում, իսկ մյուս կնսը—մյուս: Բաժանման գործողության վերջին վանդակներում գրեթե միշտ բացակայում է բաժանելի վեց հազարյակ թիվը: Բերենք տասնավորների բաժանումից փոքրիկ օրինակ:—

Դրչագրում	Պիտի լինի
իբ ահգ ց	իբ մհգ ց
իգ մղ	իգ մկ [ց]
իգ մծ	իգ մծ [ց]
իե մխ	իե մխ [ց]
իգ մլ	իգ մլ [ց]
մի մի	իե միբ [ց]
իբ մժ	իբ մյդ [ց]
իթ մզ	իթ մզ [ց]

Կարող է կասկած առաջանալ, որ բերված այս ապրյուսակները ձարող են ո՛չ թե բաժանման, այլ բազմապատկման աղյուսակը լինել: Բայց այս գործողությունից առաջ բազմապատկման գործողության արդեն չարաբերված լինելու, վանդակի վերջին թիվը միշտ վեցհազարյակով հանդես գալու և վեցհազարյակը առանց մնացորդի չբաժանվելու դեպքում կլոր թվով տալու պատճառը, կարծում ենք, վկայում են վանդակների բերած թիվերը բաժանման գործողություն լինելու օրսն: Ի միջի այլոց, Թեոն Ա-լեքսանդրացու մի հիշատակությունից երևում է, որ հնում բաժանման ժամանակ անհրաժեշտ է եղել խմհնալ՝ թե այս թիվը քանի անգամ է պարունակվում այսինչ թվի մեջ[1]):

Շերակացու «Վեցհազարեակ»-ի այս գործողությունը բաժանման գործողություն լինելու վերաբերյալ փոքրիկ հիշատակություն ունի «Եօթնագրքանք»-ի հեղինակը, որը բերենք վերևում: Նա օգտվելով Շերակացու թվաբանությունից, գրում է. «Այս է արուեստ Ձեկին, զոր զովէ Անանիա Շերակացին եւ ասէ. Գանձ ծածկեալ էիր յերկրիս հայոց եւ ահն թագուցեալ ի տանս Թորգոմայ, ղի մայր ես ամենայն իմաստութեանց (ասէ) եւ Թուոց եւ աղբիւր ամենայն արուեստից՝ հանդերձ ամենայն բաժանմանց»[2]): Ուրեմն, ըստ «Եօթնագրքանք»-ի հեղինակի, Շերակացին գովաբանել է «Վեցհազարեակ»-ի այդ արվեստը, Թաղնված գանձ է համարել հայաստանում, իմաստության և թվերի մայր և աղբյուր ամեն տեսակ արվեստների, ամեն տեսակ բաժանումների: Եվ իրոք, վեցհազարյակը հայկական այբուբենի, բոլոր թվերի մայրն է և աղբյուրը, նա բաժանվում է բոլոր թվերի վրա, ներանից են ծնվում մյուս բոլոր թվերը:

---

1) М. Я. Выгодский, Арифметика и алгебра в древнем мире, М—Л 1941 г., стр. 194.

2) ՀՄՄՌ մատեն. գրչագիր № 699.

Այստեղ ամենևին զարմանալու չէ, որ քանորդը վանդակում դրված է առջևում: Այդ մեզ համար սովորնական է, բայց միջին դարերում, հասկանական է, ընդունված սկզբունք է եղել: Ի միջի այլոց, այդ սկզբունքով է Շիրակացին չարադրել նաև հանման գործողությունը՝ «Բացատրություն»-ը:

«Վեցհազարեակ» հասկացողությունը, պետք է ասել, փոխվում է հետագայում: Միջնադարյան հայ հեղինակները և ընդօրինակող գրիչները, «Վեցհազարեակ» ասելով հասկացել են ո՛չ միայն Շիրակացու բաժանման գործողությունը, այլ Շիրակացու թվաբանությունն ընդհանրապես: Կան անդամ գրիչներ, որոնք «Վեցհազարեակ»-ի տետրակի մեջ հասկացել են ոչ միայն թվաբանության դասագիրքը, այլ և Շիրակացու ընդհանրագրությունը հետը վերցրած: Այսպես, British Museum-ի № 136 գրչագրի սկզբում բերված է եղած նյութերի հետևյալ ցանկը. «Այս է ցանկ գրքոյս գլխոյս. առաջ աղաւիան, որ է սրբ մահթում, երկրորդ պատկերաւոր մարդոյն... Ըներորդ վեցՈւնակն, Թերորդ բոլորակներն և աքեսր առաջերն...»[1]) նյութերի բովանդակությունից երևում է, որ գրիչը «Վեցհազարեակ» է անվանում Շիրակացու ընդհանրագրությունը և թվաբանության ազյուսակները միասին առած:

«Եօթնագրեանք»-ի հեղինակը ևս «Վեցհազարեակ» ասելով հասկանում է Շիրակացու թվաբանության դասագիրքն ամբողջությամբ առած: Նա ապավում է Շիրակացու բազմապատկման ազյուսակից և նրան անվանում «Վեցհազարեակ»: Այսպես, նա բերում է բազմապատկումից հետևյալ թվերը. «ԹՌ հետ Բ, ԹՌ հետ Գ, ԹՌ հետ Դ, ԹՌ հետ Ե, ԹՌ հետ Զ, ԹՌ հետ Լ...»[2]):

Հիմք կա ենթադրելու, որ «Եօթնագրեանք»-ն իր նախնական վիճակում չարադրված է եղել Շիրակացու թվաբանության դասագրքի ներքին լուսանցքում՝ որպես նրա և քերականության մեկնությունը: Այդ մեկնությունն իհարկե, անչափ միտուկ է, Շիրակացու թվաբանության սովորական թվերին առանձին խորհրդավորություն է տրված և կան անհմաստ չաստ պնդումներ, բայց այդ արդեն «Եօթնագրեանք»-ի հեղինակի մեղքն է: ՀՍՄՌ ժառնագ. № 4066 գրչագրի «Եօթնագրեանք»-ի տետրը ընդօրինակված է հենց մեր վերև ասած ձևով: Վերևում Շիրակացու թվաբանության չորս գործողություններն են, իսկ ներքևում՝ «Եօթնագրեանք»-ի տետրը:

18—19-րդ դարերում «Վեցհազարեակ» անունն արդեն ունեցել է մի ուրիշ այլ իմաստ: «Վեցհազարեակ» ասելով հասկացել են դրքագրության համար գործ ածվող ամեն տեսակ գրքեր: Ընդօրինակող գրիչները անդամ չեն հասկացել Շիրակացու թվաբանության տետրի նշանակությունն և նրանից առանձին թվեր առաջարկում են այս կամ այն հիվանդության բժշկության համար:

Այսպիսով, պարզվում է, որ «Վեցհազարեակ»-ը Շիրակացու բազմանման գործողություններն է և չարադրված է եղել նրա «Դարբ» և «Կոճառ» թվերից հետո: Այդ տետրը ոչ մի կապ չունի «Եօթնագրեանք»-ի տետրի

1) F. C. Conybaere, A. Catalogue..., էջ 321.
2) ՀՍՄՌ ժառնագ. գրչագիր № 699.

հետ, որը գրվել է 13-րդ դարում և որի հավանական հեղինակն է ամն վարդան: «Եօթնապրեանք»-ի հեղինակն օգտվել է Շիրակացու թվաբանությունից: Միջին դարերում «Վեցհազարեակ» ասելով հասկացել են Շիրակացու թվաբանությունն ընդհանրապես: 18—19-րդ դարերում «Վեցհազարեակ»-ը տղետ գրիչների կողմից բացարձակ ախթարականացվել է:

10. «ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ»

Շիրակացու թվաբանական չորս գործողություններին հետևել են նրա հարցումները, որոնք՝ ինչպես սկզբում ենք ասել, հրատարակվել են չորս անգամ: Շիրակացու հարցումներին թվաբանական չորս գործողություններն նախորդելու վաստը երևում է որոշ հարցումների, ընդօրինակությունների սկզբում պահված մի վոտքրիկ ընդմիջարկված հատվածից, որն ունի Գ. Տ. Մկրտչյանի օգտագործած a գրչագիրը: Անհրաժեշտ ենք համարում այդ հատվածը բերել այստեղ ամբողջությամբ. «Զամենայն(ն) ասաց իմաստուն(ն), թէպէտ եւ սակաւ ի բազմաց, եթէ զինչ ընդունելութիւնն, զինչ բացատրութիւն, զի՞նչ բազմապատիկ եւ բոլորովին յաղագս բաժանմանց եւ ապացուցից՝ պիտանացու ելոյր սոցայոյն տեսութեանց: Համառաւատ քեզ ընձեռութիւն առնելով վորձեցայց ի ձեռն սակաւուց իրը ներածութեան յեղինակի՝ զառ ծերունացն անցանելով բանիւ, ի խորագուն ի բաց կալ ի խնդրոց եւ պարզագունից չափաւորապէս հանդիպելով: Աստ աստէն իսկ վազվազակի յաղագս հարցման եւ լուծման: Հարցումն Ա. Այսպես լուայ...»[1]):

Գ. Տ.-Մկրտչյանը քննելով վերև բերված a գրչագրի հատվածը և համեմատության մեջ դնելով այն Պորփյուրի ներածության հետ, ևկել է հետևյալ եղրակացության. «Ակներև է, ինչպես պարզ երևում է մեր բազդատությունից, որ Անանիան, կամ մի ուրիշը, Պորփյուրի ներածության սկզբնավորությունը կամեցել է հարմարեցնել իրրև առաջաբան հարցումներին: Թեև Շիրակացին ուներ մի գլուխ խնդատես «Ցաղագս կատարման համարողության եւ կերպից հարցման» վերնագրով, որի մեջ խոսում էր թվաբանական չորս գործողության՝ դումարման, հանման, բազմապատկության և բաժանման մասին (= Ընդունելություն, Բացագրություն, Բազմապատիկ և Բաժանմունք), որոնց մեկայն վերնագրերն են պահվել ա-ի այս հատվածում...[2]):

Այժմ արդեն, երբ մեր ձեռքի տակ են Շիրակացու ընդունելության, բազմապատկման ու բաժանման գործողությունների տեքստերը, հաստատապես կարող ենք ասել, որ չորս գործողությունների այդ տեքստը նախորդել է հարցումներին և Գ. Տ.-Մկրտչյանի ու ակադ. Հ. Ա. Օրբելու կռահումները մեկանգամայն ճշմարիտ են:

Ընդմիջարկող հեղինակը շատ ճիշտ նկատել է թվաբանական գործողությունների վերջանալու և հարցումները սկսելու մասին ու նշել Անանեկայի «կատարման համարողության եւ կերպից հարցման» մասին:

Ընդմիջարկող հեղինակը հենվելով Շիրակացու Ներածականի այն խոս-

1) Գ. Տ.—Մկրտչյան, Անանիա Շիրակացի, արտատպ. «Արարատ»-ից, էջ 11.
2) Նույնը, 11—12։

քե վրա, ուր ասված է թե՝ «կարճառատ կարդացէք սակաւս ի բազմաց...», Շիրակացուն անվանում է խմաստուն և չեշտում Շիրակացու խնդրագրքի ակզրի բառերը. «Զամենայն ասաց խմաստունն, թէպէտ եւ սակաւ ի բազմաց...»[1]:

Հետաքրքիր է այստեղ կոմպիլատոր հեղինակի ակնարկը Շիրակացու բաժանման դործողության մասին. «Զամենայն[ի] ասաց խմաստուն[ի]... ԼՔէ զինչ ընդունելութիւն, զինչ բացադրութիւն, զինչ բազմապատիկ եւ բոլորովին յաղագս բաժանմանց...»[2]: Ուրեմն, պետի ենթադրել, որ կոմպիլատոր հեղինակի ժամանակ Շիրակացու բաժանման դործողությունը ռնդհանահատված վիճակում չի եղել: Բայց կարող է պատահել, որ կոմպիլատոր հեղինակը սուիկորեն հետևելով Գործքության ներածության տեքստին, նախադասության կառուցվածքը չխախտելու նպատակով կրկնած լինի Գործքության բառերը:

11. ԽՐԱԽՃԱՆԱԿԱՆՆԵՐԸ

Շիրակացու հարցումներին հետևել են նրա «Խրախճանականներ»-ը կամ «Խրախճական»-ները: Շիրակացու «Խրախճանական»-ները զվարճական խնդիրներ են, որոնք հավանական է տարածված են եղել ո՛չ միայն Հայաստանում, այլ և Հայաստանից դուրս էլ: «Խրախճանականք»-ներն ունեին հետևյալ վերնագրերը. «Գրեմ ձեզ խրախճանականս, յորժամ ի կերակուրս եւ յըմպելիս զուարճանայք եւ կամիք խօսել բանս զուարճացուցիչս եւ ծիծաղականս»:

Շիրակացու այդ «Խրախճանականք»-ի մասին հիշատակություն ունի իր ցուցակում Հ. Տաշյանը: Նա ցուցակի վերջում տեղավորած անվանացանկում Շիրակացու աշխատությունների շարքում հիշում է վեց «Խրախճանականք»-ները և նշում նրանց անծանոթ լինելու փաստը. «Խրախճանականք, վեց ուրիշ թվարանական առեղծվածք... անտիպ որչափ ծանոթ է»[3]:

Շիրակացու «Խրախճանականք»-ի մասին, ինչպես ասել ենք, հիշատակություն ունի իր ցուցակում նաև Ֆինկը: Տյուբինգենի համալսարանի մատենադարանի հայկական ձեռագրերի ցուցակում № 94 ձեռագիրը նկարագրելու ժամանակ, Ֆինկը հիշում է Շիրակացու վեց «Խրախճանական»-ները. «139a—141a: «*Sechs Unterhaltungsaufgaben zur Tafel von Ananias von Schirak*»[4]:

Շիրակացու այդ «Խրախճանական»-ները հրատարակեցինք մենք ՀՍՍՌ մատեն. № № 699 և 3461 ձեռագրերից երևանի Պետական Համալսարանի «Գիտ. նյութերի ժողովածուի» 11-րդ հատորում՝ Շիրակացու թվաբանական մյուս աշխատությունների հետ միասին:

Հետագայում, Շիրակացու ձեռագրերն ուսումնասիրելու ժամանակ, ՀՍՍՌ մատեն. № 3457 ձեռագրում հայտնաբերվեցին յոթերորդ «Խրախճական»-ի վերջին երկու տողերը և ութերորդ ու իններորդ «Խրախճանա-

1) Գ. Տ.—Մկրտչյան, Անանիա Շիրակացի, արտատպ. «Ազարատ»-ից էջ. 11.
2) Նույն տեղը, էջ 11—12.
3) Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենի. Մխիթ. Վիեննա, 1895, էջ 1057.
4) F. N. Finck, Sistem.-alphabetischer Hauptkatalog..., էջ 136.

ֆան»-ներն ամբողջությամբ: Այդ տեքստը վերջից դեռ թերի է: Համառական է, որ «Աբրահաճանական»-ներն իննից հետո դեռ չարունակվել են: Գրքչագրերն ունի 17-րդ դարի գրչություն և ՀՍՄՌ մատենադարան է բերվել Թադևոս Առաքելոյ վանքից: Նա այդ վանքում ունեցել է 41 համարը: Ուքերորդ և իններորդ «Աբրահաճանական»-ները չնայած ունեն իրենց դրչահամարները, բայց որոշ կասկածանք են առաջացնում՝ Շիրակացուն պատկանելու խնդրում: Այդ մասին մենք կխոսենք իր տեղում:

12. ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

«Աբրահաճանական»-ով վերջանում է Շիրակացու թվաբանության դասագիրքը: ՀՍՄՌ մատենադարանի դրչագրերում մեզ չհաջողվեց հանդիպել Շիրակացու թվաբանության դասագրքի անծանոթ այլ մասի: Մխայն № 4066 դրչագրում, թվաբանության վերջում, «եօթնագրեանք»-ից հետո, ընդօրինակված է Շիրակացու թվաբանության դասագրքի վերջաբանի մի մասը, ուր նա հայտնում է թվաբանության դասագրքի Հայաստան բերելու մասին: Այդ վերջաբանում ասում է. «Վասն որոյ եւ իմ խնդրեալ զդա բազում աշխատութեամբ եւ ճշդրիտ ... ոյ ... ի մէջ առեալ բերի զգեղ յերկիրս Հայոց եւ ի Բրետաոսասէրը վճռակ սրբոյ Գրիգորի: Եւ սկիզբն քանիաւուրեան բերման Թուխս, յորժամ լցեալ էր ՈԿԸ ա[մ]ք կուսական յարգանդն աստուածն բանի: Եւ ի մետասաներորդ չորեքաւորեան եւ ի ժԹ ամի [կոս]տանդինոսի: Ես Անանիա Շիրակացի ի գեղջէ Անընէց: Եւ դուք քաջ աշակերտք, հայեցէք և զարմացարուք»[1]: «Բանիաւուրեան» ասելով Շիրակացին հասկանում է, անկասկած, թվաբանությունը: Բերված վերջաբանը Շիրակացու թվաբանության վերջաբանն է: Այդ մասին է վկայում Շիրակացու վերջին խոսքը՝ ուղղված իր աշակերտներին՝ «Եւ դուք քաջ աշակերտք, հայեցէք եւ զարմացարուք»:

Այսպիսով, եթե աղյուսակավոր սխեմայով արտահայտելու լինենք, Շիրակացու թվաբանությունն ունենում է հետևյալ կառուցվածքը:

Գրչագրերի ցուցակ (ըստ ՀՍՄՌ)	Դրչագրերի համարները (ըստ ՀՍՄՌ)	Գրչագրերի քանակը (ըստ ՀՍՄՌ)	Գրչագրերի թերթերի քանակը (ըստ ՀՍՄՌ)	Գրչագրերի գրության ժամանակը (ըստ ՀՍՄՌ)	Գրչագրերի գրության վայրը (ըստ ՀՍՄՌ)
Մատենադարան	№ 4066	1	10	ԺԹ դար	Անընէց գյուղ

13. ՇԻՐԱԿԱՑՈՒ ԹՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԸ

Շիրակացու թվաբանական նրկա աղյուսակները ամբողջական ձևով մեզ հասած ամենահին թվաբանական աղյուսակներն են անտիկ դրականության պատմության մեջ: Պրոֆ. Մ. Ե. Վիդոսկին, որը մաթեմատիկայի

[1] ՀՍՄՌ մատեն. № 4066 դրչագիր, թերթ 10բ:

պատմության աչքի ընկնող մասնագետներից է, 1941 թվին լույս ընծայած է «Математика и алгебра в древнем мире» աշխատության մեջ խոսելով հնության հրջանից մեզ հասած թվաբանական գործողությունների մասին, հետևյալն է հայտնում. «До нас не дошло ни одного (ընդգծումը հեղինակինն է) античного сочинения, в котором арифметические действия были бы предметом специального изучения или изложения[1]».

Պրոֆ. Մ. Ե. Վիդոսկին, որը ծանոթ չէ Շերակացու ներկա աշխատության հետ, նույն միտքը կրկնում է նաև դումարման և հանման գործողությունների մասին խոսելիս. «Наши источники не содержат никаких указаний относительно выполнения сложения и вычитания целых чисел. Не дошло до нас и схем «чистого» сложения».[2])

Անտիկ հրջանի հեղինակների մոտ թվաբանական գործողությունների վերաբերյալ կան միայն առանձին հիշատակություններ: Այսպես, թվաբանական գործողությունների վերաբերյալ հիշատակություններ ունեն՝ Հերոն Ազեքսանդրացին (1—դ. մ. թ.), Թեոն Աղեքսանդրացին (3—դ. մ. թ.), Եվդոկիոս Ակսալոնացին (4—րդ դ. մ. թ.), Պապոս Աղեքսանդրացին (3-րդ դ. մ. թ.) և այլն: Այս հիշատակությունները սակայն միջնադարյան ճևով արված ակնարկներ են և թվաբանական գործողությունների վերաբերյալ կոնկրետ նյութ չեն տալիս:

Թվաբանական հնոց գործողությունների աղյուսակների ամենահին հատվածը, որ հասել է մեզ, այդ բրիտանական թանգարանում այժմ պահվող մոմված մի տախտակի վրա գրված բազմապատկման երկու աղյուսակներն են: Այդ տախտակի նկարագրությունը և լուսանկարը հրատարակել է անգլիացի դիտնական Սմիթը[3]): Տախտակի վրա բերված են առաջին երկու աղյուսակները, առաջինը՝ 1×1=1, 2×1=2, 2×2=4, 2×3=6, 2×10=20 երկրորդը՝ 3×1=3, 3×2=6, 3×3=9, 3×4=12, 3×10=30:

Մոմված տախտակը, դատելով նրա վրա փորագրված տառերի պալեոգրաֆիայից, Սմիթի կարծիքով, մեր թվականության 2-րդ դարի գործ է:

Բազմապատկման գործողության ամենից ընդարձակ տեղեկությունը մեզ հասել է Շերակացուց 500 տարի հետո ապրող Նիկոլայ-Արտավազդ անունով Զմյուռնացի մի հեղինակից, որը բյուզանդական ժամանակաշրջանի մարդ է (12-րդ դարի հեղինակ է): Նիկոլայ-Արտավազդ Զմյուռնացին իր բերած բազմապատկման աղյուսակի հայտնագործողն է համարում Տրոյական պատերազմի առասպելական հերոս Պալեմիդին: Պրոֆ. Մ. Ե. Վիդոսկին Նիկոլայ Արտավազդի հաղորդած այս տեղեկության հիման վրա, ենթադրում է, որ նա օգտված պիտի լինի հին հրջանի հեղինակից. «То обстоятельство — դրում է նա—что автор приписывает изобретение таблиц Палемиду, легендарному герою Троянской войны, свидетельствует о том, что таблицы эти употреблялись с незапамятных времен»[4]):

Նիկոլայ-Արտավազդի բազմապատկման աղյուսակները համեմատու-

---

[1]) М. Я. Выгодский, Арифметика и алгебра в древнем мире, Ленинград, 1941, стр. 192:

[2]) Там же, стр. 193:

[3]) L. Smith, A greek myltplication Table. Bibliotheca mathematica, t. 9, heft 3, 1909, стр. 193 (հմմ, Վիդոսկու աշխատությունը, էջ 195):

[4]) М. Я. Выгодский, Арифметика и алгебра в древнем мире, стр. 195:

թյան մեջ դնելով Շիրակացու բազմապատկման աղյուսակների հետ[1]), նկատում ենք նրանց տարածի նմանությունները: Բերենք մի աղյուսակի համեմատությունը:

Շիրակացի			Նիկոլայ—Արտավազդ			Մեր ձեռքա ձևով
ժ	ժ	ճ	ւ	ւ	ք	$10\times10=100$
ժ	լ	մ	ւ	ց	ծ	$10\times20=200$
ժ	ւ	յ	ւ	λ	տ	$10\times30=300$
ժ	խ	ն	ւ	μ	ւ	$10\times40=400$
ժ	ծ	շ	ւ	ν	փ	$10\times50=500$
ժ	կ	ո	ւ	ξ	χ	$10\times60=600$
ժ	հ	չ	ւ	ὁ	ψ	$10\times70=700$
ժ	ձ	պ	ւ	π	ω	$10\times80=800$

Պատահակա՞ն զուգադիպություն է այս: Նիկոլայ-Արտավազդ Զմյուռնացին անմիջապես կամ միջնորդաբար չէ՞ օգտվել Շիրակացուց: Այդ դժվար է ասել: Դժբախտաբար Նիկոլայ-Արտավազդի[2]) մոտ բացակայում են դամարման, հանման և բաժանման աղյուսակները և հնարավոր չէ համեմատություն անել ամբողջությամբ: Մի բան սակայն անկասկած է, որ Շիրակացու համարողության ներկա դասակարգերն ամբողջական ձևով մեզ հասած ամենահին համարողության դասակարգերն է անտիկ դրականության պատմության մեջ, որը պահել է թվաբանական չորս գործողությունների աղյուսակները:

Այսպիսով, 7-րդ դարի մեծ պետական Անանիա Շիրակացու համարողության ներկա դասակարգերն իր նշանակությամբ դուրս է դալիս տեղական նշանակություններից և ստանում է համաշխարհային նշանակություն:

14. ԱՆԿՅՈՒՆԱՎՈՐ ԹՎԵՐԸ

Բացի նշված աշխատություններից, Շիրակացուն է վերագրվել «Անկյունաւոր թուերը»-ի մի պատառիկ, որը հրատարակել է դոց. Թ. Հ. Թումանյանը ՀՍՍՌ մատենադարանի դիտական նյութերի № 1 ժողովածուում՝ «О таблице полигональных чисел А. Ширакаци» վերնագրով:

«Անկյունաւոր թուերը»-ի պատառիկն ընկ. Թումանյանը հրատարակել է ՀՍՍՌ մատենադ. № 1770 ընչաղբից, վերցնելով թերթ 386-ից: Այդ պատառիկի վրա, նախ քան ընկ. Թումանյանը, ուշադրություն դարձրել էին մեզանից առաջ էլ, մեր «7-րդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացու թվաբանության դասակարգերը» աշխատության մեջ և վերագրել այն Հովհաննես Սարկավագին (Սարկավագին)[3]): Ընկ. Թումանյանը սակայն համեմատության մեջ դնելով այդ տեքստը տարբեր ձեռագրերի հետ, եկել է

---

1) Նիկոլայ Արտավազդի բազմապատկման աղյուսակը հրատարակվել է (տես այս մասին Վ. Իդոդակու աշխատությունը, էջ 195):

2) Նիկոլայ Զմյուռնացու անձնավորության մասին մենք ոչ մի տեղեկություն չունենք, նա ազգությամբ, ակադ. Հ. Աճառյանի կարծիքով, հայ է հանդիսացել: Ակադ. Հ. Աճառյանի «Անձնանունների բառարան»-ում, այդ ժամանակաշրջանում Արտավազդ անունով մի շարք հայ հեղինակներ են հայտնի:

3) «Երևան Պետ. Համալսարանի» Գիտ. աշխատություններ», 11-րդ հատ. էջ 249:

այլ եղրակացության,—որ այդ պատառիկն Անանիա Շիրակացունն է: Նա այդ մասին իր հոդվածում հետևյալն է գրում. «Сопоставление текстов в этой и других рукописях дает полное основание (ընդգծումը մերն է—Ա. Ա.) считать что 3 действия над целыми числами («Учебник арифметики») и таблица чисел стр. 386(а) (ընդգծումը մերն է—Ա. Ա.) (принадлежат Анании Ширакаци»[1]:

Դժբախտաբար, ընկ. Թումանյանը չի պարզաբանում, թե այդ պատառիկի՝ ինչ ձեռագրի հետ կատարած համեմատությունն է բերել նրան այդպիսի վճռական եղրակացության:

Շիրակացու աշխատությունների ուսումնասիրության կապակցությամբ ՀՍՍՌ մատեն. № 1770 ձեռագրի «Անկիւնաւոր Թուեր»-ի պատառիկի տեքստը համեմատության մեջ դնելով այլ ձեռագրերում եղած Հովհաննես քահանայի «Անկիւնաւոր Թուեր»-ի հետ, մենք նորից եկանք մեր նախկին համոզման, որ այդ պատառիկի հեղինակը ո՛չ թե Շիրակացին է, այլ Հովհաննես քահանան:

ՀՍՍՌ մատեն. № 1770 ձեռագրի Թերթերը բավականին խառնված են: Այսպես՝ թերթ 362-ի տեքստը շարունակվում է թերթ 337-ից հետո, 350-ը 357-ից հետո, 356-ը՝ 349-ից հետո, 348-ը՝ 354-ից հետո և այլն: Ձեռագիրը գրվել է պրակներով, որոնք կազմելու ժամանակ խառնվել են: Թերթեր համեմատակշռող անձնավորությունը չի չտկել հետո և առաջ ընկած թերթերը, այլ կազմի մեջ ամրացված կարդով համարակալել է: Եվ այժմ միևնույն տեքստի մի մասն ընկել է ձեռագրի սկիզբը, իսկ մյուս մասը՝ վերջը:

Նման թյուրիմացություն պատահել է և նույն ձեռագրում ընդօրինակված Հովհաննես քահանայի «Անկիւնաւոր Թուեր»-ի հետ: ՀՍՍՌ մատեն. № 1770 ձեռագրում Հովհաննես քահանայի «Անկիւնաւոր Թուեր»-ի տեքստը սկսվում է 398ա-ում: Նա ընդհատվում է թերթ 393բ-ում: Շարունակությունն ընկել է թերթ 348ա-բ և 354ա-բ-ում: Ահա այս տեքստի մի թերթն է հանդիսանում և ընկ. Թումանյանի հրատարակած պատառիկը: Որ պատառիկն իր տեղում չէ ձեռագրում, այդ երևում է նաև այն փաստից, որ Շիրակացու դումարման գործողության վերնագիրը մնացել է 358բ-ում, իսկ տեքստը սկսվում է 387ա-ում ու վերև նշված երկու թերթերի մեջ ընկել է իր տեղում միանգամայն անխմաստ, «Անկիւնաւոր Թուեր»-ի պատառիկը:

«Անկիւնաւոր Թուեր»-ի պատառիկը պարունակող թերթի չուս. տված էջի վրա ընդօրինակված է հատարակ անուններով մի ցանկ՝ աղյուսակների մեջ առած, որոնք ոչ մի կապ չունեն Շիրակացու թվաբանության հետ: Այդ, հավանական է, որևէ հանելուկների մի ինչ որ տեքստի մնկնության ցանկ է: Անհրաժեշտ ենք համարում այդ էջից բերել փոքրիկ օրինակ:

---

1) Т. Г. Туманян, О таблице полигональных чисел А. Ширакаци, (տես ՀՍՍՌ Մատեն. «Դիտ. նյութերի ժողովածու», էջ 55):

		ա		դ	ա	բ
ա ոսկի բ արծաթ գյալ	արծաթ լաւ	ոսկի լաւ				
դ խայտուք և մարգարիտ	մարգարիտ փիրուզա	այմազ փիրուզա	խայտուք մարգարիտ	արմատ նուշ	կեռաս նուշ	նուշ մեղր

Այդ հետևողականությամբ չարունակվում է տեքստը մինչև էջի վերջը: Թերթի վրա ընդօրինակված տեքստից պարզ է, որ նա իր տեղումը չէ: Ընկ. Թումանյանի հրատարակած «Անկիւնաւոր Թուեր»-ի և Հովհաննես քահանայի «Անկիւնաւոր Թուեր»-ի տեքստերի համեմատությունից երևում է, որ ընկ. Թումանյանի հրատարակած պատառիկի տեքստը ո՛չ թե Հովհաննես քահանայի «Անկիւնաւոր Թուեր»-ի տեքստի օրդնական մասն է հանդիսացել, այլ նրա չարունակությունը: Նա կազմված է հետագա մի այլ հեղինակի կողմից, որն օգտվել է Հովհաննես քահանայի «Անկիւնաւոր Թուեր»-ից և, համաձայնական է Շերակացու «դար» և «կոճատ» թվերից:

Հովհաննես քահանայի «Անկիւնաւոր Թուեր»-ը, որոնք մեզ հասել են «Ցոհաննու էահանայի յաղագս անկիւնաւոր թուոց» վերնագրով, ունի տասն և չորս անկիւն: Ի միջի այլոց, Հովհաննես քահանան այդ մասին հիշում է «Անկիւնաւոր Թուեր»-ի կազակցությամբ գրած իր փոքրիկ տառաբանում. «Եւ առ կիւնայս մինչ ի չորեքտասանն գրեցաւ, ոչ թէ զի այդքան որոշմունք անկեանց պէտք էին էին, այլ վասն կրթութեան մանկանց մեզ այն. որչափ զարթուցանել զիւրս խնդրողաց եւ ոչ որքան խնդրէ բնութեան գա գրոց»[1]:


Հովհաննես քահանայի «Անկիւնաւոր Թուեր»-ի այս տասն և չորս անկյուններից պատառիկի տեքստը կազմող հեղինակը Հովհաննեսից վերցրել է միայն յոթը, և վերցրել է տասից: Այնուհետև պատառիկում բերված են «դար» թիվը (2, 4, 6, 8, 10, 12, 16, 18 և այլն), «Ջումլ դար» թիվը (1, 6, 12, 20, 30, 42, 56 և այլն), «կոճատ» թիվը (1, 3, 5, 7, 9, 11, 13, 15, 17, և այլն), «տասնձնևայք քուայք» (1, 9, 18, 25, 36, 47, 54 և այլն), «երեքկինք» (1, 3, 9, 27, 81, 243 և այլն), «կրկնակք» (1, 2, 8, 16, 32 և այլն) և «չորևքկինք» (1, 4, 16, 64, 256 և այլն): Անհրաժեշտ ենք համարում հետևյալ էջում զուգահեռ ձևով բերել պատառիկի և Հովհաննես քահանայի «Անկիւնաւոր Թուեր»-ի և դրց. Թումանյանի հրատարակած տեքստերը:

Համեմատությունից պարզ երևում է երկու տեքստերի առաջին յոթ անկյունների տասից նմանությունը:

Կարող են հարցնել մեզ—ինչ՞ը կարող պատահել, որ Շերակացին ունեցած լինեը «Անկիւնաւոր Թուեր»-ի տեքստ, որից և օգտված լինեը և՛ Հովհաննես քահանան և՛ նրա տեքստը համառոտող պատառիկի հեղինակը: Ինչո՞ւ չէր կարող: Սակայն այդ ասելու համար անհրաժեշտ է ունենալ հաստատուն կռվաններ: Առ այժմ, եղած փաստերը թույլ չեն տալիս մեզ «Անկիւնաւոր Թուեր»-ի հեղինակը ճանաչել Անանիա Շերակացուն:

1) ՀՄՄՌ ձեռն. № 1770 գրչագիր, թերթ 398ա:

Շիրակացուն վերագրվող «Անկիւնացուր թուերի» աղյուսակը



Հովհաննես Իմաստասիրի «Անկիւնացուր թուեր»-ը



15. ՇԻՐԱԿԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՍՍՌ մասնագիտական հարցականով Շիրակացուն է վերագրված թվաբանական չհրատարակված երկու խնդիրները: Այդ խնդիրները պարունակում է № 1999 (Հ. 2019) ձեռագիրը, որն ընդօրինակված է 13-րդ դարում երեք տարբեր դրիչների կողմից՝ (Գրիգորի, Սահմանոսի և կա-

քաղեմք)։ Անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ այդ խնդիրներէ-ռեքստը։

«Լարեցի զաղնդն իմ մինչեւ ցկրծոդ ձիդն՝ եւ երեք երկ սպանի, թէ մինչեւ ցԹ ձդան էր քարչեալ՝ ո՞րպէս կարծես թէ քանի երկ էի սպանել։

Արձակեցի զեսպան մի, որ գնաց ի մղոն. մինչեւ անցեալ էր Ը աւր, արձակեցի միւս այլ, որ գնայր ԺԵ մղոն, արդ՝ ո՞րպէս կարծես՝ քա՞նի մղոն է որ դարձուցանէ»։ Վերջում ավելացված է. «Այս է պէտս բազմապատկի, որ զսա պիտէ՝ գալիր է» (տե՛ս Թ. 26բ)։

Շերակացին, որպես մասնագետ համարող, հավանական է, որ հանդիսանար և այս խնդիրների հեղինակը։ Բայց առանց կոնկրետ փաստեր ուշնեղու ենթադրել, որ նրա հեղինակն անպայման նա է, և դրչագրերում հանդիպող բոլոր խնդիրները պիտի վերագրել Շերակացուն, կոպիտ սխալ կլիներ։ Թվաբանութեամբ զբաղվել են հայկական շատ մատենադիրներ, որոնցից ամեն մեկը կարող էր թողնել նման խնդիրներ։ Անհրաժեշտ է սակայն նշել, որ վերև բերված երկրորդ խնդիրն իր բովանդակութեամբ Շերակացու խնդրագրքի Ը խնդրին շատ է նման։

16. «ՍԱԿՍ ԲԱՑԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ ԹՈՒՈՑ»-Ի ՀԵՂԻՆԱԿԸ

Որոշ բանասերներ Շերակացուն են վերագրել նաև «Անանիայ Հայոց վարդապետի Սակս բացայայտութեան թուոց» վերնագրով մեզ հասած մի աշխատութիւն, որը պահվում է չհրատարակված վիճակում։ Այդ աշխատութեան մասին առաջին անգամ հիշատակութիւն ունի Գ. Զարբհանելյանն իր «Հայկական հին դպրութեան պատմութիւն» առաջին հատորում։ «Գրչագրաց ցուցակում—գրում է նա—ուրիշ երկասիրութիւն մ'ալ կտեսնենք՝ Անանիայի անվամբ. Անանիայի Գիր խոստովանութեան յաղագս սուտ կարծեաց ի վերայ նորա եւ Բացայայտութիւն թուոց։ Այս վերջին խոսքը, հավանական կերեվիցնե մեզ Շերակունեոյն ընծայել գայն եւ ոչ ուրիշ նոյն անունը կրող վարդապետի մը»[1])։

Գ. Զարբհանելյանի ենթադրութիւնը՝ ներկա աշխատութեան Շերակացուն պատկանելու խնդրում, պետք է ասել, կոնկրետ փաստերով չի հիմնավորված։ Նայելով տեքստի բովանդակութեանը միայն, նա, հավանական է, ենթադրել է, որ այդ աշխատութիւնը կարող է լինել միայն «Հաժարող» Անանիա Շերակացու և ոչ ուրիշ մեկ Անանիայի գործը։

Հետազոտում այդ տեքստի վրա մինչև այժմ ձեռք կանգ է առել նաև Գ. Տ.-Մկրտչյանը (Մխիթարը)։ Անանիա Նարեկացու «Գիր խոստովանութեան» հրատարակութեան կապակցութեամբ, նա իր օգտագործած դրչագրերի մասին խոսելիս անհրաժեշտ է համարել կանգ առնել նաև «Սակս բացայայտութեան թուոց»-ի վրա, որն իր օգտագործած դրչագրերում ընդօրինակված է «Գիր խոստովանութեան» տեքստից հետո։ Մխիթարը վճռական ձևով այդ կարծիքն է հայտնել, որ «Սակս բացայայտութեան թուոց»-ը ո՛չ թէ Անանիա Շերակացունն է, այլ Անանիա Նարեկացուը։ «Այդ գրութիւնը—գրում է նա—Անանիայի հայոց վարդապետի սակս բացայայտութեան թուոց» վերնագրով կա և մեր ձեռագրում և առանց որևէ կասկածի (ընդգծումը մերն է—Ա. Ա.) վերաբերում է Անանիա Նարեկացու գրչին։ Այստեղ տեղը չէ ապացույցներ բերել մեր այս կարծիքին, սակայն այսքան

1) Գ. Զարբհանելյան, Հայկ. հին դպր. պատմութիւն, Վենետիկ, 1897, էջ 464։

ասենք, որ այդ դրվածքը Թվերի խորհրդավոր նշանակութեանց բացատրութեան է նվիրված և Անանիայի աշակերտը Գրիգոր Նարեկացին չատ հաճախ դրվածքների մէջ խոսում է յուր վարդապետի հետևողութեամբ Թվերի խորհրդավորութեան մասին»[1]:

Վերջերս «Սակս բացայայտութեան Թուոց»-ի տեքստը Շիրակացուն պատկանելու մասին, անվիճելի ձևով նորից դրել է պրոֆ. Ս. Հայրապետյանն իր «Անանիա Շիրակացու կյանքն ու գործունեութիւնը»-ը հոդվածում: Նա Շիրակացու աշխատութիւնների ջարդում հիշում է. «Սակս բացայայտութեան Թուոց» (Թվերի մեկնաբանության մասին): «Փիլիսոփայական աշխատութիւն, նոր—պղատոնական ուղղութեամբ»[2]:

ՀՍՍՌ մատենադարանում «Անանիայի հայոց վարդապետի Սակս բացայայտութեան Թուոց»-ի երկու ցրչագիր է մեզ հասնում: Ցրչագրերից մեկը Մխաբանին ծանոթ № 497 ցրչագիրն է (մայր ցուցակի № 499-ը), որն ընդօրինակված է Ղազար ցրչի ձեռքով 1671 թվին, Ագուլիսի սուրբ Թովմայի վանքում («...ձեռամբ Ղազար անարհեստ եւ տկար քարտուղարի», թերթ 405): Մյուս ցրչագիրը, որն ավելի հին է և մայր է հանդիսացել Մխաբանի ցրչի ընդօրինակութեանը, ծանոթ չէ Մխաբանին: Այս ցրչագիրը գտնվում է ՀՍՍՌ մատեն. № 3710 (Կ. № 1360) թվահամարի տակ: Ցրչագրի մի մասն ընդօրինակել է Հովհաննես արքեպիսկոպոսը, հայոց Հեթում Բարձրաբերդի եղբայր Կոստանդինի որդին, 13-րդ դարում. Այդ մասին ցրչագիրն ունի հետևյալ հիշատակարանը. «Գրող սորա Հովհաննէս արքեպիսկոպոս եւ բարեն, որդի Բրխատոսասէր եւ ամենաբնտիր իշխանաց իշխանին Կոստանդնեայ թագաւորէն եւ եղբայր Բարեպաշտ եւ քաջի հայոց Մեծաց սրբազի Հեթմոյ, որոց յիշատակն աւրհնութեամբ լիցի...» (Թերթ 28բ): Ցրչագրի մյուս մասն ընդօրինակել են երկու այլ ցրիչներ:

Վերջին ցրչագիրը, ինչպես վերևում ասացինք, մայր է հանդիսացել Մխաբանի օգտագործած № 497 ցրչագրին: Այդ երևում է հետևյալ փաստերից՝ ա) № 3710 ցրչագրի տեքստում «եւ արիւբար աշխատեալ ոսկանպակ տարւոյ քաղցրութեան» նախադասութիւնից հետո բաց է թողնված մի բառ: Նույն բացթողումն ունի և № 497 ցրչագիրը (տե՛ս Թերթ 451ա): բ) № 3710 ցրչագրում «Սակս բացայայտութեան Թուոց»-ի տեքստը ընդհատվում է չուռ տված էջի վերջում՝ նախադասութեան կեսում, ստորակետով՝ «եւ հաղորդութիւն ունի ընդ նորոյն ամին սկիզբն գոլով»: Պարզ երևում է, որ այդ ցրչագրի հայրը Թերթն ընկել է: № 497 ցրչագրում տեքստը վերջանում է էջի կեսում, ճիշտ № 3710 ցրչագրի Թերթի ընկած տեղում և վերջինիս ստորակետն այստեղ ցրված է վերջակետ:

«Անանիայի հայոց վարդապետի Սակս բացայայտութեան Թուոց»-ի հեղինակը նպատակ է դրել իր առջև մեկնել Թվերի խորհրդավոր նշանակությունը: Ըստ որում, նա հիմք է վերցնում, և չեշտում է այդ մասին, հին և նոր կտակարանների Թվերը: Այդ մասին նա իր աշխատության նախաբանում հետևյալն է ասում.

«Եւ արդ մի՛ օք կարծիցէ վարկպարագի գէտ մտաց՝ լմոց՝ անխորհրդարար ի կէր առնել քարոզ վկայութեանց դրոց սրբոց, այլ ունիմ պատ-

---

1) Տես Մխաբանի Անանիա Նարեկացու «Գիր խոստովանութեան» առթիվ գրած նախաբանը, Պետերբուրգ 1892 թ. «Արարատ» ամսագրից, էջ 6։

2) ՀՍՍՌ մատեն. «Գիտական նյութերի ժողովածու», էջ 17.

ձառ ի հին եւ ի նոր կտակարանաց, սակս այսոցիկ բացայայտութեանցդ»[1]: Վերցնում է նամիսրևէ Թվական եւ ապա հիշում այդ Թվի հետ Աստվածաշնչում կապված կարևոր փաստերը: Այսպես՝ հինգը բաղկացած է դար և կէաձառ Թվերից, մաքրության ղպայրանները հինգ են, Մովսեսի օրինաց գրքերը հինգ են, Դավիթը պարսատիկի համար հինգ քար ուներ վերցրած, և այլն:

«Սակս բացայայտութեան Թուոց»-ի Շերակացու դրչին պատահանքը խիստ վիճելի է: Մեզ հավանական է թվում Մխոբանի կարծիքը՝ այդ տեքստը ո՛չ թե Անանիա Շերակացու, այլ Անանիա Նարեկացու գործ լինելու վերաբերյալ: Այդ առթիվ Մխոբանի փաստերի վրա ցանկանում ենք ավելացնել հետևյալ նոր փաստերը:—

ա) «Սակս բացայայտութեան Թուոց»-ի տեքստում հունարան դպրոցի արտադիցիայով (որը X—XII դարերում նկատվում է որոշ մասնագրություններ մոտ) գործ են ածվում հունական լեզվի ազդեցության տակ ընկած այնպիսի տերմիններ, որոնք հատուկ են ո՛չ թե Շերակացուն, այլ Նարեկացուն: Այդպիսի բառերից են՝ «չարաչծեալ», «չարամանեալ», «չարագատեալ», «չարաչարժեալ», «չարաբերեալ», «չարայարեալ», «չարադրեալ», «չարաթուեալ», «չարադրեալ», «չարաբարդեալ», «բացայայտեալ», «բացաբերեալ», «մակաբերեալ», «արտամերժեալ», «արտաչծեալ», «արտատպեալ» եւ այլն:

բ) «Սակս բացայայտութեան Թուոց»-ի տեքստում մեզ հանդիպում է արաբական «նուազայ» բառը, որի հետ Շերակացին ծանոթ լինել չէր կարող:

գ) «Սակս բացայայտութեան Թուոց»-ի նյութը միատիպ բովանդակություն ունի և չի համապատասխանում Շերակացու հայացքներին: Բացի այդ, Շերակացին նյութի չարադրման մեջ կոնկրետ է, քննադատական վերաբերմունք ունի դեպի իր աղբյուրները: Այդ բանը չի կարելի ասել «Սակս բացայայտութեան Թուոց»-ի հեղինակի նկատմամբ:

դ) «Սակս բացայայտութեան Թուոց»-ի տեքստը դրչագրերում հանդիպում է մեզ ընդօրինակված Անանիա Նարեկացու «Գիրք խոստովանութեան» տեքստի հետ միասին, նրանից հետո: Եթե առաջինը Նարեկացու աշխատություն է, դժվար թե հաջորդն այլ Անանիայի լինի:

ե) Անանիա Շերակացու հարազատ աշխատությունների վերնագրերում Անանիան ծոլորապար չի հիշվում «վարդապետ» կամ «հայոց վարդապետ» անունով, այլ՝ «Անանիա Շերակունի Համարող» ձևով:

զ) «Սակս բացայայտութեան Թուոց»-ի և «Գիրք խոստովանութեան» տեքստի սկզբնավորության մեջ նկատելի է չարադրման ձևի որոշ նմանություն: Այսպես՝

«Արդ զայսոսիկ սակաւ բանիցդ յայտաբացութիւնն՝ ոչ եթէ վայրապար եւ առանց խորհրդոյ, կամ վարկպարագի մտացածութեամբ, կամ մարդահաճոյ լինելով՝ արարի իմով ձեռամբ, քեզ, որ լսեսդ այլ դի գնասցիս դիմեալ սուտգործոյն, վերծանելով զվերջագրեալսդ...»

«Գիրք խոստովանութեան», էջ 13:

«Կամ եղեւ ինձ սակաւ ինչ աշխատասիրել սակս Թուոց բացայայտութեան ի բազմաց գնտես եղեալ, ոչ յադագս անհասութեան կամ դժուարամտութեան, այլ յադագս անկիրթ վարդապետի համարելով զաւգտութիւն սոցայց տեսութեանս...»

«Սակս բացայայտութեան Թուոց» Թերթ 353բ:

[1]) ՀՍՄՄ մատեն. № 3710, Թերթ 353բ:

Նշված վայրերը, կարծում ենք, կասկած չեն թողնում այն մասին, որ «Մակս բացայայտութեան թուոց»-ի հեղինակը ո՛չ թե Շերակացին է, այլ Նաբեկացին։

17. ԷՎԿԼԻԴԵՍԻ ԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ

Ն. Ակինյանն իր «Էվկլիդեայ տարերք երկրաչափութեան հայ մատենադրութեան մէջ» հոդվածում, որը տեղավորված է «Հանդէս ամսօրեայ»-ի 1937 թ. № 6—8-ում, Շերակացուն և նրա ուսուցիչ Տյուքիկոսին է վերագրում Էվկլիդեսի երկրաչափության թարգմանությունը[1]։

Էվկլիդեսը մեր միջնադարյան 3-րդ դարի անձնավորություն է։ Նա հելլենամիտ աչքով ընկնող դասախոսներից է հանդիսացել և խոշոր ազդեցություն գործել հունական մաթեմատիկայի զարգացման վրա։ Նրա նշանավոր աշխատությունն է երկրաչափության «Տարերք»-ը (στοιχεῖα), որը բաղկացած է 13 գրքերից։ Այդ գրքերից 1—6-ը հարթաչափություն է, 7—9-ը թվաբանություն է, 10-ը քանիություն է և 11—13-ը հարթաչափություն։ Էվկլիդեսի այդ աշխատությունը սկզբում դասագրքեր է հանդիսացել հույների, իսկ հետագայում նաև՝ արաբների մոտ[2]։

Էվկլիդեսի այդ աշխատությունն առաջին անգամ հրատարակել է 1550 թ. S. Grynaeus-ը Բազելում։ Հետագայում վերահրատարակվել է բազմաթիվ անգամ և թարգմանվել եվրոպական մի շարք լեզուներով։

Էվկլիդեսի «Տարերք»-ից մի փոքրիկ հատված՝ «Եւկլիդեայ գիրք յաղագս տարերաց երկրաչափութեան» վերնագրով հնում թարգմանվել է հայերեն։ Այդ հատվածը մեզ հասել է չորս գրչագրով. ա) Paris-յի № 178 գրչագիրը, բ) Տյուբինգենի համալսարանի № 74 գրչագիրը, դ) Վենետիկի գրքչագիրը և դ) ՀՍՍՌ մատենադարանի գրչագիրը։

Էվկլիդեսի «Տարերք»-ի թարգմանիչը մինչև վերջերս համարվում էր XI դարի պիտանի Գրիգոր Մագիստրոսը։ Այժմ Ն. Ակինյանը փորձում է ապացուցել, որ Գրիգոր Մագիստրոսի այն հիշատակությունը, որ ինքն է Էվկլիդեսի թարգմանիչը— աղավաղված է։ Ն. Ակինյանի կարծիքով, Մագիստրոսի նախնական տեքստում ասված է եղել ո՛չ թե իր թարգմանելու, այլ նախ քան ինքը թարգմանված լինելու փաստի մասին։ Բացի այդ, նա գտնում է, որ Էվկլիդեսի երկրաչափության թարգմանության լեզուն չափազանց է և նման չէ Մագիստրոսի լեզվին։ Ն. Ակինյանն իր նշված աշխատության մեջ այնքան է խորանում, որ փորձում է որոշել առաջին թարգմանության գրչին. «Տյուքիկոս հմուտ էր համարողության արվեստին, մխաժամանակ ծանոթ հայերեն լեզվին—գրում է նա—Անիկա թարգմա-

---

[1]) *Էվկլիդեսի հայերեն թարգմանությունը հրատարակել է Սուքրյանը «Բազմավէպ»-ում, վերահրատարակել է «Մատեն. հայկ. թարգ.»-ի մեջ Վենետիկում 1889 թ.։*

[2]) *Տես* Christ—Schmidt, Geschichte d. Griechischen. Lit., München. 1920, *էջ 273 – 276 (Համ. Ն. Ակինյանի հոդվածը)։*

[3]) *Գրչագրի նկարագրությունը տես նրանցում* Anecdota Oxoniensia, Oxford 1892, *էջ* XXX—XXXI *(Համ. Ակինյանի հոդվածը)։*

[4]) *Գրչագրի նկարագրությունը տես Ջինկի ցուցակում, էջ 111—113։*

[5]) *Վերցրել ենք Ն. Ակինյանի հոդվածից։*

Նած ըլլալու է Էվկլիդեայ տարբերքը յուր աշակերտին համար կամ անճառ և կամ հայերեն թելադրութեամբ և Անանիայի դրչութեամբ»[1]:

Դրիդոր Մագխասրոսը, ինչպես հայտնի է, Էվկլիդեսի երկրաչափության թարգմանության մասին խոսում է Սարգիս վարդապետին դրած իր նամակում: Այդտեղ նա թարգմանության մասին հետևյալն է գրում. «... Վասն զի ոչ եմք երբէք դադարեալ ի թարգմանութենէն եւս. բաղում մատեանս, զորս ոչ եմք դտեալ ի մեր լեզուս՝ զերկուս մատեանսն Պղատոնի, զՏիմէոսի տրամաբանութենանն եւ զՓեդովնէ, յորս բոլոր հաւան նախագիտականին այն պարփակեալ կայ, եւ զայլս բազումս յիմաստասիրացն. իւրաքանչիւր մատենիցս այս մեծագոյն է քան զդարեւոր տօնականս, բայց եւ դտեալ մեր իսկ ի հայ լեզու. զերեալ թարգմանչացն՝ զդիրս Ողոմպիոդորոսի, զոր Դաւիթ յիշատակէ, կարի յոյժ աքանչելի եւ հրաշալի քանաստեղծութիւնս մակաւասար բոլոր իմաստասիրական բանից. դտեալ եմ եւ զԳալիմաքոսի եւ զԱնդռոնիկեայն ի հայ լեզու. բայց եւ զերկրաչափականն զԵվկլիդոսին սկսայ թարգմանել եւ եթէ տակաւին կամեցեալ տէր երկարատեալ մեզ ի կենցաղումս, բազում հոգս յանձին կալեալ զմնացեալսն բոլոր ճոնեաց եւ Ասորւոց թարգմանել՝ ոչ դանդաղեցայց»[2]:

Մեջ բերված այս հատվածում Ն. Ակինյանն առաջարկում է «Գտեալ եմ եւ զԳալիմաքոսի եւ զԱնդռոնիկեայն ի հայ լեզու. բայց եւ զերկրաչափականն զԵվկլիդոսին սկսայ թարգմանել» ուղղել «Գտեալ եմ եւ զԳալիմաքոսի եւ զԱնդռոնիկեայն ի հայ լեզու. բայց եւ զերկրաչափականն զԵվկլիդոսին» ձևով, այլ խոսքով ասած, նա ցանկանում է դուրս հանել այդ տեքստից «սկսայ թարգմանել» բառերը[3]: Դժբախտաբար այսպիսի յուրջ տեքստաբանական ուղղում առաջարկելու համար Ն. Ակինյանը լուրջ հիմքեր չի բերում և այնպիսի տպավորություն է ստացվում, որ նա ո՛չ քիչ իր եզրակացությունը բղխեցնում է սկզբնաղբյուրից, այլ սկզբնաղբյուրը հարմարեցնում է իր եզրակացությանը: Մագխասրոսի մոտ, մեր կարծիքով, շատ պարզ է ասված թարգմանության մասին և մենք հիմք չունենք կասկածելու նրա հաղորդած տեղեկության վրա:

Էվկլիդեսի երկրաչափությունը Շերակացուն վերադրելու մասին անհիմն է Ն. Ակինյանի մյուս պնդումը ևս, որ իբր Մագխասրոսի լեզուն տարբերվում է Էվկլիդեսի երկրաչափության թարգմանության լեզվից: Էվկլիդեսի երկրաչափության լեզուն, մեր կարծիքով, ընդհակառակը, շատ ծանր լեզու է և ամենևին նման չէ Շերակացու լեզվին: Շերակացին երբեք չի ասի. «... Քէ յաւելու ի հաւասար այլ ևս հաւասարս, լինին՝ ամենայնքն հաւասար: Եւ քէ պակասելի հաւասարէն հաւասարս որ մնայ հաւասարք են: Եւ քէ յաւելու ի վերայ անհաւասարին հաւասար, լինին ամենայնքն անհաւասար...»: Այս ոչ քէ Շերակացու, այլ Մագխասրոսի սովորական խրթնարան լեզուն է:

Վիճելի է Ն. Ակինյանի մյուս կռվանը ևս, որ իբր Էվկլիդեսի թարգ-

---

1) Հ. Ն. Ակինյան, Էվկլիդեայ տարերք երկրաչափության, տես «Հանդէս ամսօրեայ» 1937 թ., էջ 239:

2) Դրիդոր Մագխասրոսի Թղթերը, հրատ. Կ. Կոստանյանցի, Ագեքսանդրապոլ, 1910 թ., էջ 66:

3) Ի միջի այլոց, Դրիդոր Մագխասրոսի նշված աշխատության մի շարք ընդօրինակություններ են հայտնի, որոնցից ոչ մեկը չի տալիս Ն. Ակինյանի առաջարկած ձևը:

ժանության տեքստում կան մի շարք տերմիններ, որոնց գործածությունը Շիրակացուն է հատուկ։ Ն. Ակինյանի մատնացույց արած այդ տերմինների մեծ մասը, որքան մեզ հայտնի է, գործ են ածված X—XII դարի մատենագրների մոտ և չեն հանդիպում Շիրակացու աշխատություններում։ Այդպիսի տերմիններից են «դիամետրովն», (միայն մի անգամ է գործ ածված) «կենտրովն», «հավասարասրուն», «հավասարակող», «նեղ-գործել», «պարզանկիւն», «պարագրել», «տրամաչափ», «տրամանկիւն», «քառակոյս»[1]) և այլն։ Նշված բառերի մեծ մասը հունարան գրերով տրված X—XII դարերում կազմված տերմիններ են։

Ն. Ակինյանի մատնացույց արած տերմինների մեջ կան, իհարկե, այնպիսի տերմիններ էլ, որոնք գործ են ածված և Շիրակացու աշխատություններում։ Այսպիսի տերմիններից են օրինակ՝ «տրամագիծ», «ուղղորդ» և այլն։ Բայց առանց լուրջ կռվանների, մի քանի տերմինների գործածության փաստի հիման վրա, այն էլ այն ժամանակ, երբ Մագիստրոսն ինքը հայտնում է, որ նրվիրվեցավ երկրաչափությունն իրեն է, վերցնել այդ աշխատությունը նրանից և վերագրել Շիրակացուն, որովհետև նա էլ է զբաղվել մաթեմատիկայով,— այդ միանգամայն անթույլատրելի է։

1) Այս տերմինների վերաբերյալ տես հնոր Հայկազեան բառարանը-ը և պրոֆ. Հ. Աճառյանի Հայոց արմատական բառարան-ը

III. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՁԱՓԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՑԱՂԱԳԱՑ ԿՇՌՈՑ ԵՒ ՁԱՓՈՒՑ

1. ԳՐՋԱԳՐԵՐԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱՆ

1. *ՀՄՄՌ մատեն.* № 8973 (*եր.* 600), *թ.* 76 *ա* «Ցաղագս կշռոց... *Կշիռ Բ զարեհատաց կոչի ասարիոն...*»: *Ընդօրինակել է Օգսեն արհեստ կաֆայում* 1445 *թվին*:

2. *Վենետիկի մատեն.* № 243, *թ.* 36 *բ* «Անանիայի Շիրակունւոյ Համարդի՝ Ցաղագս (*չափուց եւ կշռոց*): Ասարիոնին, լիբռոնի եւ դանկի: *Կշիռ Բ. զարեհատաց կոչի ասարիոն...*»: (*Հմմտ. Բ. Սարգիսյանի ցուցակ, հտ. Բ, էջ* 633):

3. *ՀՄՄՌ մատեն.* № 3486 *թ.* 52 *բ.* «Ցաղագս չափուց ասարիոնի, դեվռոնի եւ դանկի. Կշիռ Բ. զարեհատաց կոչի ասարիոն...»: *Ընդօրինակել է Հարութիւն գպիրը* 1544 *թվին*:

4. *ՀՄՄՌ մատեն.* № 699 (*Կ.* 582), *թ.* 198*բ* «Անանիայի Շիրակունւոյ Համարդի: Ցաղագս կշռոյ եւ կշռորդաց: *Ցաղագս ասարիոնի եւ լիբռոնի եւ դանկի: Ա. Կշիռ Բ զարեհատաց կոչի ասարիոն...*»: *Գրիչը հայտնի չէ: Ձեռագիրն ընդօրինակված է 16-րդ դարում: Նուէր գրչագրում կշիռներից հետո, չարունակութեան մէջ, ընդօրինակված է չափերը.* «Ցաղագս չափոյն, չափուց Անանիայի Շիրակունւոյ Համարդի. Ցաղագս չափոց եւ չափուց եւ պատարաց: Ցաղագս խնտի...»: *Այս գրչագրից օգտուել է ակադ. Հ. Մանանդեանն իր «Կշիռները և չափերը Հնագոյն Հայ տոհմերներում» աշխատութեան մէջ,* (*տե՛ս էջ* 8):

5. *Վենետիկի մատեն.* № 288, *թ.* 103 *ա* «Վասն կշռոց եւ չափուց. Անանիա Շիրակունւոյ Համարդի: Ցաղագս ասարիոնն, լիբռոնն եւ դանկն միաչափ եւ միակշիռ են...»: *Գրչագրի ժամանակը 16—17-րդ դարի է, գրիչը հայտնի չէ:* (*Հմմտ. Բ. Սարգիսյանի ցուցակը, էջ* 1030):

6. *ՀՄՄՌ մատեն.* № 503 (*Կ.* 520), *էջ* 167 *ա* «Անանիայի Շիրակունւոյ Համարդի յաղագս կշռոց եւ կշռորդաց» *թ.* 167 *բ* «Անանիայի Շիրակունւոյ Համարդի յաղագս չափոյ եւ չափուց»: *Ընդօրինակել է Ավետիս Կաթողիկոսը Կ. Պոլսում* 1601 *թվին*:

7. *ՀՄՄՌ մատեն.* № 2180 (*Կ.* 2152). *թ.* 533*բ* «Անանիայի Շիրակացոյ յաղագս կշռոյ, եւ կշռոց, եւ կշռորդաց»: *թ.* 537*ա* «Ցաղագս չափոյ չափուց»: *Ընդօրինակել է Վարդան ասրկավագը* 1644 *թվին: Գրչագրից օգ-*

ավել է ակապ. Հ. Մանանդյանն էլ «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում» աշխատության մեջ, (տե՛ս էջ 8):

8. Վենետիկի մատեն. № 278, թ. 18 բ «Անանիայի Շիրակացոյ՝ Ցաղագս կշեռոց եւ կշեռոց եւ կշռեւորդոց»: Ընդօրինակել է Ամիրան երզնկացին Տրապիզոնում 1655—56 տարիներին ընթացքում: (Ձմմ. Բ. Սարդևյանի ցուցակ, էջ 942):

9. ՀՍՍՌ մատեն. № 4461, թ. 409 ա «Անանիայի Շիրակունոյն Համարոյի. Ցաղագս կշռոյ եւ կշռոց եւ կշռորդոց», թ. 411 բ «Ցաղագս չափոյ չափուց Անանիայի Շիրակունւոյ Համարոյի. Ցաղագս քանսոի»: Գրչապիրն ընդօրինակել է Հովհաննես Երեցը 1662 թվին, Թոխաթում:

10. Բան Հայկունու ցուցակի № 1, § 19, «Անանիայի Շիրակունւոյ Ցաղագս չափոց եւ կշռոց»: (Ձմմ. Մեսրոպ եպ. Մաշտոցի ցուցակը № 289):

11. ՀՍՍՌ մատեն. № 1495 (Կ. 1737), թ. 151 բ «Անանիա Շիրակունոյ Համարոյի Ցաղագս ասարիւնի, լերտոնի եւ դանկի»: Նոյն գրչագրում ուրիշ մեկի կողմից ընդօրինակված՝ «Վասն կշռոց»: Ընդօրինակել է Եփրեմ վարդապետը 1684 թվին Կ. Պոլսում:

12. ՀՍՍՌ մատեն. № 605 (Կ. 572), թ. 210 ա «Անանիայի Շիրակունւոյ Համարոյի յաղագս կշռոց եւ կշռորդոց»: Շարունակվում են նաև չափերը: Ընդօրինակել է Կիրակոս աբեղան: Ձեռագրի գրչությունը 17-րդ դարի է:

13. ՀՍՍՌ մատեն. № 607 (Կ. 574), թ. 110 բ «Անանիա Շիրակացոյ. Ցաղագս կշռոց եւ կշռորդոց», նաև «Ցաղագս չափոյ եւ չափոց»: Գրչագիրն ընդօրինակված է 17-րդ դարի գրչությամբ:

14. ՀՍՍՌ մատեն. № 682 (Կ. 780), թ. 106 ա. «Անանիայի Շիրակունւոյ Համարոյի. Ցաղագս ասարիւնի, դեփտոնի եւ դանկի»: Ձեռագիրն ընդօրինակված է 17-րդ դ. Սրապիոն գրչի կողմից:

15. ՀՍՍՌ մատեն. № 1254 (Կ 1255), թ. 105 ա. «Անանիա Շիրակունւոյ Համարոյի. Ցաղագս կշռոց եւ կշռորդոց»: Գրիչը հայտնի չէ: Ընդօրինակությունը 17-րդ դարի է:

16. ՀՍՍՌ մատեն. № 3441, թ. 23 ա. Առանց վերնագրի: Տեքստն սկսում է. «Կշիռ բ դարեհատաց կոչի ասարիւն...»: Գրիչը հայտնի չէ: Ընդօրինակությունը 17-րդ դարի է:

17. ՀՍՍՌ մատեն № 6686, թ. 7բ. «Անանիայի Շիրակունւոյ Համարոյի... Ցաղագս չափուց եւ կշռոց»:

18. Վիեննայի № 130: Վերնագիր չունի: Տեքստն սկսում է թ. 103 ա. «Ա կշիռ բ դարեհատաց կոչի ասարիւն...»: Գրիչը հայտնի չէ: Ձեռագիրն ունի 17—18-րդ դ. դ. գրչություն (Ձմմ. Հ. Տաշյանի ցուցակ, էջ 419):

19. ՀՍՍՌ մատեն. № 8075 (եր. 905), «Ցաղագս կշռոց եւ կշռորդաց եւ չափոց»: Ընդօրինակել է Ղուկաս Երևանցին 1709 թվին:

20. ՀՍՍՌ մատեն. № 663 (Կ. 752), թ. 240 ա. Առանց վերնագրի: Տեքստն սկսվում է «Ցաղագս ասարիւնի, դեփտոնի եւ դանկի...»: Ընդօրինակել է Պետրոս Առաքելացին 1724 թվին, Երուսաղեմում:

21. ՀՍՍՌ մատեն. № 8217 (եր. 883), թ. 4 ա «Անանիա Շիրակունւոյ Համարոյի յաղագս ասարիւնի, լե[փ]տոնի եւ դանկի...»: Ընդօրինակված է 18-րդ դարում:

22· *ՀՍՄՌ մատեն.* № 2762 (Գ· 209), էջ 220 *ա*. «Անանիայի Շիրակունւոյ Համարողի· Ցաղագս կշռոյ եւ կշռոց»: *Թ*· 224 *բ* «Նորին Ցաղագս չափոց չափուց»: *Ընդօրինակութիւնը* 18-րդ *դարի է*: *Դրիչը հայտնի չէ*:

23· *Վիեննայի մատեն.* № 30, *Թ*· 12 *ա*. «Անանիա Շիրակունւոյն Համարողի յաղագս չափոյ եւ չափուց եւ պատարաց»: *Չափերին նախորդում են կշիռները: Դրիչը հայտնի չէ: Դրչութիւնը* 19-րդ *դարի է*: (*Հմմ*. *Հ*· *Տաշեանի ցուցակ*, էջ 176):

2· ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շիրակացու Չափ ու կշիռների տեքստը մեզ հասել է բազմաթիւ խմբագրութիւններով: Ուշ շրջանում ընդօրինակող դրիչներից գրեթե ամեն մեկն իր ցանկացածի պես փոխոխութիւններ է ներմուծել Շիրակացու տեքստը, ուղղել է չափերն իրեն ժամանակում և իրեն շրջանում գործածվող չափերով, անդամահատել է տեքստը և այլն: Կան մեզ հասած այնպիսի տեքստեր, որոնք Շիրակացու չափերի հիման վրա խմբագրական մեծ փոփոխութիւններով կազմել են նոր աշխատութիւններ: Այդպիսիներից է օրինակ «Ցաղագս ընթացից արեգական»-ը, որի վրա մենք կանգ կառնենք առանձին:

*Շիրակացու մեզ հասած Չափ ու կշիռների տեքստերից համեմատաբար լրիւ են այն տեքստերը, որոնք սկսվում են «զարեհատ» կշռով և վերջանում «կազամատկութի» չափով: Այդ խմբի պատկանող չափերն ու կշիռները, սովորաբար, երկու հիմնական մասի են բաժանված լինում, որոնցից յուրաքանչիւրն ունենում է իր առանձին խորագիրը—առաջին մասում չարագրված են լինում կշռական չափերը, և ունենում է՝ «Ցաղագս կշռոյ եւ կշռոց եւ կշռորդաց» խորագիրը, իսկ երկրորդում՝ չափերը և ունենում է «Ցաղագս չափոյ չափուց եւ պատարաց» խորագիրը: Վերջին խմբի Չափ ու կշիռներն իրենց հերթին բաժանվում են երկու նոր խմբի: ՀՍՄՌ մատեն. № №2180 և 2762 ձեռագրերի Չափ ու կշիռների տեքստը կազմում են նոր խումբ և բավականաչափ տարբերվում են մյուս մեզ հայտնի խմբի ցրչագիր չափ ու կշիռների տեքստերից: Այդ երկու ձեռագրերն ունեն մի շարք ընտիր հատուածներ: Բացի այս, նրանց տեքստերը սկզբից ունեն ընդմիջարկված հետևյալ նախադասութիւնը. «Ցաղագս տաղանդի: Տաղանդ եձիե լիտր է· եւ լիտրն ՀԲ մսխալ է թուով· եւ երբայեցիքն գտաղանդն քանքար ասեն· եւ մնանս այլ նոյն է· տաղանդն յունարէն է, մնանն գաղմատերէն է, եւ քանքարն՝ երբայեցերէն· բայց միևնոյն է ի դանագան լեզուս» (*տե՛ս ՀՍՄՌ մատեն.* № 2180, *Թ*· 534 *ա*): *Որ այդ հատուածն ընդմիջարկված հատուած է, երեւում է այն փաստից, որ Շիրակացին իր տեքստի հետագա մասում հանդամանորեն խոսում է տաղանդի և լիտրի մասին, ուստի և հարկ չէր դրնի սկզբում, այդ ձևով ընդհանուր խոսել նրանց մասին: Բացի այդ, «մսխալ» բառի գործածութիւնը» ինքնին մատնում է այդ հատուածի ուշ շրջանում գրված լինելու փաստը:*

3· ՎԵՐՆԱԳՐԻ ՀԱՐՑԸ

Շիրակացու չափ ու կշիռները հրատարակել են Հ· Ավգերյանը[1] *և պրոֆ· Ր· Պատկանյանը*[2]: *Հ· Ավգերյանի և պրոֆ· Ր· Պատկանյանի հրատարակած Շիրակացու չափ ու կշիռների տեքստերն ունին մի ընդհանուր վերնագիր՝ «Անանիայ Շիրակունւոյ Համարդոյ յաղագս կշռոց եւ չափուց»: Չափերն ու կշիռներն առանձին–առանձին ունեն և իրենց ենթավերնագիրը, կշիռներինը՝ «Յաղագս կշռոց», չափերինը «Յաղագս չափուց» (Ավգ·, էջ 21, տող 28 Ր· Պ· էջ 27, տող 30):*

Ավգերյանը, Շիրակացու չափերի ներքին լուսանցքում, բերում է նաև վենետիկի մատեան. այլ ձրչագրի վերնագիրը տված տարբերակը, կշիռներինը՝ «Անանիայի Շիրակացւոյ Համարդոյ վասն կշռոցն», չափերը՝ առանց հեղինակի անվան, «Յաղագս չափուց» (Ավգ· էջ 21)[3]: *Նման ձևով են վերնագրված նաև Շիրակացու չափ և կշիռների ՀՍՍՌ մատեան· դրեթե բոլոր ընտիր ձրչագրերում· (№ № 699, 2180 և այլն): Կշիռների հատվածը, հնագույն ձրչագրերում վերնագրված է «Անանիայի Շիրակունւոյ Համարդոյ· Յաղագս կշռոյ, կշռոց եւ կշռորդոց» իսկ չափերինը՝ «Անանիայի Շիրակունւոյ Համարդոյ: Յաղագս չափոյ ,չափուց եւ պատարաց»: Այս վերջին վերնագրերը, որոնք առանձին-առանձին չափերի և կշիռների տարբեր մեծութիւններ են ցույց տալիս, և պահել են լավագույն ձրչագրերը, մեր կարծիքով, ամենից ճիշտն են և համապատասխանում են նախնական տեքստի վերնագրին:*

4· ԴՐՉԱԿԱՆ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

Չափ ու կշիռների հրատարակված տեքստերում նկատվում են տեքստային որոշ տարբերություններ: Նրանց մի քանիսի վրա մենք անհրաժեշտ ենք համարում կանգ առնել:

ա) Պրոֆ· Ր· Պատկանյանի հրատարակած Շիրակացու չափերի տեքստում կարդում ենք· «Չափ ԻԴ քեստաց լինի մոդ ··» (էջ 31, տ· 10): ՀՍՍՌ մատենադարանի ընտիր ձրչագրերի տեքստերից երևում է, որ այդ նախադասությունը պիտի լինի ոչ թե «Չափ ԻԴ քեստաց», այլ «Չափ ԻՒ Խեստաց···»: Այդ, ի միջի այլոց, երևում է նաև տեքստի չարունակությունից· «Չափ ԻՒ քեստաց լինի մոդ··· քան ԻՒ դլխաւորաց եւ քան ԻՒ զրոց կտակարանաց···»: Քան Շիրակացու այս տեղեկության, մոդի 22–ն, ուրեմն, համապատասխանում է Իսրայելի 22 դլխավորների և կտակարանի 22 դրքերի թվին: Եթե մոդը 24 լիներ, ապա, պարզ է, որ Շիրակացին անհնարաւոր չէր հարաբերի Իսրայելի 22 դլխավորների և կտակարանի 22 դրքերի հետ: Նախնական բնագրում եղել է ո՛չ թե «Չափ ԻՒ քեստաց···», այլ «Չափ ԻՒ քեստաց···»:

բ) «Դրամ քան Պարսկական լեզուի անուանեցաւ, եւ յարծաթ ոչ ապա–

---

1) Հ. Ավգերեան, Բացատրութիւն չափուց և կշռոց նախնեաց, Վենետիկ 1821, էջ 21—32).

2) Ր. Պ. Մնացորդք բանից Անանիայի Շիրակունւոյ, էջ 27—31:

3) Շիրակացու Չափ և կշիռները վերահրատարակվել է 1884 թ. Ղ. Պոլսում հունարեն թարգմանութեամբ:

ասելացաւ. որ է Զ մասն լաւը» (Աւգ., էջ 26, տ. 3—4)։ Պրոֆ. Ռ. Պատկանյանն Ավգերյանից այդ նախադասութիւնը բերում է նուիրութեամբ, բայց աղավաղված բառից հետո փակագծում հարցականով ավելացնում է «յարծաթոջ» (?) (Ռ. Պ. էջ 29)։ Ակագ. Հ. Մանանդյանն այդ բառն ուղղել է «յարծաթոջ» ձեւով և առանձին ծանոթութեամբ նշել էջ 13–ի ներքին լուսանցքում՝)։ ՀՍՍՌ մատենադարանի թիվ 699, 2180 և մյուս լավագույն ձեռագրերը՝) տալիս են ակագ. Հ. Մանանդյանի ուղղած ձեւով։ Շիրակացու «Կշիռների»–ի մեր հրատարակութեան տեքստում այս ուղղումը կատարված է։

դ) «Եւ ըստ հատարակաց խօսից դրամքիւ, որ է Ը մասն Ունկուց կամ Նուկուց»—կարդում ենք պրոֆ. Ռ. Պատկանյանի չափ ու կշիռների հրատարակած տեքստում (էջ 27, տող 22)։ Այս նախադասութեան մէջ «կամ Նուկուց» բառերը ո՛չ մի կապ չունեն տեքստի հետ և հետամուտ են։ Այդ բառերը տեքստում կարող էին մտնել երկու հանգամանքներում։ կամ դրիչը չի կարողացել կարդալ ընդօրինակած դրչագրի մայրը և «ունկուց» բառից հետո դրել իր հնարադրութիւնը և «կամ Նուկուց» բառը դրիչը մեկնել է իր ժամանակվա բառով, ուղելով ասել, որ այդ բառը համապատասխանում է «Նուկուց» չափին։

«Նուկի» բառը, մեր կարծիքով, ավելորդ է նաև պրոֆ. Ռ. Պատկանյանի էջ 28, տող 8–ում։

դ) Ավգերյանի և պրոֆ. Ռ. Պատկանյանի հրատարակած Շիրակացու կշիռների մասին տուների հատուածում՝ ասված է. «որ է (տուեր) Ը մասն ունկուց» (Ավգ., էջ 23, տ. 14, Ռ. Պ., էջ 27, տ. 25)։ Նախադասութիւնը թերի է—«ունկուց» բառերից հետո կրճատված է. «եւ լինի ԺԸ կերատաց կշիռ» բառերը։ ՀՍՍՌ մատեն. № № 699 և 2180 լավագույն դրչագրերի տեքստերը պահպանել են այդ կրճատված մասը. «որ է Ը մասն ունկուց. եւ լինի ԺԸ կերատաց կշիռ»։

ե) «Մնասն ըստ խալացւոցն ՅԴ ունկեայ կշիռ է... եւ ըստ Երբայեցւոց Մնասն Արծաթի Թարգմանի, և ըստ Երբայեցւոց Բ լիտր եւ կէս», (Ավգ, էջ 25 տ. 1—3, Ռ. Պ., էջ 28, տ. 20)։ Այստեղ «Երբայեցւոց» անվանի կրկնութիւնը միանգամայն անհիմն է։ Ավգերյանի տեքստի ներքին լուսանցքում այդ բառն ունի «ըստ Թէլասեցւոց» տարբերակը։ «Վիքիպեդիա»–ին ձեւով ուղղել է ակագ. Հ. Մանանդյանը (տե՛ս էջ 32)։ Մատենադարանի լավագույն դրչագրերն ունեն «ըստ Թիբասեցւոց» ձեւով։

զ) Պրոֆ. Ռ. Պատկանյանի տեքստում կարդում ենք, «Ծաղանդն ձիւ լիտր է» (էջ 29, տ. 4)։ Ավգերյանի տեքստում և ՀՍՍՌ մատենադարանի բոլոր ընտիր դրչագրերի տեքստերում, ինչպես և կատարած կոնկրետ հաշիւներից պարզ երեւում է, որ տալանդը ո՛չ թէ ձիւ լիտր է, այլ ձիւ։ Այս աղավաղումը «ե»–ի և «է»–ի իրար հետ սովորական չիմաստության հետեւանքով առաջացած սխալ է։

է) «...Արդ՝ ո՞ւր դասնիցես զայս անուանս։ Գիտասցի՛ր, եթէ կազմատիպիւքն ըմպելի ասի. եւ մասամարովքն ճաշակ, որով զգլխեն հանին»

---

1) Հ. Մանանդյան, Կշիռները և չափերը հնագոյն հայ աղբյուրներում, Երևան 1930, էջ 13։

2) Ավգերյանի հրատարակութեան մէջ, ներքին լուսանցքում, բերված է այդ բառի «յարծաթոջ» տարբերակը (տես էջ 26, ծանոթ. 3)։

(Ր. Պ., էջ 31), ա. 32—35: Ամփ., էջ 32, ա. 3—7): Այս նախադասութ-
թյունը պարզապես ապավաղված է: ՀՍՍՌ մատեն. ընտիր ձրչագրերն այդ
նախադասությունը տալիս են հետևյալ ձևով. «Ամդ, ուր դասնիցես զայս
անուանս, զիրասջիր՝ եթէ կազամադեկովքն լսիցեն ասէ եւ մատաւրովքն
հաշակ, որով զրկնին հանեն»:

ը) «Զամէ ՊՁ քանասէ լինի քոս մի. եւ կոչի երբայեցւոցն եւ Աստուցն
ի հայոց առեալ...» (Ամփ., էջ 31, Ր. Պ. էջ 31): Պարզ երևում է, որ նա-
խադասությունն ապավաղված է, որովհետև անիմաստ են «ի հայոց առեալ»
բառերն. ընթերցողն այստեղ սպասում է, որ Շիրակացին պիտի բերի
«քոս»-ի էվիվալենտ չափի անունը հայերենով: Մատենադարանի ընտիր
ձրչագրերն ապավաղված այս նախադասությունն ուղղում են հետևյալ
ձևով...» «Զամէ ՊՁ քանասէ լինի քոս մի. եւ կոչի երբայեցւոցն, եւ ա-
ռորւոցն, եւ հայոց ռեալ...»:

թ) «Պիմենիայ (?) ապակեղէն պարզ. Զ մանն Քանասէ» (Ամփ., էջ
29, Ր. Պ. 30): ՀՍՍՌ մատենադարանի ընտիր ձրչագրերը տալիս են ա՛յ
թե «ապակեղէն» ձևով, այլ «ապակի է». «Պիմենիայ ապակի է՝ Զ մանն
քանասէ»:

ժ) «Կշիռ Սիմեան եւ դրամարի կոչի ըստ երբայեցւոցն սատեր...»
(Ամփ., էջ 23, ա. 9—10, Ր. Պ., էջ 27): Շիրակացու չափերի հետևյալ շա-
րադրությունից երևում է, որ սիմեանը և դրամարը ա՛յ թե ուղիղ ձևով
հավասար են սատերին, այլ մեկ և կես սիմեան է հավասար մեկ սատերի:
Այսպես օրինակ՝ լիտրի մասին խոսելիս ասվում է, որ լիտ-
րը հավասար է՝ «... Սատեր Ղ, Սիմեա ՃՒԴ...»(Ր. Պ., էջ 28, ա. 15):
Մեկ սատերն, այսպիսով, հարաբերվում է մեկ և կես սիմեանին: Վերև
բերված անբասն ապավաղման պատճառը եղել է, մեր կարծիքով, այն, որ
մեկ և կեսը իմաստով դրծածված թվանիշը աշ՝ հետագա ընդօրինակողների
համար անհասկանալի լինելու պատճառով դուրս է նետվել: Ճիշտ կլիներ
այդ անբասն ուղղել հետևյալ ձևով. «Կշիռ Աշ սիմեան եւ դրամարի կոչի
ըստ երբայեցւոցն սատեր»:

ժա) «Կշիռ դահեկանի եւ սիմեան կոչի ըստ երբայեցւոց Սիկղ...»
(Ամփ., էջ 24 ա. 3—4, Պատ., էջ 28, ա. 4): Սիկղը դահեկանին հավասար
չէ դարձյալ: Նա դահեկանից մեծ է մեկ և կես անգամ: Այդ պարզ երևում
է Շիրակացու կշռոների հետագա չարադրությունից: Տեղի է ունեցել ճիշտ
այն ապավաղումը, ինչ որ սատերի հետ է: Առաջարկում ենք այդ ան-
բասն ուղղել հետևյալ ձևով. «Կշիռ աշ դահեկանի եւ սիմեան կոչի ըստ երբա-
յեցւոցն սիկղ»:

ժբ) Քանքարի վերաբերյալ Հ. Ամվերյանի և պրոֆ. Ր. Պատկանյանի
անբասերում հետևյալն է ասված. «Քանքարն ձԼԸ լիտր է: Եւ մանր բա-
ժանեալ զքանքարն՝ լինի Դահեկան ԹՌՋԶ, Սիմէս ԺՌՈՉՀԲ, Տրմէս
ԻՌՈՓԸ, Գրամար ԼՃՌՋԹԴ, Սիղգ ՄՌՈՈԺՉ, կերտա ԲՃԼԸՌՆԿԴ, փչիտ
ԳՃԺԷՌՋՃԲ, Դանգ ԴՃՀՉՌՋԻԸ, եւ զարեհատ ԹՃԳՌՊՄՉ: Եւ հասա-
քեալ զամենայն մատունս քանքարի՝ լինի Դահեկան ՔՋԼՉ» (Ամփ., էջ
26—27, Ր. Պ. էջ 29): Ամվերյանը ,տեսքաի լուսանցքում, սակայն հիշում
է, որ ձրչագրերից երեքն ունեն հետևյալ տարբեր ընթերցումը «ձԼԸ
լիտր եւ կէս երբեակ եւ ութեւտասներակ» (Ամփ. 27):

Պրոֆ. Ր. Պատկանյանը տեսքաի ներքին լուսանցքում բերած է տար-

դանդի մասերի հետևյալ տարբեր ընթերցումը. «Քանքարն լինի Դահեկան բիւր, Միմէս Բ (այսինքն բիւր), Տրմէս՝ Գ, Գրամար՝ Դ, Սինդ՝ Զ, Կեբատ՝ ԻԴ, Փչիտ՝ ԼԲ, Գաբեհատ՝ ՂԶ: Հատարեալ ամենայն մասունք Քանքարի լինի դահեկան Ա. բիւր» (էջ 29): Ակադեմիկ. Հ. Մանանդյանը հենվելով ՀՍՄՌ մատեն. 596 և 2195 պրչագրերի վրա[1], վերև բերված տեքստը ուղղել է Ավգերյանի և պրոֆ. Ք. Պատկանյանի ձանձրացուցիչ մեջ բերված ձևով: Այս ուղղումը հաստատում է ՀՍՄՌ մատենադարանի բոլոր ընտիր պրչագրերով: Ազամիդումը, մեր կարծիքով, առաջացել է հետևյալ հանգամանքներում. ընդօրինակող պրիչը չի հասկացել Շիրակացու կոտորակի նշանակությունը, չի կարողացել հասկանալ, որ Շիրակացու «Քանքարն ձԼԸ լիտր և կես, երբեակ եւ ութ եւ տասնեակ» թիվը հավասար է $134+\frac{1}{2}+\frac{1}{8}+\frac{1}{18}=138\frac{8}{9}$-ի: Պրիչը արտապրել է միայն ամբողջ թիվը, այսինքն ձԼԸ և ըստ այսմ փոխել քանքարի բոլոր մասերի թվանշանները: Ի միջի այլոց, պրիչներից չատերը չեն հասկանում Շիրակացու բիւրի և կեսի համար դրծածած նշանապրերը, որը և պատճառ է դառնում բազմաթիվ նման աղավաղումների:

5. «ՅԱՂԱԴՍ ԸՆԹԱՑԻՑ ԱՐԵԳԱԿԱՆ»-Ի ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԿՇԻՌՆԵՐԻ ԵՎ ՉԱՓԵՐԻ ՀԵՏ

«Ցաղագս ընթացից արեգականի»-ի տեքստն առաջին անգամ հրատարակել է Հ. Ավգերյանը՝ իր «Բացատրություն չափուց եւ կշռոց նախնեաց» աշխատությունեան մեջ: Նա տեքստը վերնագրել է. «Ցաղագս ընթացից արեգական եւ համարոյ չափուց ըստ կրկին օրինակաց Շիրակացւոյն» (էջ 37):

«Ցաղագս ընթացից արեգականի» տեքստը Շիրակացուն պատկանելու վերաբերյալ Հ. Ավգերյանը ասել է հետևյալ դատողությունը. «Զկնի առանձինն կարգելոյ ի նախապրունս գործոց համառօտ ծանօթութեամբք գրանս եպիփանոյ, Շիրակացւոյն, եւ Խորենացւոյն՝ կարեւոր գտեցաք ուրոյն արձանացուցանել եւ գրանս Դ. եւ Ե. օրինակաց Շիրակացւոյն, որ է կարճ ի կարճոյ եւ ընտիր բանդակութեան երեցունց նախակարգեալ գործոցդ: Եւ թէպէտ ոչ կրէ նա հակառաւ դանուն Շիրակացւոյն, այլ մեք նմին ընծայեմք եւ դայ՝ վասն լինելոյ պէմ համաձայնութեան ինչ կշռոց եւ չափուց նորին. վասն որոյ եւ ի վերնագիրս անկիտմ եղաք դնոյն Շիրակացւոյն. ճակառաւ երկոցունց օրինակացդ» (տե՛ս էջ 37):

Նույն տեքստը Շիրակացու անունով վերահրատարակել է պրոֆ. Ք. Պատկանյանն՝ իր կազմած «Անանիայի Շիրակունւոյ մնացորդք բանից» ժողովածուի մեջ (էջ 32—34):

Հետագայում «Ցաղագս ընթացից արեգական»-ի տեքստով՝ հին հայատառությամբ դրի ածվող չափ ու կշիռների կապակցությամբ, մոտից զբաղվել է ակադ. Հ. Մանանդյանն իր «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում» աշխատության մեջ (էջ 103—105):

Ակադ. Հ. Մանանդյանն ուսումնասիրության ընթացքում ենթադրել է «Աշխարհացույց»-ի և «Ցաղագս ընթացից արեգական»-ի տեքստերում

---

1) Հ. Մանանդյան, Կշիռները և չափերը..., էջ 48։

հիշված չափերի որոշ նմանություններ, բայց որովհետև նա «Աչքաբհայցույց»-ը համարում է ո՛չ թե Երեմիացու՝ այլ Մովսեսացու գործ, ուստի և չի համաձայնվել Ամրերյանի հետ, և նրա տեսակետը՝ «Տաղտպս ընթացից արեգական»-ի տեքստը Երեմիացուն պատկանելու խնդրում համարել է «ֆիճելի և անհավանական» (տե՛ս «Կշռոները և չափերը» էջ 7):

«Տաղտպս ընթացից արեգական»-ի տեքստը պարունակող բազմաթիվ ձեռագրեր կան ՀՍՍՌ մատենադարանում: Այդպիսի ձեռագրերից են օրինակ՝ № № 1668 (թերթ 256բ), 1681 (թերթ 256բ), 1717 (թերթ 171ա), 2371 (թերթ 226), 5613 (թերթ 301ա), 582 և այլն:

«Տաղտպս ընթացից արեգական»-ի տեքստը ՀՍՍՌ մատեն. ձեռագրերում մեզ հասել է երկու տարբեր վերնագրերով՝ «Տաղտպս ընթացից արեգական եւ համարոյ չափուց» և «Վասն չափ կշռոց»: Կան և այնպիսի ձեռագրեր, որոնք վերնագիր չունեն և սկսվում են անմիջապես տեքստից. «Եթէ կամիցես գիտել՝ թէ արեգակն քանի հոլովումն առնու...»: Վերջին խմբի պատկանող տեքստը մեծ մասամբ հանդիպում է մեզ մղոնական չափերից հետո, բառարանային տիպի ժողովածուների մեջ:

Ուսումնասիրությունից պարզվում է, որ ՀՍՍՌ մատեն. «Տաղտպս ընթացից արեգական»-ի ձեռագրերից ո՛չ մեկը վերնագրում, ինչպես այդ Վենետիկի Մատեն. ձեռագրեր տեքստերն են, չունեն Երեմիացու անունը: Հ. Ամրերյանը և պրոֆ. Բ. Պատկանյանն այդ տեքստը Երեմիացուն վերագրելու՝ և վերնագրելու խնդրում մոտեցել են ենթադրաբար: Նրանք համոզված է, նկատել են, որ այս տեքստը մեծ նմանություններ ունի Երեմիացու չափ ու կշռոների հետ և դա բավական են համարել վերջինս վերագրելու Երեմիացուն:

Երեմիացուց, ինչպես հայտնի է, օգտվել են բազմաթիվ միջնադարյան հայ մատենագրներ, համեմատելով նրանց Երեմիացու աշխատությունների արտագրություններ են կատարել ամբողջ պարագրերով, բայց այդ հիմք չի տալիս միջնադարյան այդ հեղինակների գործերը վերագրելու Երեմիացուն, որովհետև նրանք փոփոխել են Երեմիացու տեքստն բուն իրենց ցանկության, ավելացրել են իրենց կողմից նոր հատվածներ: Նման մի վտանգ հետ և մենք գործ ունենք «Տաղտպս ընթացից արեգական»-ի տեքստի խնդրում: Միջնադարյան մի հայ կաթոլիկատոր հեղինակ, հավանական է 12—13-րդ դարերում, համատեղել է Երեմիացու կշռոների և չափերի աշխատությունը, որոշ տեղեր փոփոխելով և ենթարկել բուն իր ցանկությանն, կատարել է լրացումներ Երեմիացու «Տոմար»-ից և «Աչքաբհայցույց»-ից, մի քանի տեղ կատարել է որոշ լրացումներ և կազմել ներկա աշխատությունը: Մեր եզրակացությունը հաստատելու համար բերենք «Տաղտպս ընթացից արեգական»-ի տեքստից որոշ փաստեր:

Նախ՝ «Տաղտպս ընթացից արեգական»-ի հեղինակն իր աշխատության սկզբում օգտվել է Երեմիացու «Տոմար»-ից, նա մի քանի տող ուղղակի արտագրել է նրանից:

Ահա տոմարի այդ մասի համեմատությունը «Տաղտպս ընթացից արեգականի» հետ:—

«Երբ կամիցիս գիտել՝ թէ արեգակն յուրուր բանի հոլովումն առնու կամ բանի ասպարէզ ընթանայ, կայ զժամս ուրուր, երեսնապատկեա

Երբ կամիցիս գիտել, թէ այսօր արեգակն բանի հոլովումն առնու՝ եւ կամ բանի Ասպարէզ ընթանայ, կայ զժամս ուրուր, երեսնապատ-

եւ զայնչափ նոյնվումն առնու: Կալ զնոյնվումն եւ ինձգիաբիւրապատկեա եւ այնչափ ասպարէզ ընթացայ»...:

(«Շիրակացու տոմար, ՀՄՄՌ մատեն. № 1100, թերթ 286):

կեա, և այնչափ նոյնվումն առնու կայ զնոյնվումն, ինձգիաբիւրապատկեա. եւ այնչափ ասպարէզ ընթացայ...»:

(«Ցաղագս ընթ. արեգական», էջ 37):

Տոմարից օգտվելու վարանն այստեղ անվիճելի է: «Ցաղագս ընթացից արեգական»-ի հեղինակն օգտվել է տատացի, սորկուրն:

Տեքստի հետագա չարագրության մեջ «Ցաղագս ընթացից արեգական»-ի հեղինակն օգտվել է Շիրակացու «Աչխարհացոյց»-ից: Ըստ որում, նա օգտվել է «Աչխարհացոյց»-ի ո՛չ թե համառոտ, այլ ընդարձակ, կամ ինչպես ընդունված է ասել, Սուքրյանի հրատարակած խմբագրությունից: Անհրաժեշտ ենք համարում բերել այդ մասի համեմատությունը:—

«Ասպարէզն... ըստ օդաչափութեանն հարիւր հօթն էայլ, եւ էայլն վեց ոտն, եւ ոտն վիճոտասն մասն... եւ մդոնն է հօթն ասպարէզ, իսկ Պարսիցն ասպարէզն է հարիւր քառասուն և չորս էայլ, և գետնաչափութեամբ՝ հազար էայլ եւ հրասախն է հեմ մդոն: Եւ երկրաչափութեամբ մասն է հինգ հարիւր ասպարէզ չորեքկուսի»:

(«Աչխարհացոյց»-ի Սուքր. հրատ. էջ 7):

«Ասպարէզն է ըստ Օդաչափութեան Էայլ ձի, և Էայլն Ջ ոտն. եւ Ոտն ԺԶ Մատն: Եւ Մդոնն է ասպարէզ: Իսկ ըստ Պարսից Ասպարիսին ձԽԳ Էա յ, որպէս լինել գետնաչափութեամբ Մդոնն Ռ Էայլ, եւ հրասախն Գ Մդոն. *բայց Օդաչափութիւն երկրաչափութեան Մատն Եձ ասպարէզ է յոյն եւ յերկայն՝ չորեքկուսի միաչափ»:*

(«Ցաղագս ընթացից արեգական», էջ 37):

Այստեղ էլ, ինչպես տեսանում ենք համեմատությունից, «Ցաղագս ընթացից արեգական»-ի հեղինակը Շիրակացու «Աչխարհացոյց»-ից օգտվել է տատացի կերպով:

Եվ, վերջապես, «Ցաղագս ընթացից արեգական»-ի հեղինակը իր տեքստի մնացած մասերը վերցրել է Շիրակացու. Ջոմի և կշիռների: Նա ձգտվածքով է արել Շիրակացու կշիռները և չափերը, աշխատել է տեղ տեղ որոշ լրացումներ կատարել իրեն ժամանակի չափական սիստեմից և կապ-մել մեզ հայտնի տեքստը:

Շիրակացու չափ և կշիռներից կոմպիլատոր այդ հեղինակն օգտվել է գործածել տատացի կերպով: Բերենք այդ առթիվ մի քանի վարանք:

«Ցաղագս տատանդին: Տատանդն եձԻե լիտր է. եւ լիտրն ՀԲ մսխալ է Թաւով: Եւ երբայեցիքն պատանդն քանքար անուն: Եւ Յեսան նոյն է»:

(«Շիր. Ցաղագս. չափոց»... ՀՄՄՌ Մատեն. № 2180 գրչ.):

«Տատանդն կշռոյ անուն է, որ է ձԻե լիտր. եւ ձԻե լիտր, իննհազար Աստաբիոն ըստ համարոյ: Եւ երբայեցիքն զՏատանդն քանքար կոչին: Եւ Յեսան եւ Մոնոդ նոյն է»:

(«Ցաղագս ընթ. արեգ.» էջ 38).

կղիտ Բ Դարեհեանաց կոչի աստաբիոն, իսկ ըստ Հելլենականին դեպատն կոչի, բայց ըստ երբա-

«Մոնադն իննն Ռ Աստաբիոն է, ըստ Հելլենականին դիպատն կոչի, որ է անոսր, որ է Դանգ.... եւ

յեցւոց՝ նուագուքիւն կոչի, որ է անուանաբ եւ ըստ հայումս կոչի գանգ, իսկ ըստ հռովմայեցւոց՝ կալիտոն կոչի, ոի կապու գլուխ ասի»։

(«Շիր. Ցաղագս չափոց, էջ 27—28)»։

ըստ երբայեցւոց Աստարիոն նուագուքիւն կոչի... Աշխարհագիր ըստ Հռովմայեցւոց կալիտոն, որ է գլխոյ, ոի կապու գլուխ է»։

(«Ցաղագս ընթ. արեգական», էջ 38—39)։

«Մնասն ըստ Իտալացւոցն Խէ ունկնիայ կշռորդ է, որ լինի Գ կիսաբ և Ը ունկի, և ըստ երբայեցւոց Մնասն արծաթ թարգմանի»։

(«Շիր. Ցաղ. չափոց», էջ 28)։

«Մնասն ըստ Իտալացւոցն Խէ ունկնիայ կշռորդ է. և ըստ Եբրայեցւոցն՝ Բ լիտր և կիսեա և ըստ Երբայեցւոց արծաթ թարգմանի»։

(«Ցաղ. ընթ. արեգական», էջ 39)։

«Զաւի առաքնորդաց չափոց քահան. և այսպէս ամենայն լեզուք անուանին, բայց ըստ աշխարհաց աշխարհաց այլ և այլ չաւի է։ Ըստ Սղեքսանդրացւոց և Իտալացւոց պօնդացւոց Բ լտերաց կշռորդ է. ըստ կաստարացւոց Իբ ունկնիաց կշռորդ։ Զաւի Իբ քսեստաց կոչի Սալիթայ»։

(«Շիր. Ցաղ. չափոց», էջ)։

«Բեսան է ըստ Հելլենացւոցն Սատան Ծ քսեստ. և է չաւի հնձանի»։

(«Ցաղագս ընթ. արեգական», էջ 39)։

«Զաւի Ծ քսեստի լինի մար մի. և ըստ Հելլենականին սատան կոչի, զոր կոչին չաւի հնձանի»։

(«Շիր. Ցաղ. չափոց», էջ 31)։

«Մար՝ ըստ Հելլենացւոցն Սատան Ծ քսեստ. և է չաւի հնձանի»։

(«Ցաղագս ընթ. արեգական», էջ 39)։

«Բեսան է բոլորակ ապակիղէն, ունի կէս լիտր. և կոչի ըստ հայոց շիշ։ Զաւի չորից քսեստաց կոչի կամպակ, զոր հայն սրուակ ասէ»։

(«Շիր. Ցաղ. չափոց», էջ 31)։

«Շիշ իւզոյն, որ յաւետարանին՝ Բեսին է. բոլոր ապակիղէնն, ունի կէս լիտր։ Կամպակ այրւոյն՝ զոր Հայն Սրուակ ասէ։

(«Ցաղ. ընթ. արեգական», էջ 39)։

Համեմատութիւնից պարզ երևում է, որ «Ցաղագս ընթացից արեգական»-ի անանուն հեղինակը ծաղկաքաղ է արել Շիրակացու «Կչիռներն ու չափերը» աշխատութիւնը։

«Ցաղագս ընթացից արեգական»-ի հեղինակն իր աշխատութեան մէջ, ինչպես վերևում ասացինք, կատարում է որոշ լրացումներ։ Այդ լրացումներից մի քանիսն ստուգածաչնչից են (Աբիսողոմի մազերի կշիռը, Հուդայի մատանութեան համար վերցրած ոսկու չափը, հինգ ձագի վառօդի օրինակը և այլն)։ Ավելացումների մյուս մասը Շիրակացու չափերի մեկնութեան մէջ չէ մտնում։ Դրանք, պետք է ասել, «Ցաղագս ընթացից արեգական»-ի տեքստում

ամենից արժեքավոր կտորներն են: Բայց դրանց թիվը, դժբախտաբար, չատ քիչ է:

«Ցաղատա ընթացից արեգական»-ի տեքստում երբեմն բերված են մխիթարական չափի համար երկու տարբեր տվյալներ, որոնցից մեկը Շերակացուն է, իսկ մյուսը անանուն հեղինակինը: Այսպես՝ «Ցաղատա ընթացից արեգական»-ում մի տեղ կարդում ենք, որ սաաները Դ դրամից կշռորդ է, այսինքն այնպես, ինչպես Շերակացու մոտ է, (տե՛ս «Բացատր...» էջ 38, տող 10), իսկ մի քանի տող վերև, որը պատկանում է իրեն, հեղինակին, կարդում ենք, որ սաաները Դ դրամից «սակաւ ինչ պակաս է» (նույն էջ տող 7): Կամ թե չէ՝ մի տեղ ասվում է, որ ունկը 3 սաաեր է, ճիշտ այնպես, ինչպես Շերակացու մոտ է, բայց քիչ հետո անանուն հեղինակը ի հաստատություն իր օգտագործած աղբյուրի՝ ունկը համարում է 5 սաաերի կշռորդ:

«Ցաղատա ընթացից արեգական»-ի տեքստում մի քանի չափերի ու կշիռների հաշիվները չեն համապատասխանում Շերակացու չափական հաշիվներին: Հավանական է, դրչական սխալների հետևանքով է այդ:

Հարց է առաջանում — հնարավոր չէ՞ պարզել՝ թե «Ցաղատա ընթացից արեգական»-ի մեջ Շերակացու կշիռների և չափերի մեզ հայտնի խմբագրություններից ո՞ր տեքստն է օգտագործված: Վճռականորեն այդ հարցին պատասխանելը, իհարկե, դժվար է, բայց մի փաստ մեզ հիմք է տալիս կասկածելու, որ անանուն հեղինակը գլխի որ օգտված լինի ՀՄՄՌ մատենադարանի № 2180 ձեռագրի խմբին պատկանող Շերակացու կշիռների և չափերի տեքստերից: Այդ խմբին պատկանող տեքստերում քսեսը քսան ունկի կշռորդ է համարվում, ճիշտ այնպես, ինչպես այդ «Ցաղատա ընթացից արեգական»-ումն է, այն ինչ Շերակացու կշիռների և չափերի մյուս խմբի տեքստերում քսեսը իր կշռորդ է նշանակված:

Այսպիսով, «Ցաղատա ընթացից արեգական»-ի տեքստի ուսումնասիրությունը մեզ բերում է վճռական այն համոզման, որ այդ տեքստը Շերակացունը չէ, այլ հետագա կոմպիլատոր մի հեղինակի: Կոմպիլատորը այդ հեղինակն օգտվել է Շերակացու չափերից ու կշիռներից, համատեղել է այն, լրացրել է Շերակացու տոմարից ու «Աշխարհացույց»-ից և կատարելով մի քանի անշնչան լրացումներ, կազմել է «Ցաղատա ընթացից արեգական»-ի մեզ հայտնի տեքստը:

6. «ԱՍՊԱՐԻԶԱՑ» ՉԱՓԵՐԻ ԱՒՆԶՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՉԱՓ ՈՒ ԿՇԻՌՆԵՐԻ ՀԵՏ

Արմֆանի հրատարակությամբ լույս տեսնող «Известия»-ի 1940 թ. № 3-ում պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկը տեղավորել է մի հոդված՝ «Զաւախքատուքյան հայերեն ապրյուրներից», վերնագրով: Հոդվածին կից նա հրատարակել է չափ ու կշիռների հին հայկական մի նոր արժեքավոր տեքստ՝ «Վասն ասպարիզացս խորագրով[1]): Այդ տեքստի ձեռագիրը գտնվում է Վրացական ՍՍՌ Պետ. Թանգարանում: Նա պատկանել է 21 թվահամարի տակ: Ձեռագիրն, ըստ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի բնութագրության, ընդօրինակված է Ներսես քահանայի ձեռքով 1316 թվին:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի հրատարակած այս արժեքավոր տեքստը

[1]) Տես „Известия" Арм ФАН за 1940 г. № 3, стр. 41—43.

պալի չափով տարբերվում է մեզ հայտնի ու հրատարակված հին հայկական չափագրական այլ տեքստերից և մի նոր դաշտ է հայ մատենագրության համար: Նա տալիս է չափական այնպիսի միավորներ, որոնք չկան Շիրակացու չափ ու կշիռների մեզ հայտնի տեքստերում: Բացի այդ՝ որոշ չափերի մեծություններ հաճախ այլ է ցույց տրված, քան այդ Շիրակացու մոտ է:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ—Բեկի հրատարակած այս տեքստը համապատասխանում է ՀՍՍՌ մատենադարանի թիվ 582 ցուցակի խմբի չափ ու կշիռներին: Այդ խմբի ցուցակներից են՝ №№ 582, (թ. 151ա), 1784, (թ. 228ա–բ,) 2335, (թ. 9բ,) 2493, (թ. 248ա, 248բ,) 1171, (թ. 2ա–բ,) 8217, (թ. 3ա) և այլն: Այդ նույն խմբի չափ ու կշիռներին պատկանող մի ցուցակի մասին հիշատակություն ունի նաև Հ. Տաշյանն իր ձեռագրաց ցուցակում (տես Հ. Տաշյանի ցուցակում № 115 ցուցակի բովանդակությանը նկարագրությունը):

Այս տեքստը հայկական ցուցակներում մեծ մասամբ հանդիպում է մեզ առանց վերնագրի, ուղղակի սկսելով բնագրից. «Քաջ երկրաչափքն եւ ներհունք աշխարհագրութեանն ասացին...»: Բայց մեկ-մեկ պատահում են այդ նույն խմբին պատկանող տեքստեր, որոնք ունեն «Վասն ասպարիզաց» վերնագիրը, ինչպես այդ պրոֆ. Լ. Մելիքսեթ—Բեկի հրատարակած տեքստն է, կամ «Ճաղատս ասպարիզաց» վերնագիրը, ինչպես այդ մեր մատենադարանի № 8217 ցուցակի տեքստն է:

Պրոֆ. Լ. Մելիքսեթ—Բեկի հրատարակած չափ ու կշիռների նշված տեքստը, ինչպես պարզվում է նրա բովանդակության ուշադիր ուսումնասիրությունից, անմիջական ազերս չունի և չունենալ էլ կարող Շիրակացու հեղինակության հետ: Երկրորդ մի ձեռք օգտվել է Շիրակացու Չափ և կշիռներից, ինչպես այդ վարվել է «Ճաղատս ընթացից արեգական»-ի հեղինակը, ավելացրել է իր ժամանակի չափերը և կազմել նորա տեքստը: Այդ մասին մի քանի անգամ պարզ ակնարկում է հենց ինքը, նշված տեքստը կազմող հեղինակը. «ոմանք զմնանն եւ զմոնազն նոյնպէս ասացին քսա տաղանդին: Եւ զլիարն հազար[1]) ասարեան...» կամ «Եւ կենդինարն ձ լիտր է եւ քսա ոմանց էՌՄ դահեկան»: Շիրակացու չափերի հետ կատարված համեմատությունից երևում է, որ երկու դեպքումն էլ կոմպիլյատոր հեղինակը «ոմանք» ասելով ակնարկում է Շիրակացուն, որովհետև Շիրակացին է, որ իր չափ ու կշիռների մեջ խոսում է կոմպիլյատոր հեղինակի թված կշիռների հարաբերության մասին, Շիրակացին է կենդինարը հազար դահեկան համարողը և այլն:

Հետաքրքիր է այն, որ «Ճաղատս ասպարիզաց»-ի աշխատության հեղինակն օգտվել է ոչ միայն Շիրակացու չափ ու կշիռներից, այլ և նրա աշխարհագրությունից:

«Քաջ երկրաչափքն և ներհունքըն աշխարհագրութեան այսպէս ասացին. մասն Հն. մղոն է և ասպարէզ ի յայնն և ի ներկայնն չորեք կուսի միաչափ. ևս խոսխոն Գ մղոն (է). և մղոնն է ասպարէզ (է). և ասպարէզն ձէ ֆայլ (է)	«Յորմէ (այսինքն Պապոսից) ծայրաքաղ արարեալ գրեցաք... եւ չափն է մասն. և մասն ասէ հինգ հարիւր ասպարէզ. և ասպարէզն հեռակցութիւն վաւասն, և pus ա. դաչափութեանն ճարիւր հօքն ֆայլ. և ֆայլն վեց ատն

1) Մելիքսեթ-Բեկի տեքստում «հնն հազար», մեր բնագրում «հազար»:

ըստ աւդաչափութեաց: Եվ ըստ Պատուից ձեզ ֆայլ... եւ ֆայլն Զ ոցն (է) և ոցն ԺԶ մատն է»:

(Պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկի հրատ. տեքստից, տես «Известия за 1940 г., № 3, էջ 42).

և ոտն վեցտասան մատն. և լինի ասպարէզն վեցհարիւր քառասուն և երեք ոտն միով պակաս եւ մըղոնն է է ասպարէզ. իսկ պատիկն ասպարէզն է հարիւր յառասուն և չորս ֆայլ. և գետնաչափութեամբ՝ հազար ֆայլ. և հրատարակն է երեք մղոն: Եւ երկրաչափութեամբ՝ մասն է հինգ հարիւր ասպարէզ չորեքկուսի, որպէսզի լինել մասինն հօթանասուն և մի մղոն. և չորեակ, հօթնեակ և քսան, և ուրեակ մի»:


«Աշխարհացոյց», Մուքր. հրատ. էջ 7.

Այստեղ ուշագրավ է կոմպիլատոր հեղինակի հետամնացութիւնը Շիրակացու համեմատութեամբ: Շիրակացին խոսում է «մաս»-ի 500 լինելու մասին ըստ երկրաչափական հաշվի, իսկ նա երկրաչափութիւնը հասկացել է «երկարութիւն» իմաստով: Շիրակացին երկրի չորեքկուսի չափը տալիս է 71+մղոն $\frac{1}{4}+\frac{1}{28}$ կոտորակավոր թվով, իսկ կոմպիլատոր հեղինակը, չհասկանալով Շիրակացուն, ամբողջապես բաց է թողել կոտորակը: Շիրակացին հայտնում է, որ մասը հինգ հարիւր ասպարեզ է, իսկ կոմպիլատոր հեղինակը հինգ հարիւր ասպարեզը հասկացել է որպես 71 մղոն և այլն:

Շիրակացու չափերով պրպտվող մասնագետների համար դյուրութիւն ստեղծելու նպատակով մենք անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ ՀՍՍՌ մատեն. № 582 ցուցակի տեքստը, որը մասամբ տարբերվում է պրոֆ. Մելիքսեթ—Բեկի հրատարակած տեքստից:

«Ջայք երկրաչափքն և ներհունքն աշխարհագրութեան ասացին զմասն ՀՌ. մղոն և Ե ասպարէզ ի յայնութիւնն եւ երկայնութիւն չորեքկուսի միաչափ: Եւ իսրասան Գ մղոն է: Եւ մղոն<ն> ի ասպարէզ է: Եւ ասպարէզն ձի քայլ է ըստ աւդայչափութեան: Եւ ըստ պարսիցն՝ ձեզ քայլ է: Եւ ընդամեն լինի մղոնն Ռ քայլ. և քայլն Զ ոտն է, և ոտն ԺԶ մատն է: Այլ մղոնն ասադիոն: Եւ վաւսանն այլ ասի յհմատասերաց մղոն: Իսկ ասղանդն եւ քանքարն ասացին ձիւն լիսր, որ է դանթարն: Ոմանք լիսր կենդահական ասեն: Եւ ոմանք մնասն եւ զմոնադն նոյնպէս ըստ ասղանգին ասացին: Եւ պլիսրն ասացին Ռ ասարխոն, որ է դանկն. եւ դանկն՝ Բ դաբեհասաւկչիւ: Եւ կենդինարն ձ լիսր է եւ ըստ ոմանց ՌՄ դահեկան է: Եւ լիսրն ԺՏ նուկիւ է: Եւ նուկիւն Դ դահեկան է: Եւ դահեկան զրամ մի է եւ երրորդ մասն զրամին: Եւ զրամն վեց դանկ է. եւ դանկն Գ կուսեղջուր է: Եւ կուսն զարոյհատ է: Կարիճն <ե>կերասան մի են: Եւ լիսրն՝ ՀՔ դահեկան: Եւ զրամայկչիւն Զ զրամ է, իսկ նուկիւն՝ Բ սասեր է, որ է Ք զրամ կամ վեց, դի նուկիւ քան զնուկիւ պակաս է: Եւ ըստ ոմանց դահեկան<ն> կ ասացին է. բայց արծաթիւն զրաքմէն եւ սիկղն Բ զրամ է: Եւ սրբութեան սիկղն Գ զրամ է եւ Բ դանկ: Եւ զրաքմայն Դ զրամի կշռոզ է. աղբիրոնն եւ զինարն դահեկանի անուն է. սիմէան կէս դահեկան է.*

*ապրիմէան Գ մասն գահնկաճի. Քանասուն չափ է ըստ ոմանց Բ լիտր եւ ըստ այլոց Ի նուկլի. մարն Ծ քանատ է, որ է չափ հնձանի. Քոռն Լ մոնթ է: Եւ արդուն Դ մասն մոնթիուն է, որ է ՀՐ քանատ: Եւ ըստ ոմանց Գրիւնա մի մոնթ է, որ է չափ սրբութեան. Եւ ըստ ոմանց՝ Գ չափ ափոյ: Եւ այլ գործեալ ասեն քէ կապիճն տասնեւրդ մասն է գրուին. Եւ կշռոն ըստ գրուին. կապիճն ըստ արդունին է: Իսկ քոռն յոլով է քան զոսատ: Եւ ոմանք գարգուն չափ տասցին. եւ գդրիւ կապիճ կամխատակ այրոյն Գ քանատ էր որպէս ասիտոր մանառային: Բայց գիտել պարտ է, դի այլ եւ այլ տեղիս սեպհ կամ պակաս լինին չափքն եւ կշիռքն» (ՀՀՍՌ մատեն. № 582 գրչագիր թ. 151բ—152ա: Համեմատված է այլ ձեռագրի հետ:



ՀՄՄՌ մատեն.№ 2180 գրչագրի Շիրակացու չափ ու կշիռների տեքստից մի էջ

7. ԱՆԱՆՈՒՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՉԱՓԵՐԸ

Ֆրանսիացի պիտանական Մեն-Մարտինը 1919 թ. փարիզում հրատարակած իր «Mémoires historiques et géograph. sur l'Arménie աշխատության երկրորդ հատորում, (էջ 379) առաջին անգամ հրատարակել է հայկական գրչագրից վերցրած չափական մի տեքստ, որի հեղինակը հայտնի չի եղել: Մեն-Մարտինի հրատարակած այդ տեքստը, որը հետագայում հայագիտության մեջ հայտնի է դարձել «Անանուն հեղինակի չափեր» անունով, վերահրատարակել է պրոֆ. Ռ. Պատկանյանը՝ «Անանիայի Շիրակունւոյ Մնացորդք բանից» ժողովածուի «Ճաղատս ընթացից արեգական...»-ի ծանոթության մեջ (տե՛ս էջ 32): Հետագայում այդ տեքստը վերահրատարակել է նաև ակադ. Հ. Մանանդյանը՝ իր «Կշիռները և չափերը հնագույն հայ աղբյուրներում» աշխատության մեջ (տե՛ս էջ 111—112): Ակադ. Հ. Մանանդյանը «Անանուն հեղինակի չափերի» իր հրատարակած տեքստում կատարել է գրչական որոշ ուղղումներ:

Չափական այս աշխատության հեղինակի հարցով, որքան մեզ հայտնի է, ոչ ոք չի զբաղվել: Մեն-Մարտինը բերել է այդ տեքստը որպես «Անանուն հեղինակի» գործ[1]: Պրոֆ. Ռ. Պատկանյանը վերահրատարակել է որպես «անհայտ գրչի» աշխատություն[2]: Իսկ ակադ. Հ. Մանանդյանը՝ հանգել է առել նրա վրա որպես «Անանուն հեղինակի չափեր»[3]: Վերևում հիշված պիտանականների նպատակից դուրս է եղել ամբողջ չափական աշխատության հեղինակի հարցով զբաղվելը:

Շիրակացու մեզ հասած ու հայտնի տոմարից երևում է, որ անանուն հեղինակի չափական այդ աշխատությունը ո՛չ այլ ինչ է, բայց եթե Շիրակացու տոմարական աշխատության փոքրիկ հատվածը: Նա չարադրված է եղել արեգակի «հոլովումն»-ների պարբարանման կապակցությամբ, յուրաքանչյուր կենդանակերպում լինելու բացատրություններից առաջ: Չափական այս աշխատության հեղինակը Շիրակացին հանդիսանալու համար անհրաժեշտ ենք համարում բերել այդ հատվածը Շիրակացու չհրատարակված տոմարից, վերցնելով ՀՄՄՌ մատեն. № 1110 ցրչագրից:

«Եթէ կամիցիս գիտել, թէ արեգակն յաւուր քանի հոլովումն առնու կամ քանի ասպարէզ ընթանայ, կալ զժամ՝ աւուրն, երեսնապատկեա եւ այնչափ հոլովումն առնու: Կալ զհոլովումն երեսնապատկեա եւ այնչափ ասպարէզս ընթանայ, զի հասարակաբէն ՅԱսալի արեգակն յելից մինչեւ ի մուտս ՅԿեւ անտի յառաջ Ա.Ա. յաւելու ի տիւն, իսկ ի գիշերանս Ա.Ա. պակասէ. յորժամ օրն ԻԲ ժամ լինի՝ ՅԿ հոլովումն առնու եւ ՃՁՌ ասպարէզս ընթանայ. եւ յորժամ օրն ԻԵ ժամ լինի՝ ՆՁ հոլովումն առնու եւ ՄԻԵՌ ասպարէզս ընթանայ: Զոր ոմանք յերկրաչափաց ասացին զերկնից լայնութիւն եւ զերկայնութիւն ՃՁՌ ասպարէզ եւ այլք՝ ՄԻԵՌ ասպարէզս: Տարին ԻԲ ամիս է եւ ՅԵ օր, ՄԲ չարաբաժ է եւ մի օր. ամիսն Լ օր է. չարաբաժն Ն օր է. օրն ԻԴ ժամ է, ընդ սուտ եւ ընդ դիշեր. եւ ժամն Լ մասն է, մասին ՓՁԿ ժամ է եւ ՃԴ բիւր մասն է: Ամիսն ՁԻ ժամ է. եւ ԻԴ ժամն ՁԻ մասն է. եւ բիւր ՃՌ

---

1) Saint Martin, Mémoires II, էջ 379.
2) Ռ. Պատկանյան, «Անանիայի Շիրակունւոյ Մնացորդք բանից», էջ 32։
3) Հ. Մանանդյան, «Կշիռները և չափերը հնագույն հայկական աղբյուրներում», էջ 111։

է · եւ մասն Շ ասպարէզ է · եւ ասպարէզն վտաւան հեռակայութիւն է · քաւայումն արեգական հինգ հարիւր ասպարէզ է · ասպարէզն Շ նետաձիգ է · նետաձիգն ձՓ քայլ է · քայլն Զ ոտն է · ոտն ԻԶ մասն է · մդոն ե ասպարէզ է , Աւրն պատկեր է ամսոյն · եւ ամիսն պատկեր է տարւոյն , զի ունի ժամս ՅԿ եւ աւուրս Լ : Տարին արեգականն ՈԿե օր է եւ Գ ժամ · եւ լուսինն ՅՓ օր է եւ ԻԹ մասն : Ամիսն արեգականՀ օր է , եւ ե ժամ , եւ Լ մասն եւ կէս · եւ լուսնին ԽԹ օր , եւ կէս , եւ մասն մի եւ կէս · եւ երկոտասան մասին մէոյ Ի · որն արեգական ԻԲ ժամ է , մասն և չորիւք մասին միոյ և լուսնին ԻԶ ժամ եւ կէս եւ Գ մասն է ժամն արեգական Լ մասն · եւ է մասն հոլով մի արեգական» : (ՀՄՄՌ մաշտ. № 1110, թերթ 285բ—286բ) :

Շիրակացու այս հատուածը տումարի տեքստից անդամահատելուց հետո, ինչպես երեւում է, ղպալի փոփոխութիւնների է ենթարկուել : Այսպես՝ երկրորդ հատուածը՝ «կալ ժամս աւուրն...» անդամահատված տեքստում ընկել է «Տարին 12 ամիս է...» հատուածից առաջ : Հատուածի սկզբից նախադասութիւնը կար՝ «եթէ կամիցիս գիտել քէ արեգակն յաւրն քանի հոլովումն առնու կամ ասպարէզ ընթանայ...» բայ է թողված : Եվ վերջապես, անդամահատված հատուածի վերջում, ուշ չրջանի մեկնիչի կողմից, ավելացված է «կանգուն»-ի, «բուռն», «ներքան»-ի և այլ չափերի հատուածները : Վերջին ավելացումները ուշ չրջանում կատարվելու վարաբ երեւում է նրանից, որ այդ հատուածը բացակայում է Շիրակացու վերև հիշված տումարում : Բացի այդ, նրանց ընդմիջաբկութիւն լինելը երեւում է որոշ մասերում արված անուղիղ կրկնողութիւններից : Այսպես՝ կրկնված է «Մէկ մնան 30 մասն է» «մասը մեկ հոլով է» նախադասութիւնը : Շիրակացին ինքը, պարզ է, այդպիսի կրկնողութիւններ չէր անի, մանավանդ այն մասերում, որի մասին նա հանդամանորեն խոսել է :

Անհրաժեշտ է նշել, որ Սէն-Մարտենի և պրոֆ · Ֆ · Պատկանյանի հրատարակած տեքստերում նկատվում է գրչական որոշ սխալներ : Դրանցից մի քանիսի վրա անհրաժեշտ ենք համարում կանգ առնել :

1 · «Եւ ասպարէզն Շ նետաձիգ է»— կարդում ենք նշված տեքստում : Ասպարէզն այսուհդ հավասար չափ է նետաձիգին : Ինչպե՞ս կարող է ասպարէզը 500 նետաձիգ լինել : Ակադ · Հ · Մանանդյանը տեսնելով, որ այդ բացահայտ սխալ է, իրավացիորեն «Շ»-ն, այսինքն 500-ը, անկյունավոր փակագծի մեջ է առել և տվել հետևյալ ծանոթութիւնը · «Բնագիրն այսուհդ, անչուշտ, աղավաղված է · պետք է լինի՝ «Ասպարէզն նետաձիգ է · նետաձիգն 150 քայլ է»[1] : Ակադ · Հ · Մանանդյանի ենթադրութիւնը հաստատվում է ՀՄՄՌ մատենադարանի լավագույն տեքստի ընդօրինակութիւնը : ՀՄՄՌ մաշտ · ընտիր դրչագրերի տեքստերին այդ նախադասութիւնը տալիս են · «ասպարէզն՝ նետաձիգ է» : Այսինքն՝ ասպարեզը հավասար է նետաձիգին : Աղավաղումը կատարվել է հետևյալ ձևով՝ «ասպարէզն» բառի վերջին «ն» կրկնվել է՝ վեր է ածվել «Շ»-ի, իսկ վերջին «Շ»-ն ստացել է թվական նշանակութիւն :

2 · Սէն-Մարտենի և պրոֆ · Ֆ · Պատկանյանի հրատարակած նույն տեքստում կարդում ենք · «Ցորժամ օրն ԺԲ ժամ լինի, ՅԿ հոլով առնու եւ

1) Հ · Մանանդյան, Կշիռները և չափերը, էջ 111։

ՆՂՒ ասպարէզ ընթանայ» (Ծ. Գ., էջ 32)։ Տնքսան այստեղ անկասկած, աղաւաղված է, որովհետև թվարանական այդպէս հաշիվ կատարելով, հինգհարիւր բազմապատկելով 360-ով, սառնում ենք ո՛չ թէ 490 հատար, այլ 180 հատար։ Ակադ. Հ. Մանանդեանը նկատելով այդ սխալը, իր հրատարակած տեքստում 490 հատարն ուղղել է 180 հատարով և նկարքին յուսանցքում տվել հետևյալ ծանոթութիւնը. «Տպ. ՆՂՒ, ուղղել ենք ՃՁՒ» Շիրակացու տոմարից երևում է, որ ակադ. Հ. Մանանդեանի կատարած ուղղումը միանգամայն ճիշտ է։ Շիրակացու տոմարում այդ նախադասութիւնը եղել է հետևյալ ձևով. «Ցոյժամ օրն ԹԻ ժամ լինի՝ ՅԿ հոյովումն առնու եւ ՃՁՒ ասպարէզ ընթանայ. եւ յոյժամ օրն ԹԵ ժամ լինի՝ ՆՁ հոյովումն առնու եւ ՄԻԵՒ ասպարէզ ընթանայ (ՀՍՍՌ մատեան. № 1100 ձեռագիրը, թերթ 286ա)։ Մակայն ակադ. Հ. Մանանդեանի ծանոթ տեքստում բերված նախադասութեան երկրորդ մասը՝ «եւ յոյժամ օրն ԹԵ ժամ լինի ՆՁ...» կրճատված է։

Նշված տեքստում մենք հանդիպում ենք աղաւաղված մի նախադասութեան, որի առջև երեք հրատարակիչներն էլ հարցական են դրել)։ «Տարին ՓՍԿ ժամ է եւ ԹՒ բիւր մասն եւ բիւր ը՛ճ. ժամ է (?) և մասն Շ ասպարէզ է»։ Անհասկանալի է «բիւր ը՛ճ. ժամ է (?)»)։ Մեզ հասած Շիրակացու տոմարի տեքստը հնարաւորութիւն է տալիս ուղղել աղաւաղված այդ նախադասութիւնը։ ՀՍՍՌ մատեան. № 1100 ձեռագրում այդ նախադասութիւնը մենք կարդում ենք. «Տարին ՓՁԿ ժամ է եւ ԺՒ բիւր մաս. եւ բիւրն ԹՒ է. եւ մասն Շ ասպարէզ է» (թերթ 286ա)։ Այսպիսով՝ «բիւրն ԹՒէ» աղաւաղվել և դառել է «բիւր ԸՆԹՏէ»։ Աղաւաղումը կատարվել է հետևյալ պատճառով։ «Բիւրն» բառի վերջից «ն» անջատվել է և, հավանական է, տողադարձի օրինքով առջևից ընդունել է «Ը», առացվել է «ԸՆ», իսկ «ԹՒ» աղաւաղվել է «ԹՏ»-ի։

8. ՀԱՆՆ ՄԺԻԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ՁԱՓԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՁԱՓԵՐԻ ՀԵՏ

Հայկական ղբչադրութիւնների երկու վերջին նոր տեքստ հրատարակել է Հանս Մժիկը «Հանդէս ամսօրեայ»-ում, իր «Erdmessung, Grad, Weile und Stadion nach den altarmenischen Quellen» (Գետաչափութիւն, մաս, մղոն և ստադիոն ըստ հին հայկական աղբիւրների) հոդվածի հավելվածում[2])։ Այդ տեքստերը, ինչպես երևում է նրա տված տեղեկութիւններից, նա ստացել է բանասեր Ն. Ակինյանից[3])։

Շիրակացու չափական աշխատութիւնների ուսումնասիրութեան համար մեծ նշանակութիւն ունի Հանս Մժիկը, ինչպես ինքն է հայտնում, նպատակ է դրել պարզել հայ և հելլենիստական կուլտուրայի փոխադարձության որոշ մոմենտները։ Նա այդ տեսքով նշել է հոդվածի ամբողջական հետևող ենթավերնագրում. «Ein Beitrag zur Geschichte der Erdkunde und der Kulturbeziehungen zwischen Hellenismus und Armeniertum» («Նպաստ աշխարհագրութեան և հունա-հայ քաղաքակրթութեան հարաբերութիւնների պատմութեան համար»)։

1) Մատենադրք բանից, էջ 32,
2) «Հանդէս ամսօրեայ», 1933 թ., էջ 283—306, 432—459, 559—553.
3) Նույնը, էջ 580։

Հանս Մժիկն իր հոդվածի առաջին մասում խոսում է իր օգտագործած սկզբնաղբյուրների մասին՝ քննադատելով սակաւ. Հ. Մանանդյանին՝ նրա աղբյուրների նկատմամբ իրը թե ցուցաբերած տենդենցիոզ վերաբերմունքի առթիվ: Իր կողմից նա խոստանում է անաչառ և լուրջ վերաբերմունք ցուցաբերել դեպի սկզբնաղբյուրները, բայց որոշ հարցերի դրվածքից, հատկապես Շիրակացու նկատմամբ տված դնահատականից, ամենևին էլ չի երևում նրա անկողմնակալությունն ու պիտական անաչառությունը: Հանս Մժիկն ամեն կերպ աշխատում է հայկական կուլտուրայի որոշ արժեքները մոռնալով միայն որպես հելլենական կուլտուրայի թարգմանչական արժեքների, լուրջ անցնելով հայկական կուլտուրական օջախներում արժեքների արժեքավորման հարցի վրայով:

Մեր նպատակից դուրս է այստեղ խոսել Հանս Մժիկի այս հոդվածի մասին ընդհանրապես: Բայց Շիրակացու չափական աշխատության կապակցությամբ մի քանի խոսք մենք ուզում ենք ասել նրա՝ Ն. Ակինյանից առացած և հրատարակած չափական տեքստերի մասին:

Ամենից առաջ պետք է նշել, որ Հանս Մժիկն հրատարակած չափական այդ երկու տեքստերն այնքան էլ հին չեն: Նրանք հանդիսանում են Շիրակացու տոմարից ուշ շրջանում կատարված մեկնությունների փոքրիկ հատվածները: Այդ հատվածները դրեթե միշտ պատահում են դրշագրերում Շիրակացու տոմարի մեկնությունների մեջ: Մենք դժվարանում ենք կոնկրետ ասել, թե ո՞ր հեղինակի կատարած տոմարի մեկնության հատվածներից են դրանք, որովհետև դրշագրերում բացակայում են մեկնիչների անունները, բայց այդ խմբի դրշագրերին նայելով, կարելի է, համենայն դեպս, ենթադրել, որ դրանք 10–րդ դարից ավելի հին չեն:

Հանս Մժիկի բերած չափական առաջին տեքստը հանդիսանում է հատվածություն ՀՍՍՌ մատեն. № 2001 դրշագրի տոմարի խմբին պատկանող չափերի մեկնության, իսկ երկրորդը՝ ՀՍՍՌ մատեն. № 1999 դրշագրի խմբին: Ըստ որում, երկրորդի տեքստը, մեր մատենադարանի դրշագրի տեքստի համեմատությամբ, դյալի ազավաղման է ենթարկված: Անհրաժեշտ ենք համարում բերել մեր դրշագրերի տեքստերը՝ վերցնելով Շիրակացու տոմարի մեկնության վերև հիշված դրշագրերից:

ՀՍՍՌ մատեն. № 2001 դրշագրի տոմարի մեկնությունն ունի չափերի հետևյալ տեքստը:

«Ասեն՝ թէ մի հոլովն Լ. ասպարէզ է: Ասպարէզն՝ մղոն մի: Մղոնն Ի կրկնաքայլ է: Քայլն՝ ե ոտն: Ոտն՝ Ե բոյսի: Բոյսն՝ Բ եղունկն: Եղունկն Բ դարի է: Դաղարէզ արեգական է դարի մի:

Կալ ժամս աւուրն Լ.ասպատկաց եւ այնչափ հոլովումն առնու արեգական: Կալ ղհոլովումն Շ. ասպատկաս, այնչափ ասպարէզ ընթանայ: Ցորժամ ժԲ ժամ լինի աւուրն՝ ՁԿ ժողովումն առնու արեգական եւ ՃՒԴ. ասպարէզ ընթանայ: Ա. ժամն Լ. մասն է: Ա. մասն հոլով մի է: Ա. հոլով Շ ասպարէզ է: Ա. ասպարէզն ՃՄ քայլ է: Ա. ասպարէզն Ց կանգուն է: Ա. քայլն Բ կանգուն է: Ա. կանգունն Լ բուռն է: Ա. քայլն Լ ներբան է: Ա. ներբանն ԼԶ դարհատ է: Ա. մղոնն Լ ասպարէզ է: Ա. մղոնն ՅԸ խրատասխ է: Ա. խրատասխն ԻԲ քայլ է: Ա. խրատասխն ՅԴ կանգուն է: Ա. մղոնն ՌՄ քայլ է: Ա. մղոնն Սձ կանգուն է: Ա ասպարէզն ՌՇ քայլ է: Ի ասպարէզն Գ՞ քայլ է: Ծ ասպարէզն ԷՌ ու Շ քայլ է: Ձ ասպարէզն ԼՌ կանգուն է: Շ ասպարէզն

ՀՍ. մղոն է եւ Գ ասպարէզ: Զ ասպնջէդն Ճ մղոն է: Ա հոլովումն արեգականն ՁԻ մղոն է: Լայնութիւն արեգականն Շ ասպարէզ է: Լայնութիւն արեգականն ՃՕՌ կանգուն է: Ճ բիւր ասպարէզ յերկիւղ արեգակն. եւ Հ բիւր՝ յուսկնն. եւ Լ բիւր՝ աստեղքն: ՃՁՌ բիւր ասպարէզ յայն է երկրիւ եւ նոյնչափ երկայն: Ի Դվնայ ի Կարնոյ քաղաքն Մ մղոն է: Դվնայ ի Ղևղէ ՃՀ մղոն է: Դվնայ ի Նախճաւան Հ մղոն է: Դվնայ ի Գանձակ, որ է Դավրէժ, ՃՄ մղոն է: Եւ ճշմարիտն ասուած միայն պիտէ» (թերթ 17բ—18ա):

Այս տեքստը համապատասխանում է Հանս Մժիկի հրատարակած առաջին տեքստին, այն տարբերութեամբ միայն, որ այս ավելի ընդարձակ է քան Հանս Մժիկի հրատարակածն է:

Հանս Մժիկի հրատարակած տեքստերից, համեմատաբար, հին է երկրորդը: Նրա ամենից ընտիր ընդօրինակութիւնը պահել է մեր մատենադարանի № 1999 ձեռագիրը: Անհրաժեշտ ենք համարում այս ևս բերել Վերցնելով տոմարի մեկնութեան «Ասան ընթացից յուսկնն» գլխից: «Արտաքս ուսուցին մեզ սուրբ հարքն՝ թէ տարին ՅԿն աւր է. ամիսն Լ աւր է. շաբաթն է աւր է. աւրն իւր ժամ է ընդ տիւն եւ ընդ գիշերն. ժամն Լ մասն է. ի մասնն հոլով մի հոլովի արեգականն. հոլովն Շ ասպարէզ է. ասպարէզն Ը կրկնաքայլ է. քայլն է ոտն է. ոտն Ի բոյթ է, բոյթն Բ զուգկն է. զուգկն Բ զաբի է. զարին ական թօֆատի մի է» (66բ—12ա) «...աւրն ունի ժամս ԻԲ, գիշերն նոյնպէս. աւրն ունի մասունս ՅԿ, գիշերն նոյնպէս. եւ մասն հոլով մի է արեգականն. հոլովն Շ ասպարէզ է. ասպարէզն վաեւան մի է. եւ վաեւանն՝ Ճ քայլ. եւ քայլն՝ է ոտն. եւ ոտն՝ Ի բոյթն. բոյթն՝ Բ զարի է» (թերթ 13ա—բ):

Այս տեքստն արդէն տառացի համապատասխանում է Հանս Մժիկի հրատարակած երկրորդ տեքստին և նրա համեմատութեամբ ունի ընտիր ընթերցանութիւն:

Այսպիսով, պարզվում է, որ Հանս Մժիկի հրատարակած չափական երկու տեքստերը Շերակացու տոմարի մեկնութիւնների հատուածներից են: Ոչ ըրջանի մեկնիչները հմտօք վերցնելով Շերակացու տոմարում հիշված չափերը, լրացրել են իրենց ժամանակի չափերով: Ձափերի որոշ միաւորների անուններից, լեզուից և գրչագրերի հնութիւններից դատելով, նրանք, 10-րդ դարից հին չեն կարող լինել: Այդ չափերի հեղինակը և նրանց գրչագիր ժամանակը հնարաւոր կլինի կոնկրետ պարզել այն ժամանակ, երբ կատարմանարերվի ու վերջնականապես կհաստատի Շերակացու տոմարի մեկնիչ հեղինակների անձնաւորութիւնը:

Ի միջի այլոց, այդ նոյն կարգի նկատելիներից է հանդիսանում չափական այն փոքրիկ տեքստը, որ բերել է և Ղ. Ալիշանն իր «Այրարատ» աշխատութեան ծանոթագրութեան մէջ[1], որից օգտվել է ակադ. Հ. Մանանդեանը[2]:

ԹԻՒԸ ՈՐՉԱՓՈՒԹԵԱՆ ՑԱՆՑ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՑԿԱՍՐԱՆԱՑ

1. ԳՐՉԱԳԻՐԵՐԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱՆ

1. ՀՄՄՌ մատեն. № 1868 (կ. 1638), թ. 434ա «Անանիայի Շիրակուացոյ թիւք որչափութեան հին եւ նոր կտակարանաց»: Ընդօրինակել է Հովհաննես արեղան Սեբաստիայում, 1585 թվին:

---

1) Ղ. Ալիշան «Այրարատ», Վենետիկ 1890, էջ 412—413, ծան. 6.
2) Հ. Մանանդեան, «Գիշիներ և չափեր», էջ 177:

2· *ՀՄՄՌ մատեան* № 3072 (Գ· 247), *թ· 218ա* «Անանիայի Շիրակացւոյ քիւր որչափութեան հին եւ նոր կտակարանաց» *Գրիչը հայտնի չէ: Ձեռագիրն ունի 16—17-րդ դ· դրչութիւն:*

3· *ՀՄՄՌ մատեան*· № 503 (Կ· 520), *թ· 164բ* «Անանիայի Շիրակացւոյ Համարողի Որչափութեանց հին կտակարանացն: *Գիրք Մովսէսի օրէնքդրի···» Շարունակվում է* «Նորին (Անանիայի) քիւր որչափութեան նոր կտակարանաց»: *Ընդօրինակել է Ալեխս գրիչը 1601 թվին Կ· Պոլսում:*

4· *Մեսրոպ Մաշխարհոցի ցուցակի* № 289, *որը վերցրել է Հայկունու ցուցակից:* «Նորին (Անանիայի) որչափութեան տանց հին եւ նոր կտակարանաց»: *Ընդօրինակված է 1662 թվին Թադեվոս Ամաթունի վանքում:*

5· *ՀՄՄՌ մատեան*· № 2292 (Կ· 227), *թ· 266ա* «Անանիայի Շիրակացւոյն քիւր որչափութեան տանց հին եւ նոր կտակարանաց»: *Ընդօրինակել է Մատաթիա աբեղան 1624 թվին:*

6· *ՀՄՄՌ մատեան*· № 2180 (Կ· 2152) *թ· 537ա* «Անանիայի Շիրակունւոյ Համարողի, քիւր որչափութեան հին և նոր կտակարանաց»: *Ընդօրինակել է Վարդան սարկավագը 1644 թվին:*

7· *ՀՄՄՌ մատեան*· № 1865 (Կ· 1633), *թ· 99* «Անանիայի Շիրակունւոյ քիւ որչափութեան հին եւ նոր կտակարանաց»: *Ընդօրինակել է Թորոս Նալիակոպոսը Երուսաղեմում, 1656 թվին:*

8· *ՀՄՄՌ մատեան*· № 699 (Կ· 582) *թ· 205 ա* «Անանիայի Շիրակունւոյ Համարողի քիւր որչափութեան տանց հին կտակարանացն: *Գիրք Մովսէսի օրէնդրի···»: Շարունակվում է նոր կտակարանի տնահամարներով: Ընդօրինակել է Ամիրաս երդնկացին Տրապիզոնում, 1655—56 թվականներին:*

9· *Փարիզի ազգ· մատեան*· № 199, *թ· 241* «*Traité d'Ananie de Sirak sur les vers· de l'Ecriture Sainte*». *Թվական չունի (տե՛ս Catalogue des Man· Arm· et Géorgiens par F· Macler):*

10· *ՀՄՄՌ մատեան*· 346 (*թ· 65*), *թ· 413 ա* «Անանիայի Շիրակունւոյ Համարողի քիւր որչափութեան տանց հին կտակարանաց»: *Ունի նոր կտակարանի տնահամարները ևս: Ընդօրինակել է Հովհաննես երեցը Թոխաթում, 1662 թվին:*

11· *ՀՄՄՌ մատեան*· № 1484 (Կ· 1630), *թ· 126բ* «Անանիայի Շիրակունւոյ քիւր որչափութեանց հին եւ նոր կտակարանաց»: *Ընդօրինակել է Հովհաննես դրիչը 1666—76 թվերին:*

12· *ՀՄՄՌ մատեան*· № 1869 (Կ· 1637), *թ· 191ա* «Անանիայի Շիրակունւոյ քիւր որչափութեանց հին եւ նոր կտակարանաց»: *Ընդօրինակել է Աղբիւս սարկավագը Եվդոկիայում, 1685 թվին:*

13· *ՀՄՄՌ մատեան*· № 1483 (Կ 1629), *թ· 129բ* «Անանիայի Շիրակունւոյ Համարողի քիւր որչափութեանց հին կտակարանացն): *Շարունակության մէջ ունի նաև նոր կտակարանի տնահամարները:*

14· *Պոլսի Անտոնյան վանքի* № 110 (*Հմմտ· Մեսրոպ Եպիսկոպոսի* № 235) «— Անանիայի Շիրակունւոյ Զորչափութենէ տանց հին եւ նոր կտակարանաց»: *Ընդօրինակությունը XVII դարի է:*

15· *Վիեննայի մատեան*· № 130, *թ· 105բ* «Անանիայի Շիրակունւոյ քիւր որչափութեան տանց հին կտակարանացն»: *Շարունակության մէջ ունի նաև նոր կտակարանի տնահամարները: Ձեռագրերի ընդօրինակությունը XVII—XVIII դարերի է: (Հմմտ· Հ· Տաշյանի ցուցակ, էջ 419):*

16· *ՀՍՍՌ մատեն.* № 2281 (Կ 2305), *թ.* 120*ա*: *Վերնագրված է աւանց հեղինակի անունը հիշելու.* «Համարբ հին եւ նոր կտակարանացն»: *Ձեռագիրն ընդօրինակել է Սիմեոնը Երուսաղեմում: Գրչագրութիւնը XVII դարի է:*

17· *ՀՍՍՌ մատեն.* № 2650 (Տ· 62), «Անանիայի Շիրակունւոյ որչափութիւն հին եւ նոր կտակարանաց»: *Ընդօրինակութիւնը XVIII դարի գրչութեամբ է:*

18· *ՀՍՍՌ մատեն.* № 2762 (Ս· 83), *թ.* 228*ա* «Անանիայի Շիրակացոյ թիւ որչափութեան տանց հին եւ նոր կտակարանաց»: *Գրիչն անհայտ է: Ձեռագրի գրչութիւնը XVIII դարի է:*

19· *Վենետկի մատեն.* № 30, *թ.* 13 «Անանիայի Շիրակունւոյ Համարոդի՝ թիւ որչափութեան տանց հին կտակարանի տնահամարներով: (Համ. Հ· Տաշյանի ցուցակ, էջ 176/5:

20· *Տյուբինգենի մատեն.* № 93, *թ.* 187*ա*—188*ա*. «Zahlenangaben von Ananias von Schirak, u. zwar Angabe der Zahlen der Verse des alten Testaments··· der Verse des neuen Testaments··· der Verse der katholischen Briefe, der Verse der Apostelbriefe». *Գրչութեան ժամանակի մասին ոչինչ հայտնի չէ (Համ. Ֆինկի ցուցակ, էջ 129):*

21· *Տյուբինգենի մատեն.* № 97, *թ.* 117 *բ* «Zwei Auszüge aus den Werken von Anania von Schirak· U· Անանիա Շիրակացո արարեալ է a) Angabe d· Verszahlend der Schriften d· Alten Testaments a) Hebräische Benennungen der Schriften des Alten Testaments· Ձեռագրի գրչութեան մասին տեղեկութիւնները պակասում են: (Համ. Ֆինկի ցուցակի, էջ 151):

22· *Էնֆիաճեանի* № 2: *Մանրամասն տեղեկութիւնները պակասում են: (Համ. Մեսրոպ Եպիսկոպոս Մադիսորոսի ցուցակը):*

23· «Որչափութիւն տանց հին եւ նոր կտակարանց»— *տեքստեր են պարունակում Երուսաղեմի* № № 343, 773, 835, 936 *ձեռագրերը, որոնց մասին պակասում են անհրաժեշտ տեղեկութիւններ (Համ. Մեսրոպ Եպ· Մադիսորոսի ցուցակը):*

24· *Վենետկի* № 307, *էջ* 24*ա* «Անանիայի Շիրակունւոյ Համարոդի թիւք որչափութեան տանց հին եւ նոր կտակարանաց»: *Ընդօրինակել է Դ· Ալիշանը 1825—26 թվերին:*

2· ԹԻՒՔ ՈՐՉԱՓՈՒԹԵԱՆ ՏԱՆՑ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Շիրակացու «Թիւք որչափութեան տանց հին եւ նոր կտակարանաց» աշխատութիւնը հայագիտութեան մէջ հայտնի և հրատարակված տեքստ է: Նա առաջին անգամ հրատարակել է Մեսրոպ Եպ· Մադիսորոսն իր «Աստուածաշնչի հայերեն թարգմանութիւնը» ռուսերեն լեզուով գրած աշխատութեան մեջ1): Սակայն Մեսրոպ Եպիսկոպոսի հրատարակած տեքստի խոթագիրը չունի Շիրակացու անունը, և տեքստը դժգոհ փոփոխութեան է ենթարկված: Համոզված է, հենց այդ է նկատի ունենալով, Մեսրոպ

1) М. Тер-Мовсесян, История перевода библии на армянский язык, СПБ 1902 г., стр. 259—260· *Տեքստը վերնագրած է «Վասն համարոյ հին և նոր կտակարանաց»:*

Եպիփանոսը հրաժարվել է ճանաչել Շիրակացու անունով, չնայած այդ տեքստի բնագիրը Շիրակացուն պատկանելն անկասկած է:

Շիրակացու «Թիւք որչափութեան տանց» այս աշխատությունը լրեն, Շիրակացու անունով հրատարակել է Պետրոս Ֆեհրաթյանը «Հանդէս ամսօրեայ»-ում՝ տեքստի կազակցությամբ տալով արժեքավոր ծանոթագրություններ: Պ. Ֆեհրաթյանի հոդվածը, ուր տեղավորված է Շիրակացու վերև հիշված տեքստը, վերնագրված է. «Անանիայի Շիրակացւոյ անտիպ էջերէն»[1]):

Շիրակացին իր այս աշխատության մեջ, ինչպես երևում է, նպատակ է ունեցել ոչ թե ասեղագործներին ցանկը կազմել, ինչպես ենթադրում են մանավանդ այլ թվաբանական վարժություններին համար որպես օրինակ բերել ասեղագործների թվահամարները: Այս հանգամանքն է նկատի ունենալով մենք նպատակահարմար համարեցինք Շիրակացու այս աշխատության մասին խոսել Շիրակացու չափագիտական աշխատությունների շարքում:

Ամենից առաջ պետք նշել, որ Շիրակացու կազմած հին և նոր կտակարանների այս ցանկը զուգադիպում է 435 Եպիփանոսականների Անտիոքի II ժողովի և Սիմեոն Լոգոթետոսի մշակած կանոններից: Նա, իր դրքերի դասավորման կարգով և տնահամարների թվով մասամբ մոտենում է Աինյան օրինակին, հատկապես Նիկեփորոսի ցանկին, որը հրատարակել է Ցանը:[2]):

Անհրաժեշտ ենք համարում բերել փոքրիկ համեմատություն Նիկեփորոսի և Շիրակացու ցանկերից:—

Նիկեփորոսի օգտագործած ցանկը	Շիրակացու օգտագործած ցանկը
α' Γένεσις στίχ. δτ'	Ծննդոց տունք՝ ՅՅԷ (4307)
γ' Λευιτικόν στίχ. βψ'	Ղեւտացւոց տունք՝ ՍՉ (2700)
δ' Ἀριθμοὶ στίχ. γφλ'	Թուոց տունք՝ ՎՇԼԳ(3533)
ε' Δευτερονόμιον στίχ. γρ'	Աւրինացն տունք՝ ՎՃ՝ (3100)
ϛ' Ἰησοῦς στίχ. βρ'	Յեսուայ որդւոյ Նաւեայ տունք ՍՃ (2100)
ζ' Κριταὶ καὶ Ῥούθ στίχ. βον'	Հռութայ տունք՝ ժ (10)
η' Βασιλειῶν α' καὶ β στίχ. βϛμ'	Թագաւորութեան Ա. տունք. ՍՇ (2500)
(Zahn, Gesch. Neutest. Kanons, էջ 297).	(ՀՍՄՄ Մատեն. № 699 ձեռագիր, Բ. 206 ա):

Նմանվում են՝ Ծննդոց, Ղեւտացոց, Թվոց, Երկրորդ օրինաց և մի քանի այլ դրքերի տների թվահամարները:

Նիկեփորոսը IX դարի հեղինակ է, նա պատրաստվել է եղել 806—815 թթ., ապրել է մեկ դարից ավելի Շիրակացուց հետո, պարզ է, որ Շիրակացին նրանից օգտվել չէր կարող: Ասել՝ թե նա է օգտվել Շիրակացուց, այդ էլ անհավանական է: Մնում է ենթադրել, որ եղել է նախնական մի ցանկ, որից օգտվել է և՛ Շիրակացին և՛ Նիկեփորոսը:

---

1) Ե. Գ. Ֆ. (Պետրոս Ֆեհրաթյան), Անանիա Շիրակացւոյ անտիպ էջերէն (տես «Հանդէս ամսօրեայ» 1908 թ., էջ 20—23):

2) T. Zahn, Geschichte des Neutestamentlichen Kanons II B., Leipzig 1890, էջ 297—301.

Շերակացու այս աշխատութիւնն առանձնահատուկ տեղ ունի մինչեւ այժմ մեզ հայտնի ցանկերի շարքում: Հրատարակիչ Պ. Ֆեհրաթեանն կարեւորութեան նկատել է, որ այդ ցանկը «Եղիական դիւրք մը կ՚ընծայ ցայժմ գտնված նման ցանկերու մէջ»[1]: Հատկապես անհրաժեշտ է նշել, որ Շերակացին չի հետեւել Եվթալին, որի «Նախադրութիւն»-ը մեծ տեղ էր գտել մեզ մոտ դեռեւս V դարում:

Շերակացու հին և նոր կտակարանների այս ցանկը, ամենից առաջ, հետաքրքիր է Հայոց Աստուածաշնչի բացակայութեան վարադոյով: Նաեւ ճշտել մեզ հանդիպում են նաև հունական ոչ ցանկեր (տե՛ս այս մասին Zahn-ի աշխատութիւնը):

Շերակացու ցանկում առաջին անգամ հիշվում է Մակաբայեցոց ո՛չ թե երկու, այլ չորս դիւրք: Ի մէջի այլոց, Մակաբայեցոց չորս դիւրք դոյութիւնն ունենալու մասին մենք հիշատակութեան հանդիպում ենք նաեւ Մխիթար Այրիվանցու մոտ[2]: Աստվածաշնչի մի դիւրքերի վերջում այդպիսի հիշատակութեան հանդիպել է և Գ. Զարբհանեանցը[3]: Այդ վայրերը մեզ հիմք են տալիս ենթադրելու, որ հնագոյն շրջանում հին կտակարանը միանգամայն այլ դասավորութիւն է ունեցել, քան մեզ հասած և հայտնի հին կտակարանի դասավորութիւնն է:

3. ԳՐԱՉԱԿԱՆ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

Շերակացու հին և նոր կտակարանի ցանկի լավագոյն տեքստերից են հանդիսանում ՀՍՍՌ մատեան. № № 699 և 2180 դիւրքերի տեքստերը: Այս դիւրքերի տեքստերն ունին այն առաւելութիւնը, որ պահել են բոլոր թիվերն իրենց նշանագրերով և հնարաւորութիւն են տալիս ճշտել աղաւաղված տեքստերը: Այս տեքստի հիման վրա այժմ հնարաւոր է դիւրհական մի շարք ուղղումներ առաջարկել ոչ միայն Մեսրոպ Մաշտոցի և Ֆեհրաթեանի հրատարակած տեքստերում, այլ և նման ունահամարների այլ ցանկերում, եթե կան այդ կարգի աղաւաղումներ: Աղաւաղումների մեծ մասի պատճառը, ինչպես պարզվում է, բոլոր թիվերի նշանագրերի հետևանքով է: Փորձենք այդ աղաւաղումների մի քանիսի վրա կանգ առնել:—

ա) Անտիոքա երկրորդ ժողովի կանոնում, որը հրատարակվել է Մեսրոպ եպ. Մաշտոցոսի «История перевода библии на армянский язык» աշխատութեան մէջ, կարդում ենք. «Համամեղամայն հնոց կտակարանաց տունք են ՔՃԻԹ»[4]: Խոսքը հին կտակարանների ունահամարների մասին է: Շերակացու ճշտված ունահամարների ցանկից, ինչպես և ունահամարների թվի ընդհանուր դումարից երևում է, որ բերված նախադասութեան մէջ հին կտակարանի ունահամարների թիվն աղաւաղված է, նա պիտի լինի ո՛չ թէ ՔՃԻԹ (9129), այլ՝ ՔՃԻԹ (79129) ՀՍՍՌ մատեան. № 2180, թերթ 573բ): Աղաւաղման պատճառը բյուրաւոր «ի»-ն դիւրհների կողմից չհասկանալու և դուրս թողնելու հետևանքով է:

---

1) Ե. Գ. Ֆ Ամանեա Շերակ. անտիպ էջերն («Հանդ. ամս.» 1908 թ. էջ 82).

2) Մխիթար Այրիվանցի, Ժամանակագրութիւն (տես նրա գրչագիրը մատենադարանում).

3) Գ. Զարբհանեանց, Թարգմանութիւնք, Վենետիկ 1889, էջ 190.

4) М. Т.—Мовсесян, История перевода библии, стр. 225.

բ) Անտիոքաց նուէն ժողովէ տեքստում կարդում ենք. «Այս սահմանք եղան ի ժողովոյն Անտիոքայ: Մինչդամայն նորոյ կտակարանացս ՓՂՂ և համուռ հին և նոր կտակարանաց ՃՓՋի»[1]: Դրչագրում, ինչպես պարզվում է, հին և նոր կտակարանների թիվը եղել է ո՛չ ԲԼ ՃՓՋի, այլ ԹՒՋի: Մատենարանը ենթադրել է, որ այդ թիվն աղավաղված է, ուստի անհրաժեշտ է համարել ինքն ուղղել ՃՓՋի ձևով՝ ներքին լուսանցքում, տալով հետևյալ ծանոթությունները: Текст суммы испорчен и напечатан ԲԼ չէ, явное искажение ԺԼ չէ, где переписчики легко могли ԺԼ сделать ԲԼ»[2]:

Մեսրոպ եպ–ի կատարած այս ուղղումը բացարձակ սխալ է: Նա, ըստ երևույթին, ծանոթ չլինելով բյուրավոր թվերի հետ, ենթադրել է, որ թվի սկզբում Թ թվանշան լինել չի կարող:

Վերև բերված տեքստում ՓՂՂ թվականի սկզբից բաց է մնացել Ա՛, իսկ վերջից՝ Ա: Լամպրոնի բոլոր ցուցակներն ունեն Ա՛ՓՂՂԱ: Վերջին Ա՛ՓՂՂԱ թիվը ճիշտ է, որովհետև մնացել թվահամարները հաշվելիս՝ այդ դեպքն է առաջվում: Մյուս թիվը, նոր և հին կտակարանների ընդհանուր թվահամարը, լամպրոնի ցուցակներն ունեն ԹՒՋի (97720), այսինքն՝ ճիշտ այն թիվը, ինչ որ Մատենարանը համարում է աղավաղված «Явное искажение» ԹՒՋի, միայն ընդունելով Թ–ից հետո ոչ ԲԼ «Լ» է, այլ Ի: Որ ԹՒՋի թիվը ճիշտ է, դրանում կարելի է համոզվել նոր և հին կտակարանի առանձնացրած թվի դեպքով: Նոր կտակարանի առանձնացրած թվի դեպքը, ինչպես վերևում տեսանք, Լ՛ՔՃԻԹ (=79129) է, իսկ նոր կտակարանները՝ Ա՛ՓՂՂԱ (=18591), 79129-ը դեպքած 18591-ի հավասար է 97720, այսինքն՝ ԹՒՋի:

գ) «Վասն համարոյ հին և նոր կտակարանաց» տեքստում, որը հրատարակված է Մատենարանի վերև հիշված աշխատության մեջ, հին կտակարանի առանձնացրած թվի դեպքով վերաբերյալ ասված է «Միահամուռ առնուք ՔՃԻԹ»[3]: Այդ թիվը, ինչպես տեսանք վերևում, պիտի ուղղել՝ «Միահամուռ առնուք Լ՛ՔՃԻԹ» ձևով:

դ) «Գրիգորի Եսայեծի որ այսպես չարահիւսեալ է զհին եւ զնոր կտակարանս» տեքստում, որը զարմանալ հրատարակել է Մեսրոպ եպիսկոպոս Մատենարանը,

Պիտի լինի	Կարդում ենք
Հարց. Քանի՞ առն է աստուածաշունչ գիրք ամենայն Պատասխանի. Հին կտակարանքն ամենայն Լ՛ՔՃԻԹ, և նոր կտակարանքն ամենայն առնուք Ա՛ՓՂՂԱ: Միահամուռ հին և նոր կտակարանքն՝ ԹՒՋի առն է»:	«Հրց. քանի առն է ածաշունչ գիրք ամ. Պաս. Հին կտակարանքն ամենայն ՔՃԻԹ, և նոր կտակարանքն ամէն առնուք ՓՂՂԱ: Միահամուռ հին և նոր կտակարանք ՃՓՋի առն է»:[4])

[1]) М. Т. Мовсесян, История перевода библии, էջ 255.
[2]) Նույն տեղը, էջ 260.
[3]) Նույնը, էջ 263.

ՀՍՍՌ մատեն. № № 2180 և 699 ձեռագրի «Թիւք որչափութեան առնց հին եւ նոր կտակարանաց» տեքստի հիման վրա հնարավոր է Ֆեհրաթյանի տեքստում առաջարկել մի քանի վոքրիկ ուղղումներ:

Ֆեհրաթյանի հրատարակած տեքստն ունի	Պետի լինի
«Ցեսայեա տունք՝ Վ Պ»:	«Ցեսայեայ տունք՝ Վ Պ»:
«Յոբա տունք՝ Թ Ո»:	Յովբայ տունք՝ Զ Ի»:
«Տուբիթա տունք՝ Ո Զ Մ»:	«Տուբիթա տունք՝ Զ Մ»:
«Համանգամայն հնոց կտակարանաց տունք՝ Է Ք Ճ»:	«Համանգամայն հնոց կտակարանացն տունք՝ Է Ճ Ի Թ»:
(Տես «Հանդէս ամսօրեայ», 1908, էջ 21).	(ՀՍՍՌ Մատեն. № 699 ձեռագրի տեքստը):

Ընդհանուր տների թվահամարները դասարից երևում է, որ երկրորդի տեքստն ավելի հարազատ է և նախնական է հանդիսանում:

Անչափ շատ են Մ. Եպ. Մադիստրոսի հրատարակած տեքստի սխալները: Գրչագրերի և Ֆեհրաթյանի հրատարակած տեքստերի՝ Մադիստոսի հրատարակած տեքստի հետ կատարած համեմատությունից պարզվում է, որ Մադիստրոսի հրատարակած տեքստը սխալաչատ և անկոյտ կազմված մի տեքստ է: Բերենք մի քանի օրինակներ՝

Մոգիստրոսի հրատ. տեքստում: (էջ 259—260)	Դրչագրերում և Ֆեհրաթյանի հրատարակած տեքստերում:
«Թիւքն՝ Վ Զ Լ Դ»:	«Թուոց տունք են Վ Շ Լ Դ»
«Առաջին թագաւորքն Ս Զ»:	«Թագաւորութեան Ա. տունք՝ Մ Շ»
«Երրորդն՝ Մ Ն»	«Թագաւորութեան Գ տունք՝ Մ Շ»

Առաջին Մակաբայեցւոց Ս Զ Ի Ե Մակաբայեցւոց Ա. տունք՝ Մ Շ Ի Ե «Իմաստասիրութիւն Սողոմոնի» տունը տեղափոխված է Հոբից հետո:

«Երկրորդն [Եզրի՝] Մ Պ»:	«Երկրորդ Եզրի տունք՝ Ռ Պ»:
«Յովհաննու առաջին Մ Լ»:	Յովհաննու Ա. Տունք՝ Մ Կ»:
«Հռոմայեցւոյն՝ Զ Մ Բ»	«Հռոմայեցւոց տունք՝ Զ Մ»:
«Եփես. Յ Մ Բ»:	«Եփեսացւոց տունք՝ Յ Ժ Բ»:
«Տիտոս Ղ Դ»:	«Տիտոսի տունք Ղ Զ»

Մադիստրոսի հրատարակած տեքստում Հովհաննու Հայտնության վերաբերող տողը բացակայում է: Շերբակացու նախնական բնագրում, ինչպես տեսանք վերևում, բերվում է Հովհաննու Հայտնության վերնագիրն առանց հիշելու տնահամարների թիվը, իսկ Մեսրոպ եպիսկոպոսի բերած տեքստում այդ գլուխն ամբողջովին դուրս է նետված: Պարզ է, որ նախնական տեքստում այդ եղել է, իսկ հետագա ընդօրինակողները այդ գլուխը դուրս են հանել:

VI. ՏՈՄԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ԳՐՉԱԳՐԵՐԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱՆ

ա) Պատճէն տոմարի

1. *ՀՍՍՌ մատենադ.* № 4298, թ. 360 «Պատճէն տումարի ըստ հայերէն թուականի, զոր կարգեալ է Անանիա Շիրակացին»: *Ընդօրինակել է Մարտիրոս պրիչը*: *Ձեռագրի պրչութիւնը* XVI *դարի է*:

2. *ՀՍՍՌ մատեն.* № 6731 (*եր.* 112) *թ.* 166 «Պատճէն տումարի ըստ հայերէն թուականի, զոր կարգեալ է Անանիայի Շիրակունւոյ վարդապետէն.— *Տեա զէրորդ զկարմրագրերդ...*»: *Ընդօրինակել է Գրիգոր Տամաժիրչիկն Ի-լով քաղաքում* (*Լենհասատանում*), 1614 *թվին*:

3. *ՀՍՍՌ մատեն.* № 1100 (*Կ.* 1112), *թ.* 227*ա* «Պատճէն տումարի ըստ հայերէն թուականի, զոր կարգեալ է Անանիայի Շիրակացոյ վարդապետի:— *Զկրկնակ ամսոյն այսպէս ասա...*»: *Ձեռագիրն ընդօրինակված է* 1726 *թվին, Երուսաղէմում*:

4. *ՀՍՍՌ մատեն.* № 2036 (*Կ.* 1974), *թ.* 1*բ* «Պատճէն տումարի ըստ հայերէն թուականի, զոր կարգեալ է Անանիայի Շիրակացոյ վարդապետի:— *Զկրկնակ ամսոցն այսպէս ասա...*»: *Հիշատակարան չունի*: *Ձեռագրի գրչութիւնը* XVII *դարի է*:

5. *ՀՍՍՌ մատեն.* № 2009 (*Կ.* 1996), *թ.* 174*ա* «Պատճէն տումարի ըստ հայերէն թուականի, զոր կարգեալ է Անանիայի Շիրակացի վարդապետի:— *Զկրկնակ ամսոցն այսպէս ասա...*»: *Ընդօրինակել է Նիկողայոս սրբազան Լիմ անապատում*, 1751—1752 *թ. թ. ընթացքում*:

6. *ՀՍՍՌ մատեն.* № 3838 (*Գ.* 1294), *թ.* 1*ա* «Պատճէն տումարին հայոց թուականի, զոր արարեալ է Անանիա Շիրակացւոյ վարդապետի գեղեցիկ եւ զարմանալի: *Կրկնակ ամսոյն այսպէս ասա...*»: *Ընդօրինակել է Սարգիս քահանան*, 1803 *թվին*:

7. *Փարիզի ազգային մատեն.* №. 252 (*Տե՛ս Մակլերի ցուցակ, էջ* 132):

բ) Հայտնութեան ճառը

1. *ՀՍՍՌ մատեն.* №. 2679 (*Գ.* 102), *թ.* 13*բ*. «Անանիայի Շիրակացւոյ Համարդի ասացեալ ի յայտնութիւն տեառն եւ փրկչին մերոյ: *Բայում աշխատութիւնն գործատնութիւնս...*» *Գրչագիրն ընդօրինակված է* 971 *թվին Ղուկաս գրչի ձեռքով*: *Գրչութեան վայրն անհայտ է*: *Գրչագրի մա-*

սին խոսել են մի շարք բանասերներ (Հ. Տաշյան, Գ. Տ.— Մկրտչյան, պրոֆ. Մալխասյան, և ուրիշները)։

2. ՀՄՄՌ մատեն. № 579 (կ. 564), թ. 276ա. «Անանիայի Շիրակացւոյ Համարոյղի ասացեալ յայտնութեան տեառն։ Բազում աչխատութիւն դործառնութիւնս մերոյ վասն արբոյն տուելոյ...»։ Գրչադիրն ընդօրինակված է 1279 թվին, Հովհաննես քահանայի ձեռքով։

3. ՀՄՄՌ մատենադարանի № 2001 (կ. 1983), թ. 186բ «Անանիայի Շիրակացւոյ Համարոյղի ասացեալ ի յայտնութեան տեառն։ Բազում աչխատութիւն դործառնութեանս...»։ Գրչադիրն ընդօրինակված է 1373 թվին Աղթամարում։ Գրիչն անհայտ է։

4. Վենետիկի մատեն. Ճասընտիր ԺԹ դարու. № 352 (նոր վերջերս դրված համարը 218), որից և հրատարակել է պրոֆ. Ր. Պատկանյանը։ թ. 172ա. «Անանիայի Շրակացւոյ Համարոյղի ասացեալ յայտնութեան տեառն»։ Նա ընդօրինակված է Սեթյանի ձեռքով ՀՄՄՌ մատեն. № 2679 դրչագրից, որն այն ժամանակ կարապետ վարդապետի սեփականությունն է հանդիսացել։ (Համ. Բ. Մարգիսյանի ցուցակ, II հ., էջ 278)։

ՀՄՄՌ մատեն. № 6228, թ. 72ա. «Անանիայի Շիրակունւոյ Համարոյղի ասացեալ ի յայտնութեան տեառն եւ փրկչին մերոյ։ Բազում դործառնութիւնս մերոյ...»։ Գրչագիրն ունի 19-րդ դարի դրչություն։ Արտագրված է ՀՄՄՌ մատեն. 2679 դրչագրից։

գ) Ջատկի ճառը

1. ՀՄՄՌ մատենադարանի № 2679 (Գ. 102), թ. 19բ. «Անանիայի Շիրակացւոյ Համարոյղի ասացեալ ի գատիկն տեառն։ Ջառաւն սրբոց պատիկն ուսաք ի Մովսէսէ...»։ Գրչագիրն ընդօրինակված է 917 թվին, Ղուկաս գրչի ձեռքով։

2. Վենետիկի Ճասընտիր ԺԹ դարու. № 352 (նոր համարը 218)։ թ. 32· «Անանիայի Շիրակացւոյ Համարոյղի ասացեալ ի գատիկն տեառն»։ Այս ասելքսից է կատարվել պրոֆ. Ր. Պատկանյանի հրատարակությունը։ Ընդօրինակության մայրը ՀՄՄՌ մատեն. № 2679 դրչագիրն է հանդիսացել։ Ընդօրինակողն է Սեթյանը։ (Համ. Բ. Մարգիսյանի ցուցակը, էջ 278—279)։

3. ՀՄՄՌ մատեն. № 6228։ Ընդօրինակված է № 2679 դրչագրից։ Գրությունը XIX դարի է։

2. ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՈՄԱՐԻ ԵՎ ՇԼՔ ԱՄՅԱ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՄԱՍԻՆ

Մլքնադարյան դրեթե բոլոր հայ պատմագրիչները և մատենագրիչները, սկսած Հովհաննես Դրասխանակերտցուց, 7-րդ դարի պատմական դեպքերի մասին խոսելիս հղչում են Աչատաստա կաթողիկոսի պատմերով Շիրակացու կողմից հայոց անչարժ տոմար կազմելու մասին։ Այսպես օրինակ, Դրասխանակերտցին պատմում է. «Իսկ Աչատաստայ Հայրապետին հոդացեալ վասն հայկականս ոսմարի, դի քեզեւս անչարժ դնս ըստ այլոց ազգաց տարեթուացէ յօրինել. դի մինչ անչարժ լինիցին ամանք տարեկոնաց

կամ յեղափոխ յեղանակը ժամանակաց: Վասն որոյ եւ առ ինքն դԱնանիա Անեցի կոչեալ՝ որ բանիբուն այնմ արուեստի էր հմուտ, հրամայէ նմա Զաստեղծագործել զխնդրելին իւր: Իսկ նորա ջան ի վերայ եդեալ եւ լսատ բոլոր աղջաց պատմանէ՝ անշուշտ յօրինեալ զկարդ հայկական տոմարի. զի բարեձեւագունից ոմանց եւ զմեզ կշռադատեալ՝ մի կարօտացուք կալ ի գուշակութիւն Հռոմայեցւոց: Եւ մինչդեռ խորհէր մեծն Անաստաս ժողովոք եպիսկոպոսաց զեղեալն հաստատել՝ վախճան կենաց նմա ժամանէր, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս վեց»[1]:

Դրասխանակերացու այս տեղեկութիւնն այս կամ այն վարկանոով կրկնում են՝ Կողեսը[2], Սամուել Անեցին[3], Մխիթար Այրիվանեցին[4], Կիրակոս Գանձակեցին[5], Վարդան Արեւելցին[6], և ուրիշները:

Ասողիկի[7] տեղեկութիւնից երեւում է, որ Շիրակացին դրել է մի այլ աշխատութիւն եւս, ուր ամփոփված է եղել հայոց տոմարը: Ասողիկն այդ մասին հայտնում է. «Իսկ Անաստասեայ խորհեալ Հայաստանեայցս կարգել տոմար անշարժ ըստ այլոց ազգաց, և հրամայէ Անանիայի Շիրակացւոյ կարգել զԲրոնիկոն հրաշագան, յորում զտոմար մեր կարգեաց անշարժ: Եւ Անաստասեայ խորհեալ ժողովով եւ եպիսկոպոսօք հաստատել զԲրոնիկոնն՝ վախճանի, կեցեալ ամս վեց»[8]:

3. ԵՆԹԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՏՈՄԱՐԻ ԵՒ ՇԼՒ ԱՄՍՅԱ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՄԱՍԻՆ

Ասողիկի այս տեղեկութեան հիման վրա բանասերների մեծամասնութիւնը ենթադրել է, որ այստեղ խոսքը Շիրակացու կազմած ժամանակագրութեան մասին է:—Շիրակացին իր Բրոնիկոնի մէջ ցանկացել է տոմարի մէջ հատաբած հաշիւներն ամրացնել պատմական փաստերով:

Բացի Ասողիկի վերեւ բերված տեղեկութիւնից, Շիրակացին ինքը եւս իր Զատկի ճառում հիշում է քրոնիկոնի տոմի մի աշխատութիւն կազմելու մասին. «...եւ քանզի չեն տեղեակ բազումք թուոց,—գրում է Շիրակացին—մանաւանդ չինականք. եւ վարդապետութիւն Տեառն մերոյ տարածեցաւ կալաւ զաշխարհ ամենայն: Վասն այնորիկ հինգ հարիւր երեսուն եւ երկուց ամաց մնանդամայն համարեաց ըստ թուոց Ադեքսանդրացւոցն ի ԳԻԸ ամէն մինչեւ յամն ՌՃԿ, այնուհետեւ որոց կացցեն յաշխարհի, կազմեցի եւ Անանիա որդի Ցովհաննիսի Շիրակացւոյ եւ զրոյմեցի տառաձինն զքառն մի մի ամ ՇԼՒ, ԻԸ կանոն, որովք զամենայն համարն բոլանդակեցի ՇԼՒ կարդ, եւ զատի մեկնեցի զմի կարդ առ մի մի տարի»[9]:

Շիրակացու այս վերջին տեղեկութեան հիման վրա պրոֆ. Գրիգոր

---

1) Ցովհաննէս Դրասխանակերացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս 1912, էջ 92:
2) Ցովհաննէս Կողեսն, Մեկնութիւն տոմարի, ՀՍՍՌ մատեն. № 1999 թ., 17բ:
3) Սամուել Անեցի, Ժամանակագրութիւն (ՀՍՍՌ մատեն. № 5619, թ. 78 բ.):
4) Մխիթար Այրիվանեցւոյ, Պատմութիւն Հայոց, Մոսկվա 1860, էջ 50:
5) Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 59:
6) Վարդան Մեծ, Պատմութիւն տիեզերական:
7) Ստեփաննոս Ասողիկ, Պատմութիւն Տիեզերական, II տպ., ՍՊԲ 1885, էջ 99:
8) Ստեփաննոս Ասողիկ, էջ 99:
9) Անանիա Շիրակացւոյ Համարոյն ասացեալ ի գատիկն տեառն (տես «Մենագրդք քանից», էջ 26).

Ֆալաքյանցը համոզված պնդում է, որ այստեղ Շերակացու խոսքը ժամանակագրության մասին է, որը դռնված չէ. «Զատկի ճառից ակներև է,— գրում է Ֆալաքյանցը,— որ հեղինակը գրել է ժամանակագրական իր կանոն «որով զամենայն համարն բովանդակեցի ՇԼԲ կարդ և զաղի մեկնեցի զմի մի կարգ առ մի մի տարի» մի աշխատություն, որ մինչև այժմ, դեռ դռնված չէ»[1]:

Բանասեր Բ. Սարգսյանն իր հրատարակած «Անանուն ժամանակագրութիւն յօրինեալ խմբ. յէ դարու» առաջաբանում ավելի է խորացել Ֆալաքյանցի հայտնած եղրակացության մեջ և պնդել, որ 7-րդ դարի իր հրատարակած հենց ժամանակագրության մասին են Ասողիկի և իրեն, Շերակացու տեղեկությունները[2]:

Բ. Սարգսյանին սակայն տարակուսանքի մեջ է ձգել մի փաստ— Շերակացին իր Քրոնիկոնը կազմել է Անաստաս կաթողիկոսի օրոք և նրա հրամանով 667—669 թ. թ.: Սակինչ ժամանակագրությունը վերջանում է 685 թվականի դեպքերի նկարագրությամբ. ի՞նչպես կարող էր այդ պատահել: Նկատվող այս հակասությունը սակայն նա փորձել է մեղմել, հնարավոր համարելով Շերակացու՝ Անաստասի մահից հետո ժամանակագրության վերջում պատմական նոր փաստեր ավելացնելը[3]:

Մեր կարծիքով, նախ ճիշտ չէ այն բանաձևերների կարծիքը, որոնք խոսելով Ասողիկի և Շերակացու այս տեղեկությունների մասին, «Քրոնիկոն» բառը հասկանում են միայն ժամանակագրություն, հունական χρονικός-ը, մոռանալով, որ հնում «Քրոնիկոն» է կոչվել նաև ժամանակագրությունների և տոմարական աշխատությունների տեքստերի մեջ հաճախ հանդիպող աղյուսակները: Ավելի քան անհամոզեցուցիչ է Շերակացու Զատկի ճառի վերջում բերված տեղեկության հիման վրա «Քրոնիկոն»-ը ժամանակագրություն ենթադրելը: Շերակացու խոսքը, մեր կարծիքով, պարզապես իր կազմած ՇԼԲ աղյուսակին է վերաբերում: Նա կազմած է եղել 532 ամյա շրջանի համար աղյուսակ՝ 532 առանձին առանձին տարիների համար: Շերակացու խոսքը՝ «Դրոշմեցի առանձին զընաւ մի մի առ», մեր կարծիքով, հենց դրան է վերաբերում:

Շերակացու ՇԼԲ աղյուսակ կազմելու փաստը միանգամայն տրամաբանական է, եթե ի նկատի ունենանք, որ Շերակացին պատվեր է ստացել Անաստաս կաթողիկոսից կազմել տոմար և այդ տոմարը պիտի հասկանալի լիներ բոլորին. նա ուղեցույց պիտի հանդիսանար՝ դյուրացնելու տվյալ տարվա զատիկը, բարեկենդանն և տոմարական կարևոր հաշիվները: Իսկ այդ հնարավոր էր միայն նման աղյուսակով:

Որ Շերակացին իր տոմարը կազմելիս պիտի առաջնորդվեր այդ սկզբունքով և պիտի հաշվի առներ լայն շրջանների պահանջը, այդ, ի միջի այլոց, երևում է և իր հետևյալ խոսքերից. «Եւ քանզի չեն տեղեակ բազումք թուոց, մանաւանդ չինականք... վասն այնօրիկ հինգ հարիւր երեսուն եւ երկուց ամաց... կազմեցի»[4]:

---

1) Գ. Ֆալաքեանց, «Հայոց թվականի հաստատության ժամանակի առթիվ» (տես «Հանդէս ամսօրեայ» 1904, էջ 157).

2) Անանուն ժամանակագրութիւն յօրինեալ խմբ. յէ դարու, էջ ԺԲ:

3) Նույնը, էջ ԺԵ—ԺԸ.

4) Ան. Շերակունեաց Մնացորդք բանից, էջ 26.

Շերակացու այս խոսքերը մեզ հիմք են տալիս հաստատապես ենթադրելու, որ Շերակացին է կոմիտասը և իրեն, Շերակացու վերջին բերված տեղեկությունները ո՛չ թե ժամանակագրության են վերաբերում, այլ ՇԼՒ աղյուսակին: Շերակացու ՇԼՒ աղյուսակը կազմված է ելնել 532 տարիների չրջանից համաձայն, ակնհայտ Աղեքսանդրյան ՊԻՐ (828) ամից մինչև ՌՃԿ (1360) ամը, որի մասին և ինքը վկայում է:

Շերակացու Զատիկի ճառի վերջում բերված տեղեկության մէջ մեզ անհասկանալի է նրա հաղորդած տեղեկությունը՝ «ԻՀ կանոն»-ների վերաբերյալ: Ի՞նչ գան և ուխ կանոններից մասին է խոսքը: Կարելի է դա բրկու ձևով հասկանալ—քանի և ուխերկյակը և յուրաքանչյուր տարվա առջև դնված աղյուսակների քանակը: Մեզ հավանական է թվում երկրորդը: Անգլերեն երկուհարյուր ամյա չրջանը, ըստ «Մատենագրության խմբագրական վանդ գատկաց» աշխատության, ունեցել է 17 կանոն, ուրեմն՝ այսպես խոսքը քանուխերակի մասին չի կարող լինել, այլ աղյուսակների: ՀՄՄՌ մատեն. ղրչագրերում հանդիպ են պատահում ՇԼՒ աղյուսակի տեքստեր, որոնք ունեն տարբեր թվով աղյուսակներ: Օրինակ, ՀՄՄՌ մատեն. № 1973 ղրչագրի ՇԼՒ աղյուսակն ունի 7 «կանոն»:—1) Թվական, 2) օր հայտնության, 3) առաջ. բարեկենդան, 4) բուն բարեկենդան, 5) լրումն, 6) լրման օրը, 7) զատիկը, 8) պենտեկոստեն, 9) վարդավառը (տե՛ս թերթ 94—107բ): Նույն մատեն. № 6731 ղրչագրի պարզատոմարն ունի 15 աղյուսակ (տե՛ս թ. 27բ—299ա): Այսպես օրինակ՝

Թուական	Ամ. յայտ.	Առաջաւոր	Ջանէք	Բուն բարեկ.	Ջանէք	Լրումն	Ջանէք	Ամ. լրմ.	Զատիկ	Ջանէք	Պենտեկ.	Ջանէք	Վարդավառ	Ջանէք
ա	բ	փետ	թ	փետ	լէ	մարտ	ժգ	ա	մարտ	ի	յունիս	ը	յուլ	լէ
բ	գ	յունվ	լէ	փետ	ժէ	մարտ	ը	և	մարտ	և	մայ	լգ	յուլ	ժբ
գ	դ	յունվ	ժէ	փետ	է	մարտ	լը	բ	մարտ	լը	մայ	ժգ	յուլ	դ

Այս ձևով չարունակվում է մինչև ՇԼՒ թվականը:

ՀՄՄՌ մատեն. № 1999 ղրչագրի ՇԼՒ աղյուսակն ունի հետևյալ «կանոն»-ները՝ 1) Թուական, 2) վերափիր, 3) էներեակ, 4) տանուտէր, 5) ուբ, 6) առաջաւոր, 7) բուն բարեկենդան, 8) միջոց, 9) լրմունք, 10) զատիկ, 11) պենտեկոստեն, 12) վարդավառ և 13) միջոց:

4. ՇԼՒ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՊԱՏՄՈՒԻԿԸ

ՀՄՄՌ մատեն. № 2679 (Գևորգյան № 102) նշանավոր ղրչագիրը մեզ հնարավորություն է տալիս Շերակացու տոմարի մասին խոսել ավելի կոնկրետ ձևով: Այդ ղրչագրում պահվել է հնագույն ՇԼՒ-ի աղյուսակի վերջին պատառիկը, որի Շերակացուն պատկանելը, մեր կարծիքով, անհրաժեշտ է:

ՀՄՄՌ մատեն. Գևոր. № 102 ղրչագրի առաջին մասը, ինչպես հայտնի է, ընդօրինակված է 971 թվին և պարունակում է ամբողջությամբ Շերա-

կացու աշխատությունները: Այդ մասին արդեն մանրամասն խոսել է Գ. Տ.-Մկրտչյանը՝ «Ցաղաց ամպոց եւ նշանաց»-ի առթիվ գրած իր նեռածանումը[1]): Շիրակացու ահա այդ աշխատություններին չարքումն է վերև հիշված պատառիկը, որը բաղկացած է երկու թերթից: Դրչագրի պատահական հնությունը (971 թ.), պատառիկի Շիրակացու աշխատություններին չարքում ընդօրինակված լինելու փաստը և տեքստի բովանդակությունը, հիմք չեն տալիս մեզ կասկածելու պատառիկի Շիրակացու աշխատությունը լինելու խնդրում: Հովհաննես Սարկավագից առաջ մեկի հեղինակը, որը զբաղվել է հայկական տոմարով և ակտիվ մասնակցել նրա բարեփոխության, հանդիսացել է Շիրակացին, ուստի և այս պատառիկի տեքստը Շիրակացուն պատկանելը, վերև բերված վկայաբերի հիման վրա, անհիմնական է դառնում: Շիրակացու անունը հիշված է այդ դրչագրի պարունակած Շիրակացու աշխատության բոլորի վերնագրում: Հավանական է այդպիսի վերնագիրը եղել է նաև Շ.Ի. ազյուսակի սկզբում, բայց նա անդամահատվել է՝ թերթերի թափվելու պատճառով: Այժմ ազյուսակից մնացել է ՆՉԴ (484) թվականից հետո եղող տեքստը մինչև վերջ:

Ազյուսակի յուրաքանչյուր թվական ունի ճիշտ 28 ազյուսակ, այսինքն այնքան, ինչքան հիշված է այդ Շիրակացու մոտ: Բացի և ութ այդ ազյուսակներից 14-ը հայոցն է, 14-ը հռոմեացիներինը:

Կասկած չի կարող լինել, որ բերված պատառիկի տեքստը Շ.Ի. ազյուսակ է: Նա բաղկացած է եղել 28 կոնոններից: Տեքստը ընդգրկել է 582 ամյա շրջան: Վերջացել է 550 թվականով: Սկսված պիտի լինի 18 թվին: Շիրակացին, հավանական է, առաջնորդվել է Աղեքսանդրիայի տոմարագետների կարգած տոմարից, որոնք Անգրեասի երկուհարյուրամյա շրջանը վերջանալուց հետո մեր ներկա թվականության 19-ին կազմեցին 532 ամյա շրջանը: Այդ մասին, է մեջը այլոց, ՀՍՄՌ մատեն. № 1999 դրչագրում հետևյալն է ասված. «Ցորժամ անցեալ էր երկերիւր ամ Անդրէասի տումարին, յետ ժ ամի, որպէս կարծեն ոմանք՝ եթէ սխալ եղեն, ժողովեցան յԱղեքսանդրիայ մայրաքաղաք ուսումնասիրեաց, է ԺԹ թուականին կարգեցին դարձիկ չորեքտասան յամանին Շէ ամաց, ոչ աղարտելով պաղնջուց դրօշմեալն» (ՀՍՄՌ մատեն. № 1999, թ. 20ա):

Անհասկանալի է միայն Աղեքսանդրացոց թվականի հիշատակությունը Շիրակացու Ջատկի ճառի վերջում. «Աղեքսանդրացւոյն է ՊԻԸ ամէն մինչեւ յամն ՌՃԿ»: Աղեքսանդրացու թվականը, ըստ ՀՍՄՌ մատեն. № 1999 դրչագրում եղած տոմարի տեղեկության, 309 թիվ պիտու է մեր ներկա թվականից. «ՃԱղեքսանդրէ մինչեւ ծնունդն Քրիստոսի են ամք ՅԹ»), ուրեմն, ըստ հայկական թվականի, պիտու է նա 860: Այս թվականը չի համապատասխանում վերև նշված Շիրակացու Աղեքսանդրյան թվականին:

Մեր մատենադարանի № 1973 դրչագրի տոմարում Աղեքսանդրյան տոմարի վերաբերյալ կա այսպիսի մի տեղեկություն. «Կայ հանապազ, ՊԻԸ, եւ դեռ մեծ թուականն ի վերայ ած. եւ այն է թուական Աղեքսանդրի» (թերթ 57ա): Պիտի ենթադրել, որ կամ Շիրակացու այստեղ բերածն Աղեքսանդրյան թվականը չէ և կամ թէ Շիրակացու ազյուսակի վերջում փոփոխություններ են կատարված: Հավանական է վերջինս:

---

1) Տես Գ. Տ.-Մկրտչյանի «Ցաղաց ամպոց եւ նշանաց» աշխատությունը, տպատպությունը «Արարատ»-ից:

5. ՀԱՅՈՑ ԹՎԱԿԱՆԻ ԿԱՊԸ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՇԼՔ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՀԵՏ

Մեր նպատակից դուրս է այստեղ խոսել հայոց թվականի սկզբնավորության մասին, բայց Շիրակացու ՇԼԲ աղյուսակի կապակցությամբ հնարավոր ենք համարում ենթադրել, որ հնագույն ՇԼԲ աղյուսակները, որոնց թվում և Շիրակացու ՇԼԲ աղյուսակը, պիտի սկսած լինէին 552 թվականից և հայոց թվականի սկիզբը, որը կապված չէ ոչ մի նշանավոր քաղաքական իրադարձության հետ, կապված պիտի լինի Շիրակացու ՇԼԲ աղյուսակի հետ: Այսպիսի եզրակացության հանդելու համար մեզ հիմք է տալիս կողմնակի հետևյալ տեղեկությունը. «Արդ վասն զի յորոց ամսոյ յի. հանդիպեցաւ դնել զդիւր Թուականութեան հայոց աղբիս ի ձեռն Անանիայի Շիրակացւոյ ի ժիւրդ ամի աթոռակալութեան տեառն Յովհաննէսի հայոց կաթողիկոսի, որ ի Թիւ հայբրպեսացն ի սրբոյն Գրիգորէ. եւ ի ե ամէն Յուստինէանոսի կայսեր. ի հիմնարկութեան մեծ եկեղեցւոյն սրբոյն Սոփեայ. եւ ի իւ ամէն Խոսրովու պարսից արքայի»[1]: Ի՞նչ «Թվականության դրի» մասին է վերաբերում կողմնակի խոսքը, որը սկսվել է Հուստինիանոսի ԻԵ-րորդ տարում (552 թվականին): Կողմնակի խոսքը, մեր կարծիքով, Շիրակացու ՇԼԲ աղյուսակի մասին է, իսկ «Դիւր Թուականութեան Հայոց»— հայոց թվականի՝ վեր ածված ՇԼԲ աղյուսակների:

Շիրակացու ՇԼԲ աղյուսակը հայ եկեղեցական տոները կարգավորելու և նրանով առաջնորդվելու տեսակետից ուներ հսկայական նշանակություն: Եկեղեցական արարողություններին, հատկապես Զատկի ճիշտ ժամանակը որոշելու հարցում, նա հանդիսանում էր մեկ ղեկցույցը: Աղյուսակի թվականները պարզ է, որ չէին կարող ոչ քաղաքագիտություն չատանալ և հետագայում չհարվել պատմական փաստերի հետ: Շիրակացու աղյուսակի սկիզբը, կարծում ենք, պիտի և եղած լինի հայոց թվականի սկիզբը:

Շիրակացու տոմարը, ավելի ճիշտ՝ աղյուսակը, չնայած հայոց եկեղեցական ժողովի կողմից պաշտոնապես չի ընդունվել, սակայն նա գործածության մեջ է դրվել հայ գրականության մեջ: Այդ մասին են վկայում 12—13-րդ դարերի մատենագիրների որոշ կցկտուր տեղեկություններ: Շիրակացու աղյուսակը վերջնականուց հետո սկսում են տոները խոսնովել, ուսուն և անհրաժեշտ է լինում մեկ տարի ուշացումով կազմել նոր աղյուսակ: Այդ աշխատանքն իր վրայ է վերցնում արդեն Հովհաննես քահանան (Սարկավագը):

6. ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՏԿԻ ՃԱՌԵՐԸ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՏՈՄԱՐԻ ՄԱՍԵՐՆ ԵՆ

Աղյուսակից հետո Շիրակացին չարադրել է տոմարը: Այդ պարզ երևում է Զատկի ճառում՝ իրեն Շիրակացու հետևյալ պահարկից. «Յայտնութիւն ըստ Հայոց փոխոխմամբ է ըստ չորից չորից ամաց. եւ եթէ զիա՞րդ գիտելի է, եւ կամ ընդէ՞ր ոչ առկայացեալ ըստ այլոց աղգաց, յիւրում տեղւոջ պատմեցից ըստ կարգի տոմարիս»[2]:

Շիրակացու այս հիշատակություններից երևում է, որ Հայտնության և

1) *Մեկնութիւն տոմարի, զոր արարեալ է Յովհաննէսի վարդապետի, որ մականուանէին Կաղեղն (տես ՀՍՍՌ մատեն. № 1999, թ. 67բ):*
2) *Անանիայի Շիրակացւոյ Մնացորդք բանից, էջ 14:*

Շիրակացու Ջաուկի ճառերը[1]) նրա տոմարի մասերից են: Շիրակացու աղյուսակների մեջ կարևոր են նրա հայտնության և զատկի աղյուսակները, որոնց համար անհրաժեշտ էր, որ Շիրակացին տեսական հիմնավորում տար: Եվ ահա Շիրակացին ձեռնարկում է մի ընդարձակ աշխատանք— դրում է հայտնության և զատկի իր ներկա ճառերը: Նա աշխատում է բերել աստվածաշնչից և եկեղեցական հեղինակավոր դրույնելից քաղվածքներ և ցույց տալ, որ հայկական եկեղեցին հայտնության և զատկի տոները որոշելիս ավելի ճիշտ տեսակետի վրա է կանգնած, քան այդ քաղկեդոնական եկեղեցին է:

Ջաուկի ճառում Շիրակացին տալիս է արժեքավոր տեղեկություններ տոմարի պատմության մասին: Այդ տեղեկություններից հետազոտում օգտվում են միջնադարյան հայ տոմարագետները: Որոշ ձեռագրերում տոմարի պատմության այդ մասը հանդիպում է մեզ անդամահատված ձևով «Ճաղատս Քէ յումմէ եղան տումարք ազգաց»: Այս տեքստը հրատարակել է Dulaurier իր «Recherches sur la chronologie arménienne» աշխատության մեջ (տես, էջ 58—59):

7. ՇԼՔ-ԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՏՎԱԾԸ 971 Թ. ԸՆԴՕՐԻՆԱԿԱԾ ԳՐՋԱԴԻՐՈՒՄ

Հայտնության և Զատկի ճառերից առաջ, ՀՄՄՌ մատեն. № 102 դրչագրում, Շիրակացու վերև բերված աղյուսակից հետո, ընդօրինակված է ՇԼՔ շրջանի վերաբերյալ տեսական մի մաս, որը, դժբախտաբար առանց վերնագրի է և սկզբից թերի: Նա ընդօրինակված է 971 դրչագրությամբ և կասկած չի թողնում Շիրակացուն պատկանելու խնդրում: Ոճը, հնության պատկառելիությունը և Շիրակացու աշխատությունների մեջ գտնվելը վկայում են Շիրակացու հեղինակությանը պատկանելու օգտին:

Իր աղյուսակից հետո, Շիրակացին, ըստ երևույթին, անհրաժեշտ է համարել տեսականորեն հիմնավորել 532 ամյա շրջանը և այդ նպատակով է դրված ՇԼՔ շրջանի տեսական այդ մասը:

Շիրակացու տոմարի ՇԼՔ-ին վերաբերող այդ հատվածի մասին, որքան մեզ հայտնի է, ոչ ոք ոչինչ չի ասել, նա չի հրատարակված. անհրաժեշտ ենք համարում բերել այդ աշխատությունը տեքստի մասում ամբողջությամբ՝ վերցնելով այն 971 թվի ընդօրինակություններից:

8. ԱԶԳԵՐԻ ՏՈՄԱՐԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Շիրակացին իր Զատկի ճառի մեջ խոստանում է իր այդ ճառը և մյուս ժողովուրդների տոմարի շարադրությունը վերջացնելուց հետո, հանդամանորեն կանգ առնել և խոսել արեգակի և լուսնի վրա. «Արդ վասն չափու մնծութեանն (արեգական եւ լուսնի)··· ասելն առ այժմ արդելցի, մինչեւ բոլանդակեցից զխորհուրդ սրբոյ Զատկիս եւ զտոմար ամենայն ազգաց··»[2]): Շիրակացու այս տեղեկություններից պարզ երևում է նրա նպատակադրումը

---

1) Շիրակացու Հայտնության և զատկի ճառերը, հրատարակել է Պրոֆ. Ռ. Պատկանյանը «Մխայեցոցդք բանից»-ի մեջ. Այդ ճառերն անդրադարձել է թարգմանել պրոֆ. Կոնիբերը (տես «The Expositor»-ի 1896 թ., էջ 311—337 և „Byz. Zeitschrift", 1897 թ. էջ 574—584).

2) «Անանիայի Շիրակունեաց Մխայեցոցդք բանից», էջ 17.

— Նա Զատկի ճառից հետո պիտի չարադրեր այլ ժողովուրդների տոմարը— «զտօմար ամենայն ազգաց»:

Այդ մասին ավելի կոնկրետ խոստանում է նորից Շիրակացին, երբ վերջացնում է իր Զատկի ճառը. «Եւ արդ զի՞նչ եւս պակաս լցէ այսուհետեւ, քէ ոչ յայտնել կարգաւորութեամբ զտօմար իւրաքանչիւր ազգաց, սկիզբն արարեալ առաջի կարգել զտոմար ազգին Երբայեցւոց, զի նա խոկ է զլուխ եւ օրինակ ամենայն ազգաց»[1]: Շիրակացին այստեղ էլ, ինչպես տեսնում ենք, խոստանում է առանձին ժողովուրդների տոմարի վրա կանգ առնել՝ սկսելով երբայեցիների տոմարից: Այսպիսով, Շիրակացու և՛ առաջին և՛ երկրորդ տեղեկությունից պարզ երևում է, որ նա Զատկի ճառից հետո պիտի չարադրեր այլ ժողովուրդների տոմարը:

Հարց է առաջանում, ո՞ր ժողովուրդների տոմարի մասին է այստեղ խոսքը, ի՞նչ է ներկայացնում այն, վերջապես, այդ տոմարը չի՞ հասել մեզ արդյոք:

ՀՍՍՌ մատենադարանի լավագույն ձեռագրերում, բարեբախտաբար, մեզ հանդիպեցին մի շարք ժողովուրդների տոմարներ, որոնք, մեր կարծիքով, Շիրակացունը պիտի լինեն: Մեզ հայտնի այդ տոմարներն առայժմ, վեց են՝ հայոց, հռոմոց, երբայեցոց, ասորոց, հունաց եւ եգիպտացոց: Դրանք կոչվում են «Գատճէն»-ներ— «Գատճէն տոմարի հռոմոց», «Գատճէն տոմարի ասորւոց» և այլն:

Մեր սպասածին հակառակ, Շիրակացու այդ տոմարները սկսվում են ո՛չ թե երբայական տոմարով, այլ հայկականով: Հայկական տոմարի «Գատճէն»-ներից մեծ մասը, դժբախտաբար, չունեին Շիրակացու անունը: Մեկ նոր չրջանում ընդօրինակված մի քանի ձեռագրերում են և որոնց մեջ նկատում է կողմնակի մի հեղինակի ձեռք, հիշված է Շիրակացին՝ այն էլ թվականի կարգման կապակցությամբ. «Գատճէն տումարի ըստ հայերէն թուականի, զոր կարգեալ է Անանիայի Շիրակունւոյ վարդապետի» (ՀՍՍՌ մատեն. № 1100, թ. 277ա):

Որ այդ տեքստը հնից է գալիս, կասկած լինել չի կարող: Գրեթե բոլոր հնագույն ժողովածու տոմարներն աննշան փոփոխություններով ունին այդ տեքստը: Այդ խմբին պատկանող տեքստը, օրինակ, ընդօրինակված է ՀՍՍՌ մատեն. № 1973 և 1999 ձեռագրերում: Ճիշտ է, այս վերջին ձեռագրերում հիշված չէ Շիրակացու անունը, սակայն տեքստը գրեթե նույնն է: Շիրակացու անունը այդ խմբին պատկանող տեքստերում, թեկուզ և նոր ընդօրինակությունն տեքստի վրա, ինչ խոսք, որ պատահական չէ: Դա, անշուշտ, բոլոր ձեռագրերի մայր օրինակից[2]):

Մյուս կարեվոր փաստը, որ հիմք է տալիս այդ «Գատճէն»-ները Շիրակացուն վերագրելու, այդ Կողմնի և Սարկավագի կատարած տոմարի մեկնություններն են: Պարզվում է, որ Կողմնը և Սարկավագը մեկնել են այդ «Գատճէն»-ներից մի քանիսը, հատկապես, «Գատճէն տումարի ըստ հայերէն թուականի...» տեքստը:

Եվ, վերջապես, ՀՍՍՌ մատեն. 971 թվին ընդօրինակված Թղթյա ու-

---

1) Մնացորդք բանից, էջ 25,

2) Փաթրիդի ազգային Մատեն. Հայկական ֆոնդի № 252 ձեռագրի նկարագրությունից երևում է, որ այնտեղ ևս ընդօրինակված է Շիրակացու տոմարը (տես Մակեների ցուցակ, էջ 132—133):

Նիկոմ դրչադրի առաջին մասում կա Շիրակացու աշխատությունների շարքում եղած տոմարական մի փոքրիկ հատվածը, որը երբայական «Պատճէն»-ից է, համապատասխանում է մյուս դրչադրերում եղած «Պատճէն տումարի երբայեցւոց»-ի տեքստին, իսկ 971 թ. հատվածն, անկասկած, Շիրակացունն է:

9. «ՊԱՏՃԷՆ ՏՈՒՄԱՐԻ» ՀԱՅՈՑԸ

Մեզ հայտնի «Պատճէն»-ների ամենից ընդարձակը հայոց «Պատճէնն» է, առա՝ երբայականը և հռոմեականը: Ասորական, հունական և եգիպտական «Պատճէն»-ների տեքստերը փոքր են—նրանք ունեն դրչադրի փոքրիկ ֆորմատ ունեցող երկու էջի ծավալ:

Հայոց պատճենն ակսվում է անվանական դիր ունեցող ժողովուրդների անուններով թվարկումով: Այդ ժողովուրդներն են՝ երբայեցիք, քաղդեացիք, ասորիք, պարսիկները, մարք, հնդիկները, վիշնևիկեցիք, հույնք, հայք, վիրացիք, հռոմայեցիք, եգիպտացիք, աթենացիք, բյութանացիք, կապադովկացիք, վիրք և աղվանք:

Հայոց պատճենի սկզբում այնուհետև բերվում է հետևյալ աղյուսակը:—

Պատճէն տումարի քան հայերէն Թուոյ Ամիսքն:	Կրկնակը	Կեսայը	Տանուտերք տարոյ այս են	Մոլրակը, զոր գաւտիկը այս են
Նաւասարդ	չիա	չիա	Ամոյ	
Հոռի	բ	ը	Ցուլ	Երկուակ
Սահմի	դ	ա	Երկաւոր	
Տրէ	դ	աc	Խեցգետին	Լուսնթագ
Քաղոց	ա	բ	Առիւծ	—
Աբաց	դ	բc	Կոյս	Հրաա Աբեգ
Մեհեկի	ե	դ	Կշիռ	
Աբեդ	չիա	դc	Դարիճ	Լուսաբեր
Ահկի	բ	ե	Աղեղնաւոր	
Մարերի	դ	զc	Այծեղջիւր	Փայլածու Լուսին
Մարգաց	դ	ե	Ջրհոս	
Հրոաքց	ա	եc	Ձուկն	
Աւելեաց	դ	դ	Մոլոր	

Այնուհետև տրվում է կոնկրետ խորհուրդներ այն մասին, թե ինչպես պետի դանել ամիսների կրկնակը, թվականը, յոթնեկյակը, ամսամուտը, նահանջը, ինն և տասներկյակը, վերադիրը, առաջնորդաց բարեկենդանը, սանուտները, վարդավառի մեջտյը և այլն: Տոմարական հաշվելիները յուրաքանչյուր հարցի համար այդտեղ տրվում է կոնկրետ խորհուրդներ. «Զկրկնակ ամսոյն այսպես ասա, կալ դնաւասարդի ամիսն եւ երթ եւթն եւթն, որ մնայ՝ կրկնակ է հոռոյ...» ձևով:

10· ՔՍԱՆՉՈՐՍ ԺԱՄԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Շիրակացու «Պատճէն տումարի» մասն է կազմում ցերեկվա և գիշերվա քսան և չորս ժամերի անուններին տեքստը, որը հայտնի է հայագիտության մէջ և հրատարակված է: Օրը բաժանվել է 24 ժամերի, որից 12-ը ցերեկային են, 12-ը գիշերային: Ամեն մի ժամի համար, ըստ նրա օրվա ժամանակի մէջ ունեցած համապատասխան և բնորոշ հատկանիշի, տրված է անունը: Շիրակացու «Պատճէն տումարի հայոց»-ում ժամերն ունեն հետևյալ անունները:

Յերեկային ժամեր	Գիշերային ժամեր
1. Այգն	1. Խաւարականն
2. Ծայգն	2. Աղջամուղջն
3. Զաւրացեալն	3. Մթացեալն
4. Ճառագայթեալն	4. Շաղաւօտն
5. Շառաւիղեալն	5. Կամաւօտն
6. Երկրատեսն	6. Բաւականն
7. Շանթակալն	7. Հաւթափեալն
8. Հրակաթն	8. Դիզակն
9. Հաւթափեալն	9. Լուսաճեմն
10. Թաղանթեալն	10. Ամառօտն
11. Ամառարն	11. Լուսափայլն
12. Արփողն	12. Փայլածուխն

Կան դրչագրեր, ուր ժամերի անունները բավականին տարբերվում են վերևբերված ցանկից: Այսպես՝ ՀՍՍՌ մատեն. № 1999 դրչագրում հիշված են ժամերի հետևյալ անունները. «Այգծագեալն, զաւրացեալն, շառաւիղն, երկրատեսն, շանթակողմն, հրակաթն, հաւթափեալն, թաղարթափեալն, տարաբն, տարափողն, գիշերարկն, խաւարակն, աղջամղջակն, բաւանդակն, խաւժակն, դաղակն, կատաղատեսն, լուսաճեմն, խրսնձակն, համառատուն, վողահարն, հետաղատուն, կաքաւողն» (թ. 16բ—17ա):

Երկրորդ խմբի տեքստն առաջինի համեմատությամբ թերի է և անուններն աղաւաղված են երևում: Այս տեքստում ժամերից մեկի անունը բաց է թողնված, ապա, օրն ունի ոչ թե 24 ժամ, այլ՝ 23: Աղաւաղված են երևում «բաւանդակն», «դաղակն», «խաղձակն» անունները, որոնք իրենց նշանակությամբ իմաստավորված և իրանց համապատասխան տեղում չեն:

11· «ՎԱՍՆ ՕԴԻՑ ԱՐԵԳԱԿԱՆ»

ՀՍՍՌ մատեն. № 1999 դրչագրի «Պատճէն տումարի հայոց»-ում ժամերի անուններին նախորդում է մի հատված «վասն ասդից արեգականի՝ թէ որպիսի են» վերնագրով (թ. 16ա—17ա): Այդ հատվածում ասվում է, որ արեգակը մայր մտնելիս ծածկվում է խաւար օդով այնքան ժամանակ, մինչև դալիս է լուսավոր օդը, որի մասերն են «Հրաղարն» և «Հրատեսն» («որ կոչին այդպէսունք աշխարհի») և գրում խավարը: Այդ հատվածում խավարային օդի հետևյալ տեսակներն են թվարկված՝ «բաղան»,

«Քառապան», «Ղեղան», «Զղեհոն», «Մխաւրեակն», «Կխսահատն», «Կակղաշաւիղն», «Համա...ան»[1]), «Խուժանդն», «Աւրոյնն», «Պերանն արեւելեան», «Սամխքն», «Ցուցակն», «Ծուլահանն», «Մարոքն», «Նաւն», «Նահապետն», «Քնարն», «Թաղագիրն», «Ղեակն» և «Մոլորակն» (տե՛ս թ. 16):

Հատվածի սկզբում տրված մի ակնարկից երևում է, որ այդ ամբողջ հատվածը, եթե մեկ ընդհատումն է, վերցրած պիտի լինի Ագաթեայից. «այսպէս ասէ Ագաթիաս խմատասէրն—ասված է այնտեղ—թէ բազումք են, որ հարցաքննութիւնս առնեն յաշխարհէ եւ ասեն ցմեզ, թէ ընդէ՞ր է մայր արեգականն, որ թաքուցանէ ի դիշերի զաշխարհատարած ղոյն...»: (էջ 15բ):

Այս հատվածում հետաքրքիր է հատկապես այն ավանդությունը, որ իբր խավարային օձերն արեգակին ուտում, պահում են երկրի հյուսիսային կողմում, որը կոչվում է Արևելեան դուռ եւ «ուր բնակեալ են արք միասանութիւք եւ մի[ակող]մանութիք, միաբանէք, եւ մի ակն ունին ի ճակատն. եւ թիկունք նոցա թաւ իրրեւ զքարշ...» (թ. 16բ): Այս վերջին տեղեկությունը զրեթե համընկնում է «Աշխարհացույց»-ի վերջում անծանոթ երկրի մասին հաղորդած տեղեկության հետ:

12. ՅՈԹ ԳՈՏԻՆԵՐԻ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Շերակացու «Պատճէն տումարի հայոց»-ին հաջորդող մի վերջիկ հատվածում բերված են Լոթը գոտիների անուններն իրենց դաղափարագրերով: Նրանք թվարկված են հետևյալ կարգով.

Հրատն
Արեգակն
Լուսաբերն
Փայլածուն
Լուսինն
Երեւակն
Լուսնթագն

Ավելի հասկանալի դարձնելու նպատակով բերված են գոտիների այս բոլոր անունները, որոնք, հավանական է, ավելացված են ուշ շրջանում:

Հրատն — մտուխ
Արեգակն — շամս
Լուսաբերն — զոհրա
Փայլածուն — աւտարխա
Լուսինն — զսամար
Երեւակն — զոհալ
Լուսնթագն — մուչթարի

ՀՍՍՌ մատեն. № 1999 ձեռագրի «Պատճէն տումարի հայոց»-ում բերված են նաև գոտիների հունարեն անունները (տես թ. 13բ): Ըստ որում, գոտիների կողքը բերված դաղափարագրերը զգալիորեն տարբերվում են վերևս բերված դաղափարագրերից: Հատվածը վերնագրված է, «եւ այս են աստղէք եւ տանուտէրք աւուրցն»:

[1]) Բառը ընկված է և չի կարդացվում:

Ա. Հքատն — Առես [1] (Ἄρης)
Բ. Արեգակն — Հելեոս [2] (Ἥλιος)
Գ. Լուսաբերն — Եփրոդիտէ (Ἀφροδίτη)
Դ. Փայլածուն — Եռմիս (Ἑρμῆς)
Ե. Լուսինն — Սելինոս (σελήνη)
Զ. Երեւակն — Կռոնոս (Κρόνος)
Է. Լուսնթագն — Զեւս [3] (Ζεύς)

13. ԱՆԱՆՈՒՆԻՆ ՎԵՐԱԳՐՎԱԾ ԶԱՓԵՐԸ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՏՈՄԱՐԻՑ ԵՆ:

Չափերի մասին խոսելիս մենք ասել ենք արդէն, և ցուցց տվել, որ Շէրակացու տոմարի մի հատուածն են կազմում անանուն հեղինակի չափերը, որոնք բերված են ակադ. Հ. Մանանդեանի «Կշիռները և չափերը հնագոյն հայ աղբիւրներում» աշխատութեան մէջ: Նա «Պատճէն տումարի ըստ հայերէն թուականի, զոր կարդալ է Անանիայի Շէրակունւոյ վարդապետի» աշխատութեան մի մասն է համարում (տե՛ս ՀՍՍՌ մատեան. № 1100, թ. 285բ—286ա):

Շէրակացու այդ «Պատճէն»-ում նախ խոսվում է դարնանամուտի, (կէտ երկնամիջակ), ամառանամուտի (կէտ ժամագլխակ), աշնանամուտի (կէտ հեգերական) և ձմեռնամուտի (կէտ սուղական) մասին և յետոյ կանդ առնում արեգակի հոլովումների վրա և փորձում նրա հիման վրա որոշել ժամանակի տեվողութիւնը:

Ինչպես Շէրակացու տոմարի մյուս մասերն, այնպես և չափերի այս մասը, հետազօտում մեկնվել է կողեռնի և այլ տոմարագէտների կողմից, որոնցից ամեն մեկը Շէրակացու այս չափերը ենթարկել է որոշ վերլուծութիւնների և լրացումների: Նման տեքստերից են պրոֆ. Մելիքսեթ-Բեկի Ա. Ֆաֆֆանի «Известия»-ում [4] և Հանս Մժիկի «Հանդէս ամսօրեայ»-ում [5] տեղաւորած տեքստերը:

Չափերի այս աշխատութիւնը տոմարում չարադրվելու և նրա օրգանական մասը հանդիսանալու հարցի վրա ամենևին կասկածել չի կարելի: Շէրակացին իր Չափի ճառում արեգակի և լուսնի մասին խոսելիս խոստանում է այդ հարցի վրա կանդ առնել Չափի ճառը վերջացնելուց և տոմարը չարադրելուց հետո. «Արդ վասն չափու մեծութեանն, և դրից հաստատութեանն... Եւ այլոց աստեղաց կարգի հանդամանացն ասելն առ այժմ արգելեալ, մինչեւ բովանդակեցից զխորհուրդ սրբոյ Չափիսն» [6]: Ասածն այստեղ, անկասկած, ժամանակի չափի մասին է, որովհետև նախքան այդ, Շէրակացին արեգակի և լուսնի լուսավորութեան մասին է խոսել:

---

1) *Բնագրում — առես*
2) *Բնագրում — Նիւղոս*
3) *Բնագրում — Նեւս*
4) „Известия" АрмФАН-а, *№ 3 за 1940*, стр. 41—43.
5) *«Հանդէս ամսօրեայ», 1933 թ., էջ 283—306, 433—459, 559—588.*
6) *Անանիայի Շէրակունւոյ Մնացորդք բանից, էջ 17.*

ՀՍՍՌ մատեան. № 1973 գրչագրում, որի մասին մենք խոսել ենք վերևում, «Պատճէն տումարի Հայոց»-ից հետո ընդօրինակված է այլ ժողովուրդների «տումարի պատճէն»-ները:

Հռոմայեցվոց տումարի պատճենը սկսվում է հետևյալ աղյուսակով:—

Ամիսք հռոմոց և յարկայք		Որք դուքին ընդ հայոց այսպէս
Յունուար	Ի	Նաւաս. և աւգոստոս[1])
Փետրուար	Զ	Հոռի և սեպտեմբեր
Մարտ	Ը	Սահմի և հոկտեմբեր
Ապրիլ	Ի	Տրէ և նոյեմբեր
Մայիս	Ի	Քաղոց և դեկտեմբեր
Յունիս	Զ	Արաց և Յունուար
Յուլիս	Զ	Մեհնիի և փետրուար
Աւգոստոս	Ժ	Արեդ և մարտ
Սեպտեմբեր	Թ	Ահիի և ապրիլ
Հոկտեմբեր	Թ	Մարեբի և մայիս
Նոյեմբեր	Ը	Մարգաց և յունիս
Դեկտեմբեր	Ը	Հրոտից[2]) և յուլիս

(ՀՍՍՌ մատեան № 1973 թերթ. 21)

Աղյուսակից հետո բերվում են ընդարձակ բացատրություններ՝ թվականի, վերադրի, նոթիներչակի, լուսնի, օրապլուսի, առաջավորաց բարեկենդանի և տումարական այլ հարցերի մասին, հարաբերության մեջ դնելով հայկականը հռոմեականի հետ: Այսպես, բացատրվում է, թե ինչպես կարելի է իմանալ հայկական թվականը, երբ հայտնի է հռոմեականը և ընդհակառակը:

Նման «Պատճէն» ունի և երրայականը: Նա ևս սկսվում է հետևյալ աղյուսակով:—

Ամիսք	Թանիք	Կրկ.	Կես.	Աբ-ակ.
Նիսան	լ	չկ	չկ	ժ
Իար	լ	բ	կէս	ժ
Սիւան	լ	դ	ա	ժա
Թամուզ	լ	դ	աշ	ժա
Աւ	լ	ա	բ	ժբ
Իլուլ	լ	դ	բշ	ժգ
Թշրին	լ	կ	դ	ժդ
Մեհրշու	լ	չկ	գշ	ժդ
Քասլեւ	լ	բ	դ	ժդ
Տրեթ	լ	դ	գշ	ժե
Շբաթ	լ	դ	կ	ժզ
Ադար	լ	ա	եշ	ժդ
Ասղեաց	կ	դ	դ	ժդ

(ՀՍՍՌ. մատեան № 1999 թերթ. 211ա):

---

1) *ՀՍՍՌ մատեան. № 1999 գրչագրում, որի տեքստն ավելի հին է, հայոց նավասարդ ամիսը համապատասխանում է հռոմեացոց մարտին և մյուս ամիսները շաղափված են այս հաջորդականությամբ. վերևի բերված տեքստում ուշ շրջանի մեկնաբանությունները նկատվում են:*

2) *Գրչագրում «Հրոցից»:*

ՀՍՍՌ մասին. № 1973 դրչագրի աղյուսակի ներքևում բերված է աղյուսակի բացատրությունը:

«Ի մարթէ ամաոյ Իրն Նխան ամաոյմաւա է, ուսոլ լինի միևչեւ ցերն մաքաոյ ժ, դոր յարակայ կոչեցին նորին ամաոյ նխանայ, եւ այնպէս ամենայն ամաոյ յաւելուածքն յարակայ նոցին եդան: Այլ կալ դնիսան յարթաքչիսն, զի երթ, որ մնայ՝ յարակայ է խարայ...» (Թերթ 16ա):

15. ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԱՄԻՍՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Շերակացու տոմարի հետ են կապված զանազան ժողովուրդների ամիսների անունները: ՀՍՍՌ մասին. №№ 1999 և 1983 դրչագրերում ժողովուրդների ամիսների անունները բերված են Շերակացու տոմարի վերջում: Կասկած չի կարող լինել, որ ամիսների անունների ցանկը Շերակացու հեղինակությանն է պատկանում: Բավական է թեկուզ մատնացույց անել այն փաստը, որ ամիսների անունների այդ ցանկի մեջ պարսկական ամիսների անունները ներկայացված են որպես քրիստոնյա ժողովուրդների ամիսների անուններ: Առանձին առանձին հիշված են նաև ասորական, եգիպտական, եթովպական և այլ այնպիսի ժողովուրդների ամիսների անունները, որոնք Շերակացու ժամանակ դեռ չէին ենթարկվել խալիֆաթի կողմից և չէին կորցրել իրենց քաղաքական անկախությունը:

Շերակացու մոտ բերված են հետևյալ ժողովուրդների անունները՝ հունգրները, ասորիները, պարսիկները, երբայեցիները, արաբները, մակեդոնացիները, եղիպտացիները, եթովպացիները, աբեհնացիները, բյութանացիները, վրացիները, աղվանները, կապադովկիացիները և հռոմայեցիները: Ընդամենը տասն և չորս ժողովուրդների անուններ:

Ժողովուրդների այդ ցանկից մեծ արժեք են ներկայացնում Հայաստանի հարևան ժողովուրդների, հատկապես եղբայրակից վրացական և աղվանական ժողովուրդների ամիսների անունները: Այդ ցանկերը լավագույն ապացույցներն են հանդիսանում վրաց և աղվանից ժողովուրդների 7-րդ դարում ունեցած հարուստ կուլտուրայի — բավականին զարգացած տոմարի շարքում վրացական և աղվանական տոմարներն ունէին իրենց պատվավոր տեղը: Աղվանական ամիսների անունների ցանկը, որքան մեզ հայտնի է, մեզ հասած ամենահին վավերագիրն է աղվաներեն լեզվով: Հետագայում դրված աբաթական մի ապրյուսում միայն բերված է աղվաներեն մի բառ: Շերակացու բերած տասն և երկու այդ անուններն, ինչ խոսք, կարող են ծառայել լեզվաբաններին՝ ուսումնասիրելու վաղուց կորած և անհետացած աղվանական լեզուն:

Ժողովուրդների ամիսների ցանկը Շերակացու տոմարում չարադրված են որոշ հետևողականությամբ: Առաջին շարքում տրվում են ամիսների անունները, երկրորդ շարքում «յարակա»-ն, իսկ երրորդում — ամիսների հրկնակը: Ըստ Շերակացու այս ցուցակների, ասորց, հունաց և հռոմայեցոց ամիսների թիվը 12 է, իսկ մյուս բոլոր ժողովուրդներինը՝ 13: Տասնեքերկրդ ամիսն ավելցյալ ամիսն է: Անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ աղվանական և վրացական ամիսների անունները:

Ադվանական ամիսներ[1])

Ամիսք աղուանից	Կրկ.
Նաւասարդն	չկ
Տուբէն	բ
Նամոց	դ
Եղէլ	գ
Բոկաւոն	ա
Մարէ	դ
Բոճկոնէ	է
Ծախոլէն	չկ
Բունդակէ	բ
Որբէլն	դ
Եխնեա	գ
Թաբնեա	ա
Աւելեացն	գ

(ՀՍՄՌ մատեն. № 1999, թ. 217բ).

ՀՍՄՌ մատեն. № 1973 դիշատրում ադվանական ամիսների անուններըը մատամբ տարբերվում են վերև բերվածից: Լիպարանների ուսումնասիրությոն դործը հեշտացնելու համար անհրաժեշտ ենք համարում բերել այդ ցանկը ևս:

Ամիսք աղուանից	Ճաբ.	Կրկ.
Նաւասարդոն	դ	չկ
Տուբեն	գ	բ
Կամոց	գ	դ
Ցիլէ	գ	գ
Բոկաւոն	է	ա
Բիճուկէն	գ	գ
Մրեկի	գ	է
Ծախուկի	է	չկ
Բունդուկէ	է	բ
Որեկին	գ	դ
Եխնա	գ	գ
Թրքնա	է	ա
Աւելիք	գ	գ

(ՀՍՄՌ մատեն. № 1973, թ. 34բ.).

Վերոց ամիսներն թվով տասներեք է: Բերում ենք ՀՍՄՌ մատեն. երկու դրչատրների տեքստերը, որովհետև նրանք էլ թարից դդալի չափով տարբերվում են:

1) Ադվանական ամիսների մի ցանկ հրատարակվել է Դյուլյորիեն (տե՛ս նրա «Recherches sur la chronologie Arménienne, t. I, Paris,..», էջ (167).

ՀՍՍՌ մատեն. № 1999
Գրչագրերի տեխոսը (թերթ 217 ա—բ)

Ամխոք վրաց	Կրկ.
Ախծելի	չկ
Սբքելի	բ
Տերխոքի	դ
Տերխոքենի	զ
Ապանի	ա
Նուշկնի	գ
Նեկրանի	ե
Իզրակա	չկ
Վարդուպ	բ
Մարելի	դ
Ռուբա	զ
Ռուբաթուրա	ա
Աւելեացն	գ

ՀՍՍՌ մատեն. 1973
Գրչագրերի տեխոսը (թ. 34 բ.)

Ամխոք վրաց	
[Ա]խալծելի	չկ
Սբքելի	բ
Տերխոքեն	դ
Տերխոքենի	զ
Ապանի	ա
Նուկկնի	գ
Մեկրանի	ե
Իզրեկա	չկ
Վարդոպա	բ
Տրելի	դ
Ռուբա	զ
Ռուբաթալուբա	ա
Աւելիքն	գ

Մյուս ժողովուրդների ամսանուններից պահվել են հետևյալ ձևերը։

Ամխոք ասորւոց, եւ քանիք եւ կրկնակք			Ամխոք յունաց, եւ քանիք եւ կրկնակք		
Թշրին կամիմ [1]	լա	ա	Դիոս	լ	չկ
Թշրին խրա [2]	լ	դ	Ապելդիոս	լա	ե
Քանուն կամիմ [3]	լա	գ	Դիննեսիոս [8]	լա	ե
Քանուն խրա [4]	լա	բ	Պերիդոս	լբ	ե
Շուաւան [5]	լբ	ե	Դասբիոս [9]	լա	ա
Աւար	լա	ե	Քանդիկոս	լ	դ
Նիսան	լ	տ	Արտեմիսիոս	լա	գ
Իար	լա	դ	Դիսիոս [10]	լ	բ
Հեզիրան [6]	լ	գ	Պինեմոս [11]	լա	դ
Թամուզ	լա	տ	Դիւոս [12]	լա	չկ
Աւ [7]	լա	դ	Գորպեոս	լ	դ
Իլուլ	լ	է	Հիպպեսիոս [13]	լա	ե

«Հասոց առաջի ամիս յունուարի՝ ասորոց Տիրորդ ամիս քանուն խրա

Յունաց երրորդ ամիսն դիննեսիոս. ասցա ամսամուտն ի մի տեղ մատնէ»։

(ՀՍՍՌ Մատեն. № 1999—թ. 50բ.)

ՀՍՍՌ Մատեն. № 1973 գրչագրում ասորոց և հունաց ամիսներից մասամբ տարբերվում են վերևում, ծանոթագրության համար համապատկերված, հետևյալ ամիսների անունները։

ՀՍՍՌ մասին. № 1973 դրշագրում ասորաց և հունաց ամիսներից մասամբ տարբերվում են վերևում, Դանոթագրության մեջ բերված ամիսների անուններից։

Մյուս ժողովուրդների ամսանունների չանկերը հետևյալներն են.

Ամիսք եգիպտացոց եւ քանիք եւ կրկնաք		
Բովթ	լ	չկ
Հասլե[1]	լ	բ
Աքոուբ[2]	լ	գ
Ֆռուակ	լ	դ
Տուփել[3]	լ	ա
Մեքիր[4]	լ	զ
Պենոմուք[5]	լ	ե
Պարմուփիթ	լ	չկ
Պաքոս	լ	բ
Պանի	լ	գ
Եպեփ	լ	դ
Մեսուրի	լ	ա
Աեղիեացն	ե	դ
Հասարակածն եգիպտացոց ի պենտմուք ի ԻԴ է հանապազ		

Ամիսք եթովպացոց եւ քանիք եւ կրկնակիր		
Մազքաբամ[6]	լ	չկ
Դեկեմբէ[7]	լ	բ
Խեդար	լ	գ
Թարսաս[8]	լ	դ
Թիր	լ	ա
Եմբաքիթ	լ	զ
Իմգաւիթ[9]	լ	ե
Մէսգի	լ	չկ
Գիմբուիթ[10]	լ	բ
Սանի	լ	գ
Խամղի[11]	լ	դ
Նհաւի[12]	լ	ա
Աեղիեացն	ե	զ
Հասարակածս եթովպիացոց կմգաւիթի ԻԴ է հանապազ		

Յայտնութիւն ի տուփելի ԺԱ է հանապազորդն ԽԱ է։

Յայտնութիւն ի հեբի ԺԱ է հանապազորդն ԽԱ է։

Ամիսք աքենացոց եւ քանիք եւ կրկնակք		
Մենեքի	լ	չկ
Գենեբիղեոն	լ	բ
Լիկիրփեոն	լ	գ
Պանխոբեոն	լ	դ
Մենադեոն	լ	ա
Ստամենեոն	լ	զ
Պենեփրեոն	լ	է
Սեհիրեոն	լ	չկ
Բանադեոն	լ	բ
Դամենդեոն	լ	գ
Թերեոն	լ	դ
Ադորքերեոն	լ	ա
Աեղիեացն	ե	զ

Ամիսք բիւքանացոց եւ քանիք եւ կրկնակք		
Դեքսեսեոս	լ	չկ
Մերակղես	լ	բ
Պեսեոս	լ	գ
Սենդեղեոս	լ	դ
Սարեսս	լ	ա
Պերեգես	լ	զ
Աբիեոս	լ	ե
Ապելաեագոս	լ	չկ
Դեմեղեոս	լ	բ
Սոեոս	լ	գ
Ծերիեոն	լ	դ
Մենեսթեոն	լ	ա
Աեղիքն	ե	դ

1. Փոպիլ
2. Աթոթը
3. Տուբեխ
4. Մաքիր
5. Պեմենոմիթ
6. Մնաքաւաց

7. Դեկեմբէթ
8. Թարսաթ
9. Գամաւիթ
10. Գեմբուգ
11. Խամզդի
12. Նըհամը

[Ամիսք] պարսից	
Ֆրուարդէլ	չկ
Արտահէշտ	բ
Խուրտատ	դ
Տէր	դ
Մուրդատ	ա
Ռջաբ	դ
Մհէր	է
Ասան	չկ
Ադար	բ
Դիմահ	դ
Դիհան	դ
Ահֆանտոր	ա
Աւելէր	դ

Ամիսք մակեդոնացւոց[է]	կրկ.
Դեղեմիոն	չկ
Ելբաբիոն	բ
Նոբիոն	դ
Բերգելիոն	դ
Մեկեբերիոն	ա
Չուկեմիոն	դ
Մատագետոն	է
Բեզեմիոն	չկ
Նահպիոն	բ
Մակրիոն	դ
Բեսաղոն	դ
Պեսիդոն	ա
Աւելեացն	դ

Ամիսք արաբացւ[է]	կրկ.
Նիսան	չկ
Իար	բ
Ադաքիրաս	դ
Ագապդանար	դ
Եյիամուզ	ա
Ելամար	դ
Ադաղ	է
Ագաղիդրաք	չկ
Եյկիան	բ
Ասբոն	դ
Կագանդեա	դ
Եյդաք	ա
Աւելեացն	դ

Ամիսք կապադովկեց[է]	կրկ.
Արտանայա	չկ
Ակրիսամա	բ
Արուսաստա	դ
Մխիր	դ
Ամատաբատ	ա
Քանքիտա	դ
Մխիրտեայ	է
Ապրմատատայ	չկ
Արքիրա	բ
Դատուդա	դ
Ոամէնա	դ
Սուենդարա	ա
Աւելեացն	դ

Ամիս տաճկաց	
Մուհարամ	չկ
Սափար	բ
Ռապիաւալ	դ
Ռազիախեր	դ
Ջամազիաւալ	ա
Ջամազիախեր	դ
Ռաջապ	է
Շահլպան	չկ
Ռամազան	բ
Ջաւալ	դ
Զղաս	դ
Զղիջատ	ա
Աւելեացն	դ

Կապաեկա	Ամիսօ առապկա
Աբաանա	Մուհամատ
Աբատուսայ	Սաֆար
Աբատսայ	Ռապիաւալ
Տէրէ	Ռապիախիր
Ամաթաա	Ճմէտաւալուալ
Քսիոնքքիսթէ	Ճմէտաւախիր
Սէկոա	Ռաջաբ
Ապոնինքաա	Շայպան
Աքբա	Ռամադան
Դանուք	Շաուալ
Դոմոնա	Տիլղայա
Սոնդաբանա	Տէլհիճա
Աւելիացն	Աւելիք

Այս ամիսների անուններից որոշ ցանկերը, հատկապես արաբականը, ևս կարծելիքով, մատնված է տեքստի մեջ հետազոտում:

16. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՈՐՁԱՓՈԽԻՆՔ ՇԵԿԻ

*Շիրակացու ներկա աշխատությունն անակնկալ է և անծանոթ հայագիտ գանձաերներին չլինում: Նա հայտնաբերված է մեր կողմից ՀՄՄՈ մատենադարանի № 1973 (=2024) ձրչագրում: Գրչագիրն իր բովանդակությամբ ժողովածու է և պարունակում է մեծ մասամբ տոմարական նյութեր: Նա ընդօրինակված է Հովհաննես և Գրիգոր քահանաների ձեռքով Երզնկա քաղաքում, 1324 թվին: Պատվիրատուն է հանդիսացել Աբրահամ քահանան: («Աղաչեմ զքեզ տէր յիշեա զիս մեղաւոր զրչիկս Յովհաննէս... եւս առաւել զատացող սորա զսրբազան քահանայ զԱբրահամն, որ բազում աշխատեցաւ է հետ բոլորակիս ուսմամբ եւ աշխատութեամբ» (թերթ 38ա): «Գրեցաւ գիրքս այս որ է տումար ի հայոց թուականիս ՋՂԱ ի գնիսեմբերի Գ, ձեռամբ մեղուցեալ եւ անարժան հոգւ(յ) հաւատոյ ծառայի, Գրիգորիսի սուտանուն քահանայի... ի քաղաքիս Երզնկայի ի խնդրոյ սրբասիրաքուբ եւ առաքինագործ, չնորհաշուք քահանայի Աբրահամու...» (թերթ 327բ):

Աշխատության Շիրակացուն պատկանելու հարցադրության վերաբերյալ կասկածանքներ չկան: Տեքստի վերնագրում հիշվում է Շիրակացու անունը՝ «Անանիայի Շիրակացւոյ» ձևով (թերթ 135ա): Բացի այդ, նյութի բովանդակությունը, լեզվի ոճական առանձնահատկությունների և չափածո հարցի նկատմամբ ցուցադրվող քննական մոտեցումը վկայում են, որ տեքստի հեղինակը Շիրակացին է: Տեքստի հենց սկզբի հատվածը, որը կոչվում է «Որչափուբիւն Շեկի», տասը հազարը և նրանից բարձր թվերը դրած են ածված բյուրի նշանով: Օրինակ՝ 27540 գրված է ԲԻՇՄ ձևով, 197416-ը՝ ԺՐՔՒՆԺԶ, 4,669,932-ը՝ ՆԿՀՋՋԼԲ և այլն: Բյուրավոր թվերի նման դրծածությունը հատուկ է Շիրակացուն:

Անհարազատ է երևում Ներսիկ աշխատությանը մեջ սակայն նրա վերջին հատվածը. «Եթէ կամիցիս խմանալ զհանդամանն ժամանակաց՝ թէ զինչ լինելոյ է···»: Հավանական չէ, որ Շիրակացին, որ իր մի շարք աշխատություններում ծաղրում է քաղդեացի ախթարքով զբաղվողներին, այդպիսի դուշակություններ աներ:

Դժվար է որոշել Շիրակացու Ներսիկ աշխատության տեղը նրա մատենադրական երկերի շարքում: Նա չունի վերնագիր: Մի բան սակայն անկասկած է, որ Ներսիկ տեքստը հատված է Շիրակացու ընդարձակ որևէ աշխատությունից, որը, հավանական է, մեզ չի հասել: Համենայն դեպս, այս տեքստն իր բնույթով ոչ մի համապատասխանություն է «Հանրագիտարան»-ի տիպի նյութերի շարքին:

Այս տեքստում հետաքրքիր է նաև քրիստոնյա մի շարք ժողովուրդների հիշատակման կապակցությամբ ֆրանկների հիշատակությունը զուգադրելով նրանց դուդըներ: Ֆրանկների հիշատակությունը «Աշխարհացույց»-ի տեքստում, ինչպես հայտնի է, հայագիտության մեջ տեղի է տվել մեծ վեճերի[1]): Այժմ արդեն հաստատապես կարելի է ասել, որ 7-րդ դարի հայ մատենադիրները ծանոթ են եղել ֆրանկներին և նրանց չեն նույնացնում դուդըների հետ:

Գրչադրի տեքստը, ընդհանուր առմամբ, բնագրին հարազատ է երևում: Ընդօրինակող գրչին իր արտագրած տեքստը հասկանում է և կուրբեն չէ, որ նկարում է պրոտոդրամի օրինակը: Բայց տեքստում կան գրչական սխալներ. այսպես՝ Թերթ 135-ում ՄԸ-ի փոխարեն ընդօրինակված է ԻԸ: Ամենուրեք «վերայ» բառի վերջին «յ»-ն բաց է թողված, և այլն:

Շիրակացու Ներսիկ տեքստում առանձնապես արժեքավոր է սամվելբաշխության հատվածը: Շիրակացին այդտեղ կոնկրետ հաշիվների հիման վրա ցույց է տալիս թէ՝ ինչպես կարելի է որոշել ժամի քանակը լինելը, երբ հայտնի է ամիսը և սամվելի չափը: Շիրակացու սամվելաչափության այս սկզբունքի հիման վրա, նրա տոմարի մեկնիչները, կազմել են առանձին ժամացուցակ—աղյուսակներ: Անհրաժեշտ է նշել, որ ժամացույցակները, ինչպես երևում է այդ դրշագրերից, լայն չափով տարածված են եղել Հայաստանում և գործադրվել են պրակտիկ կյանքում:


ՀՍՍՌ Մատենադարանում այդպիսի ժամացուցակների երեք աղյուսակներ են մեզ հայտնի:

Սամվելաչափության այդ աղյուսակներից առանձնապես հետաքրքիր է № 1999 դրչագրի սամվելաչափության ժամացուցակը, որն ունի 1268 թվի դրչություն: Այդ աղյուսակը հետաքրքիր է այն տեսակետից, որ նա ունի բացատրական տեքստ: Բացատրական այդ տեքստից երևում է, որ աղյուսակի հեղինակն օգտվել է Շիրակացուց և առաջնորդվել է նրա սամվելաչափության սկզբունքով: Անհրաժեշտ ենք համարում հաջորդ էջում բերել նշված ժամացուցակը՝ իր տեքստի հետ միասին:

Սամվելաչափության մյուս երկու ժամացուցակները նույնպես գծված են հին դրչություն ունեցող դրչագրերում:—Նրանցից առաջինի դրչագիրը ընդօրինակված է 1268 թվին, իսկ երկրորդը՝ 1312 թվին: Երկու ժամա-

---

1) Այս մասին տես Հ. Մանանդյանի «Տրդենացու առնդվածի լուծումը» աշխատությունը, էջ 83:



նահինների էլ տոմարի մեկնութեան հատուածներ են հանդիսանում: Նրանք գծված են մեծ խնամքով: Բերված վերջին երկու ժամացուցակները ընդարձակ բացատրական տեքստեր չունեն, ինչպես այդ ունի առաջինը: Ժամացուցակների ներքևում կամ կողերին գրված են ժամանակը չափելու մի քանի պարզնական խրատներ միայն: № 1973 գրչագրում գրված է:

«Զխորան ժամացուցակ ամսաւք եւ կենդանակերպ»

«Ուղիղ կալով ի հարթ տեղւոջ նշանակել գհովանիսդ. եւ չափեալ ոտիւքդ իմացիս ըստ խրատուցս. բայց ասէ ԹԿ՝ ի յունիս գարձցի՝) արեգակն Բ աւր անստուեր լինին, գի ի միջաւրէին արեգակն ի վերայ ամենայն գլխոց կա[յ] եւ ոչ երեւի ստուերն ի Զ ժամ աւուրն, այլ ընդ նեղ եւ ընդ նուրբ բնթանս ջրհորոց մտանէ նշոյլք արեգականն եւ լուսաւորէ: Եւ այս ոչ լինի ստ մեզ, որք ի հիւսուսոյս ամբ երկրի, այլ ի հարաւային կիսում:


Ցոյնք եւ հռոմք եւ ասորիք, որ աւր ի է մարտի ամսո[յ] ասեն ԹԿ հասարակին տիւք եւ գիշերք. եւ ի ԻԷն ակառնի յաղթել տիւն: Իսկ արարացիք՝ որ աւր Լ է ամսոյն ասեն. եւ կոչեն զանուն ամսոյն եղդոդ. եւ տպա Թուն զաւելիսն: Իսկ եղիպտացիքն ի ԻՆ ամսոյն ասեն եւ կոչեն զանուն ամսոյն պամենոմի: Եւ սոյն Թիւ արարացոց եւ եղիպտացոց որ աւր ԻԹ մարտի ամսոյն ասեն գիտել: Սոյնպէս եւ ի սեպտեմբերի հռոմք եւ յոյնք ըստ իւրեանց Թուոյն. ասեն՝ ԹԿ է ԻԴն հաւասարին: Իսկ արարացիք, որ աւր Լ է եղեամար ամսոյ եւ եղիպտաց[ւոց], որ աւր Ի է ամսոյն Թովթա[յ], որ է առաջին: Եւ զայն գիտեն երկոքեան Թիւքն արարացոց եւ եղիպտացոց ի ժէանն սեպտեմբերի ամսոյ ըստ յունարէն Թուոյ. եւ յաւելու եւ պակասէ յամենայն ամսոյ Ա. Ա. ժամ: Բայց հայոյն գի Գ ժամքն ոչ անգամեին ի համար: Վասն որմորիկ ոչ կա[յ] ի միում հասարակաժամ աւուրնջեան եւ գիշերոյ, այլ ըստ չորից չորից ամաց յետս կոյս նահանջիւ: Ի կատարել ԻՐ ամսոյն ԺԲ ժամս, որ է աւր մի, որ կոչի բեսքբիսան ըստ յունաց:

Զժամացուցակ բոլորին առնաչափի գրիցաք Ներսէս արտասահմանեալ մեկնողաւրէն բանիւք. եւ առ նմին գրեալ էր այսպէս. ԹԿ ըստ հռոմին առնաչափն ոչ պակասէ ըստ մերում, այլ այսպէս նախ ԳՃԻԵԿ եւ ապա յաւելու ՁՆԻՁԷ ըստ այսմ աւրինակի առորագրեալ էր»:

Բերված հատվածում առանձնապես հետաքրքիր է ժամացուցակը կազմող հեղինակի ակնարկը իր օգտված հեղինակի մասին, ուր հիշում է նրան. («բայց [նա] ասէ ԹԿ ···») : «Նրա մոտ այսպէս էր գրված» («առ նմին գրեալ էր այսպէս») և այլն: Ժամացուցակը կազմող հեղինակի այսպիսի անորոշ և մութ ակնարկից դուցե բոլորովին հնարավոր չլինի ասել, թե ում մասին է խոսքը, բայց նրա իր օգտված հեղինակից բերած խոսքերը, բաբելաթատարար, հնարավորություն են տալիս մեզ պարզել այդ: Ժամացուցակի հեղինակն ասում է. «Բայց ասէ ԹԿ՝ յունիս գարձցի արեգակն Բ աւր անստուեր լինին, գի ի միջաւրէին արեգակն ի վերա[յ] ամենայն գլխոց կա[յ] եւ ոչ երեւի ստուերն ի Զ ժամ աւուրն, այլ ընդ նեղ եւ նուրբ բնթանս ջրհորոց մտանէ նշոյլք արեգականն եւ լուսաւորէ:

---

1) Ներքին լուսանցքում գրիչը թողել է փորերիկ հիշատակություն. «Եթէ զայս խոստանաս ես գրել, մտաբեր խնամ ժողովել, գալստեան և բերել»):



առ մեզ, որ ի հիւսիսոյ հրմ յերկրի, այլ ի հարաւայինն Լիբիա»:

Ո՞վ է այն հեղինակը, որ խոսում է տարեկան երկու օր անսովոր օրեր լինելու և արեգակի հառագայթները մինչև ջրհորի հատակը հասնելու մասին՝ նշելով, որ այդ ո՛չ թե մեզ մոտ է այդպես լինում, այլ հարավամբ, Լիբիայում:

Ուշադիր քննությունը պարզում է, որ այդ ասող հեղինակը Շիրակացին է հանդիսանում: Նա իր Տիեզերագիտության «Ճաղատաս արեգական» գլխում տվյալ հարցերի մասին հետևյալն է գրում. «Եւ յորժամ ի վերին բարձանց ծագեսցէ արեգակն, փոքրկանան սուեր տարերց երկրի, եւ կարճին չուքք հասակաց ի մէջօրեայ ժամանակի, տիւքն երկայնք լինին: Եւ յորժամ սուերքն երկայնին՝ սուերքն փոքունք լինին, եւ առ առ մեզ, որ ի կողմանս հիւսիսոյ բնակեալ հրմ, այլազգ անկանեն ի մէջ սուերի. եւ յայլում աշխարհի մերոջ այլազգ, զի ի սուրս յամենայն տարոջ ի մէջօրեայ ժամանակի առնից ստուերի լինի. քանզի կէսօ ի վերայ զգլխոյ ամենեցուն կան ճառագայթք արեգականն, եւ հասարակ յամենայն կողմանց արևմտից դնչոյլս պայծառութեանն ի վերուստ մինչև ընդ ներքին խորս ջրհորաց ընդ նեղ եւ ընդ նուրբ բերանս մտանէ շող եւ լուսաւորէ. եւ անուանեն զաւուրսն անստուեր միջօրեայ: Եւ այլք որ ի հեռաւոր աշխարհին Հնդկաց բնակեալ են...»[1]):

Ընդգծված նախադասությունները, ինչպես տեսանում ենք, Շիրակացուց տատացի արտագրել է ժամացուցակի հեղինակը:

Մխանգամարն այլ ձևեր ունեին ՀՍՍՌ Մատենադարանի № 1029 (1287 թվի ձեռագրությամբ) և № 364 (1312 թվի ձեռագրությամբ) ժամացուցակները, որոնք անհրաժեշտ ենք համարում բերել տեքստի բաժնում:

---

[1]) Տե՛ս Շիրակացի, Տիեզերագիտություն և Տոմար, էջ 53—53.

V. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՏԻԵԶԵՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ԴՐՉԱԳՐԵՐԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱՆ

ա) Ա. Խոստացեալսն

1. *ՀՄՄՌ մատեն.* № 5443 *թերթ* ? «Անանիայի յաղագս երկնի»։ *Գլուխները ընդօրինակել է Վարդան դրիչը։ Ձեռագրի ընդօրինակության ժամանակը* 13-*րդ դարն է։*

2. *ՀՄՄՌ մատեն.* № 1973 (*Կ.* 1981), *թերթ* 286*բ* «Անանիայի Յաղագս երկնի.— *Արդ՝ որովհետև ի մատուռն եկաք բան...*»։ *Գրչագիրն ընդօրինակած է Հովհաննես դրչի և Գրիգոր քահանայի ձեռքով։ Մատյանը Աբրահամ քահանան է։*

3. *ՀՄՄՌ մատեն.* № 5619 (*Տ.* 930), *թերթ* 207*ա* «Անանիա Շիրակացոյ ասացեալ յաղագս արեգական։— *Արդ ասացից եթէ...*»։ *Գլուխները խառնված են։ Գրիչը հայտնի չէ։ Ձեռագրի դրչության ժամանակը* 14-*րդ դարն է։*

4. *ՀՄՄՌ մատեն.* № 2678 (*Գ.* 95), *թերթ* 342*ա* «Անանիայի վասն երկնի։ *Արդ՝ որովհետև ի մատուռն եկաք բան...*»։ *Ընդօրինակել է Մատաթիա դրիչը* 1426 *թվին։*

5. *ՀՄՄՌ մատեն.* № 1979 (*Կ.* 2009), *թերթ* 429*բ* «Անանիայի Յաղագս երկնի»։ *Ընդօրինակել է Ստեփաննոս եպիսկոպոսը* 15-*րդ դարում։*

6. *ՀՄՄՌ մատեն.* № 5610 *Թ.* 921*ա* «Անանիա Շիրակացոյ ասացեալ ի յաղագս արեգական»։ *Առնված է «Ա. Խոստացեալսն» աշխատությունից։ Ընդօրինակել է կարապետ քահանան* 15-*րդ դարում։*

7. *ՀՄՄՌ մատեն.* № 1267 (*Կ.* 1069), *թերթ* 310 «Անանիայի Յաղագս երկնի»։ *Ընդօրինակել է Գրիգոր դրիչը* 15-*րդ դարում։*

8. *ՀՄՄՌ մատեն.* № 2180 (*Կ.* 2152), *թերթ* 478*ա* «Անանիայի Շիրակունւոյ Համարողի առ Խոստացեալսն։— *Զխոստացեալսն մեր հաստացաք դրանն...*»։ *Ընդօրինակել է Վարդան սարկավագը* 1644 *թվին։ Ձեռագիրը հիմք է ծառայել տեքստի հրատարակության համար (տե՛ս մեր «Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն եւ տոմար» աշխատությունը, Երևան* 1940 *թ., էջ* VIII—XII)։

9. *ՀՄՄՌ մատեն.* № 2191 (*Կ.* 2247), *թերթ* 141*ա* «Անանիայի Շիրակացոյ ասացեալ վասն արեգական։— *Արդ ասացի եթէ...*»։ *Ընդօրինակված է Իգնատիոս և Մարտիրոս Համբեցինների կողմից Մերտինում, 1687—97 թ. թ. ընթացքում։*

10· *ՀՄՄՌ մատեան*. № 2041 (կ· 2010), *թերթ* 324ա, «Անանիայի Յաղագս երկնի»: *Ընդօրինակել է կարապետ վարդապետը*: *Ձեռագրի դրչութիւնը* 17-*րդ դարի է*:

11· *ՀՄՄՌ մատեան*. № 464 (կ· 443), *թերթ* 227ր «Անանիայի Յաղագս երկնի:— *Արդ՝ որովհետև ի մատուրն նկաք բան…*»: *Ընդօրինակել է Սուքիաս Ջուղայեցին էջմիածնում*, 1734 *թվին*:

12· *ՀՄՄՌ մատեան*. № 2762 (Գ· 209), *էջ* 101, «Անանիայի Շիրակացոյ Համարոդի· *Առ խոստացեալն*:— *Զխոստացեալսն մեր հաստուսցուք դրան…*» *Հիշատակարան չունի*: *Ձեռագիրն օգտագործված է ոսկյայ տեառքսաւ հրատարակութեան ժամանակ*: *Դրչագրի մանրամասն նկարագրութիւնը տես մեր «Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար»*, *Երևան* 1940 *թ*·, *էջ* 18—34[1]):

բ) Յաղագս շրջագայութեան երկնից

1· *ՀՄՄՌ մատեան*. № 3082 (Գ· 295), *թերթ* 452ա «Յաղագս շրջագայութեան երկնից՝ թէ որպէս իմաստասիրացն թուեցաւ:—*Գործք Առաւծոյ մեծամեծք են, ասէ Իսբայէլի թագաւորն Դաւիթ…*»: *Ընդօրինակել է Գևորգ Կիւրիկեցին* 1267 *թվին*: *Դրչագրի տեքստն օգտագործված է Գ*· *Տ*·— *Մկրտչյանի հրատարակության ժամանակ* (*տե՛ս «Արարատ» 1896 թվ*·, *էջ* 292—296, 236—344):

2· *ՀՄՄՌ մատեան*. № 5443, *թերթ* 25ա «Յաղագս շրջագայութեան երկնից՝ թէ որպէս իմաստասիրացն թուեցաւ…»: *Ընդօրինակել է Վարդան դրիչը*: *Ձեռագրի դրչութիւնը* 13-*րդ դարի է*:

3· *Վենետիկի Մխիթ*· *մատեան*. № 174, *թերթ* 51—54 «Յաղագս շրջագայութեան երկնից՝ թէ որպէս իմաստասիրացն թուեցաւ»: *Ընդօրինակել է Ներսես արեցան Կիբրակոս կոչվող անապատում*: *Ձեռագրի մանրամասն նկարագրությունը տե՛ս* Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, стр. XXV:

4· *ՀՄՄՌ մատեան*. № 1973 (կ· 1981), *թերթ* 282ա «Յաղագս շրջագայութեան երկնից՝ թէ որպէս իմաստասիրացն թուեցաւ:— *Գործք առաւծոյ մեծամեծք են…*»: *Ձեռագիրն ընդօրինակել են՝ Հովհաննես դրիչը և Գրիգոր քահանան* 1342 *թվին*:

5· *ՀՄՄՌ մատեան*. № 1979 (կ· 2009), *թերթ* 427ա «Յաղագս շրջագայութեան երկնից՝ թէ որպէս իմաստասիրացն թուեցաւ…»: *Ընդօրինակել է Սահակ եպիսկոպոսը*: *Ձեռագրի դրչութիւնը* 14-*րդ դարի է*:

6· *ՀՄՄՌ մատեան*. № 1267 (կ· 1069), *թերթ* 310ա «Յաղագս շրջագայութեան երկնից՝ թէ որպէս իմաստասիրացն թուեցաւ· Անանիայի Շիրակացւոյ ասացեալ»: *Գրչագիրն ընդօրինակել է Գևորգ դրիչը*: *Ձեռագրի դրչութիւնը* 15-*րդ դարի է*:

7· *ՀՄՄՌ մատեան*. № 2041 (կ· 2010), *թերթ* 34բ «Յաղագս շրջագա-

---

1) «Յաղագս կենդանաբանականաց», «Յաղագս աստեղաբաշխութեան» և նրանց հետևող մյուս գլուխների համար մենք առանձին բիբլիոգրաֆիա չենք տալիս, որովհետև աստղաբաշխական այդ նյութերը գրչագրերում միշտ հանդիպում են մեկ «Յաղագս երկնից» տիեզերագիտական տեքստի հավելվածում և հետաքրքրվողը կարող է օգտվել «Յաղագս երկնից» տեքստի բիբլիոգրաֆիայից·

յութեան երկնից՝ թէ որպէս իմաստասիրացն թուեցաւ։— *Գործք առաւածոյ մնծամնծք են...»։ Ընդօրինակել են երկու դրիչներ՝ կարապետ երեցը և երեմիա դրիչը 1676 թվին։ Ձևագրի սուղագրն է հանդիսանում Առաւաձառուր վարդապետ Վանեցին։*

8. ՀՍՄՌ մաաեան. № 464 (կ. 443), թերթ 224ա «Ցաղագս շրջագայութեան երկնից՝ թէ որպէս իմաստասիրացն թուեցաւ»։ Ընդօրինակել է Սուքիաս Զուղայեցին 1734 թվին։ Ձևագրի դրչութիւնը 18-րդ դարի է։

9. ՀՍՄՌ մաաեան. № 2269 (կ. 2241), թերթ 34բ «Ցաղագս շրջագայութեան երկնից՝ թէ որպէս իմաստասիրացն թուեցաւ։— Գործք առաւածոյ մնծամնծք են...»։ Հիշատակարան չունի։ Ձևագրի դրչութիւնը 18-րդ դարի է։

12. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՏԻԵԶԵՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ

Շիրակացու Տիեզերագիտութիւնը մեզ հասել է երկու խմբագրութիւնով— համառոտ և ընդարձակ։ Համառոտ խմբագրութիւնն ունի «Անանիայի յաղագս երկնից» վերնագիրը (մի դրչագիրը ունի «Անանիայի վասն երկնից»), իսկ ընդարձակը՝ «Անանիայի Շիրակունեցւոյ Համարողի առ խոստացեալսն»։ Առաջին խմբագրութեան տեքստը հրատարակել է պրոֆ. Գ. Պատկանեանը «Անանիայի Շիրակունեաց մեծագործ բանից» ժողովածուում (տե՛ս էջ 34—62), իսկ երկրորդը — ՀՍՄՌ մատենադարանը՝ մեր ձեռնարկութեամբ և ակադ. Հ. Աճառեանի խմբագրութեամբ՝ «Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն եւ տոմար» վերնագրի տակ։

Շիրակացու Տիեզերագիտութեան համառոտ տեքստի ձեռագրերը, համեմատաբար, շատ են ընդարձակ տեքստից։ Վերջինից մեզ միայն երկու ձեռագիր է հասնել — ՀՍՄՌ մատեն. № 2180 և 2762։ Գրչագրերից երևում է, որ բառարանի կազմողները վենետիկի մատենադարանից իրենց ձեռքն տակ ունեցել են Շիրակացու Տիեզերագիտութեան ընդարձակ խմբագրութեան պատկանող մի տեքստ ևս (տե՛ս «Հայկազեան բառարան»-ի առաջին հատորի առաջաբանը՝ օգտագործած աղբյուրների մասին դլուխը)։

Ընդարձակ և համառոտ խմբագրութիւններին պատկանող Շիրակացու տեքստերի համեմատական ուսումնասիրութիւնից պարզվում է, որ այդ խմբագրութիւններից նախնականը, լավագույնը՝ ընդարձակ խմբագրութեան պատկանող տեքստն է։ Այդ տեսից կարելի է մատնացույց անել հետևեալ փաստերը։—

ա) Ընդարձակ խմբագրութեան տեքստը սկսվում է Շիրակացու ներբաձակառով, ուր Շիրակացին ընթերցողներին ծանոթացնում է իր նպատակի, չարադրման մեթոդի և իր օգտագործած աղբյուրների հետ։ Շիրակացու այդ ներածական դլուխը, որը վերնագրված է «Առ խոստացեալսն», անդամահատվել է համառոտ խմբագրութեան տեքստում։

բ) Ընդարձակ խմբագրութեան տեքստի «Ցաղագս երկնային պարզուց» դլխում Շիրակացին թեպետ և անօգուտ է համարում քաղդեական ախթարքի մասին խոսելը, բայց ընթերցողներին քաղդեական դուշակութիւններին հետ ծանոթացնելու համար բերում է քաղդեացիների ախթարքը և սպանիչ քննադատութեան ենթարկում նրանց։ Այդ ամբողջ հատ-

վածը, որն իր ծավալով կես տպագրական մամուլից ավելի է, Շիրակացու համառոտ խմբագրության տեքստում անդամահատվել է։ Ի մէջն այլոց՝ համառոտ խմբագրության տեքստում այդ հատվածն անդամահատվել է այն տեղում և այն ձևով, որ ընթերցողին, վերջին տեքստը կարդալիս, թվում է թե Շիրակացին էլ խոստանում է չպիտի տպագրել, որ նաքաղդեացիների մասին խոսի։ Այսպես, համառոտ խմբագրության տեքստում ասված է։ «Որ ինչ յաղագս երկնային դարձուց ի մէջ գաղդէացւոց պատմին բանք բազմանաց, աշխատութիւն անչահ համարիմ զսոսա գրել նոցա»։ Այնինչ, ընդարձակ խմբագրության մէջ այդ նույն նախադասությունը հետևյալ ձևով է տրված. «Որ ինչ յաղագս երկնային դարձուց ի մէջ քաղդէացւոց պատմին բանք բազմանաց, աշխատութիւն անչահ համարիմ ցդիւս պատմել։ Բայց վասն ի գիտութիւն ձեզ հասուցանելոյ՝ ասացից փոքր ի շատէ» (ընդգծումը մերն է Ա. Ա.)։ Ընդարձակ խմբագրության տեքստում այնուհետև բերվում են քաղդեացիների սովորությունները և քննադատվում, որոնք արդեն, ինչպես վերև ասացինք, չունի համառոտ խմբագրությունը։

գ) Համառոտ խմբագրության տեքստում կրճատված են բազմաթիվ մանր հատվածներ և նախադասություններ, որոնք պահել է ընդարձակ խմբագրությունը։ Այդպիսի կրճատում, օրինակ, նկատվում է պրոֆ. Ֆ. Պատկանյանի հրատարակության տեքստում՝ էջ 35, տող 20։ Բերենք այդ հատվածը։—

«Արդ՝ ահա հասաք ի կէտն՝ ոչ դադնաքեայ, այլ ի մեծ եւ ահագին երկինն վերին, որում յոյնք եթերն կարդացին. եւ հելլենացիք հուր քաղէեալ ասացին, զորս եւ բազումք յեկեղեցւոյ հաւանեցան։ Թէպէտ եւ չարաց վիճակաւորացին ոչ թուեցաւ հաճոյ։ [Բանզի կէսմն ի նոցանէ երկինս բազում եւ աշխարհս անհամարս ասացին։ Եւ կէսք ի նոցանէ ի մի տարր երկնի զերկինս ամենայն ճուլեալ ասացին։ եւ զնիւթոյն ասացին՝ եթէ այլ իմն բնութիւն պարզ, օտար ի չորից բնութեանց, զի ոչ հուր է եւ ոչ օդ, ոչ հող եւ ոչ ջուր, այլ այլ իմն է ասեն, լուսաւոր եւ խիտ, որպէս զբնութիւն պղպջակի. եւ կամ որպէս գվանականէ ասեն, եթէ ի ջրոց ոք պաղեալ խտանան՝ մեծաւ հաստատուն կցուածով առնու փոփոխումն՝ գալ ի կերպարանս սկանց պատուականաց։ Բայց պարտ է նկատել մտօք, եթէ որ եհասին զնա անդէն, արար նմա սկիզբն։ եւ նոյն բովանդակեաց զնա կատարմամբ]։ Եւ արդ՝ ամենեցուք ի մեզ վասն նորա յերկարաբանել...»։

Անկյունավոր փակագծի մեջ առնված տեքստն ամբողջովին կրճատված է պրոֆ. Ֆ. Պատկանյանի տեքստում։ Այդ հատվածը պահել է ընդարձակ խմբագրությունը։

Պրոֆ. Ֆ. Պատկանյանի հրատարակած տեքստում կան նման կրճատումներ՝ էջ 34 «Ճաղատս երկինի» դլխի սկզբից, էջ 36, տող 16 «տրամադիծն» բառից հետո, էջ 38, տող 22 «սակաւուց» բառից հետո, էջ 40, տող 13 «երկրիս» բառից հետո, էջ 41, տող 29 «լեռնալ» բառից հետո և 28 այլ տեղերում։

դ) Համառոտ խմբագրության տեքստի մի քանի դլուխներ վերջանում են ասածուն ուղղված վառքերով։ Այդ ունեն՝ յոթերորդ դլուխը, ութերորդ

դլուխը, իններորդ դլուխը և այլն: Դրանք ընդմիջարկութիւններ են, որոնք չունեն ընդարձակ խմբագրութիւնը:

ե) Եվ, վերջապես, Շիրակացու համառոտ խմբագրութեան տեքստն ունի բազմաթիվ աղավաղված նախադասութիւններ, որոնք ընտիր դրչութեամբ մեզ հասել են ընդարձակ խմբագրութեան տեքստում: Բերենք մի քանի օրինակ:—

Պատկանեանի հրատարակած տեքստում, երկինքն «անկորնաւոր, անխորշ, անփոփ, անդադ» մի տարածութիւն է (էջ 35):	Ընդարձակ խմբագրութեամբ ոչ թէ «անփոփ» է, այլ «անփոթթ», այսինքն ողորկ:
Նույն դլխում երկնքի մասին ասված է, որ «տարածեալ ձև յաւիտենական կոչին» (էջ 35):	Ընդարձակ խմբագրութիւնը «տարածեալ»-ն ուղղում է «կատարեալ ձև յաւիտենական կոչեն»:
Պատկանեանի տեքստում երկինքը նմանեցվում է ձվի. դեղնուցը գնդաձև միջուկն է, սպիտակուցը նրա շուրջը և կճեպը պատում է չորս կողմը. նույնը երկիրն է, որ դանվում է մեջտեղում «և պատ շուրջ գնովաւ և երկին պատ առեալ զամենայնիս» (էջ 38):	Ընդարձակ խմբագրութեան տեքստն ունի ոչ թէ «պատ շուրջ գնովաւ», այլ «աւդ շուրջ գնովաւ»:
Պատկանեանի տեքստում արեգակն «էր պատան մորուս «ոսկեգէտակ» (էջ 39):	Ընդարձակ խմբագրութեան տեքստն ունի ոչ թէ «ոսկեգէտակ», այլ «ոսկեգեհատակ», ոսկյա մաղերով:
Պատկանեանի տեքստում արեգակը Շիրակացու երազում պատասխանում է նրա ասած հարցին և հայտնում, որ նա լույս է տալիս «լերանց և ծնփայից, ձորոց և անձնաւաց անկենդանեաց», (էջ 40):	Ընդարձակ խմբագրութեան տեքստը «անփայից»-ի տեղ ունի «ափափայից», այսինքն լեռնապատաժներին է լույս տալիս:
Վերջերորդ դլխում ասված է. «ամենայն դադաթիւնքս վերինք և ներքինք» (էջ 48):	Ընդարձակ խմբագրութեան ունի «ամենայն գոյացութիւնք վերինք և ներքինք»:
Արեգակի մասին խոսելիս Պատկանեանի տեքստում Շիրակացին ասում է. «Ծոյժ սիրելի է... ճառի առնել զառատութիւնս որ ինչ առաջնոյ և մեծի լուսաւորիդ է բան» (էջ 54):	Ընդարձակ խմբագրութեան ունի «զառատութիւնս բանից, որ ինչ յաղագս առաջնոյ և մեծի լուսաւորիդ է բան»:

Կարելի է բերել նման բազմաթիվ օրինակներ, բայց բերածը, կարծում ենք, բավական է նախապատվութեան տալու ընդարձակ խմբագրութեանը:

3· ՇԻՐԱԿԱՑՈՒ ՏԻԵԶԵՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԴԻՐԸ ԵՎ ԱՅԴ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԸ ՇԻՐԱԿԱՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Շիրակացու Տիեզերագիտության համառոտ և ընդարձակ խմբագրություններից ոչ մեկի վերնագիրը՝ նրա աշխատությունն ամբողջապես բնութագրող վերնագիրը չէ, այլ միայն առաջին և երկրորդ գլխի: Ընդարձակ խմբագրության սեգմանի վերնագիրն է՝ «Ա.ռ խոստացեալն»: Այդ՝ Շիրակացու ներածական խոսքի վերնագիրն է.—Նա խոստացել է գրել նաև տիեզերագիտության, ուստի և անհրաժեշտ է համարել ընթերցողներին հիշեցնել այդ մասին, և վերնագրել իր ներածականը «Ա.ռ խոստացեալն»: Համառոտ խմբագրության վերնագիրն է «Քաղպս երկնի»:— Այդ՝ երկրորդ գլխի վերնագիրն է: Առաջին գլուխը, ինչպես վերևում ասացինք, անդամահատվել է և անգործ մնացել է երկրորդ գլխից, իսկ երկրորդ գլուխում Շիրակացին երկնքի մասին է խոսում, ուստի և «Քաղպս երկնի» էլ վերնագրված է:

Պարզվում է, որ Շիրակացու Տիեզերագիտությունը նրա առաջին շարունակությունն է հանդիսացել: Այդ երևում է հետևյալ փաստից:— Շիրակացին իր Զատկի աղյուսե դրած ճաուում արեգակի և լուսնի մասին խոսելիս սարերն կապում է արեգակի հետ, իսկ ամիսը՝ լուսնի. և վկայություն է բերում աստվածաշնչից «մեծ լուսավորի» (արեգակի) և «փոքր լուսավորի» (լուսնի) վերաբերող մի նախադասության և ապա խոսում է ընթերցողներին այդ լուսատուների չափման անհրաժեշտության, նրանց տիեզերքի մեջ ունեցած տեղի և նշանակության վերաբերյալ խոսել համադամանորեն՝ Զատկի ճաուը և ժողովուրդներին առաջարը վերջացնելուց հետո. «Արդ վասն չափու մեծութեանցն, եւ դրից հաստութեանն, եւ իշխանութեանցն, եւ որոշմանցն եւ այլոց աստեղաց կարգի հանգամանացն ասելն առ այժմ արգելցի, մինչեւ բովանդակեցից զվորհուրդ սրբոյ Զատկիս, եւ գտանիցեմք ամենայն ազգաց, եւ ապա պատմեցից եւս թէ զի՞նչ վասն այսր արուարձինքն, եւ զի՞նչ ակնդեցականքն»[1]): Նույն աշխատության մեջ Շիրակացին խոստանում է անգամ ընթերցողներին՝ ավյալ հարցերի վերաբերյալ բերել արտաքին գիտնականների և ակնդեցականների տեսակետը «Եւ ապա պատմեցից եւս թէ զի՞նչ վասն այսր արուարձինքն, եւ զի՞նչ ակնդեցականքն»[2]):

Եվ իրոք, Շիրակացին Զատկի ճաուը և ժողովուրդներին առաջարը վերջացնելուց հետո, նրա անմիջական շարունակության մեջ, սկսում է շարադրել տիեզերագիտությունը՝ հիշեցնելով այդ մասին ընթերցողներին իր աշխատության նախաբանում, «Զխոստացեալն մեր հատուցանել զրան՝ յարտաքինոցն առեալ զառարկութիւնն... Արդ՝ ես կամիմ ուսանիլ յարտաքինոցն յայնցանէ, ուստի Պտղոս ինձ հրամայէ. եւ զանց առնել զհեթանոսական խնդրատրութեամբն՝ բանդագուշեալ խաստատնոցն Ճառից...»[3]): Տիեզերագիտական բովանդակություն ունեցող այդ աշխատության դլխավոր մասերն են արեգակի և լուսնի գլուխները: Արեգակի գլխում, նա ինչպես Զատկի ճաուում է ասել, «մեծ լուսավոր» է անվանում արեգակը, ինչպես այդ աստ-

---

1) *Անանեայի Շիրակունւոյ Մնացորդք բանից, էջ 17.*
2) *Նույն տեղը, էջ 47.*
3) *Անանեա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տոմար, էջ 1.*

վածաչնչումն է: «Յոյժ սիրելի է ինձ ի մխաւսրութենանց նոցա բանից յիմումս ճառի առնել պատասխանի բանից, որ ինչ յայտագրա առաջնոյ եւ միջի լուսաւորիդ է բան...»[1]: Իսկ լուսնի դլխի սկզբում, ինչպես որ խոստացել էր՝ արտաբերին և եկեղեցական դիանականների տասածները բերել, նուխյր կրկնում է. «Զերկրորդ լուսաւորէդ բիւր բանք ճառեալ են յարաքանց եւ յեկեղեցահայոց, բայց մեզ որ ինչ միաւորեալն է բան յերկոսունցն, յայնց հաճոյ թուեցաւ արկել»:

4. ՏՈՄԱՐԱԿԱՆ ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Շերակացու Տիեզերագիտության ընդարձակ խմբագրության ութքսան իր չարունակության մեջ ունի տոմարական հարց ու պատասխանի մի ընդարձակ մաս՝ 74 դլուխներից:

Շերակացու տոմարական այս հարցն ու պատասխանը ՀՄՄՌ մատեն. № 1973 դրչագրում հանդիպում է մեզ առանց տիեզերագիտության մասի: Ուշադրության արժանի է, որ տոմարական այդ աշխատությունը վերնադրված է «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» (թ. 152ա): Շերակացու տոմարի այս ութքսան սկսվում է տոմարի առարկայի բնորոշումից. «Տումար առն ժողով. սկիզբն առեղարաշխութեան. եւ ի նոցանէ գտանել զայս ի լուսաւորացս գհանդիսմանս ընթացից...»: ՀՄՄՌ մատեն. № 1973 դրչագրի ութքսը մեր հրատարակած տոմարի համեմատությամբ դրվել չափով կրճատված է: Այսպես, ամիսների անունների առաջանալու մասին եղած ընդարձակ դլխի փոխարեն այս ութքսն ունի. «Զի՞նչ է ամիս. տեսանելով առաջնոցն դլուխնն լցնել եւ մաշել՝ խնայս գանդատութիւն կենաց իւրոց՝ ասաց թէ իմ ևս» (թ. 153ա): Եթե ճիշտ համարելու լինինք ՀՄՄՌ մատեն. № 1973 դրչագրի վերև նշված տոմարի վերնագիրը, ապա պիտի ենթադրել, որ Շերակացին վերցրել է Անդրեասի տոմարը և մեկնել է այն:

Տոմարական այդ աշխատությունը չնայած տիեզերագիտության հետ միասին ունի մի ընդհանուր համարաչարք, բայց մեզ թվում է, որ տոմարական այդ հարց ու պատասխանի ութքսն իր տեղում չէ: Այդ աշխատությունը համոնական է նախատեսված է եղել աշակերտների համար: Բացի այդ, ինչպես տեսանք, Շերակացին տոմարական բովանդակության ունեցող ամբողջ աշխատություն չարադրել է Տիեզերագիտության մասջ, և, քիչ համոնական է, որ թեթևակի հարց ու պատասխանի նման տոմար նա կրկներ այստեղ ևս: Եվ, վերջապես, Շերակացին իր Զատկի ճառում ընթերցողներին տված խոստման մեջ հայտնում է, որ արեգակի և լուսնի հետ միասին պիտի կանդ առնի նաև աստղերի վրա, կամ ինչպես ինքն է ասում «աստեղաց հաբրվի հանդամանացն», ուստի և տիեզերագիտության վերջը ո՛չ թե պիտի կրկնվեր տոմարը, այլ չարադրված պիտի լիներ աստղաբաշխությունը:

5. ԵԻՐԱԿԱՑՈՒ ԱՍՏՂԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ

Տիեզերագիտության համառոտ խմբագրության ութքսի հետդուխ գլուխները իրենց չարունակության մեջ ունին Շերակացու աստղաբաշխական

1) Անանեա Շերակացի, Տիեզերագիտություն և տոմար, էջ 47:

այն տեքստը, որը հրատարակել է պրոֆ. Ր. Պատկանյանը (էջ 62—75)։ Մեզ թվում է, հենց այս էլ պիտի լինի Շնորհակալու տիեզերապուխեան վերջին մասը։

Պրոֆ. Ր. Պատկանյանի հրատարակության տեքստում սակայն նկատվում է աստղաբաչխական այդ տեքստի մի դվխի չիմաթություն։ «Ցաղագս կենդանատեսակաց» գլուխը (էջ 62) պրոֆ. Ր. Պատկանյանը միացրել է այսպես կոչված «Ցաղագս երկնի»-ի տեքստին և մոցրել նրա ընդհանուր թվահամարի շարքի մեջ, համարելով այն տասերորդ գլուխը, իսկ հաջորդ գլուխները՝ «Ցաղագս աստղաբաչխութեան» (էջ 65) և «Զոդոսի Սղեքսանդրացւոյ նախերգանքի ներքնածութենէ յոյժ» (էջ 67) հրատարակել առանձին-առանձին գլխահամարի տակ։ ՀՄՄՌ մատեն. բոլոր ձեռագրերի տեքստից երևում է, որ այդպիսի բաժանումներն արհեստական են և չեն բխում բնագրից։ Նչված բոլոր գլուխները էլ հաջորդական շարունակություն են հանդիսանում իրար և մի ամբողջության մասեր են։

Ր. Պատկանյանի հրատարակած աստղաբաչխական այս տեքստում նկատվում են բազմաթիվ տեքստային աղավաղումներ — գրչական սխալներ, հապավումներ և այլն։ Բերենք այդ տիպիկ մի քանի օրինակներ բացթողումներից։—

«... որպէս եւ ձայնեալ իսկ է հնչմանասց դաւուրս չաթաթու՝ արեգական եւ լուսնի, եւ եւթանց մոլորակացդ, զոր [հարկաւորիմ նոյն անուամբ յորջորջել, զոր] կոչեն Ցոյնք, Հայք եւ Պարսք»։ (Պ., էջ 64, տ. 10։ ՀՄՄՌ մատեն. № 1973, թ. 318ա)։

«Արեգակն, լուսընթաց եւ երեւակ [յարակաւ կենդանակերպսն իշխեալով, մանաւանդ լուսընթաց եւ երեւակ] յարեւելեայց ծագմանն գոլով»։ (Պ., էջ 65, տող, 17։ ՀՄՄՌ մատեն. № 1973, թ. 319ա)։

«... հրացանութիւն եւ փայլատամունք լինին, խլրամունք ամպոց, խռնարհմունք խռնաւոց, իջմունք անձրեւաց [եւ վնասք պէսպէս առաքիք ի մեզ, բանզի այս գաւտիս որ կիսալուսին է համակարգի, սա է դայեակ անձրեւաց եւ սնուցիչ բուրաստանաց]։ (Պ., էջ 66, տող. 1։ ՀՄՄՌ մատեն. № 1973, թ. 319ա)։

«երիր կենդանատեսակ է նկատելին, արական, երկտարբական, մարդակերպ, ոտն փայլածուին, երամս բարձրութենեան, ոչ ուրուք նուագութեան, ոչ ուրուք եռանկիւնի (ի տունջեան երեւակի կրաւնս, իսկ ի գիշերի փայլածուի) եւ ձայնեալ է նահանգին Դամբոց...» (Պ., էջ 68, տող. 22։ ՀՄՄՌ մատեն. № 1973, թ. 321ա)։

«Եւ եղանէ յանկերեւութէն յերեւոյթ երկրիս ի ժամս երկու եւ երիր մասին [եւ ի երամասին ևէ երամասին, եւ ամանակաց ի եւ Գ մասին...] (Պ., էջ 70, տ. 5։ ՀՄՄՌ մատեն. № 1973, թ. 322ա)։

Անկյունաւոր փակագծերի մեջ առնված մասերը կրճատված են պրոֆ. Ր. Պատկանյանի հրատարակած տեքստում։ Ավելորդ ենք համարում կանգ առնել մյուս տիպի աղավաղումների վրա։

Պրոֆ. Ր. Պատկանյանի հրատարակած այդ տեքստն ունի սակայն մի ավելի մեծ թերություն — նա թերի է վերջից։ Հավանական է այդ թերությունը և նկատի ունի պրոֆ. Ր. Պատկանյանի համար տեքստ պատրաստող հեղինակը, որ նշում է իր տեքստի վերջում. «Ցօրինակին ի վախճան էջին կա-

«տարբ բանս»[1]): Ուրեմն, պրոֆ. Ք. Պատկանյանի հրատարակության հա-մար հիմք հանդիսացող ձեռագիրը վերջացել է 1911 թվի վերջում, որը և հա-վանական է, տարակուսանքի մեջ է ձգել ընդօրինակողին և անհրաժեշտու-թյուն առաջացրել ծանոթագրություն:

ՀՍՍՌ մատենադարանի ձեռագրերում մեզ հաջողվեց հայտնաբերել ըն-տիր ձեռագրեր երկու հին ընդօրինակություն, որոնցից երեսում է պրոֆ. Ք. Պատկանյանի հրատարակած տեքստի պատճառաբանությունը: Այդ ձեռա-գրերը ՀՍՍՌ մատեն. նշանավոր № 1973 և 5443 ձեռագրերն են, որոնցից և վերևում մենք լրացումների մի քանի օրինակներ էինք բերել:

ՀՍՍՌ մատեն. № 1973 և 5443 ձեռագրերի տեքստից երևում է, որ պրոֆ. Ք. Պատկանյանի տեքստը թերի է «Ճաղատս խառնարան աստեղաց» դիմի վերջում: Բաց է մնացել այդ տպագրված տեքստի վերջին դիմի տողերի մասը և նրանից հետո եկող «Ճաղատս հոդմոյ» գլուխն ամբողջու-թյամբ:

Ի միջի այլոց, վերջին «Ճաղատս հոդմոյ» գլուխը հաճախ անդամա-հատված ձևությամբ մեզ հանդիպում է նաև որոշ ձեռագիր ժողովածուների-մում:

Վերջին գլխում Շիրակացին մեծ չափով օգտվել է Արիստոտելի «Վասն աշխարհի» գրվածքից, տեղ-տեղ անգամ տառացի արտագրել է այն:

Շիրակացու աշխատության ներկա մեր «Հայտնաբերած տեքստի մեջ առանձնապես ուշադրության արժանի է վարքերի հիշատակությունը Շի-րակացու մոտ: Այս անվան հիշատակությունը, որքան մեզ հայտնի է, միակն է հայ գրականության պատմության մեջ:

6. ՇԻՐԱԿԱՑՈՒ «ՎԱՍՆ ԸՆԹԱՑԻՑ»-Ի ՏԵՔՍՏԸ

Աստղաբաշխական բովանդակություն ունեցող Անանիա Շիրակացու այս աշխատությունը վերնագրված է. «Վասն ընթացից արեգական՝ ըստ կենդանատեսակացն եւ ի դաւտեացն, զոր կատարէ ի տունըն[ա]ն յաւուրս ՅԿԵ եւ ժամս Գ»: Այս աշխատությունը ոչ մի կապ չունի Շիրակացու անունով հայտնի ու հրատարակված «Ճաղատս ընթացից արեգական»-ի հետ և միանգամայն նոր ու չհրատարակված տեքստ է: Այս աշխատության վե-րաբերյալ տվյալների հիշատակությունն միայն ունի Գ. Տ.—Միքայելյանը՝ Շի-րակացու «Ճաղատս ամպոց (եւ նշանաց» տեքստի հրատարակության առա-ջաբանում: Էջմիածնի № 102 ձեռագրի նկարագրությունը խոսելիս նա-պրում է. ՇԱ.—ՀԳ հոդվածներն ամբողջապես թվում են լինել Շիրակացու-նը: Համենայն դեպս նր. 5 ի ՇԳ հոդվածի վերնագրում կարդում ենք Անա-նիայի անունը— «Անանիայի Համարոզի վասն ընթացից արեգականն և այլն»[2]): Գ. Տ.—Միքայելյանի վերջին ակնարկը մեր վերևում հիշված աշխա-տության է վերաբերում:

Շիրակացու «Վասն ընթացից արեգականն»-ի այս տեքստը պահվել է ՀՍՍՌ մատեն. № 2679 ձեռագրում (նախկին Գևորգյան 102): Այս ձեռագի-րը հայագիտության մեջ հայտնի ունիկում է:— Նա հայերենով մեզ հա-սած թվականն ունեցող ամենահին թղթյա ձեռագիրն է: Ձեռագրի առաջին

---

1) Անանիայի Շիրակունւոյ Մնացորդք բանից, էջ 75:

2) Գ. Տ.—Միքայելյան «Անանիայի Շիրակացի», Վաղարշ. 1896 թ., տպարանագրություն «Աբբաթա» ամսագրից:

մասը, որը պարունակում է մեծ մասամբ Շերակացու աշխատությունները, ընդօրինակված է 971 թվին, իսկ մյուս մասը՝ 981 թվին: Գրչագիրը պատմա-վիճաբանական նյութերի ժողովածու է:

Շերակացու «Վասն ընթացից արեգական...»-ի տեքստը ՀՍՄՌ մատենադարանի № 2679 ձեռագրում ընդօրինակված է ԾԹ (53) հոդվածի տակ: Գրչագրի նյութը բաժանված է առանձին հոդվածների: Գրչագրերն ընդօրինակված է մանր երկաթագրով: Գրչագրի դիմաերես հիշատակարանը հրատարակել է Հ. Տաշյանը[1]): Այդ գրչագրի մասին խոսել են նաև մի շարք այլ բանասերներ: «Վասն ընթացից արեգական...»-ի տեքստի Շերակացուն պատկանելը անկասկած է: Այդ մասին են վկայում ոչ միայն Շերակացու անվան հիշատակությունը տեքստի վերնագրում կամ տեքստի Շերակացու աշխատությունների շարքում հանդես գալը, այլ և տեքստի բովանդակությունը: Նայելով տեքստին, առաջին իսկ հայացքից, կարելի է ասել, որ նման տեքստ կարող էր գրել Անանիա Շերակացին:

Շերակացու «Վասն ընթացից արեգական...»-ի տեքստը ՀՍՄՌ մատենադարանի № 2679 գրչագրում ընդօրինակված է տոմարական աշխատությունների շարքում: Այդ նույն տեքստի մի այլ ընդօրինակություն գրաված է մեծով կրճատված ձևով մեզ հանդիպում է նաև ՀՍՄՌ մատենադարանի № 1973 գրչագրում դարձյալ տոմարական աշխատությունների շարքում:

«Յաղագս ընթացից արեգականն»-ի տեքստն այս գրչագրում վերնագրված է. «Վասն կենդանակերպից, եւ արեգական»: Այս աշխատության տեքստում վերցվում է առանձին-առանձին ամիսները, նշվում նրանց համապատասխանող երկրային ամիսները և ապա արվում արեգակի որ կենդանակերպը մանելու փաստը ու պիշերավարի կենդանակերպը: Այսպես, հունիսի ամսվա համար ասված է. «Ի մարտի Իբ, եւ ի նաւասարդի Իբ եւ ի նիսանի Ա, արեգակն ի խոյն մտանէ, եւ պիշերավարի կշռոն»: Մարտին հետևում է ապրիլը, ապրիլին—մայիսը, և այդպես՝ մինչև փետրվար:

Շերակացու «Վասն ընթացից արեգական...»-ի՝ տոմարական աշխատությունների շարքում հանդես գալու կապակցությամբ հարց է առաջանում — նա տոմարի հատվածներից մեկը չի՞ պրկրել և տոմարական հաշիվների նպատակով էլ բերված չի՞ եղել:— Այդ հարցին պատասխանելը, առանց կոնկրետ փաստերի, դժվար է: Մանավանդ, որ ՀՍՄՌ մատեն. № 2679 գրչագիրը ծավալուն ժողովածու է և ամեն անգամ նյութեր խառը ձևով ընդօրինակված են: Առ այժմ, այդ տեքստի բովանդակությունը նայելով՝ մենք անհրաժեշտ համարեցինք դասել նրան աստղաբաշխական նյութերի շարքում:

Շերակացու «Վասն ընթացից արեգական...»-ի տեքստը սկսվում է մարտ ամսից և վերջանում փետրվարով: Այնուհետև բերված է փոքրիկ հատված երկրային ամիսների վերաբերյալ: Վերջին հատվածն, առանց կասկածելու կարելի է ասել, որ Շերակացու տոմարի հատվածներից է կրճատված ձևով: Այդ հատվածն ավելի ընդարձակ ունի Շերակացու տոմարի «Պատճէն տումարի երկրացւոց» դլուխը: Ծավալուն ժողովածուի հեղինակը բերում է այստեղ կրճատված ձևով:

---

1) Հ. Տաշյան, Մանր ուսումնասիրություններ, Վիեննա 1895, էջ 202:

ՀՍՄՌ մատեն. № 2679 ղբչապրի Շիրակացու «Վասն ընթացից արեգական...»-ի տեքստը մեզ հասել է ընտիր ղբչութեամբ: Պահված է «Ղ»-ի գործածութեան հին ձևերը՝ «ալդ», «հզդացուց», «խաղացուց», «վայդաձու», «յուղիս» և այլն: Ուշագրութեան արժանի է «Ջրհոյան» (փոխ. «ջըրհան»), «Ախրատն» (փոխ. «Հրատն»), «Հիւսիս» (փոխ. հիւսիս»), «Թև» (փոխ. «Թէ»), «Եթև» (փոխ. «Եթէ»), «Թևպէտ» (փոխ. «Թէպէտ») և այլ ուղղագրական ձևերը: Նույն տեքստում հետաքրքիր է աշխարհագրական ուղղութիւններ արտայտելու Շիրակացու եղանակը — «յահեկէ արեւելեան», «յահեկէ արեւմտեան», «յահեկէ հարաւոյ», «յայմէկ հարաւոյ» և այլն:

Տեքստում եղած բազմաթիվ թվականներ եղծված են: Նրանց մեծ մասը ջնջել և նորից են գրել: Մենք աշխատել ենք հնարավոր չափով վերականգնել նախկին թվականը՝ նշելով այդ մասին յուրաքանչյուր էջի նկարին լուսանցքում: Տեքստում նկատվում են մի քանի տեղ բացթողումներ, որոնց մասին գրված է ծանոթության մեջ: Տեքստի վերջում կա նրիսւ փոքրիկ աղյուսակ:

«Հաստատակատարութիւն տունջեան եւ պիշերոյ եւ եղանակ պարնանայինն»:

| | | |

նից նշան:— Յորժամ յարեւմտից կողմն կարմիր տեսանես՝ մերձել ի վաղ անձրեւ գայ...»: Ընդօրինակել է Մխիթար քահանան 1756—1792 թվերի ընթացքում:

Գ. Տ.—Մկրտչյանի հրատարակած «Ցաղագս ամպոց եւ նշանաց» աշխատությունը Շիրակացուն պատկանելու վերաբերյալ Գ. Տ.—Մկրտչյանի կողմից բավականաչափ փաստեր բերված են և ավելորդ ենք համարում դրա վրա կանգ առնել:

Ո՞րն է Գ. Տ.—Մկրտչյանի հրատարակած «Ցաղագս ամպոց եւ նշանաց» աշխատության տեղը Շիրակացու մատենագրության մեջ: ՀՍՄՌ մատեն. № 1999 ձեռագիրը մեզ հնարավորություն է տալիս որոշ կռահումներ անել այդ ուղղությամբ: ՀՍՄՌ մատեն. №. 1999 ձեռագրում գտնվող «Պատճէն տումարի հայոց»-ի տեքստում, առանց խորադրի բերված է մի հատված Շիրակացու «Ցաղագս ամպոց եւ նշանաց»-ից: Հատվածը վերնագրված է «Վասն լուսնին»: Տեքստից բերված են ընդամենը վեց տող. «Յորժամ լուսինն Գ աւրեայ լինի, կամ չորեքաւրեայ, եթէ յոտակ եւ սուրբ է՝ պարզ նշանակէ, ապա թէ մահիկներն, այսինքն ի խոնարհն մռայլ ունի՝ անձրեւ նշանակէ» (թերթ 17ա): Որ այդ հատվածն ամենևին ընդարձակ տեքստից է վերցրած, այդ երևում է այն փաստից, որ հատվածի վերջում կարմիր թանաքով ավելացվել է «այլք»՝ «եւ այլն»-ի իմաստով:

ՀՍՄՌ մատեն. № 1999 ձեռագրի տոմարում «Ցաղագս ամպոց եւ նշանից» այդ ձևով հանդես գալը մեզ հնարք է տալիս ենթադրել, որ Գ. Տ.—Մկրտչյանի հրատարակած տեքստը Շիրակացու տոմարի մի հատվածն է հանդիսացել:

8. «ՑԱՂԱԳՍ ՇԱՂԿԱՊՈՒԹԵԱՆ ԱՐԵԳԱԿԱՆ ԵՒ ԼՈՒՍՆԻ»

ՀՍՄՌ մատեն. № № 2180 և 2762 ձեռագրերում, Շիրակացու աշխատությունների շարքում, ընդօրինակված է արեգակի և լուսնի խավարման վերաբերյալ մի փոքրիկ տեքստ, որն ունի «Ցաղագս շաղկապութեան արեգական եւ լուսնի» վերնագիրը: Այդ տեքստը փաստորեն Շիրակացու Տիեզերագիտության դրույթներից մեկն է, բայց որովհետև նա անմիջապես չի հետևում Տիեզերագիտության տեքստին և չի մտնում նրա համարաչարքի մեջ, այլ ընդօրինակված է Շիրակացու «Ցաղագս չափոյ...» և «Թիւք որչափութեան տանց հին եւ նոր կատարանաց» աշխատություններից հետո, ուստի և մենք անհրաժեշտ համարեցինք դնել Շիրակացու Տիեզերագիտության հրատարակած տեքստին: Այդ տեքստը ՀՍՄՌ մատեն. №. 2180 ձեռագրում ընդօրինակված է թերթ 538ա—538բ, №. 2762-ում՝ էջ 230—231[1]): Նրա Շիրակացուն պատկանելն անկասկած է:

Շիրակացու «Ցաղագս շաղկապութեան արեգական եւ լուսնի» այդ տեքստը, որքան մեզ հայտնի է, չի հրատարակված: Նրա մասին մեզ հայտնի չէ նաև բանասիրական որևէ հիշատակություն: Միայն, Շիրակացու «Տիեզերագիտության եւ տումար» աշխատության առաջաբանում, վերև

---

1) ՀՍՄՌ մատեն. № 2180 և 2762 ձեռագրերի բովանդակության մանրամասն նկարագրությունը տես Շիրակացու Տիեզերագիտության հրատարակության աթթիլ մեր գրած առաջաբանը, էջ 10—15:

հիշված երկու դրչագրերի պարունակած նյութերի շարքում հիշել ենք մենք:

Շիրակացու «Ճաղատաց չաղիապոլեհան արեգական եւ լուսնի» այս աշխատությունն արեգակի և լուսնի խավարման մասին ձեռագրերում հաճախ հանդիպող դուշակողական ախթարքներից չէ, այլ ատաղաբաշխական կոնկրետ հաշիվներին վրա հիմնված մի լուրջ աշխատություն: Նա վերաբերեն խավարումների վերաբերյալ մեզ հասած ամենահին հայերեն տեքստն է, որ հիմնված է գիտական հաշիվների վրա: Ատաղաբաշխությամբ զբաղվող մանուկներին Շիրակացու այս աշխատությունը մատչելի դարձնելու համար, անհրաժեշտ համարեցինք բերել այն ամբողջությամբ:

9. «ՅԱՂԱԳԱՑ ՅԱՆՄԱՆ ԼՈՒՍՈՑՆ, ԶՈՐ ՈՄԱՆՔ ԿԱԹԻՆ ԾԻՐ ԱՍԱՑԻՆ»

Այս վարքիկ աշխատությունն է, որը պահել է ՀՍՄՌ մատենադարանի № 573 ձեռագիրը: Մեսրոպ եպ. Մաշտոցը կարծիքով, նա պատկանում է Շիրակացուն: Ձեռագիրը գիտական նյութերի ժողովածու է և ունի XV դարի ձեռագիր:

«Ճաղատաց յանմանն լուսոյն...» աշխատության մեջ թվարկված են կիթին ծրի տոմոն եւ վեց տարբեր անունները, որոնք, ըստ տեքստում նշած հիշատակության վերցված են Արխատոսեից: Աշխատության բովանդակության նայելով, կարելի է ենթադրել, որ նա Շիրակացուը լինի, բայց աշխատության վերնագրում Շիրակացու անունը չի հիշված: Այդ աշխատությունը Շիրակացուն պատկանելու խնդրում բավական չէ նրա՝ Շիրակացու աշխատությունների շարքում ընդգրկված լինելու փաստը: Ինչ կասկած է ունեցել Մեսրոպ եպ. Մաշտոցին այս տեքստը Շիրակացուն վերագրելու խնդրում, մեզ հայտնի չէ: Հայագիտության քննության ներկայացնելու համար անհրաժեշտ ենք համարում բերել այդ տեքստը:—

10. «ՅԱՂԱԳԱՑ ՅԱՆՄԱՆ ԼՈՒՍՈՑՆ ԶՈՐ ՈՄԱՆՔ ԿԱԹԻՆ ԾԻՐ ԱՍԱՑԻՆ»

Բայց Արխատոսէլ համատատէր ԺԶ անուն տասց է գտհէին: Նախ՝ արեգականն հետ է: Երկրորդ՝ մասր օդոյ: Երրորդ՝ ցողումն մանր անճրեւաց: Զորրորդ՝ ցանուցն վերին լոյսոյն: Հինգերորդ՝ յորդատուլն հետ: Վեցերորդ՝ կաթնածիր խաչանց: Եւթներորդ՝ ժամադիտակ գիշերոյ: Ութ <երորդ>՝ ծիր երկնից: Իններորդ՝ ամառ լինչ վերին եթերեցին հողմոց: Տասներորդ՝ փայլատակման տուն: Մեւսասներորդ՝ սալ երկնից: Երկոտասաներորդ՝ հայելի նաւորդաց: Երեքտասաներորդ՝ գիմակ արեգականն, Զոբերքատասներորդ՝ պահարան նշուլից ստուգոց: Հնգետասաներորդ՝ անդ ծնունդ լուսոյ: Վեչտասաներորդ՝ եւ այլք եթերային վճիռ լուսոյն ազատութեամն» (ք. 264ա):

11. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՏԻԵԶԵՐԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ

Շիրակացու «Ս. խոստացեալն» աշխատությունը մեծ արժեք է ներկայացնում ո՛չ միայն հայ ժողովրդի կուլտուրայի, գիտության և պատմության համար[1]), այլև համաշխարհային կուլտուրայի, գիտության և

1) Այս մասին ենս պրոֆ. Լ. Լ. Սեմյոնովի անգլերեն մեծ հրատարակած Շիրակացու «Տիեզ. և տոմար»-ի առթիվ „Коммунист" թերթում:

պատմության համար: Երբակացին դնում և ճիշտ լուծում է տալիս դիտական մի չարք հարցերի: Երբակացու այդ աշխատության արժեքն ավելի ակնբախ դարձնելու համար, մենք անհրաժեշտ ենք համարում բերել մի քանի վկայություններ:

Երբակացին, հիմնված «արտաքին պիտանականների» ուսումնական վրա, խոսում է երկրի կլորության մասին. «Եւ եթէ ոք կամիցի օրինակ առնել զարտաքնոցն լսել՝ երբ մէկ երկրի նմանեցուցանել, ինձ է դէմ թուէ ասացեալն իրրև ձու. որպէս նորա զեղինն ի միջին պղտաձեւ կառուցեալ կայ՝ եւ սպիտակն չուրջ դնովաւ, եւ խճճեալն պատ առեալ գամնայնիւ, նոյնպէս երկիրս ի միջոյ կառուցեալ կայ, եւ օդ չուրջ դնովաւ և երկինն պատ առեալ գամնայնիւ» (Երբակացու մեր հրատարակած տեքստը, էջ 10):

Երբակացին արեգակը մեծ է համարում երկրագնդից: Այդ ասելով նա բերում է բազմաթիվ օրինակներ և ամփոփում հետևյալ խոսքերով. «...եւ յայտ ամենայնի յայտ է, թէ մեծ է արեգակն քան վիճակութեանն ասուածածային գրոց, որում եւ արտաքնոցն բարեաց ի ճահ պատահեն վիճակութիւնք» (էջ 58):

Երբակացին դիտական ճիշտ բացատրություն է տալիս արեգակի խավարմանը. «... արեգակն դէր ի վերոյ լուսնի է. եւ յուսնին դիպեալ լը ներքոյ արեգական. եւ յորժամ հաւասարապոյծ լինին՝ մինն զի եկն ի վերոյ եւ մնան ի ներքոյ կշիռ նմին, եւ արեգակն բնաւ բացեալ հասկ հեղոյ պրոբրութիւն լուսոյն՝ հանդիպ ուղիղ կշռութեամբ ի միջոյ լուսնին: Ո՛չ թողու անցանել ի ներքին անօդութիւնն օդոյն, որ սպռնալ տարածանի լոյս ծով եւ բնդ ցամաք» (էջ 59):

Երբակացին ճիշտ ձևով է բացատրում մարդկանց լսողության եւ տեսողության բնդունողականության հարաբերության հարցը: Այդ ասելով նա բերում է կայծակի և որոտի օրինակը: Ինչպե՞ս է որ, հարց է տալիս Երբակացին, կայծակը և որոտը միասին են սկսվում, բայց մենք կայծակն ավելի շուտ ենք տեսնում քան լսում ենք որոտը: Դրա պատճառն այն է, բացատրում է նա, որ «տկն երագ է քան զաչսին, եւ տկն փոքի կարէ տանել ի հեռին գնալոյ, յորժամ յամպոյն լսանէ»: (էջ 36):

Երբակացին դիտե լուսնի սեփական լույս չունենալը և նրա արեգակից լույս առնելու փաստը. «Բայց եւ հաւանիմ բազմոց իմաստասիրութեան յարեգականէ ասել <առնել պղոյս>», (էջ 40):

Երբակացին ճիշտ բացատրություն է տալիս դիշերվա, համարելով այն երկրի ստվերը. «երկիր... ստուերաւն գիշեր գիշերացուցանէ»:

Երբակացու այս աշխատության մեջ, նրա փիլիսոփայական հայացքներում կան դիալեկտիկայի որոշ տարրեր: Այսպես, նա իր աշխատության «Յաղագս երկնային դարձուց» գլխում խոսելով արեգակի տաքության և լույսի չնորհվել աշխարհի վրա կյանք և կենդանություն առիզվելու մասին, ամփոփում է հետևյալ խոսքերով. «... Լինելութիւնն իցէ սկիզբն ապականութեան, եւ ապականութիւն զարձեալ գնդըէն իցէ սկիզբն լինելութեան: Զի այսմ անվնաս հակառակութենէ՝ աշխարհ առցէ գհետուզութիւնն» (էջ 31): Նույն մտքեր ավելի պատկերավոր օրինակով Երբակացին կրկնում է իր նույն աշխատության 42-րդ գլխում. «Ցեասնելով զառաջնոցն գլուխն լցեալ եւ մաշեալ՝ իմացան զանցաւորութիւնն կենաց իւրեանց եւ

ասացին թէ՝ «է մեզ պատկեր» (էջ 77)։ Նախնիքնեքը տեսնելով լուսնի կլոր ըլլալը և նմանելը, նմանեցուին իրենց անցեալոր կյանքին և ասացին թէ մեր պատկերի նման է։

Շիրակացու «Մա խոսասցեալն» աշխատութեան մէջ մեծ արժէք։ Նա իր աշխատութեան մէջ այլ հեղինակներից վերցրել և օգտագործել է նրանցից օրինակներ, որոնք ունեն գեղարվեստական մեծ պատկերավորութեան։ Բավական է բերել նրա գարնան նկարագրութիւնը «Յաղագս արեգական» գլխից, որը վերցրել է Բարսեղ Կեսարացուց. «Եւ այսպէս գաղջատաքուն խառնուածովք յարդարի գարունն իւրով մեծադեղ վայելչութեամբն, զի ի նմա արմատք արձակին զբոյս, մարգք զուարճանան, ծաղիկք պայծառանան, տունկք ցցուին, ծառք արձակեն զրողոլմն և անասունք հանդերձ թռչնօք եւ ծովային ջրածնունդ զնոսօք եւ ամենեքեան ըստ իւրաքանչիւր ազգի զան ի ծնունդ, ի սէր եւ ունդ», (էջ 52)[1]։

Վեցերորդ գլխում խոսելով արտաքին երկրի վրա ունեցած ազդեցութեան մասին, Շիրակացին հետևյալ ձևով է ներկայացնում. «... ի սառամէկ ձայնմանէ օգոյն շարժմամբ խառնեալ թանձրութիւն հողոյս թուլացել, եւ ի զայրարիւր արմատոյն բոյսքն խոտոյն ի վեր ընձեղղիցին։ Սոյնպէս եւ պտուղք ծայրից ծառոց բացեալ ցիւղիցին, եւ այլքն ըստ իւրաքանչիւր կարգի՝ զձմեռնային ծանրաւորութիւն ի բաց ընկենուցանեն, զարբուցիչք եւ զուարթացուցիչք յոյժ պայծառութեամբ երկիր առնուցու զվայելչութիւն» (էջ 35)։

Գեղարվեստական նման հատվածներ Շիրակացու «Մա խոսասցեալն» աշխատութեան մէջ բաւմաթիւ են։

Սրանով, ի հարկէ, չի սահմանափակվում Շիրակացու «Մա խոսասցեալն» աշխատութեան արժէքը պիտութեան, կուլտուրայի և գրականութեան պատմութեան համար։ Շիրակացու այդ աշխատութեան մէջ կան բաւմաթիւ այլ արժէքներ ևս, որոնց վրա ավելորդ ենք համարում այստեղ հանել առնել։

---

[1]) Տես Բարսղի Կեսարացւոյ Ճառք վասն վեցօրեայ արարչութեան, Վենետիկ 1830 (ուխերորդ հատ), էջ 52։

VI. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. ԳՐՉԱԳՐԵՐԻ ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱՆ

Շիրակացու պատմական աշխատությունները մեզ հասել է նրա ժամանակագրությունը, որը հրատարակել է Բ. Սարգիսյանը «Անանուն ժամանակագրություն համբավը յօրինեալ յէ գարուս» վերնագրով: Այդ ժամանակագրությունը չորս գրչագրերով է մեզ հասնում:

1. *ՀՍՄՌ մատեն. № 2679 (Գևղ. 102), թերթ 28ա. «Մովսէսի խորենացւոյ եւ Անդրեասի:— Ադամ նախաստեղծ. սա կեցեալ ամս Մէ. ծնանի զՍէթ...»: Տեքստը՝ հրատարակածի համեմատությամբ լրիվ է: Գրչագիրն ընդօրինակված է 971 թվին Դուկաս գրչի ձեռքով: Գրչագրի նյութը թուղթ է (սա մեզ հասած հնագույն թղթյա գրչագիրն է): Գրությունը՝ մանր երկաթագիր է: Ժամանակագրությունն ընդօրինակված է գրչագրի առաջին մասում, որը Շիրակացու աշխատությունների ժողովածուն է հանդիսանում:*

2. *ՀՍՄՌ մատեն. № 5254 (Տ. 528), թերթ 190ա. «Խաւսք փիլոսոփի:— Նախաստեղծն Ադամ կեցեալ... ծնաւ զՍէթ: Սէթ կեցեալ ամս Մե. ծնաւ զԵնովս...»: Գրչագիրն ընդօրինակել է Գևորգ գրիչը 1280 թվին: Տեքստը՝ հրատարակած ժամանակագրության համեմատությամբ կրճատված է, բայց տեղ-տեղ ունի ընական ընթերցվածքներ:*

3. *Վենետիկի մատեն. № 218 (Նախկին № 352), թերթ 182ա. «Մովսէսի խորենացւոյ եւ Անդրեասի (ժամանակագրություն):— Ադամ նախաստեղծ. սա կեցեալ ամս երկերիւր եւ երեսուն՝ ծնանի զՍէթ...»: Ընդօրինակել է Ե. վ. Սեթյանը 1835 թվին (Հմմտ. Բ. Սարգիսյանի ցուցակ, հտ. Բ էջ 279):*

4. *ՀՍՄՌ մատեն № 6828: Ընդօրինակված է ՀՍՄՌ Մատեն. № 2679 գրչագրից: Ձեռագրի գրչությունը XIX դ. է:*

Բ. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԱՑՈՒՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒ ՀԱՐՑԸ

Այն գրչագրի տեքստի վերնագիրը, որից հրատարակված է Շիրակացու ժամանակագրությունը, չունի Շիրակացու անունը, ուստի և հրատարակիչ Բ. Սարգիսյանը այն վերնագրել է՝ «Անանուն ժամանակագրություն համբավը յօրինեալ յէ գարուս»: Սակայն հրատարակիչն իր նախաբանի մեջ և իր «Մովսէս Խորենացւոյ պատմագրութեան ընթացքը եւ անոր հնութեան նոր ապացոյցները»[1]) հոդվածում ժամանակագրության

1) *Տես «Բազմավէպ» ամսագիրը, 1903 թ., էջ 500—517, 541—547:*

հեղինակն է համարել Երրակացուն։ «Ժամանակագրությունը Երրակացուն վերագրելու խնդրում Բ. Սարգիսյանը մատնացույց է արել հետևյալ փաստերը։—

ա) Ժամանակագրությունը վերջանում է Սահակյան Որմիզդ թագավորի (579—590) և բյուզանդական Հերակլ կայսեր (610—641) հիշատակությամբ։ Ժամանակագրության մեջ չկա պատմական մի փաստ, որ հնչեցնի 7-րդ դարից ուշ անելի ունեցող որևէ իրագրություն, ուրեմն՝ նա 7-րդ դարում ապրած հեղինակի գործ է։

բ) Երրակացու հեղինակությամբ հայտնի աշխատությունների և այս ժամանակագրության լեզուն նման են իրար, որը ցույց է տալիս մի հեղինակի գործ լինելը։

գ) Ադամից մինչև Ջրհեղեղ և Ջրհեղեղից մինչև Քրիստոս դվխալոր դարագրությունների չարագրությունը Երրակացու տոմարի և ժամանակագրության մեջ դրեթե նույնն է, որն ապացուցում է հեղինակների նույնությունը։

դ) 12 աղղերի անունները դրեթե նույնությամբ հիշված են Երրակացու տոմարի և ժամանակագրության մեջ։

ե) Ժամանակագրությունն ընդօրինակված է Երրակացու աշխատությունների չարքում 971 թվի դրչությամբ։

զ) Ժամանակագրության մեջ հիշված՝ Պենտակոստեի օրը՝ երեսադմի տաճարի մեջ տեղի ունեցած հրաշքի նկարագրությունը, որը վերցված է Հովհաննուից, տառացի համապատասխանում է Երրակացու Հայտնության և Զատկի ճառերում հիշված նույն հրաշքի նկարագրությանը։

է) Եվ, վերջապես, լուսնացույցի դյուրը ճիշտ նման ձևով նկարագրված է վերև հիշված Երրակացու ճառերում և ժամանակագրության մեջ։

Բ. Սարգիսյանի համար մնացել են մնացել հետևյալ երկու առեղծվածը. 1) ինչպես է որ Երրակացու ժամանակագրության մեջ պատմական փաստերի նկարագրությունը հասնում է մինչև 685 թվականը, որովհետև եթե նա «Քրոնիկոն» է և գրված պիտի լինի Անաստաս կաթողիկոսի պատվերով, ապա նա պիտի վերջանար 667—669 թվականներին։ Դժվարությունից դուրս գալու համար ասկայն, նա հնարավոր է համարում,— որ ժամանակագրությունը հետագայում չարունակված լինի իրեն, Երրակացու կողմից։ 2) Երրակացին ստացել է քաղկեդոնական կրթություն, նրա ուսուցիչ Տյուքիկոսը եղել է երկարաբան։ Երրակացին ունեցել է քաղկեդոնական տրամադրություն, հալածվել է դրա համար, ինչպե՞ս է որ նա իր ժամանակագրության մեջ հանդես է գալիս որպես օրթոդոքս լուսավորչական և հարճակում գործում քաղկեդոնական ուսմունքի վրա։

Մենք ներկա աշխատության տոմարի բաժնում, Երրակացու կազմած ՇԼԲ աղյուսակի կապակցությամբ, մենք արդեն կանգ ենք առել Երրակացու անունով մատենագրության մեջ հիշված «Քրոնիկոն» աշխատության վրա և ցույց տվել, որ խոսքն այդտեղ ո՛չ թե իրոք ժամանակագրության է վերաբերում, այլ Երրակացու կազմած ՇԼԲ աղյուսակին, ուրեմն, Բ. Սարգիսյանի տարակուսանքներից առաջինն ընկնում է։ Ինչ վերա-

բերում է Բ. Սարուխանյանի երկրորդ տարեկանքին, տալ պիտի առնենք, որ նա բացարձակ անհվանի է: Շերամակերը իր բոլոր աշխատությունների մեջ հանդես է գալիս օրթոդոքս լուսավորչական և կառավարական: Բավական է հիշել նրա Հայոց եկեղեցու և Զատիկի ճառերում կատարած հարձակումները քաղկեդոնական Եկեղեցու կողմնակիցների վրա, այնպես որ Շերամակերը ժամանակագրության մեջ ցուցաբերած հակաքաղկեդոնական մոտեցումը միանշանակ է և հանգամանալի:

Ժամանակագրության Շերամակերն պատկանելու վերաբերմամբ մենք արդեն կանգ ենք առել մեր «Մորենացուն վերագրվող «Աշխարհացույց»-ի հեղինակի հարցի շուրջը» աշխատության մեջ: Մենք այնտեղ բերել ենք փաստեր և ցույց տվել, որ ժամանակագրությունն անվիճելիորեն Շերամակերն է և չենք կասկածում նույնը կրկնել: Այժմ լրացման կարգով մենք ցանկանում ենք մեկ մատնացույց անել նոր երկու փոքրիկ փաստ, որոնք կարող են դարձյալ որոշ նշանակություն ունենալ ժամանակագրության հեղինակի որոշման հարցում:

Առաջին փաստը, դա Շերամակերս՝ դնելի իր օգտագործած սկզբնաղբյուրը քննադատական վերաբերմունք ցուցաբերելն է: Շերամակերն ժամանակագրության մեջ Ագաթի մասին խոսելիս, գրում է. «Եւ ընդէ՞ր արդեւք զայս մեկնեալ անուամբ յորջորջեաց, իսկ վասն այդոցն ամենեցուն պարզաբար ասաց՝ թէ ծնան... Ինձ թուի, հանդուգնեալն՝ զաղարտուցանել, իսկ զդաղարտուցանելն զամբարշտութիւնս եւ զչարիս՝ առատաձեռնաբար մարդկան երկրագործաց զաբուն երկրորդի» (էջ 3):

Մենք մեր «Աշխարհացույց»-ի շուրջը գրած աշխատության մեջ մանրամասն խոսել ենք այդ մասին և ցույց ենք տվել, որ քննադատական այնպիսի դարձվածքներ, ինչպիսին՝ «ես կարծեմ», «ինձ թուի», «հաւանական եմ» և այլն, հատուկ են ինչպես Խորենացուն, այնպես և Շերամակերն:

Երկրորդ փաստը, այդ ժամանակագրության և Տիեզերագիտության տեքստերում հուլիս և օգոստոս ամիսների անունների առաջացման պատճառը նման լեզվով և ձևով նկարագրելու փաստն է: Բառ այդ նկարագրության, հուլիս ամսի անունն առաջացել է Հուլիոս կայսեր անունից, իսկ օգոստոսը՝ Օգոստոս կայսեր անունից: Անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ ժամանակագրության և Տիեզերագիտության այդ հատվածները զուգահեռ ձևով:

Ժամանակագրություն	Տիեզերագիտություն
«Գայոս...զկիւնիլիոսն ամիս՝ Յուլիս անուանեաց. վասն զայն ամսեան ծնանելոյն» (էջ 35):	«...Գայոս...զկուինտիլիոս ամիս յուլիս անուանեաց ի վերայ անուան իւրոյ, եւ վասն ծնընդեան իւրոյ»... (էջ 76):[1])
«Աւգոստոս... զՍեքստոս ամիս՝ Աւգոստոս անուանեաց, վասն ի նոյն ամսեան իւրոյ ծննդեանն լինելոյ» (էջ 36):	«... Օգոստոս երկրորդ կայսերն զսեքստիլիոս ամիս յօգոստոս անուանեաց իւր անունն, եւ վասն ծննդեան իւրոյ ի նոյն ամիսն»: (էջ 76):

1) Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, մեր հրատարակությունը, 1940 թ.

Բերված հատվածում նշված վերաբերվ նմանությունն ունի քան ակնհայտ է, որ վերնադրությունները, կարծում ենք, ավելորդ են: Այդ նմանությունները դաշինք են նորից ապացուցելու, որ ժամանակագրության հեղինակն Անանիա Շիրակացին է:

3. ՇԻՐԱԿԱՑԻՆ ՕԳՏՎԵԼ Է ՆՈՐԵՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ժամանակագրության մասին բավականաչափ խոսվել է հայագիտության մեջ: Նշվել է հատկապես նրա կարևորությունը Նորենացու ժամանակի որոշման հնդրում: Բ. Սարգսյանը «Բազմավէպ»-ում տեղադրած իր «Նորենացւոյ պատմագրութեան ուսումնասիրութեան ընթացքը և անոր հնութեան նոր ապացոյցները» աշխատության մեջ) ցույց է տվել, որ Շիրակացին իր ժամանակագրության մեջ օգտվել է և անունով հիշում է Մովսես Նորենացուն: Նա իր հոդվածում այդ առթիվ Շիրակացու ժամանակագրության և Նորենացու պատմության տեքստերից կատարել է մի շարք հատվածների համեմատություններ: Այդ նույն հարցի վրա կանգ ենք առել նաև մենք մեր «Աչխարհացոյց»-ի չորքը դրած աշխատության մեջ՝ «Փաստեր Նորենացու՝ Շիրակացուց առած ապրած հեղինակ լինելու մասին» գլխում: Մենք այնտեղ համեմատել ենք Նորենացու պատմության մի հատվածը ժամանակագրության սկզբի երկու էջերի հետ և ցույց տվել՝ Շիրակացու Նորենացուց օգտվելու փաստը:

Վերջերս մեր կատարած ուսումնասիրություններն ավելի ամրացրին մեր համոզմունքը՝ Շիրակացու Նորենացուց օգտվելու հարցում: Լրացման կարիքով անհրաժեշտ ենք համարում բերել այստեղ հայերեն դրերի գլուխն վերաբերող ժամանակագրության հատվածը, որն վերցրված է Նորենացուց և համեմատել Նորենացու պատմության համապատասխան հատվածի հետ:

ժամանակագրություն	Նորենացի
«Թէոդոս փոքր՝ որդի Արկադեայ՝ ամս երեսուն եւ եւթն... ի որոց աւուրս էր Սուրբ Սահակ՝ Հայոց հայրապետ, յորոյ աւուրս զպրութիւն հայերէն լեզուի գտան եւ ինն գրով ի Դանիէլէ փիլիսոփայէ Աստուց կարգեցաւ. զոր եւս բերել Վռամշապուհ թագաւոր Վաղարշաց նախարարի՝ ձեռամբ Հաբէլի երիցուս: Իսկ զեբէն գրոցն պակասութիւն Մեսրովբ երանելի, ի Հացեկաց Տարաւնոյ, յազատ տանէ, ամսաւորեայ պահաւք եւ ազաւթիւք՝ հանդերձ ազակերտաւքն հայցեալ յԱստուծոյ, եւ ցուցաւ նմա ի տեսլեան: Այս լինէր յԱստուց աշխարհին՝ յոր-	«Վախճանեալ Արկադեայ՝ փոխանակ նորա թագաւորէ Նորին որդի, որ կոչեցաւն Թէոդոս Փոքր... Ընդ այն ժամանակս եկեալ Մեսրոպայ, եւ բերեալ դնշանագիր մերոյ լեզուիս, եւ հրամանաւ Վռամշապհոյ եւ Մեծին Սահակայ ժողովեալ մանկունս ընտիրս...» (էջ 328): «... Առաքեաց (թագաւորն Վռամշապուհ) ...հաւատարիմ իւր, Խադունի ազգաւ, Վահրիճ անուն, յոյժ փափագող նորին գործոյ, առ Հաբէլն այն...» (էջ 326:) «Առ սա (առ Հռոփանոս) երթեալ Մեսրոպայ, եւ յայտ եւս ան-

1) Տես «Բազմավէպ», 1903 թ., էջ 509—517, 541—547:

ժամ վանն նորին անդ ճանապարհորդեցին։ Իսկ զգուշեալ նըշանախեցքն՝ հանդերձ միայաբանքն էր գրեալ...Ստեփանոսի («Հռոմիանոսի») գրչի Սամոսացւոյ» (Ժամանակագրութիւն, էջ 57)։

շահ ինացեալ՝ յաղօթս ապաւինի։ Եւ տեսանէ... թաթ ձեռնի աջոյ՝ գրելով ի վերայ վիմի... Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եհտեղծ զնշանագիրս մեր, հանդերձ Հռոմիանոսիւ կերպաձեւեալ զգիրքն առ ձեռն պատրաստեալ Մեհրոպայ...»։

(Պատմութիւն Հայոց Մովսէս Խորենացւոյ», էջ 327)։ 1)

Համեմատութենից պարզ երևում է, որ Շերակացու ժամանակագրութեան մէջ համառոտված են հայկական նշանագրերի ստեղծմանը վերաբերող գրեթէ բոլոր այն տեղեկութիւնները, որոնք բերված են Խորենացու պատմութեան մէջ։ Շերակացու Խորենացուց օգտվելու փաստը, մեր կարծիքով, միանգամայն անկասկած է։ Իսկ այդ փաստը հիմնովին հերքում է այն աղբյուրագէտների և բանասէրների կարծիքը, որոնք փորձում են Խորենացուն փոխադրել 9-րդ դար։

4. Հրատարակված տեքստի բնագիրը

Շերակացու ժամանակագրութիւնը Բ. Սարգիսյանը հրատարակել է իբրև մատենադարանի № 739 ձեռագրից, որն ընդօրինակված է 1836 թվին Եփրեմ վ. Սեթյանի ձեռքով։ Ըստ գրչի վկայութեան, նրա մայր գրչագիրը կարծեմ առաջնորդ կարապետ վարդապետի սեփականութիւնը կազմող երկհատորը մի գրչագիր է հանդիսացել, ընդօրինակված Հայոց Նվ. (=981) թվին։

Բ. Սարգիսյանը խոսելով իր հրատարակած տեքստի գրչագրերի մասին, ենթադրել է, որ կարապետ վարդապետի վերև հիշված գրչագիրը պիտի նույնը լինի էջմիածնի նշանավոր Գևորգյան № 102 գրչագրի հետ։ Նրա մտքով միայն կասկածանք է առաջացել՝ թե ինչու Գ. Տ-Մկրտչյանը «Արարատ» ամսագրի 1896 թ. փետրվարի համարում (էջ 96) խոսելով այդ նույն գրչագրի մասին, ոչինչ չի ասում ժամանակագրութեան մասին, «Այս գրչագիրս՝ նույն կթվի լինել էջմիածնի Մատենադարանի երկհատորը օրինակի հետ... որովհետև սա ևս Հայոց Նվ. թվականի գրված կամաց-ից... կամ մի ուրիշ, որ տարակուսելի կլինի նույնութեանը, է հետևյալը. այսինքն՝ թիվ 102 ձեռագիրն եթե Սիմեոն Ապարանեցվո ձեռքով քանի քով բերված և կազմված է հայոց Նվ. թվին գրված ավելի հին ձ-ի մը հետ, ըստ ինքյան պիտի պարունակէր նույնպես Շերակացու ժամանակագրութիւն ևս։ Եվ ապացոյց Գաղ. Տ. Մկրտչյանի լուռթյունը հակառակը կթվի հաստատել. կարելի է՝ որ Գրիգոր 1836 թվականին վերջ նորին քաշքաշման և այլ մասին հերթական ենթարկված բլլայ ձ-իրս»2)։

Հետագայում պրոֆ. Գ. Ալպոյաճյանը և ուրիշները կանգ են առել էջ-

1) Վերցված է պրոֆ. Ա. Աբեղյանի և Մ. Հարությունյանի հրատարակութենից, որը լույս է տեսել Տփղիս 1913 թ.։

2) Անդանուն ժամանակագրութիւն, էջ 179։

Ձեռագրի № 102 ղրչապրի վրա և ցույց տալով նրա մեջ Շիրակացու Թամանակագրության պարունակությունը՝ փաստը, այնպես որ Բ. Սարգսյանի այս տարակուսանքը փարատվում է:

Մեր պալեոգրաֆիկ ուսումնասիրությունները ևս պարզեցին, որ ՀՍՄՌ մատենադարանում այժմ գտնվող № 2679 ղրչապիրը (Դեվրոդյան № 102) իրոք կարապետ վարդապետի ձեռքում եղած ղրչապիրն է և Ե. վ. Սեթյանի ընդօրինակած տեքստի նյութը լիովին համապատասխանում է նրան: Որ Հ. Սեթյանի ընդօրինակության մայրը ՀՍՄՌ մատենադարանում պահվող № 102 ղրչապիրն է, այդ կարելի է պարզ տեսնել հետևյալ փաստերից:

ՀՍՄՌ մատեն. № 102 ղրչապրի տեքստի թերթ 58ա-ի վերևի առաջին տողը բացակայում է՝ թերթի վերևից պատռվելու պատճառով: Բ. Սարգսյանի հրատարակած տեքստում այդ նույն տեղում (էջ 31, տող 16—17) պատռված տողի տեղում կետեր են չարված:

ՀՍՄՌ մատեն. № 102 ղրչապրի տեքստի թերթ 59-ա-ում ևս կա այդպիսի կտրվածք պարբերվերևից: Այդ կտրվածքը եղել է Սեթյան ընդօրինակության ժամանակ: Բ. Սարգսյանը պահպանած այդ տողի տեղ դարձյալ դրել է բազմակետեր (տե՛ս էջ 33, տող 19):

Ձևնք բերում այլ փաստեր, որովհետև բերած այդ երկու փաստը, կարծում ենք, բավական են չհավատալու Բ. Սարգսյանի ենթադրության վրա՝ իբր հրատարակած տեքստի բնագիրը ՀՍՄՌ մատեն. № 102 նշանավոր ղրչապիրը հանդիսանալու վերաբերյալ:

5. ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՏԵՔՍՏԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բ. Սարգսյանի հրատարակած տեքստը ունի մի շարք թերություններ: Սեթյանը ՀՍՄՌ մատեն. № 102 ղրչապրից տեքստն արտագրել է չատ անխնամ, բաց է թողել երբեմն տողեր, կատարել է բավականին անուններին սխալներ, բոլոր դեպքում չի պահել ղրչապրի ուղղագրական ձևը և այլն: Բերենք մի քանի օրինակներ:

ՏՈՂԵՐԻ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ

Տպ., էջ 5, տ. 11 «Մոսք՝ եւ ի նմանէ (Հիպ. Ulûrii Theras a quo) Թրակացիք»:

Ղրչապրում՝ «Մոսք՝ եւ ի նմանէ [դևբեկացիք. Թերսա՝ եւ ի նմանէ] Թրակացիք (§ Հէ):

Տպ. էջ 6, տ. 11—15 «Եւ այս ազգք եւ երկիրք են նոցա: Աւրպատականն... Սկիւթիա, Եաւդիա...»:

Ղրչապրում «Եւ այս ազգք եւ երկիրք են նոցա: Աւրպատականն... Սկիւթիա [Թրակէ, Մակեդովնիա, Դալմատիա, Մովղիա, Թեսաղիա, Դովրնիա, Բեռվտիա], Եաւդիա. (§ ՀՐ):

Տպ., էջ 9, տ. 35 «Եւ ազգք՝ որոց ընտրին ի մխիթանց լեզուք, են այսոքիկ. Երբայեցիք... Փռիւգացիք, (Հ. Achai, Thessali Macedones, Traces) Մխանցիք...»:

---

1) *Լատինական տեքստը վերցնում ենք հրատարակչից:*

Դրչագիրն ունի. «Եւ ապրէք՝ որոց ընարին ի մխիթարից լեզուք, են այսոքիկ. Երբայեցիք..., փռիւգացիք, [Գուդացիք, Յոյնք, որ են Ալայեցիք, Թեսաղք, Մակեդովնացիք, Թրակացիք], Միթեցիք... (§ ՁԱ)։

Տպ. էջ 13, տ. 24— էջ 14, տ. 2 «Յետ մահուան Յեսուայ մեղաւ ժողովուրդն... Դեվկադիոն ճանաչին»։

Դրչագիրն ունի «Յետ մահուան Յեսուայ մեղաւ ժողովուրդն... Դեվկադիոն ճանաչին»։

Ձեռագրում ավելացված է վերջում [Յետ վախճանելոյն Յեսուա կալաց Ծերբճ Լ ամ] (§ ՁՀ)։

ԱՆՈՒՆՆԵՐԻ ՍԽԱԼՆԵՐ՝

Դրչագրում	*Թարշիշ,*	*տպագրում*	*Թաշիշ (էջ 5, տ. 15)։*
»	— *Եւբիփատ*	»	— *Եւ բիֆատ (էջ 5, տ. 13)։*
»	— *Թուսկինէ*	»	— *Թոսկինէ (էջ 6, տ. 18)։*
»	— *Սարմատիս*	»	— *Մարմատիս (էջ 6. տ. 14)։*
»	— *Կոկիբա*	»	— *Կոբկիբա (էջ 6, տ. 23)։*
»	— *Իդամացիք*	»	— *Քդամացիք (էջ 9, տ. 8)։*
»	— *Ռինեն, Կիւբնոս*	»	— *Ռինենկիւբնոս (էջ 10, տ. 24)։*
»	— *Ասպորացիք*	»	— *Ռսպորացիք (էջ 11, տ. 10)։*
»	— *Գրեկո սարմատաք*	»	— *Գրեկոսարմատաք (էջ 11, տ. 16)։*
	— *Փիղոքսրոս*		— *Փիղորոքոս (էջ 30, տ. 34)։*

Կաթելի է բերել բազմաթիվ այլ վիճակներ ևս, բայց աշխատության սկզբից բերած վիճակները կարծում ենք, բավական է ընթերցողին անհրաժեշտությունը պատկերացնելու համար։

6. ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳԻՐՔ ԹԼԹՈՑԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Շիրակացին իր ժամանակագրության Հուստինոս երկրորդին վերաբերող դրեթե ամբողջ հատվածը, ինչպես պարզվում է, ուղղակի վերցրել է Մովսես Խորենացուն վերագրված պատմահոր նամակից։ Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ վիճակի վրա, որքան մեզ հայտնի է, ոչ ոք կանգ չի առել, ուստի և անհրաժեշտ ենք համարում այդ հատվածը համեմատության մեջ դնել ամբողջությամբ։

Գիրք թղթոց

Արդ՝ սուղ ինչ ժամանակ կալեալ գթագաւորութիւնն Յուստինէ, վախճանի ծանր ախտից հարեալ ծովի, եւ թագաւորէ Յուստինիանոս, որ յետ նորա, եւ աղմուկ հակառակութեան ժողովոյն Քաղկեդոնի տակաւին եւս հնչէր եւ ի նորա ժամանակի։ Իսկ յաւուր միում խորհուրդ արարեալ ընդ ոմանս ի մեծամեծացն... ասեն ցթագաւորն, թէ անհնա-

Շիրակացու ժամանակագրություն

Յուստինոս ասա ինչ։ Սա կամէր բառնալ զպղծուկ ժողովոյն Քաղկեդոնի. եւ բազումք երկբայեցուցանէին զթագաւորն, որք հայհոյիչ ժողովոյն հնազանդելոյ, ասէին. Ո՞չ ումեք է խնամութիւն յերկմիտս լինել վասն ժողովոյն Քաղկեդոնի՝ եթէ ոչ էր ընդունելի. զի Սմոնն երանելի ձեռնարկ արա-

բին է ուժեք ի մարդկանէ ասել զայդ՝ զի Սիմեւոնդ ձեռն արկեալ է եւ հաւանեալ է սահմանադրութեան ժողովոյն Քաղկեդոնի, եւ ցարդ եւս պահի զդուշաբար ի ներքս ի տաղաւարին սրբոյն Եւթիմայ, ուր ժողովն իսկ եղեւ։ Քանզի Սիմեւոնա այս եղեալ միայնակեաց յԱնտիոք քաղաքի, հրաշալի եւ հռչակաւոր, եւ ընտանի սրբոյ Հոգւոյն շնորհաց, որպէս եւ զմի ոք ի տեսողացս։ Եւ ոմն ի մերձակայից իշխանացն մաւտաւորաց նախանձաւորեալ ուղղափառութեան հաւատոյն, ասէ ցթագաւորն. Եթէ երանելոյն Սիմեոնի ձեռն արկեալ է. եւ հաւանեալ ժողովոյն Քաղկեդոնի, ես զառն չարչարանաւք ընդալայց զքրաւունն կենաց իմոց։ Քանզի այսպէս ունի պատմութիւն...

բին է ուժեք ի մարդկանէ ասել զայդ՝ զի Սիմեւոնդ ձեռն արկեալ է եւ հաւանեալ է սահմանադրութեան ժողովոյն Քաղկեդոնի, եւ ցարդ եւս պահի զդուշաբար ի ներքս ի տաղաւարին սրբոյն Եւթիմայ, ուր ժողովն իսկ եղեւ։ Քանզի Սիմեւոնա այս եղեալ միայնակեաց յԱնտիոք քաղաքի, հրաշալի եւ հռչակաւոր, եւ ընտանի սրբոյ Հոգւոյն շնորհաց, որպէս եւ զմի ոք ի տեսողացս։ Եւ ոմն ի մերձակայից իշխանացն մաւտաւորաց նախանձաւորեալ ուղղափառութեան հաւատոյն, ասէ ցթագաւորն. Եթէ երանելոյն Սիմեոնի ձեռն արկեալ է. եւ հաւանեալ ժողովոյն Քաղկեդոնի, ես զառն չարչարանաւք ընդալայց զքրաւունն կենաց իմոց։ Քանզի այսպէս ունի պատմութիւն...

Նմանութիւնն այնքան ակնբախ է եւ անհերքելի, որ ոչ մի կռնակած չէ ճնուած Շերակացու «Գիրք Թղթոց»-ի վերև բերված հատուածքերից օգտվելու մասին։

VII. ՇԻՐԱԿԱՑՈՒ «ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԹԱՆԿԱԳԻՆ» ՔԱՐԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՀԱՄԱՌՈՏ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ԱՇԽԱՐՀԱՑՈՑՑ»-Ի ՄԱՍԻՆ[1])

1. Խորհուրդն վերապրվող տպագիր և ձեռագիր «Աշխարհացոյց»-ների ուսումնասիրությունից պարզվում է, որ մեզ հասած հայոնկ «Աշխարհացոյց»-ի ընդօրինակությունները, համեմատաբար, լավագույն և հնագույն տեքստեր են հանդիսանում ՀՍՍՌ Պետ. մատենադարանի թիվ 3160 և 582 ձեռագրերը: Նրանցից առաջինն ընդօրինակել է Կարապետ դպիրը, իսկ երկրորդը՝ Վարդան դպիրը:

2. Կարապետ և Վարդան դպիրների օրինակներից երևում է, որ «Աշխարհացոյց»-ի տեքստերը խմբագրվել են ուշ շրջանի ընդօրինակողների կողմից: Նրանց մեջ մտել են մեծ քանակությամբ ընդմիջարկություններ: «Աշխարհացոյց»-ի որոշ հատվածներ ենթարկվել են հապավման ու աղավաղման: Այդ թերությունները, ինչպես պարզվում է, դուրկ չէ նաև Մուքրյանի հրատարակած «Աշխարհացոյց»-ի ընդարձակ տեքստը:

Կարապետ և Վարդան դպիրների «Աշխարհացոյց»-ի համեմատության հիման վրա հնարավոր է այժմ ուղղել Վենետիկյան հրատարակության «Աշխարհացոյց»-ի մեջ տեղ գտած մի շարք սխալներ և աղավաղումներ:

3. «Աշխարհացոյց»-ը սխալմամբ է Խորենացուն վերապրվել ու նրա անունը «Աշխարհացոյց»-ի վերնագրում հիշատակվել ուշ շրջանի ընդօրինակող դպիրների կողմից: ՀՍՍՌ Պետ. մատենադարանի 1600 թ. առաջ գրված «Աշխարհացոյց»-ներից և ոչ մեկի վերնագրում չի հիշատակվում Խորենացու անունը: Բացառություն է կազմում 15-րդ դարում ընդօրինակված Պետրոս դպրի օրինակը, որի վերնագրում տակայն, ինչպես պարզվում է այդ նույն վերնագրի ուշադիր քննությունից, Խորենացու անունը ավելացված է 18-րդ դարի դպրությամբ:

4. Ֆրանսիացի պեռնական Սեն-Մարտենի հայտնած այն կարծիքը, որ գոյություն է ունեցել երկու Խորենացի, որոնցից առաջինը ճիշտ Խորենացին է (5-րդ դարի), իսկ երկրորդը—սուտ (9—10-րդ դ.), չի հաստատվում մատենադրական նոր տվյալներով:

5. «Աշխարհացոյց»-ի, ինչպես և նրա օգտագործած աղբյուրների համեմատական ուսումնասիրությունից պարզվում է, որ «Աշխարհացոյց»-ի համաձայնական վերնագիրն է հանդիսացել «Երկրաչափք»-ը: Այս վերնագիրը

---

1) Շերբակացու «Աշխարհացոյց»-ին վերաբերող գլուխն առանձին գրքով հրատարակել է Աբժիձեն-ը 1940 թ. Այստեղ մենք զնում ենք միայն մեր այդ աշխատության հիմնական եզրակացությունները:

պահպանել են Լուսիկ Ազուր դյուղում և Մոկաց Երկրի Սուրբ դյուղում ընդօրինակված «Աչխարհացոյց»-ները:

6. Մատենադարանի հնագույն ձեռագրերի ուսումնասիրությունից երևում է, որ Սեն-Մարտենի՝ «Աչխարհացոյց»-ը 10-րդ դար հասցնելու համար բերված բոլոր կռվանները («Ցօղու ռուսաց», «Շադախ», «Ղոխմ» և այլն), ինչպես ճիշտ նշվել է արդեն բանասիրության մեջ, ընդհիմարկելի են հանդիսացել: 17-րդ դարից առաջ ընդօրինակված ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի «Աչխարհացոյց»-ներից ոչ մեկի տեքստում մենք չենք հանդիպում Սեն-Մարտենի մոտ կռվան հանդիսացող աչխարհագրական այս անունները:

7. Հ. Մարկվարտի ենթադրությունը, որ Սուքրյանի հրատարակած «Աչխարհացոյց»-ի տեքստում Խորասանի շրջանների շարքում հիշված «Գճախասան»-ը աղավաղված ձևն է «Գճակ» և «Ասան» շրջանների և թե այդ անունները կարող էին հայտնի դառնալ և հիշատակվել այդ նույն տեքստաբերության 737 թ. տեղի ունեցած Թուրք-արաբական մեծ կռվից հետո միայն, ոչնչով չի հիմնավորված: Մենք առաջարկում ենք աղավաղված այդ անուններն ուղղել «Ման», «Շանջակասան» ձևով:

8. «Աչխարհացոյց»-ի հեղինակին 9-րդ դար շարժող աղբյուրագիտների բերած ապացույցները չեն հաստատվում դրչադիր «Աչխարհացոյց»-ների ուսումնասիրությամբ: Այսպես, պարզվում է, որ Գալիայում փրանկները «Հզօր» չեն հիշատակված: Բասրա և Ակոզա քաղաքների հիշատակությունը այն ձևով, ինչ ձևով մեզ հանդիպում է տպագիր «Աչխարհացոյց»-ի տեքստերում՝ ընդհիմարկելի է, «Աչխարհացոյց»-ի տեքստում արաբերեն տերմիններ չկան և այլն:

9. «Աչխարհացոյց»-ի տեքստի ուշադիր քննությունից երևում է, որ «Աչխարհացոյց»-ը 7-րդ դարում ապրող հեղինակի գործ է: Նա դրված է Հայաստանն արաբական խալիֆաթի դրջեջից վերջնականապես դեռ չնվաճված ժամանակ:

10. Ակադ. Հ. Մանանդյանի այն ենթադրությունը, թե «Աչխարհացոյց»-ի հեղինակը Խորենացին է, որովհետև նրան է հատուկ բնորոշ այն-պիսի դարձվածքների գործածությունը, որոնք հանդիպում են մեծ «Պատմութիւն հայոց»-ում և «Աչխարհացոյց»-ում, չի հիմնավորվում: Ակադ. Հ. Մանանդյանի մեջ բերված «բնորոշ» այդ դարձվածքները («գրտնամ», «կարծեմ», «ինձ թուի», «հաւանեալ եմ», «ճշմարիտ է», «ասեմ», «դրեմ», «սկսայց»), գործ են ածվել նաև Շիրակացու աշխատություններում:

11. Շիրակացու և «Աչխարհացոյց»-ի հեղինակի մեջ աչխարհագրական անունների և հայացքների տարբերություններ չկան: Պարզվում է, որ Շիրակացին ևս ծանոթ է երկրագունդը կլոր լինելու տեսության հետ, հատարակած ասելով նա հասկացել է երկնային ծիրը, ծովի և ծովակի չփոթումը գրչական աղավաղում պիտի լինի, և այլն:

12. 7-րդ դարում կազմած՝ Անանուն հեղինակի ժամանակագրությունից (որը պահվել է ՀՍՍՌ Պետ. Մատենադարանի 971 թվի ընդօրինակ գրչագրում) և Շիրակացու մինչև այժմ ամբողջությամբ դեռ չտպագրված «Տիեզերագիտության» մի հատվածից պարզ երևում է, որ Խորենացին Շի-

բակացուց առաջ ապրած հեղինակ է, ուսան և չէր կարող պատճ լինել ներկա համբարությամբ մեզ հասած «Աշխարհացոյց»-ը:

13. Ակադ. Հ. Մանանդյանի կարծիքը՝ «Մղոնաչափք»-ն «Աշխարհացոյց»-ի հեղինակի գործ լինելու և «Աշխարհացոյց»-ի չարունակությունը հանդիսանալու հարցում, հաստատվում է ՀՍՍՌ Պետ. մատենադարանի «Աշխարհացոյց»-ների հնագույն ընդօրինակություններում պահված մատենադրական վկայության հիման վրա: Որոշ «Աշխարհացոյց»-ների վերջում պահվել է մի փոքրիկ հիշատակություն, ուր հեղինակը պարզ հայտնում է, որ ինքը վերջացրել է «Աշխարհացոյց»-ի չարադրությունը և այժմ սկսում է համառոտել առանձին քաղաքների չափերը մղոններով:

14. «Աշխարհացոյց»-ը «Մղոնաչափք»-ով չի վերջացել: Նա չարունակվել է աստղաբաշխական բովանդակություն ունեցող մի այլ նյութով, որի վերնագիրն է «Աստղաբաշխական երկրաչափություն»: «Աշխարհացոյց»-ի չարունակությունը կազմող աստղաբաշխական այդ նյութը «Աշխարհացոյց»-ի ընդհանրից մեկն է հանդիսացել, բայց հետագայում ընդօրինակողների կողմից անգամահատվել է: Աստղաբաշխական այդ նյութը, բարեբախտաբար, պահպանվել է հնագույն «Աշխարհացոյց»-ներից մի քանիսի չարունակության մեջ: Այդ նյութը, որքան մեզ հայտնի է, մինչև այժմ դեռ չի հրատարակված:

Որոշ ձեռագրերում աստղաբաշխական այդ նյութը պատահում է «Աշխարհացոյց»-ից անջատված վիճակում: ՀՍՍՌ Պետ. մատենադարանում կան աստղաբաշխական այդ նյութը պարունակող ձեռագրեր, ուր վերնագրում, որպես հեղինակ հիշատակված է Անանիա Շիրակացին:

15. «Աշխարհացոյց»-ը վերջացել է հեղինակի ընդհանրական վերջաբանով, որից երևում է, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակն իր աշխատությունը նվիրում է ոմն իմաստասերի:

16. Նույն հիշատակարանում «Աշխարհացոյց»-ի հեղինակը հիշում է իր օգտագործած աղբյուրները: Պարզվում է, որ «Աշխարհացոյց»-ի հիմնական աղբյուրներն են հանդիսացել՝ Պտղոմեոսի «Տիեզերագիտություն»-ը, Պապպոս Աղեքսանդրացու «Երկրագիտություն»-ը և Պորփյուրի ներածությունը: «Աշխարհացոյց»-ի հեղինակի Պտղոմեոսից անմիջապես օգտվելու հարցը լուծվում է դրականապես:

17. «Աշխարհացոյց»-ի Շիրակացու ապրած ժամանակաշրջանում պրծելը, նրա՝ Շիրակացու այլ աշխատություններին կից ձեռագրերում դանելու հանգամանքը, երկրաչափական և աստղաբաշխական նյութերի ծանոթ լինելու փաստը, կոտորակի գործածությունը, «Աշխարհացոյց»-ում Շիրակացու այլ աշխատություններից որոշ հատվածների գործածությունը և մատենադրական մի շարք այլ փաստեր վկայում են, որ «Աշխարհացոյց»-ի հեղինակը 7-րդ դարի հայ գիտնական Անանիա Շիրակացին է:

18. «Աշխարհացոյց»-ը «Երկրաչափ» վերնագրով հիշատակված է Գրիգոր Մագիստրոսի մոտ:

ԱՆՈՒԱՆՔ ԱԿԱՆՑ ԵՒ ԳՈՒՆԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ ՆՈՑԻՆ

ՀՍՍՌ Մատենադարանի № 699 ձեռագրում Շիրակացու աշխատությունների շարքում ընդօրինակված է թանկագին քարեբի մատեան մի առեքատ, որը, որքան մեզ հայտնի է, ուսումնասիրված և հրատարակված

չէ: Այդ տեքստի մասին իրենց կարծիքն են Վիեննայի և Վենետիկի ձեռագրաց ցուցակներում հիշատակություն ունեն Հ. Տաշյանը (էջ 1057) և Բ. Սարգիսյանը (հմ. Բ, էջ 1187): Նրանք Շերակացու այդ աշխատության հետ ծանոթացել են Վիեննայի մատենադ.-ի № 234 և Վենետիկի № 307 ցուցակների հիման վրա: Առաջինը, մեր կարծիքով, ընդօրինակություն պիտի եղած լինի ՀՍՍՌ Մատենադարանի վերև հիշված 699 թվակիր ցուցակի մայր ձեռագրից:

ՀՍՍՌ Մատենադարանի № 699 ցուցակները, որի վրա մի քանի անգամ կանգ ենք առել արդեն, ընդօրինակված է 16-րդ դարում: Գրիչը հայտնի չէ: Նշված տեքստին նախորդում է Շերակացու «Թիւք որչափութեան ասոյ հին եւ նոր կտակարանաց» աշխատությունը: Հաջորդում է «Բերականութիւն, որ կոչի եւթնապրեանք»:

Շերակացու աշխատությունների շարքում ընդօրինակված թանկարժեք քարերին վերաբերող վերև հիշված տեքստը խորագիր չունի: Նա սկսվում է անմիջապես տեքստից. «Զմրուխան կանաչ է եւ լուսաւոր...»: Վենետիկի և Վիեննայի ցուցակներում այդ տեքստը վերնագրված է. «Այնուհետ ասոյց եւ գունաւորութիւն նոցին»:

Տվյալ աշխատության Շերակացուն պատկանելու մասին մեկ փաստը —այդ տեքստի վերջում պահած հետևյալ հիշատակությունն է. «Վճարումն Անանիայի Շերակունոյ ժողովածոյն» (թ. 208բ): Այս հիշատակությունից երևում է, որ ընդօրինակող գրիչը նշված տեքստը ճանաչել է Շերակացու հեղինակությամբ: Շատ հավանական է, որ հիշատակությունը ոչ թե ցուցակի ընդօրինակողինն է, այլ նախորդ գրիչներից որևէ մեկինը: Համենայն դեպս, ինչ ժամանակի անձնավորություն էլ լինի հիշատակարի գրիչը, թանկարժեք քարերի տեքստը՝ Շերակացու ժողովածուի օրգանական մասը հանդիսանալու վերաբերյալ՝ իր արած այդ հավաստիացման համար, գրիչն, անկասկած, որոշ հիմք ունեցել է:

Հայ աղբյուրագիտության մեջ թանկարժեք քարերի մասին հայտնի է մի այլ տեքստ ևս, որի հեղինակը Եպիփան Կիպրացին է և թարգմանել է հունարենից: Նա մեզ հասել է մի քանի խմբագրություններով, որոնցից երկուսը հրատարակված են «Բազմավէպ» ամսագրում 1856 թվին, «Սրբոյն Եպիփանու ասացեալ գոնեւանս վասն ականց պատուականաց» վերնագրությամբ: Պրոֆ. Լ. Մելիքսեթ-Բեկի «К истории точных наук...»[1] աշխատության մեջ բերած մի տեղեկությունից երևում է, որ գոյություն ունի նաև Եպիփան Կիպրացու հին վրացերեն թարգմանությունը, որը հրատարակվել է Մ. Ջանաշվիլիի[2]):

Շերակացու թանկարժեք քարերի այդ տեքստը՝ Եպիփան Կիպրացու «Վասն ականց պատուականաց»-ի հետ մեր կատարած համեմատությունը մեզ բերեց հետևյալ եզրակացության:

ա) Շերակացին իր տեքստի 12 քարերի հատվածներում, գլխավորապես առաջին մասում, օգտվել է Եպիփան Կիպրացուց:

բ) Շերակացու քարերի թիվը 22-ով ավելի է Եպիփանի հայերեն թարգմանության մեջ հիշված քարերի թվից:

---

1) Л. М. Меликсет-Беков, К истории точных наук... („Воп. фил..." стр. 193).

2) Տես „Сборник мат. для опис. местн. и племен Кавказа», вып. XXIV, стр. 1—72:

դ) Շիրակացու մոտ քարերի տեսակները որոշ անուններ կրկնված են հունարեն լեզվով: Օրինակ՝ յախինթոս (ὑακινθός), սարերուն (σάπφειρος), ամենթուստոս (ἀμέθυστος) սմարագդոս (σμάραγδος) բյուրեղիս (βήρυλλος):

դ) Շիրակացու տեքստում բացակայում են քարերին տրված բժշկական նշանակության հատվածները:

ե) Եվ, վերջապես, Շիրակացու մոտ բացակայում են քարերի վայրերի մասին Եպիփանի մոտ եղած հիշատակությունները:

8. ՇԻՐԱԿԱՑՈՒ ԿՐՈՆԱԿԱՆ-ԲԱՐՈՅԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագրերի ժողովածուներում հաճախ են պահպանվում Անանիայի անունով կրոնական ճառեր, խրատներ, աղոթքներ, քարոզներ, անգամ՝ չարաբաններ: Այս կարգի աշխատությունների մեծ մասի վերնագրերում հեղինակի անունը հիշված է լինում «Անանիայի վարդապետի» ձևով: Ո՞ր Անանիայի գրվածքն է այդ—Շիրակացո՞ւ, Նարեկացո՞ւ, Սանահնեցո՞ւ, թե մի այլ Անանիայի— դժվար է անմիջապես վճռաբանորեն որևէ բան ասելը: Դժվար է համոզված որևէ բան ասել անգամ այն դեպքում, երբ կրոնական-բարոյախոսական այս աշխատությունների վերնագրում հիշվում է Անանիա Շիրակացու հեղինակությունը: Ինպիերը նրանում է, որ գրիչները հաճախ չեն թվում Անանիաների անունները: Այսպես օրինակ՝ տեքստի վերնագրում հեղինակը հիշված է լինում «Անանիայի վարդապետի» ձևով, իսկ ընդօրինակող գրիչները ցանկանալով ճշտում մտցնել հեղինակի հարցում, սխալմամբ նենթադրում են որ տեքստը Շիրակացունն է, ուստի և «Անանիայի վարդապետի» բառերի հետևից ավելացնում են «Շիրակունւոյ» անունը: Ստացվում է նոր վերնագիր—«Անանիայի վարդապետի Շիրակունւոյ» ձևով: Գրչի նոր անվան ավելացման հետևվանքով առաջացած այս սխալը հետագայում քարաքացիությունն է ստանում և տեքստը ճանաչվում է Շիրակացու հեղինակությամբ:

Բացի այդ, մատենադարանի մեջ երբեմն պատահում են այլ կարգի թյուրիմացություններ:— Հաճախ անընդհատ մի հեղինակ գրում է որևէ աշխատություն և ցանկանալով իր այդ աշխատությունը հեղինակություն տալ և հանրաճանաչ մի բան դարձնել, վերնագրում է մատենադրության մեջ համարում ունեցող մի մատենագրի անունով: Եվ այդ միջոցով հաջողվում է նրան քարաքացիություն տալ իր աշխատությանը:

Մենք այստեղ կոնկրետ ցանկություն չունենք պարզել այդ բոլոր թյուրիմացությունները: Այդ հարցով, որը մեր կարծիքով դարձյալ կարևոր է, անհրաժեշտ է զբաղվել առանձին՝ մատենագրության զբաղվող անհատ Անանիաների աշխատությունները ըստ հեղինակների դասավորության զբաղվելու ժամանակ: Այժմ, այժմ մենք սահմանափակվում ենք Անանիա Շիրակացու անունով մեզ հասած կամ նրա անունով հայագիտության մեջ ճանաչված կրոնական—բարոյախոսական աշխատությունների մասին մի քանի ծանոթագրություններ զետեղելով այստեղ:

Ծանոթագրությունների մեջ չենք տեղավորել կրոնական-բարոյախոսական այն տեքստերը, որոնց վերնագրում հեղինակը հիշված է միայն «Անանիայի վարդապետի» ձևով: Այս կարգի աշխատությունները մեր Մատենադարանի գրչագրերում անշատ չեն: Գրչագրերում մեզ հաճախ են պատա-

Հում հետևյալ աշխատությունները՝ «Անանիայի հայոց վարդապետի ի խոր-հուրդ Յունանու մարդարէին», «Անանիայի վասն արուարձուց որ հոգւոյ չահ է եւ լոյս արուարձան սիրոյ Յունդ է», «Անանիայի վարդապետի վասն խոնարհութեան», «Անանիայի վարդապետի բանք ազանդից», «Անանիայի վարդապետի թէ որչափ մասունքն են մարդոյ, որ կառարելոյ առաքինութեան առանալոյ», «Անանիայի հոգեներոդ վարդապետի վասն համբերութեան եւ խաղաղութեան», «Անանիայի հայոց վարդապետի սակս անխախիտ հաղորդելոյ յունաց», «Անանիայի խօսք եւ խրատ», «Կանոնք Անանիայի վարդապետի», «Նորին (այսինքն Անանիա վարդապետի — Ա. Ա.) բանք ազաւթից» և այլն, և այլն:

Ի միջի այլոց, եղել են ուսումնասիրողներ, որոնք ենթադրել են, որ Շիրակացին ընդհանրապես կրոնական բովանդակություն ունեցող աշխատություններ չի գրել և չարժե անդամ դրանց մասին խոսել: Այդ միանգամայն անհիմն ենթադրություն է: Անհատացիների մեջ հիշված աշխատությունների մի մասը, մեր կարծիքով, Շիրակացունն է և Թովմա Մեծոփեցին, որը Շիրակացուն հիշում է «աստուածաբան» տիտղոսով, անկասկած, հենց այդ տեքստերի դոյությունը ի նկատի ունի[1]):

Ձենք խոսում մենք նաև Շիրակացուն վերագրված չարականների մասին, որը դարձյալ հատուկ ուսումնասիրության նյութ պետք է լինի: Շարականներում հաճախ Շիրակացուն են վերագրում՝ «Ցարութեան», «Վարդավառի», «Մարդարէից», «Առաքելոց», «Վարդապետաց» և «Պենտեկոստէի» չարականները, որոնք քննելի են: Դրչագիր ժողովածուներում պատահում են անդամ չարական կազմող հեղինակների ցանկեր, ուր Յովհաննացուց հետո հիշվում է Շիրակացին, Կոմիտաս կաթողիկոսը, Օձնեցին և ուրիշները:

1. ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ «ՅԱՂԱԳՍ ՁՂՋՄԱՆ ԱՐՏԱՍՈՒԱՑ՝ Ի ՅՆԴՐՈՑ ԳՐԻՓՈՐԻ ՄԻԱՑՆԱԿԵՑԻ»

Սկսվում է· «Ով ատուածասէր եղբայր, խնդրող սիրոյն Աստուծոյ, զբանն, զոր աղաչեցեր յիս յաղագս զղջման···»: Վերջանում է· «Եւ երանելին Նեղոս ասէ· Ձէն համարեալ զաղաւթսն, եւ զպահսն՝ պարիսպ եւ աւազան արուարձանս, յորմէ եւ դու մի՛ ծուլացիս հասանել չնորհին···»:

Շիրակացու «Յաղագս զղջման արուարձուց» խրատը բանաստեղծության նեղ չրջանում հայտնի ու չհրատարակված նյութերի չարքին է պատկանում: Նրա մասին առաջին հիշատակությանը հանդիպում ենք Գ. Զարբհանելյանի մոտ, նրա «Հայկական հին դպրության պատմության» աշխատության մեջ: Զարբհանելյանը խոսելով Շիրակացու մեզ հասած ու հայտնի աշխատությունների մասին, նրա «Յաղագս զղջման արուարձուց» խրատը հիշում է Շիրակացու անհարապատ աշխատությունների չարքում: «Անանիայի անվամբը — գրում է նա — ուրիշ քանի մի գրվածք կամ ճառներ ալ գտնված են, որոնցմէ ոմանք իրենց ոճովը եւ ոմանք ալ իրենց հոդով՝ Շիրակացվուն հոգիեն և ոճեն կ'հեռանան, անշուշտ ուրիշ համանուն

---

1) Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յայորդաց իւրոց արարեալ Թովմա վրդ-ի Մեծոփեցւոյ, Փարիզ 1860, էջ 38:

վարդապետաց երկասիրութիւնք են: Ասոնց կարգին են «Ցաղագս զղջման եւ արտասուաց ճառ մը ի խնդրոյ Գրիգորի Միայնակեցի...»[1]:

Հ. Ղ. Ալիշանն իր «Հայապատում» աշխատութեան մէջ ակնարկում է Շերակացու այս աշխատութիւնը և նրանով հետաքրքրվել ցանկացողին խորհուրդ տալիս Տանիէլեան Գ. Զարբհանելեանի վերև հիշված աշխատութեան հետ[2]:

Շերակացու «Ցաղագս զղջման արտասուաց» այս խրատի վրա կանգ է առել հետագայում Հ. Տաշյանը իր ցուցակում: Նա Շերակացու աշխատութիւնների ցանկում հիշում է այս աշխատութիւնը և նշում պրոֆ. Բ. Պատկանեանի կազմած ժողովածուում այս խրատը չմտնելու և չհրատարակվելու վտանգը: Նա դրում է. «Ճառք նախ Հովհաննէս բանք, երկրորդ՝ «Ցաղագս զղջման եւ արտասուաց ի խնդրոյ Գրիգորի Միայնակեցի»... երկուքն ալ կպակասին ի հրատարակութեան Պատկանեանի...»[3]:

Մոտ ժամանակներս Շերակացու «Ցաղագս զղջման եւ արտասուաց» այս խրատի վրա ուշադրություն դարձրեց է առել Բ. Սարգիսյանն իր ցուցակում: Նա հիմնվելով աշխատութեան վերնագրում «խնամատածէր» ութաղոսի վրա, հնարավոր է համարել, որ այդ աշխատութիւնը Շերակացունը կամ Նարեկացունը լինի: «Ի՛մ աստուածէր» ութաղոսից դատելով,— դրում է նա—հավանորեն հեղինակ խրատիս ըլլալու էր կամ Անանիա Շերակացին, և կամ Նարեկացին. դի ըստուն ավելի հաստակ է. և ոճով մեծ տարբերութեան կենանք»[4]:

«Ցաղագս զղջման արտասուաց» խրատի մէջ հայտնի գրեթե բոլոր ընտիր ձեռագրերում վերնագրում որպես հեղինակ է հիշված պարզապես Անանիա Շերակացին, իսկ պատմիրատուն — Գրիգոր Միայնակեցը. «Ա՛ւանիա Շիրակացւոյ Ցաղագս զղջման արտասուաց ի խնդրոյ Գրիգորի Միայնակեցի»: Մի քանի ընդօրինակութիւն է մեզ հայտնի մարդ, որ «Անանիայ Շիրակացւոյ» փոխարեն ունեն «Անանիայ վարդապետի», իսկ պատմիրատուի անունը բոլորովին չեն հիշում: Ուսումնասիրութիւնից պարզվում է, որ այդ ձեռագրերի տեքստը սակայն ուշ շրջանում է խմբագրված: Հարատառ է առաջին խմբի ձեռագրերի տեքստը:

Նշված խրատի Շերակացուն պատկանելը եզրում է ոչ միայն նրա վերնագրից, ուր անունով հիշված է Շերակունէ ձեով, այլ և լեզվից, շարադրման մեթոդից, բերված օրինակներից և այլն:

Անանիա Շերակացու «Ցաղագս զղջման եւ արտասուաց» խրատի հեռևյալ ձեռագրերն են մեզ հայտնի:—

1. Վենետիկի մատեն. № 258, թ. 56ա «Անանիայի հոգեհնուագ իմաստասէրի խրատ ոգեշահ՝ զղջման եւ արտասուաց:— Ով աստուածասէր սիրելի եղբայր...»: Ձեռագիրն ունի 12—13-րդ դարերի ձեռագրություն: Գրչի ու ձեռագրության վայրը հայտնի չէ: (Գրչագրի մանրամասն նկարագրությունը տես Բ. Սարգիսյանի ցուցակում, հտ. Բ, էջ 799):

---

1) Գ. Զարբհանելյան, Հայկական հին դպր. պատմություն, III տպագրություն Վենետիկ 1897, էջ 464:

2) Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ 1901 թ., էջ 71:

3) Հ. Տաշյան, Ցուցակ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց, էջ 1057:

4) Բ. Սարգիսյան, Ցուցակ Վենետիկի ձեռագրաց մատենադարանի, էջ 800:

2· *Վ.Ենովիկի մատեան*· № 284, *թ*· 105*ա* «Անանիայի հոգեհուազ իմաստասիրի խրատ հոգեշահ՝ զղջման եւ արտասուաց:— *Ով աստուածասէր սիրելի եղբայր…*»: Դրչին ու ղրչութեան վայրը հայտնի չէ: Ձեռագիրն ունի 13—14-րդ դարի գրչութիւն: (Դրչագրի նկարագրութիւնը տես *Բ*· *Սարգսեանի* Ցուցակում, հա· *Բ* էջ 1000):

3· *ՀՍՍՌ մատեան*· № 1098 (*կ*· 1092), *թերթ* 381*բ* «Լ՞ խրատ հոգեշահ վասն զղջման արտասուաց· ասացեալ Անանիայի սուրբ եւ ընտիր վարդապետի:— *Ով աստուածասէր սիրելի եղբայր…*»: Գրչագիրն ընդօրինակված է 1320 թվին Ասիլ գրչի ձեռքով:

4· *ՀՍՍՌ մատեան*· № 1137 (*կ*· 1037), *թերթ* 109*ա* «Անանիայի հոգեհուազ իմաստասիրի: խրատ ոգեշահ զղջման եւ արտասուաց:— *Ով աստուածասէր սիրելի եղբայր…*»: Ընդօրինակել է Զաքարիա գրիչը «· Հակոբ վանքում: Ձեռագրի գրչութիւնը 14-րդ դարի է:

5· *ՀՍՍՌ մատեան*· № 2335 (*կ*· 2337), *թերթ* 296*բ* «Սրբոյն Անանիայի ասացեալ խրատ ոգեհաշէ:— *Զբանն՝ վասն որոյ ապաշէցեալ գիս եւ ասացեր լքել զիս զղջման եւ արտասուաց խրատ գրեա…*»: Ձեռագիրն ընդօրինակել է կարապետ գրիչը երուսաղեմում:

6· *ՀՍՍՌ մատեան*· № 787 (*կ*· 797), *թերթ* 99*ա* «խրատ ոգեշահ վասն զղջման եւ արտասուաց ասացեալ Անանիայի վարդապետի ի խնդրոյ միայնաւորի ումեմն:— *Ով աստուածասէր սիրելի եղբայր*»:— Ընդօրինակել է *Մարկոս* գրիչը: Ձեռագիրը ունի 15-րդ դարի գրչութիւն:

7· *Վ.Ենոքյանի մատեան*· № 371, *թերթ* 17 «Անանիայի Շիրակացոյ ասացեալ յաղագս զղջման արտասուաց ի խնդրոյ Գրիգորի Միայնակեցի:— *Ով աստուածասէր եղբայր…*»: Գրչագիրը հիշատակարան չունի: Ընդօրինակութեան ժամանակը 16—17-րդ դարն է:

8· *ՀՍՍՌ մատեան*· № 4215, *թ*· 376*բ* «Անանիայի Շիրակացւոյ ասացեալ· Յաղագս զղջման արտասուաց ի խնդրոյ Գրիգորի Միայնակեցի:— *Ով աստուածասէր եղբայր…*»: Գրչագիրն ընդօրինակել է *Մինաս քահանան* 1613 թվին:

9· *ՀՍՍՌ մատեան*· № 785 (*կ*· 783), *թերթ* 422*բ*· «Անանիայի Շիրակացոյ ասացեալ յաղագս զղջման արտասուաց ի խնդրոյ Գրիգորի Միայնակեցի:— *Ով աստուածասէր եղբայր…*»: Գրչագիրն ընդօրինակել է *Մինաս* գրիչը 1615 թվին Տաթեվում:

10· *ՀՍՍՌ մատեան*· № 792 (*կ*· 785), *թ*· 465*ա* «Անանիա Շիրակացւոյ յաղագս զղջման եւ արտասուաց…»: Ընդօրինակել է Եղիազար գրիչը 1619 թվին:

11· *Թամարիզ եղած գրչագրերից* № 8, *թ*· 53*բ*· «խրատ հոգեշահ վասն զղջման արտասուաց ասացեալ Անանիայի սուրբ եւ ընտրեալ վարդապետի:— *Ով աստուածասէր սիրելի եղբայր…*»: Ընդօրինակել է *Հովհաննես քահանան* 1658 թվին: (Գրչագրի նկարագրութիւնը տես «Հանդէս ամսօրեայ» 1906 *թ*·, էջ 93՝ պրոֆ· *Հ*· *Ա*ճառյանի յուշակը):

12· *ՀՍՍՌ մատեան*· № 788 (*կ*· 786), *թ*· 276*բ* «Սրբոյ Անանիայի խրատ ոգեշահ:—*Զբանն վասն որոյ ապաշէցեր…*»: Գրչագիրն ընդօրինակված է 1690 թվին:

13· *ՀՍՍՌ մատեան*· № 1157 (*կ*· 1138), *թ*· 75*ա*· «Անանիայի Շիրա-

կացուց յաղագս զջմաց եւ արտասուաց ի խնդրոյ Գրիգորի Միայնակեցի»։ *Ընդօրինակել է Հովհաննես քահանան Ագուլեսում։*

14· *ՀՄՄՌ մատեն.* № 5735, *ք.* 93 «Անանիայի Շիրակացւոյ ասացեալ սակս զջմաց արտասուաց···»։ *Գրչէն է Գրիգորը։ Ընդօրինակութիւնը* 18-*րդ դարի է։*

2· ՀԱՆԵԼՈՒԿ ԴԻՄԱԿԻ

ՀՄՄՌ մատեն. № 573 *հետաքրքրական ժողովածուն Շիրակացու աշխատութիւնների շարքում պահել է տասնիններ մի տեքստ՝ «Հանելուկ դիմակք» վերնագրով*[1])։ *Այդ տեքստը Մեսրոպ եպ. Մազխարոնն իր ցուցակում վերագրել է Շիրակացուն։*

Տեքստի բովանդակութիւնը և ոճին նայելով, հաւանական է, որ նա Շիրակացու աշխատութիւնը լինի։ Պետք է նկատի ունենալ, որ Շիրակացին հանելուկների այդ տեքստը չարադրել է նորուս աշակերտների համար։ Կասկածելի է միայն տեքստի լեզուն՝ «մորթի», «անօթի» և այլ բառերը։ Եթե վերջնականապես հաստատուի, որ այդ Շիրակացու աշխատութիւնն է, ապա անկասկած կարելի է ասել, որ միջնադարյան գրչների ձեռքով նա դղալի չափով, լեզուի կողմից, փոփոխութեան է ենթարկուել։ Համենայն դեպս, այդ աշխատութիւնը, առ այժմ, Շիրակացու հեղինակութեանը վերագրելու խնդրում անհրաժեշտ է լրացուցիչ և հիմնաւոր ապացոյցներ բերել։

Հանելուկների ոճը շատ համարձակ է և միջնադարյան հայ սովորական մտածող ու դատող հեղինակի համարձակութեան սահմանից դուրս է դալիս։ Այնպիսի արտահայտութիւններ, ինչպիսին է «Ասուած դող, երկչոտ անկնունք, մարդաբէր սուտ» հանելուկը (Դ՛ հանելուկը) թեկուզ և դրա նպատակը լինի ապացուցել, որ ասուած դող է նրա համար, որ հանեց Ադամի կողը նրա համար և նա չխմացաւ, սովորական հասատացեալի համարձակութիւնից շատ է դուրս։ Կամ թե չէ՝ «Ասուած անօրէն» ասելը (Դ՛ հանելուկը) այն նպատակով, որ բացատրի, որ ասուած անօրէն է, որովհետև նրա վրայ օրէնք չէ դրած, դարձեալ համարձակ է միջնադարյան հասատացեալ մտածողի համար։

Հանելուկները ընդհանուր բովանդակութիւն ունեն, բայց շատ տարբեր են կազմուած և անչափ հետաքրքիր են։ Բերում ենք ՀՄՄՌ մատեն. № 573 *դրչագրի այդ տեքստի մի փոքրիկ հատուածը։*

«ՀԱՆԵԼՈՒԿ ԴԻՄԱԿ»

Ա. Հայր իմ ծնաւ զիս և մօրէ իմմէ. եւ ես ծնայ զմայր որդեաց իմ եւ որդիք իմ ծնան զմայր հօր իմոյ։ (Թարգ.[2])*։— Ադամ ծնաւ Եւամբք առաւուծոյ և հողոյ. Եւայ ծնաւ և կողէն Ադամայ. կոյսն ծնաւ յորդեաց Ադամայ։*

Բ. Զկր ծնեալ եւ մեռաւ։—Ադամ եւ Եւայ։

---

1) *Ի մերձ այլոց, այս տեքստը «Աշխարհացոյց»-ի հավելուածում կրճատված ձևով հանդիպում է մեզ ՀՄՄՌ Մատեն.* № 582 *դրչագրում եւ*

2) «*Թրգ*»—*հապաւած «Թարգմանութիւն» բառն է։*

Գ Մնեալ են եւ չեն մեռեալ: Ենովքն եւ Եղիայ:

Գ Աստուած դող, երկչի՝ անկնունք, մարդարէն՝ սուտ: Թարգ.: Աստուած էաւ զկողն Ադամայ եւ նայ ոչ խմացաւ, երկչի անկնունք՝ Մկրտիչն: Մարգարէն սուտ՝ Ցունան:

Աստուած անօրէն, խա[չն] զիւահար, երկչ աստուածահայր: Թրք: Աստուած անօրէն, զի ի վերայ նորա օրէնք ոչ [զո]յ: Նաչն զօրութեամբ նհար եւ հալածեաց զդեւսն: Մարգարէն՝ Դաւիթ աստուածահայր:

Զ Երեք մարդ ընդ մի ճանապարհ գնային. մինն խուլ, մինն կոյր, մինն [մէր]կ: Խուլն ասաց. «Ես՝ հզօր լսեմ»: Կոյրն թէ՝ «Ես զգաղ տեսանեմ»: Մերկն ասէ՝ «Փախիցո՛ւք, զի մէ կողոպտեացեն զմեզ»: Թրք: Խուլքն հեթանոսք էին, զի ոչ լսէին զհրամանն աստուծոյ, եւ չետոյ լեցին եւ հաւատացին: Կոյրք եւ մերկքն՝ հրեայք էին, որպէս վրկիչն ասաց թէ՝ «Կոյրք էք՝ ոչ էր ձեր մեղք, բայց տեսանէ(ի)ք եւ յօրինացն եւ ի ճշմարտութենէն վախայք եւ մերկ դասայք»:

-3. ՅԱՂԱԳՍ ՅԱՆՄԱՆ ԼՈՒՍՈՑՆ ԶՈՐ ՈՄԱՆՔ ԿԱԹՒՆ ԾԻՐ ԱՍԱՑԻՆ

Այս վոքրիկ աշխատութիւն է, որը պահել է ՀՍՍՌ մատենադարանի № 573 ղրչագիրը: Մեսրոպ եպ. Մազիսարոսի կարծիքով, նա պատկանում է Շիրակացուն: Գրչագիրը վիտակն նյութերի ժողովածու է և ունի 15-րդ դարի ղրչութիւն: Վերնագրում Շիրակացու անունը չի հիշված: Այդ տեքստը հայտնի է Մեսրոպ եպ.-ին ՀՍՍՌ մատեն. վերև հիշված ղրչագրից:

«Վասն քանքարացն» Շիրակացու հեղինակութեանը վերագրելու խըղրում բացի այն, որ նա 573 ղրչագրում ընդօրինակված է Շիրակացու հարցումների շարքում, այլ փաստեր չունենք: Զգիտենք նաև թե ինչ կռվաններ է ունեցել Մեսրոպ եպիսկոպոսը, որ առանց կասկածելու թվագրել է այն Շիրակացու աշխատութիւնների շարքում: Բանասիրութեան հնարաւորութիւնը ներկայացնելու համար, այնուամենայնիվ, մենք նպատակահարմար համարեցինք այդ վոքրիկ տեքստը բերել այստեղ ամբողջութեամբ:

«Վասն քանքարացն: Զի՞նչ է ի քանքարն: ՊՍՏ[1]): Այս է մարգարէութիւն, թարգմանութիւն, ընորհք թշխութեան եւ դատաւորութիւն եւ ի քանքարն է տեսական եւ գործնական առաքինութիւն, և մին՝ բնական աւրէնք: Եւ այն, որ Ղուկաս ԺՀ ասէ ի, որ են հաւատք եւ մկրտութիւն, յորոց չպահանջէ աստուած արդիւնանալ, այլինքն ի հաւատոյ ի հաւատս փոխել եւ կամ կրկին մկրտիլ: Եւ դարձեալ զերկուսն Ջրխառոս յինքն կոտարեաց[2]), զի ճշմարիտ մարդ եղեւ, աստուած ի կուսէն ծնաւ, անեղն եղաւ եւ անմահն մեռաւ»: (Թերթ 264ա):

Մեր կարծիքով, կրոնական սխոլաստիկ այս տեքստը երբեք Շիրակացունը լինել չի կարող: Ո՛չ նրա խմաստը, ո՛չ նրա լեզուն և ո՛չ էլ բովանդակութիւնը չեն վկայում հօդուտ Շիրակացու հեղինակութեան:

---

1) «Պատ»—հապավված է «պատառական» բառից:
2) Գրչագրում— կՒՅ

7· «ՎԱՍՆ ԵՐԿՈՏԱՍԱՆ ԱՌԱՔԵԼՈՑՆ»ի

Տասներկու առաքյալների անունների ստորև բերված ցանկը պահվել է ՀՍՄՌ մատեն. № 573 ձեռագրերը, որն ընդօրինակված է 16-րդ դարում: Մեսրոպ եպ. Մաշխարոնն առանց տպագրելու այս աշխատությունը ևս վերագրում է Շերակացուն: Անհրաժեշտ ենք համարում բանասիրության քննությանը դնելու համար սա ևս մեջտեղ բերել ամբողջությամբ:

«Վասն երկոտասան առաքելոցն: Պետրոս: Եւ Անդրէաս եղբայր նորա: Յակոբոս: Եւ Յո...ոս եղբայր նորա: Փիլիպոս: Եւ Բարդուղիմէոս: Թոմա: Եւ Մաթէոս Մաքսաւոր: Յակոբոս Ալփեայ: Եւ Ղեբէոս, որ անուանեցաւն Թադէոս: Սիմոն Կանանացի: Յուդա Իսկարովտացի:

Դիտելի է, զի Յովսէփ Աստուածահայրն ունէր չորս որդի՝ զՅովսէփ, եւ զՅակոբ Արդարն: զՅուդա և զՇմաւոն: Եւ իբրեւ քանչելի ոք, յայս չորից եղբարցս: Գ. Գ. անուն հանդիպեցան: Նայ, որ Յովսէին էր, Յուսաոս եւ Բարսաբաս կոչեցաւ: Եւ Յակոբն՝ Արդար եւ Տէառն եղբայր կոչեցաւ: Իսկ Յուդային, որ Ղեբէոս անուանեցաւ, որ Յուդայ Յակոբեան, զոր Ղուկաս եւ Յովհաննէս առնն: Եւ վասն այն ասէ Յուդայ Յակոբեան, զի որոշեսցի ի Յուդայէ Սկարիովտացոյ: Եւ Շմաւոն, որ է Շմաւոն նախանձայոյզ: Եւ Սիմոն Կանանացի՝ որ կոչեցաւ Նաթանայէլ» (*Թ. 264ա*): Հավանական չէ, որ այս տեքստը Շերակացուները լինի, եթե մյուս այդ անդամահատված չէ Շերակացու ընդարձակ մի աշխատությունից:

4· ԽՐԱՏ ՎԱՍՆ ՀՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ

ՀՍՄՌ մատեն. № 1553 ձեռագրում վերնագրված է «Ասացեալ սուրբ «Վարդապետին Անանիայի Շիրակեցւոյ» ձևով:

> *Սկսվում է.* «Արդ որպէս ասէ Առաքեալն· «Ամենայն խոնարհութեամբ զմիմեանս լաւ համարել քան զանձինս»: Արդ «զամենայն» ասելով յայտ է, եթէ բազում մասունք են խոնարհութեանս...» (*Թ. 263ա*): *Վերջանում է.* «...եւ վարդապետաց անչափ կայ վկայութիւն խոնարհութեան, զի չիք այնպէս սիրելի աստուծոյ, որպէս ոք, որ խոնարհեսցի եւ յետին համարի զանձն Քրիստոսի...» (*Թ. 242ա*):

*Շերակացուն վերաբերվող այս աշխատության վեց ընդօրինակություններ է մեզ հայտնի, որից հնագույնը Մյունխենի մատենադարանի № 3 ձեռագիրն է (տե՛ս «Հանդէս ամսօրեայ» 1891 թ., էջ 240): Նա ընդօրինակված է 1283 թվին Դրիգոր Մխայնակեցի ձեռքով: Տեքստը վերնագրված է «Ընդրիւն <Անանիայի> վասն խոնարհութեան» (*Թ. 115ա*): Մեր մատենադարանի ձեռագրերից ամենից հինը 15-րդ դարի ընդօրինակություն է: Այստեղ այդ տեքստը վերնագրված է «Անանիայի Շիրակեցոյ խրատ վասն խոնարհութեան»:*

Խոնարհության մասին Շերակացուն վերաբերվող խրատական այս աշխատությունը ծավալով այնքան մեծ չէ — ՀՍՄՌ մատեն. № 1553 ձեռագրում ընդօրինակված է վեց փոքր փոքրատառ մեծությամբ թերթերի վրա: Հեղինակը հին և նոր կտակարանները մեջբերումներ է անում խոնարհու-

քան մասին և խորհուրդ է տալիս հավատացյալին խոնարհ և համեստ լինել՝ խուսափելով հպարտությունից և դատողամտությունից:

5. ԱՆԱՆԻԱՅԻ ՅԱՂԱԳՍ ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ՄՏԱՑ

Սկսում է. «Մեծն Մովսէս երկուցեալ թե գուցէ միտքն ոչ միայն էուենսցէ. այդ եւ կատարելապէս մեռանիցի...»:

Վերջանում է. «... եւ տիրացեալ յայնցանէ որ ի հեշտ ցանկութիւնս երթան ծառայելոյ լինիմք. եւ մերկ եւ հալանի, զի առանց ծածկութեի պատեղութեամբն վարիմք»:

Շերակացուն վերագրված այս աշխատությունը հասել է մեզ երկու ձեռագրով — ՀՍՍՌ մատեն. № 2679 (Գ. № 102, թ. 28ա) և Վենետիկի Մխիթարյան մատեն. № 352 (Նոր համարը 218, թ. 181բ)[1]: Առաջինն ընդօրինակված է Ղուկաս գրչի ձեռքով 971 թվին, իսկ երկրորդը՝ Սեբաստիա կողմից 19-րդ դարում: Երկրորդ գրչագրի մայրը, ինչպես ցույց ենք տվել այլ կապակցությամբ, առաջինն է հանդիսացել:

Մաքսի արքեպիսկոպոսի մասին գրված այս աշխատությունը փոքրիկ խրատական հատված է: ՀՍՍՌ մատեն. № 2679 ձեռագրում նա ընդօրինակված է Շերակացու աշխատությունների շարքում՝ 73 հոդվածից տակ «Նորին Անանիայի» խորագրով:

Մաքսի արքեպիսկոպոսը վերաբերող այս աշխատությունը կամ սխալմամբ է վերագրված Շերակացուն կամ Շերակացին հանդիսանում է նրա թարգմանիչը միայն, ինչպես ճիշտ նկատել է բահասեր Բ. Սարգիսյանը[2], որովհետև այդ հատվածը տատացիորեն վերցված է Փիլոն Երբայեցու Հյլյարքությունից:

6. ԱՆԱՆԻԱՅԻ «ԽՐԱՏ ՌԱՀԱՆԱՅԻՑ». ՎԵՐՆԱԳՐՎԱԾ Է. «ԱՆԱՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԽՐԱՏ-Ը ՌԱՀԱՆԱՅԻՑ»

Սկսում է. «Արդ՝ բահանայական աստիճանն ինքն յայտնի է արժանաւորութեամբ՝ թէ որպէս պարտ է լինել սուրբ եւ աւետարան՝ հեռացեալ ամենայն չարեաց...»:

Վերջանում է. «Կատարեն առ էեզ բանն տէրունական, որ ասաց ցՊետրոս, երէ սիրեացես զիս, արածեա զչխարս իմ, յայնժամ ունիս համարձակութիւն ասել առ տէր՝ թէ սիրեմ քեզ խօսք իմ...»:

Անանիային վերագրվող քահանայից խրատի մի շարք ընդօրինակություններ են մեզ հայտնի, որոնցից հնագույնը 1320 թվի Ասիլ գրչի ընդօրինակած գրչագիրն է, որը գրանցված է ՀՍՍՌ մատեն. № 10989-ի տակ (թ. 398ա—399բ):

Կան տեքստեր, որոնք ունեն այլ վերնագիր: Այսպես՝ ՀՍՍՌ մատեն. № 1475 գրչագրում Շերակացուն վերագրված այդ տեքստը վերնագրված է. «Աստիճան և խրատ քահանայից» (թ. 157բ): Ավելի ընդարձակ վեր-

1) Տես Բ. Սարգիսյանի ցուցակ, հտ. Բ, էջ 279:
2) Նույնը, էջ 279:

Նոգիր ունի ՀՍՍՌ մատեն. № 708 ձրչագիրը. «Սրբոյն Անանիայի վարդապետի բացատրութեամբ խրատ ոգեշահ եւ զգուշութիւն սպասաւորաց մեռաւաբեաւ սուրբ պատարագիս եւ ամենայն հաւատացելոց Քրիստոսի» (թ. 158ա):

Տեքստերից ոչ մեկի վերնագրում չի հիշված Շիրակացու անունը: Ամենուրեք հիշված է «Անանիայի վարդապետի» ձեւով: Ո՞ր Անանիայի մասին է այստեղ խոսքը— Անանիա Շիրակացո՞ւ, Նարեկացո՞ւ, Սանահնեցո՞ւ թե ուրիշ մեկ Անանիայի, այդ մասին դժվար է վճռականորեն որեւէ բան ասել:

Տեքստի բովանդակութիւնը մատաւորապես արտահայտված է վերեւ բերված ՀՍՍՌ մատեն. № 708 ձրչագրի վերնագրում: Հեղինակը քահանաներին խրատներ է տալիս՝ մաքուր կենցաղ ունենալ, ժողովրդի հետ լավ վարվել, պատարագի մատուցման ժամանակ մաքուր լինել և կրոնական այլ խնդիրների մասին:

7. ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ «ՓԱՀԱՆԱՑԻՑ ԵՒ ԺՈՂՈՎՐԴՈՑ ԽՐԱՏԸ»

ՀՍՍՌ մատեն. № 7131 ձրչագրում այդ խրատը վերնագրված է. «Նորին Անանիայ Շիրակացւոյն. խրատ քահանայից և ժողովրդոց»:

Սկսվում է. «Ես մեք արդ ազաչեմ զձեզ զամենեսեան մի դիւրաշարժ լինել ի վինաբանութեան եւ ի կռիւս...» (թ. 116բ):

Վերջանում է. «Վասն այսր պատշաճի համարեցաւ հարքին սուրբք ի հոգեւոր հարսանեաց օրինակի աւուրն յորժամ ասացաւ ի տեառնէ. ոչ արանց կանայս առնել եւ ոչ կանայք արանց լինել. զմարմնական կատարել հարսանիս, որ է անխտաւոր եւ ծննդական» (թ. 127բ):

Շիրակացուն վերագրվող քահանաներին և ժողովրդին ուղղված այս խրատի երկու ընդօրինակութիւնն է մեզ հայտնի — ՀՍՍՌ մատեն. № № 7131 և 838: Երկու ձրչագիրն էլ, համեմատաբար, նոր ընդօրինակութիւններ են: Առաջին ձրչագիրն ընդօրինակված է 1658 թվին Դավիթ ձրչի ձեռքով, իսկ երկրորդը՝ 1701 թ. Հովհաննես ձրչի ձեռքով: Առաջինի ձրչութեան վայրը հայտնի չէ, իսկ երկրորդի ձրչութեան վայրն է Ղալաասարը: Տեքստի բովանդակութիւնը հետևյալն է:—

Խրատի հեղինակը պատվիրում է հավատացյալներին և քահանաներին՝ չհամաձայնվել ճնշել Թուլլերին, հրաժարվել տվյալ մարդկանց քահանայութեան ատոիճան տալ, չթույլատրել անհավատ մարդկանց կամ կանանց հնգհաւար ընդունել, պահը կատարել հրապարակով, 13—15 տարվանից ցածր աղջիկներին կամ տղաներին չամուսնացնել և այլն:

8. ԱՆԱՆԻԱՅԻ «ՎԱՍՆ ԱՅՆ ԿԵՆՑԱՑՆ» ԽՐԱՏԸ

ՀՍՍՌ Մատեն. № 8030 ձրչագրում նա վերնագրված է. «Անանիայ վարդապետի առացեալ հոգեշահ վասն այն կենցաց»:

Սկսվում է. «Ընդ՝ եթէ կամիս որ յաղթես աշխարհիս եւ ոչ ըմբռնիս ի կենցաղոյս պատրանս՝ իմաստասիրութեամբ միտ դիր եւ խորհրդեամբ գործեա՝ թէ սնոտի եւ անցաւոր է այս կե<ան>ս ...» (թ. 75ա):

վերջանում է. «Արդ յորժամ երկրաւոր մեծութիւն պատէ զքեզ, դու զայդ ամենայն զմտաւ ածէ, եւ ջանիր դիր, ի յԱստուծոյ ուգնութիւն խնդրէ, որ յաղթես աշխարհիս եւ ժառանգորդ լինիս երկնից արքայութեան» (թ. 79բ):

Շերակացուն վերագրվող այս խրատը մեզ պատահում է դրչագրերում տարբեր վերնագրերով: Այսպես՝ Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 240 դրչագրում այդ տեքստը վերնագրված է՝ «Անանիայի վարդապետի ասացեալ խրատ թէ որպէս կարէ մարդ զայս կեանքս արհամարհել եւ աստուծոյ միայն ցանկալ եւ արքայութեան արժանանալ» (թերթ 87ա): Նման վերնագիր ունի նաև ՀՍՍՌ մատենադարանի № 2939 դրչագիրը (տե՛ս թ. 16ա): ՀՍՍՌ մատեն. № 4951 դրչագրում այդ տեքստն ունի «Սրբոյ Անանիայի Շիրակունեցոյ հայոց վարդապետի ասացեալ վասն անցաւոր աշխարհիս» (թ. 135բ): Ի միջի այլոց, մեզ ծանոթ դրչագրերից դա միակ դրչագիրն է, ուր անունով հիշված է Շիրակացին: Մյուս բոլոր դրչագրերում հիշվում է «Անանիայի վարդապետի» ձևով:

ՀՍՍՌ մատենադարանի վերև հիշված դրչագրի խորագրից քիչ տարբերվող խորագիր ունի Վենետիկի Մխիթարյան մատենադարանի № 275 դրչագիրը: Այդտեղ նա վերնագրված է. «Սրբոյն Անանիայի վարդապետի ասացեալ, վասն անցաւոր աշխարհիս, որ սուգ է» (թ. 86ա):

Շերակացուն վերագրվող խրատական այս աշխատության հնագույն ընդօրինակությունը 1341 և 1376 թ. թ. է: Նրանք գտնվում են մեր Մատենադարանում: Այդ դրչագրերից մեկը գրանցված է № 8029-ի, իսկ մյուսը՝ № 8030-ի տակ: Երկուսի դրչին էլ հանդիպացել է Տէրտէր քահանայ Երևանցին: Դրչության խորագիրը համապատասխանում է վերև բերված առաջին խմբի դրչագրերի տեքստի խորագրին. «Անանիայի վարդապետի ասացեալ վասն այն կեանց» (տես ՀՍՍՌ մատեն. № 8030, թ. 79բ, № 8029 թ. 154բ):

Հեղինակը իր այս խրատով նպատակ է դնում համոզել ընթերցող հավատացյալին, որ երկրավոր այս աշխարհն անցավոր և անոտի է ու երազ նման է անցնում: Ուստի և անհրաժեշտ է արհամարհել երկրավոր կյանքը և ձգտել դեպի երկնային հանդերձյալ կյանքը:

Աշխատության ոճին և առաջադրված հարցի բնույթին նայելով, մեզ անհավանական է թվում որ այս աշխատությունը Շերակացունը լինի:

IX. ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Դժվար է մեկ առ մեկ թվել այն աղբյուրները, որոնցից օգտվել է Շիրակացին իր աշխատությունները գրելիս: Դժվարությունը կայանում է նրանում, որ բոլոր դեպքերում չէ, որ Շիրակացին անունով հիշում է իր օգտագործած աղբյուրները, ուստի և դժվար է կռահել՝ թե այս կամ այն հարցի մասին խոսելիս Շիրակացին ի՞նչ սկզբնաղբյուր է ունեցել իր ձեռքի տակ: Ուսումնասիրողի համար դժվարություններ են առեղծվում անդադ օգտագործած աղբյուրի հեղինակը հիշելու դեպքում, որովհետև պարտահում է, որ այդ նույն անունով հնարավոր չըլլանից մեզ մի քանի հեղինակներ են հայտնի և դժվար է ասել, թե Շիրակացին այդ հեղինակներից որին է նկատի ունի: Պիտի է նկատի ունենալ նաև, որ հնարավոր հեղինակների բոլոր աշխատությունները չէ, որ հասել են մեզ:

Ավելի դժվար է որոշել՝ թե Շիրակացին ովքեր սկզբնաղբյուրի հունարեն բնագրից, թե՞ նրա հայերեն թարգմանությունից է օգտվել: Հայերեն թարգմանությամբ մեզ հասած մի շարք աշխատությունների ուսումնասիրություններից պարզվում է, որ Շիրակացին օգտվել է մեծ չափով հույն հեղինակների հայերեն թարգմանություններից: Ապացուցված է, օրինակ, որ Շիրակացին օգտվել է Դրիզիոր Նազիանզացու, Բասիլեոս Կեսարացու, Եվսեբի, Անդրեասի և հույն այլ հեղինակների հայերեն թարգմանություններից: Հայերեն թարգմանությունից չէ՞ արդյոք օգտվել Շիրակացին նաև այն հեղինակներից օգտված մասում, որոնց հայերեն թարգմանությունը մեզ չի հասել, այդ ամեն ասել անհնար է:

Մի բան անհատկանշական է, որ Շիրակացին ծանոթ է եղել և հնարավորություն է ունեցել օգտվել իր ժամանակ հայտնի կարևոր բոլոր սկզբնաղբյուրներից: Իր ուսուցչի, Տյուքիկոսի մոտ, նա դասել է հարուստ մի դրադարան, ուր եղել են ամեն տեսակ դրքեր: Այդ մասին Շիրակացին հետևյալն է դրում ինքնակենսագրության մեջ. «... Զի ամենայն (դրքը) կայր առ նմա (այսինքն՝ Տյուքիկոսի մոտ)՝ յայտնիք եւ դաղտնիք, արտաքինք, արուեստականք եւ պատմագիրք, բժշկականք, ժամագիրք եւ զի՞ եւս մի մի անուանիցեմ, քանզի չէք ինչ դիրք, որ առ նմա ոչ գտանէր» (Մնացորդք բանից, էջ 2): Այդ դրքերի զգալի մասը, ինչպես Շիրակացին ինքն է վկայում, հայերեն թարգմանված չեն եղել և նա օգտվել է հունարեն բնագրից. «Եւ հմուտ եղէ դրոց բազմաց, որք եւ ոչ ի մեզս են թարգմանեալ լեզուս» (նույն տեղը, էջ 2):

Հետագա ուսումնասիրողների աշխատանքը թեթևացնելու համար՝ մենք անհրաժեշտ ենք համարում թվել Շիրակացու այն աղբյուրները, որոնց մասին կան հիշատակություններ կամ պարզված են մեր կողմից:

1. Ամբյուդենոս (Ἀβυδηνός)։ Նա հիշված է նաև Խրենացու մոտ։ Ապրած Ասորի է։ Ոմանց կարծիքով, նա Բերոսոսի աշակերտն է կամ մոտիկ բարեկամը։

Աբյուդենոսի աշխատությունը մեզ չի հասել։ Շերակացին նրան հիշում է «Աշխարհացոյց»-ի տեքստում՝ երիցս չորս վտակներից «Քուբթայլը»-ի կապակցությամբ. «Բայց կարծեմ դայս վտակ, որ այժմ Քուբթայլա անուանի, սա կոչել Աբուբենայ՝ Աբմահադէս...» (Տե՛ս. «Աշխարհացոյց», էջ 38)։ Ակադ. Հ. Մանանդյանի կարծիքով «Աբուբենայ» վկայությունը քաղված է Եվսեբիոս Կեսարացու ժամանակագրության հայերեն թարգմանությունից (տե՛ս նրա «Մուրճ. առեղծ. լուծումը» աշխատությունը, էջ 25)։ Ակադ. Հ. Մանանդյանի կարծիքը, սակայն, անհավանական է, որովհետև այդ դեպքում Շերակացին հարկ չէր ունենա ուղղակի մատնացույց անել իրեն, Աբյուդենոսին։

2. Աբրահամ եպ. Մամիկոնյան։ (7-րդ դարի հեղինակ է, Մակրատի հայերեն թարգմանիչը)։ Շերակացին նրա մասին մութ ձևով ակնարկում է իբր ժամանակագրության մեջ՝ առանց անունը հիշելու. «Եւ եղեւ պատառումն արեւելեացն ի Կիւրդի՝ որոց ընդ նմա եալեկոտոսաք. մինչեւ ճշմարտութիւն իրացն ծանուցաւ Թագաւորին։ Որպէս ունի յաղագս այսորիկ անուսում յիշատակարանացն պատմութիւն» (Ժամ. էջ 59)։ Բայց կարող է պատահել, որ այստեղ Շերակացին ակնարկած լինի ո՛չ թե Աբրահամ եպ. Մամիկոնյանին, այլ Սոկրատին, կամ Փիլոքսենոսի «Եվեսիոսի ժողովի պատմությունը»։ (Այս մասին տե՛ս Բ. Սարգսյանի ծանոթագրությունը՝ ժամ. տեքստի 59 էջում)։

3. Ագաթոն։ Շերակացու մոտ հիշված է նրա Տիեզերագրության կից տոմարի տեքստում (83-րդ գլխում), որի վերնագիրն է «Զիրճ է յոյսն գերագանց»։ Նա հիշված է Փիլաքսոն անունով մի հեղինակի հետ մեկտեղ. «Բայց տեսի յաղագս այսր յոմէ պատմութիւն ասողջ եւ անհամ Ագաթոնի եւ Փիլաքսոնի ոմանց բանից, որ յաղագս դիւտ թ եւ ժ երեկին պատմեն Մարտին եւ Ապարան ոմանս անուանելով եղբարս։ Զոր մեք ժեռնել խոտեցեալ սուտս դանդխացեալ պատմութիւնս» (Տե՛ս. եւ տոմար, էջ 92)։

Ագաթոնի կամ Փիլաքսոնի վերաբերյալ հիշված աշխատությունը, որն անհայտ, ապոկրիֆ աշխատություն է, հանդիպել է մեզ ՀՍՍՌ մատենադարանի № 1999 ձեռագրում։ Այդ աշխատությունը վերնագրված է. «Հարցումն Փիլաքսոնի եւ պատասխանի Ագաթոնի վասն թ և ժ երեկին հոռոմոց, որ ի ապրելեաց խորանն՝ եթէ որպէս եղեւ գիւտ նորա։ Զոր եցոյց հոգին սուրբ ի ձեռն երկուց հոգեկիր արանց, Ապրիլի եւ Մարտի»։ Աշխատության տեքստում Փիլաքսոնը հարցնում է Ագաթոնից, իսկ վերջինս պատասխանում է նրան անճանաչության մասին (Մարտի և Ապարանի մասին), որոնք Հնդկաց աշխարհին մոտիկ Զինկիլաց կոչվող կղզում, աքսորական եղած ժամանակ, դառնում են Թիեւրակը։ Հավանական է, որ այս աշխատության հայերեն թարգմանության հետ ծանոթ եղած լինի Շերակացին։ Եթե այդ վերջնականապես ապացուցվի, ապա ՀՍՍՌ մատեն. № 1999 ձեռագրի պատճենահանած վերև հիշված աշխատության թարգմանությունը պիտի համարվեր ամենահին ձեռագիրը։

4. Ադեբսանդրի գիրքը։ Խոսքը կեղծ Կալիսթենեսի մասին է, որի

թարգմանությունը վերագրվում է Խորենացուն: Նրա հայերեն թարգմանության վերնագիրն է. «Պատմութիւն մեծի աշխարհակալին Աղեքսանդրի Մակեդոնացւոյ»: Շիրակացին այս աղբյուրից օգտվել է և հիշում է իր «Աշխարհացոյց»-ում՝ Տայոց բանակի հատվածում. «... կորիւնք անցանեն ընդ դէմն առ հարան. եւ աղջկացն մնալով առ մարսն. բայց ես այլաբանութիւն կարծեմ. որպէս վասն ամազոնացն պատմի յԱղեքսանդրի դիրքն, զոր թիւրապաշց (?) ազգ են այլաբանեալ» (Սուքր. «Աշխարհացոյց», էջ 45):

5. Ամփիլոքոս: Շիրակացին Ամփիլոքոսին հիշում է Տիեզերագիտության տեքստում՝ արևագիր մասին իր պատմած երազի կապակցությամբ: Նա իր ուսուցչին պատմում է՝ թե ինչ երազ է տեսել երկրի մյուս կողմում մարդիկ բնակվելու մասին: Ուսուցիչն այդ առթիվ մատնացույց է անում Ամփիլոքոսի Հորի մեկնության. «Եւ իմ պատմեալ զայս վարդապետին իմում. եւ նա ասէ ցիս՝ ընդէ՞ր ոչ հարցանէիր զայդ՝ եւ նա ետոյց ինձ ճառս երանելոյն Ամփիլոքոսի, որ մեկնէր զդիր Ցովբայ. եւ ի խօսսն տեառն որ ասէր այսպէս. «Զի՞նչ վայրք իցեն, ուր ծածկեմ ես զարեգակն ի դիշերի յերեսաց ամենայն կենդանեաց» (Տիեզ. էջ 14): Շիրակացին Ամփիլոքոսի՝ Հորի մեկնության հունարե՞ն տեքստից է օգտվել, քա՞ հայերենից: Առանց ճշդելի տակ կոնկրետ փաստեր ունենալու, դժվար է որևէ բան ասել այդ առթիվ:

6. Անդրեաս եղբայր Մագնոսի: Հիշված է Շիրակացու Զատկի ճառում և ժամանակագրության մեջ: Զատկի ճառում նա հիշված է՝ նրա կազմած երկուշաբաթյա շրջանի կապակցությամբ. «... Անդրէաս եղբայր Մագնոսի եպիսկոպոսի, կարգեաց տոմար երկերիւր ամաց» (Զատկի ճառը, էջ 20): Ժամանակագրության մեջ հիշվում է նրա կազմած տոմարի մասին. «Եւ ի նորին աւուրս (այսինքն՝ Կոստանդիանոս կայսեր ժամանակ) Անդրէաս եղբայր Մագնոսի եպիսկոպոսի դշարամանութիւնն տոմարաց յաւելինէր» (Ժամ., էջ 53): Ժամանակագրության մեջ հիշվում է նաև ոմն Անդրյաս ժամանակագիր (էջ 4), որը, հավանական է, նույն Անդրյասը լինի:

Շիրակացուն հայտնի է եղել և նա օգտվել է Անդրյասի «Խաւսք Անդրէասի խաստասիրի վասն Զատկաց» աշխատությունից: Վերջինս պահվել է ՀՍՍՌ մատեն. № 1999 ձեռագրում: Այդ աշխատությունը նոր է հայտնաբերված և հրատարակված չէ:

Ուշադրության արժանի է, որ Շիրակացին օգտվել է այս աշխատության հայերեն թարգմանությունից: Այդ տպագրելու համար անհրաժեշտ ենք համարում բերել վերջերիկ համեմատություն:

Անդրէասի վասն զատկաց:

...չեն տեղեակ բազում քոյոց եւ վարդապետութեան տեառն մերոյ, վասն այսորիկ Մ ամ համարեցայ. միանգամայն ըստ քրոցն Անտիոքացւոց ի չորսեսարիւրերորդէ առաջնորդէ մինչեւ յամս վեցհարիւր երորդ:

Շիրակացու Զատկի ճառից

«...եւ քանզի չեն տեղեակ բազումք քոյոց, մանաւանդ չինաց կանք. եւ վարդապետութիւն տեառն մերոյ *աստծեցաւ* կալաւ զաշխարհ *ամենայն*: վասն այսորիկ հինգհարիւր երեսուն և երկու ամաց միանգամայն հա-

ես Անդրէաս եղբայր Մագնոսի ծալիկոպոսի կազմեցի եւ դրոշմեցի առաձիւնն, զբնաւ մի մի ամի, ժէ կանուն և երկերիւր կարգ. եւ զաւարիկն մեկնեսցէ զմի մի կարգ առ մի մի տարի»։

(Ծոյլ Անդրէասի խմաստասիրի վանդակաց, ՀՍՍՌ մատեն. № 1999, թ. 19բ)։

մարեաց ըստ թուոց Աղեքսանդրացւոյն ի ՊԻԸ ամէն միւն, եւ յամն ՌՃԿ, այնոցիկ որոց կացեն յաշխարհի, կազմեցի ես Անանիա որդի Յովհաննէսի Շիրակայնւոյ եւ դրոշմեցի առաձիւնն զբնաւ մի մի ամ ՇԼԲ, իւր կանուն, որովք զամենայն համարն բովանդակեցի ՇԼԲ կարգ. եւ զաւի մեկնեցի զմի կարգ առ մի մի տարի»։

Անանիայի Շիրակայնւոյ համաբոդի ասացեալ ի գաւիթն տեառն, էջ 26)։

7. Ապեղիոս։ Հիշված է Շիրակացու Տիեզերագիտությանն տեքստում Դիմոկրիտեսի հետ միասին. «Բռուտաղ է անուան ըստ գրոց, զոր պատուէն քաղդէացիքն զսմանէ ասացին Դիմակրիտէս եւ Ապեղիոս, թէ որպէսի ինչ աւուրս այս լինի, նոյնպէս պարտ է ակն ունել ձմերայնոյն գալոյ» (Տիեզ., էջ 69)։

8. Ապոլոն Լավոդիկեցի։ Հիշված է Շիրակացու Աստղաբաշխության և «Աշխարհացոյց»-ի տեքստերում։ Աստղաբաշխության մեջ ասված է. «Այսքիւկ վառին ի վերայ այսոցիկ. եւ Ապոլոնի Լաւոդիկեցւոյ յինքեան յառաջին իւր հնդամասեանն դասուելով եղիպտացիսն, որպէս թէ բաղում մոլորութիւն լեալ իցէ նոցա ի կենդանասեռակացն վերբերութիւն» (Մնաց. բանից, էջ 67)։ Լավոդիկեցին «Աշխարհացոյց»-ում հիշված է հետեւեալ կապակցությամբ («Բանդի զծուանականաւն եւ զկասբիցն՝ եւ ի մէնջ մարդիկ չուրջ անցին. նոյնպէս վարկանիմ եւ զշնդկացիսն, եւ ոչ որպէս ապրատքինքն Դիոնեսիոս եւ Ապողոն եւ ընկերք իւրեանց ասեն, պարունակել Ովկիանոսի զամենայն» (Սուբբ. «Աշխ.», էջ 8)։ Սակայն հիշատակությունը նը կարող է և եղած լինել հունարեն բնագրից, որն աղբյուր է ծառայել, և Շիրակացին թարգմանել է հունարեն բնագրի բառերը։

9. Աստվածաշունչ։ Օգտվել է Շիրակացին գրեթե իր բոլոր աշխատություններէի մեջ։ Բազմաթիվ մեջբերումները է անում Հին և Նոր կտակարաններից, հատկապես Սաղմոսից, Հոբից, ավետարաններից և Թղթերից։ Ձեռքի տակ ունեցել է աստվածաշնչի ոչ մեղ հասած խմբագրություն։ Այս մասին մանրամասն մենք խոսել ենք մեր մի այլ աշխատության մեջ։

10. Արիստոտել։ (Հույն նշանավոր փիլիսոփա, որն ապրել է 384—322 նե. ք. մեր թվականից.)։ Շիրակացին օգտվել է նրա «Ճաղատ աշխարհի» աշխատություններից՝ հղջատայության երկնից» և «Ճաղատ աշխարհի» աշխատություններից՝ առանց սակայն նրա անունը հիշելու։ Պարզվում է անգամ, որ Շիրակացին օգտվել է այդ աշխատության ոչ թե հունարեն բնագրից, այլ հայերեն թարգմանությունից։ Արիստոտելի այդ նույն աշխատությունից Շիրակացին օգտվել է նաև իր Աստղաբաշխության վերջին գլխում («Ճաղատ

հազմոց»), որը դժբախտաբար չի հրատարակված: Շերակացու Արխատուն «Ճաղատաց աշխարհի» աշխատության հայերեն թարգմանությունից օգտվելու միտքը ակնարկ դարձնելու համար մենք անհրաժեշտ ենք համարում քաղել փոքրիկ համեմատություն, վերցնելով այն Գ. Տ—Մկրտչյանից:—

Արխատուն. Ծաղոգս աշխարհի

«Քանզի երկու ումանք գոլորշիք ի սմանէ վերաբերեալ լինին շարունակապէս. զեր ի վերոյ մերը օդն անօսրագոյն է եւ ամենեւին անտես, եթէ ոչ ի աստղութենէն ումեմնէ երեւեալ լիցի. իսկ այն որ ի ջրոց եւ ի գետոց վերաբերեալ լինի, ընդ տեսութեամբ աստրանկանի, ի սոցունց մինն չոր է եւ ծխատեսակ յերկրէ ի վեր հոսեալ, իսկ միւսն խոնաւագոյն ի գէն բնութենէն ի վեր ծխեալ: Եւ ի սմանէ լեալ լինին մառախուղք եւ սառնամանեաց տեսակք եւ ամպք իսկ, և ձիւնաբերք եւ կարկուտք: Իսկ ի չորոցն հողմունք եւ հնչմունք զանազանք, որոտմունք եւ փայլատակմունք. կիզմունք և ամպահարութիւնք, և այլ որ ինչ բնակակից է սոցունց» (էջ 610):

Ածանիայի Ցաղագս շրջ. երկն.

«Եւ ինչ է որ զաթձեալ խառաքանչիւր երկիրս գոլորշեաց, յորոց գործի ինասք եւ ուգուտք: Եւ երկու շոգիք փղձկալիցք յաճախ եւ սաէպ յերկրէ աստի յաւդրս ելանեն երբոյկս անտառածելի աչաց, որ թուի թէ յաքսէրս յաճախ լինին: Եւ են գործեալ, որք ի գետոց եւ յաղբերաց լինին: Երեւին ինձ այդպէս նմանութեամբ՝ զի մին է ցամաք ծխոյից, եւ է ինա ի հողմոյ անտի, եւ միւսն խոնաւ է քանզրամած՝ ի գիշականութենէն զերկրէ ձուկն տալով եւ առնելով. եւ ի նմանէ լինին քայք եւ տեսիլք սառնամանեաց, ամպք եւ անձրեւք եւ ձիւնաբերք եւ կարկուտք: Բայց ի շոգւոյ անտի՝ հողմք ազգի ազգի, որոտմունք եւ փայլատակմունք, կայծակն եւ հուր, եւ որ ինչ նման է սոցին» (էջ 41—50):

11. Գրիգոր Աստուածաբան կամ Նազիանզացի: *Մեր թվականության IV դարի հեղինակ է, արևելյան եկեղեցիների խոշոր տեսաբաններից: Նրա քազմաթիվ աշխատություններ, որոնց մեծ մասը թարգմանել են հայերեն դեռևս V դարում: Նազիանզացու աշխատությունների հայերեն թարգմանությունից օգտվել է Շերակացին և անունով հիշում է նրան: Այսպես՝ Հայոնության ճառում Շերակացին հիշում է Գրիգոր Աստվածաբանի Մկրտության ճառը հետևյալ կապակցությամբ. «Զայս վկայէ և Մակարայ Աստուածաբանն Գրիգոր յաղագս յերից ծնանելոյ զկրտութիւնն ի ճառ մկրտութեան...» (Մնաց. բանից, էջ 6). Գրիգոր Աստվածաբանի աշխատությունների մասին անորոշ ձևով խոսում է Շերակացին նաև իր «Աշխարհացույց»-ի (տես, էջ 9) և Տիեզերաբանության տեքստերում (էջ 2)[1]:*

12. Գրիգոր Լուսավորիչ: *Շերակացին հիշում է իր Հայոնության ճառում և ժամանակագրության մեջ: Հայոնության ճառում նա Լուսավորչի խոսքերը մեջ է բերում որպես հեղինակավոր ցուցում. «Տանեանիկ այս ունի ժամս Մեծ, որով մաթիմբ իմանալ զտունկնականն եւ զարեգակնաշրջինն... Յորոց եւ իմ պատկառանք Գրիստոսի, խոստովանողն եւ Հայոց*

---

1) *Գործեն վրդ-ի, Մամբրե Վերծանողի և Դավիթ Անյաղթի մատենագրությունք. Վենետիկ, 1833, էջ 610:*

տանեայցս Հայքն սուրբն Գրիգորը տանելովն, եթէ երիցորդ լուսաւորն իշխանական զիշերոյ զայ բերէ յանձին զօրինակ մխածնի որդւոյն աստուածոյ պատկ, թաղէ, զուշակ թաղելոյ յարութեան մեռելոց» (Ցայտ. 17)։ *Ժամանակագրության մէջ Լուսաւորչիչը հիշվում է մի քանի տեղ։ Շիրակացին վերն բերված հատվածում մէջբերում է անում, մեր կարծիքով Ագաթանգեղոսին վերագրվող վարդապետությունից։*

13. Դեմոկրեետես։ *Այս հեղինակի մասին տե՛ս Ափեղիոսի մասին մեր տված ծանոթագրությունը։*

14. Ափրիկանոս։ *Ափրիկանոսը հիշվում է նաև Կորենացու մոտ՝ հնադարյան հայերեն հիշատակություններ նրա մոտ ունենալու կապակցությամբ։ Ափրիկանոսից Շիրակացին օգտվել է իր ժամանակագրության մի շարք հատվածներում և անունով հիշելով նրան։ Այսպես, Իսրայելի պատմության կապակցությամբ հիշում է. «Եւս սորա (Սամսոնի) տրիւոց Սամփսար ամս երեսուն։ Եւս ասորւոյն իշխանութիւնն կալաւ, որպէս Ափրիկանոսն պատմէ, ամս ըառասուն»։*

15. Բարոն Գաղմատացի։ *Խոսքը, մեր կարծիքով, հռոմեացի դիտնական Վարռոնին է վերաբերում (110—27 ն. ք. մեր թվականությանը)։ Հիշված է Շիրակացու «Աստղաբաշխությանն» տեքստի վերջին, չորրորդ բաժնում՝ «Բաղադս հռոմոց» դլխում։ Նա Շիրակացու մոտ հիշված է Վարռոնս կոչվող հյուսիս-արևելյան քամու կապակցությամբ. «Ձամանէ (այսինքն՝ վարռոնս) ասէ Սողոմոն թէ խեաս է եւ աղոյ կոչի, իսկ Բարռոն Գաղմատացի ասաց սկիզբն ասղոց, յորժամ յաճախ զիւխնոնն, զոր խոպն կոչեն, երեւի...»։ (ՀՍՄՄ. մատեն. № 1937 գրչագիրը, թ. 326 բ)։*

16. Բարսեղ Դեսպացի։ *Մեր թվականության IV դարի հեղինակ է։ Նրա մի շարք աշխատությունները թարգմանվել են հայերեն դեռևս V դարում։ Հայերեն թարգմանված Բարսեղի աշխատություններից նշանավոր է նրա «Ճաղատս վեցօրեայ աւուրց արարչութեանն» ճառերը, որից և օգտվել է Շիրակացին իր տիեզերագիտական տեքստերում։ Երբեմն նա արտագրում է Բարսեղից ամբողջ հատվածներ։ Հիշում է նրան Բարսեղ կամ Բասելիոս ձևով իր գրեթե բոլոր աշխատություններում (տես «Ճաղատս շրջ. երկնից» էջ 34, Ձղջման ճառը, էջ 3, 31, Աստղաբաշխություն, ըստ մեր ձեռագրի, էջ 9, Ժամանակագրություն էջ 54, Տիեզերագ.- էջ 24, 29, 49 և այլն)[1]։*

17. Գիրք թղթոց։ *Այս մասին տես Շիրակացու պատմական աշխատության հատվածը։*

18. Դիոդորոս Սամոսացի։ *Շիրակացին հիշում է միայն իր «Աշխարհացոյց»-ում. «Իսկ հարաւային (խոսքը հարաւային կոչվող գոտու մասին է) խառարհ է աստղական, եւ այլակերպ զոյլս երեւեցուցանեն. որպէս Դիոդորս Սամիացի ասէ զնդկաց...»* (Սուքր. աշխ., էջ 6)։

19. Դիոնիսիոս։ *Շիրակացին հիշում է «Աշխարհացոյց»-ում. «Բանզի չծանեանաւն եւ գիսաբինն՝ եւ ի մէնջ մարդիկ չուրջ անցին նոյնպէս վարկանիմ և գնդկացինն. և ոչ որպէս պրաբինքն Դիոնիսիոս եւ Ապտոն եւ ընկերք իւրեանց ասեն, պարունակել Ովկիանոսի զամենայն»* (Սուքր. «Աշխարհացոյց», էջ 8)։ *Մեր կարծիքով, խոսքը Թրակացու մասին է, որը մեր թվականության II դարի հեղինակ է։*

---

1) *«Ճաղատս վեցօրեայ արարչութեանն» հայերեն թարգմանությունը հրատարակվել է Վենետիկում, 1820 թ.*

20. Եզնիկ Կողբացի: Օգտվել է Շիրակացին իր Տիեզերագիտության տեքստում առանց նրա անունը տալու: Այդ մասին մենք նշել ենք մեր հրատարակած Շիրակացու «Տիեզերագիտություն և տոմար» աշխատության տեքստի ներքին ծանոթագրության մեջ:

21. Եպիփան Կիպրացի: Շիրակացին մեծ չափով օգտվել է Եպիփան Կիպրացու չափերից երբեմն անդամ տառացի արտագրել է այն: Ժամանակագրության մեջ Վաղենտինոսի ժամանակ դործող հերձվածողների մասին բերված հատվածն ամբողջապես քաղված է Եպիփանի «Ցաղագս հերձուածոց» հայերեն թարգմանությունից: Ժամանակագրության մեջ հիշված է նաև Եպիփան Կիպրացու պատմությունը: Քրիստոսի ծննդյան առթիվ ժամանակագրության մեջ ասված է. «(Մինուղն Քրիստոս) ըստ յունաց եպիփանու Կիպրացւոց պատմութեանն՝ հինգ հազար հինգ հարիւր» (Ժամ. էջ 36):

22. Երմոգենես: Հիշված է Շիրակացու ճառում, լուսնի ժամանակի կապակցությամբ, այնտեղ, ուր կատարվում են որոշ հաշիվներ Իրոնի համեմատությամբ. «Արդ ի մէջ երկուց վաւերաց պատեհադոյն զերմոդենի ասացեալն համարին քան, Իրոնի: Թէպէտ և ի ճշմարտութենէ երկոքեան վրիպեալք: Եւ ասէ երմոդենէս այսպէս, թէ մէօրեայ ստեղծաւ լուսին, վասն զի մի օր իսկ էր լինելութեանն. եւ զոյդ ընդ արեգական ստեղծաւ ի մէում տեղ ի մէջոց երկնին ի ծագման կողմանէ, որպէս եւ այժմ յորժամ երթայ դէպի լուսին արեգական՝ առաջին օր ամուսնի լուսնի» («Մնացորդք բանից», էջ 24):

23. Եվսեբիոս Կեսարացի: (Նկեղեցական նշանավոր տեսաբան, որի Քրոնիկոնը V դարում թարգմանվել է հայերեն): Շիրակացին մեծ չափով օգտվել է նրա Քրոնիկոնից իր ժամանակագրության մեջ, երբեմն տառացի արտագրել է այն: Նմանություններն այնքան շատ են և ակնբախ, որ մենք ավելորդ ենք համարում այդ առթիվ վկաութեր բերել:

24. Եվագր Պանտացի: (Մնացած է 345 թվին, Իրենիա քաղաքում): Քրիստոնեության խոշոր տեսաբաններից մեկն է: Շիրակացին Եվագրի աշխատություններից մեջբերումներ է անում և հիշում նրան իր Զղչման ճառում, որը մինչև այժմ դեռ հրատարակված չէ. «Եւ նւագր ասէ. Ցորժամ խորհուրդ պատերազմողին անկցին ի վերայ քո, դու ընդդէմ ախոյանին տէգ արտասուացն ուղղեսջիր. եւ աւազակապետն զահի հարեալ փախցէ ի քէն» (Տե՛ս մեր հրատարակության համար պատրաստած «Ցաղագս զղչմանն»-ի տեքստը, էջ 32):

25. Թեոփիլոս: Շիրակացին օգտվել է Թեոփիլոսից և նրանից մեջբերումներ է անում իր Տիեզերագիտության մեջ. «Զի լուսոյն դոր կոչէք թափանցիկ, այս ասաց Թէոփիլոս՝ թէ ծագումն է ի յատուածային բնութենէն եւ ոչ բոլանդակ, այլ նշոյլ ըստ հանդուրժելոյ տեսութեան մարդկան՝ եւ ոչ սատակմանն» (Տիեզ., էջ 89—90):

26. Կոստանդին Անտիոքացի: VI դարի հեղինակ է: Մատենագրության պատմության մեջ հայտնի է Կոսմա Ինդիկոպլևստա անունով: Նրա աշխատություններից նշանավոր է «Քրիստոնեական տեղագրությունը» Χριστιανική Τοπογραφία որից օգտվել է Շիրակացին իր «Աշխարհացոյց»-ում: Շիրակացին Կոստանդին Անտիոքացուն հիշում է իր աշխատության հետևյալ հատվածում. «Եւ ոչ միայն զայրացեալ գօտեան, այլ եւ

ժամենայն աշխարհաւ չուրջ ասեն բնակեալ. զոր եւ Կոստանդիանոս Անտիոքացի ի Քրիստոնէական Տեղագրութեան, որ ասաց զտասանն յարեւելեան երկրէն առ մեզ անցեալ» (Սուքր. «Աչխարհացոյց», էջ 7)։ Շիրակացին Անտիոքացու մասին հիշատակութիւն ունի «Աչխարհացոյց»-ի տեքստի այլ հատուածում եւս։

27. Կանոնաց գիրք։ Շիրակացին կանոնաց գիրքը հիշում է իր Ցայտնութեան ճառում՝ Ծննդեան տոնի մասին խոսելիս. «Քանզի գրեալ է ի միջներորդ գլուխ կանոնացն այսպէս, եթէ՝ կարդեցին առաքեալքն եւ եղին հաստատութեամբ, թէ եղիցի տուն Մննդեան եւ Ցայտնութեան Տեառն եւ Փրկչին մերոյ գլուխ եւ առաջնորդ տօնից եկեղեցւոյ, որ աւր Իե է Տէրեէ ամսոյ, որ է Ջ յունուարի բստ հռոմայեցւոց» (Մնացորդք բանից», էջ 4)։

28. Կյուրեղ Աղեքսանդրացի։ Աղեքսանդրիայի պատրիարքներից է, որը հայրապետական աթոռ է բարձրացել 412 թվին։ Աշխատութիւնների մեծ մասը թարգմանված է հայերեն։ Շիրակացին օգտվել է նրա «Ընթերցածոց»-ի և Սաղմոսի մեկնութիւններից։ Շիրակացին Կյուրեղին անունով հիշում է իր Ցայտնութեան ճառում. «Բայց ես ոչինչ տեսանեմ գնոցա հետ՝ բոլոր յաղագս այսր տօնի, բայց որ զերկոցուն տօնիցն եղեալ է սրբոյն Կիւրեղի զընթերցուածն եւ զսաղմոսս, ոչ խմանամ զայն յերկուս բաժանել, այլ թէ միում աւուր զերկոցունցն խորհրդոցն լիով ունի զկարգ եւ պայծառացուցանել զտօնն» (Մնացորդք բանից, էջ 9)։ Կյուրեղի մասին Շիրակացին մի քանի տեղ հիշատակութիւն ունի նաև իր ժամանակագրութեան մէջ։

29. Հիպպոլիտոս Բոստրացի։ Մեր Թվականութեան III դարի հեղինակ է։ Գրել է մի շարք աշխատութիւններ, ի թիվս որոնց և Χρονικὸν πρὸς Ἕλληνας-ը։ Շիրակացին օգտվել է Հիպպոլիտոսի Քրոնիկոնից և բառ առ բառ թարգմանել մինչև XII հատվածը։ Այս մասին մանրամասն տե՛ս Ք. Սարգիսյանի ժամանակագրության հրատարակության առթիվ գրած նեռքածականը։

30. Մակար Երուսաղեմացի կամ Մակար Մեծ (300—390 Թ. Թ.)։— Քրիստոնեական խոշոր տեսաբաններից է։ Ունի մի շարք աշխատութիւններ։ Հայերեն թարգմանութեամբ մեզ հասել է նրա «Թուղթ առ հայս վասն Հանոնադրութեան եկեղեցւոյ կարգաց, զոր չէ արժան ընդ սահման եւ ընդ կարդ անցանել»։ Շիրակացին, հավանական է, այդ «Թուղթ»-ը ի նկատի ունի, երբ իր Ցայտնութեան ճառում գրում է. «Իսկ յաւուրս սրբոյն Կոստանդիանոսի, ի սուրբ ժողովին Նիկիայ ոչ եղեւ ընկալեալ տօնս այս ի սրբոց հարցն. այլ բստ նոյն կանոնի սրբոց առաքելոցն տահմանեցին տօնել։ Եւ այս յայտ է ի Թղթոյ երանելւոյն Մակարայ հայրապետին Երուսաղէմի, զոր ի Հայաստանեայս գրեաց աշխարհ յաղագս խորհուրդ սրբոյ Միքռութեանն...» (Մնացորդք բանից, էջ 4—5)։

31. Մովսես Խորենացի։ Շիրակացին Խորենացու Պատմութիւնից օգտվել է իր ժամանակագրության մեջ։ Այս մասին մանրամասն տես Ք. Սարգիսյանի Շիրակացու ժամանակագրության առթիվ գրած ներածութիւնը (էջ Զ—ԺԴ) և մեր «Խորենացու աշխարհացոյցի հեղինակի հարցի շուրջ» աշխատութիւնը (էջ 73—84)։

32. Հովհաննես Մաղաղաս։ VII դարի հեղինակ է։ Գրած ունի ժամա-

Նակատրությունն: Ակադ. Հ. Մանանդյանը ենթադրում է, որ նա ապրելիս ծառայած լինի «Աշխարհացույց»-ին (տե՛ս «Մոբենացու առեղծ. լուծումը», էջ 25): Այդ առթիվ ակադ. Հ. Մանանդյանը մատնացույց է անում պրոֆ. Ֆ. Գաուկանյանի ուսումնասիրության առթիվ բերած 105, 113 և 124 ծանոթությունները: Բայց պրոֆ. Ֆ. Գաուկանյանի ծանոթության մեջ բերած վկայությունը այնքան ընդհանուր են, որ մեր կարծիքով, չեն կարող հիմք ծառայել Հովհաննես Մաղաղաոի աշխատությունը՝ «Աշխարհացույց»-ի աղբյուր հանդիսանալու խնդրում, բայց բանասիրության քննության համար անհրաժեշտ համարելինք հիշել այստեղ:

33. Հովհաննես Մանդակունի: Ներակացին Հովհաննես կաթողիկոս Մանդակունուց օգտվել է և հիշում է նրան իր Ցայտնության ճառում. «Քանզի ոչ ևթէ չեհաս ի նոսա, եւ վասն այնր չընկալան (Հայտնության և ծննդի տոների տարբեր ժամանակ կատարելը), այլ յառաջ քան զպաղտամ ժամանակս եւ մերս ևկն յաչխարհ, եւ ընկալեալ եղեւ որպէս յանդէս եղելոց ճշմարտութեանն եւ հաւաստաս ամս ձգեալ մինչեւ ցերանելին Յոհան կաթողիկոսն որ ապրեաւ Մանդակունի էր» Մնացորդք բանից, էջ 13):

34. Հովհան Ոսկեբերան: Քրիստոնեական եկեղեցու խոշոր դարձիչներից մեկը (345—407 թ.): Ունի բազմաթիվ մեկնողական և ինքնուրույն աշխատություններ, որոնց մեծ մասը թարգմանվել է հայերեն V դարում: Ներակացին օգտվել է Ոսկեբերանից և մեջբերում է կատարում իր «Ցաղագս զղջմն արտասուաց» ճառում:

35. Նեղոս: Մեր թվականության IV դարի հեղինակ է, ապրելով Գազատացի: Ներակացին նրանից օգտվել է իր «Ցաղագս զղջման արտասուաց» ճառում. «Եւ երանելի Նեղոս ասէ. Զկնի համարեայ պատճառն եւ պատահն՝ պարիսպ, եւ աւազանն՝ զարտասուս» (Ցաղ. զղջ. արտ., էջ 32):

36. Նոննոս: VI դարի սկզբներում ապրած հեղինակ է: Մեկնել է Գրիգոր Նազիանզացու հինգ ճառերը, որոնք հրատարակել է ակադ. Հ. Մանանդյանը Zeitschrift für armen. Philologie հանդիսանում՝ Scholien zu fünf Reden des Grigor von Nazianz վերնագրով: Ներակացին օգտվել է «Աշխարհացույց»-ում՝ Նոննոսի մկրտության ճառի ժԹ գլխից «Ցաղագս կատարելոյ ըմպելոյն և մեկնութիւն այնոցիկ որ եւ յառաջնումն արձանագրելոյն եղեն...» ճառի լԹ գլխից («Ցաղագս Աբրհատուելի եւ Եւբիսոյ»): Առաջինը վերբերում է Անտիոք քաղաքից դուրս եկած մի վտակի, որի մասին նշած առասպելը մատնացույց է արված «Աշխարհացույց»-ում (էջ 36, տ. 18): Նոր աղբյուրությամբ բերվում է Նոննոսի վերը հիշված մեկնության մեջ, (Zeitschrift-ը էջ 250—259): Իսկ երկրորդը՝ Աբրհատուելի մահվան, որի մասին փոփոխված ձևով հիշվում է գրված «Աշխարհացույց»-ում, (Եւ Աբրհատուէլ անդ եղև խորատոյդ. Եւ ասացաս է անուն նորա», էջ 17) Նոննոսի մեկնության մեջ մանրամասն բերում է Աբրհատուելի մահվան հետ կապված առասպելը: Գաուկիան է՝ թե ինչպես Աբրհատուելը չհասկանալով Եվրիպեսին, իրեն ձգում է ջուրը և խեղդվում (տե՛ս վերև հիշված Zeitschrift-ը»):

38. Պապոս Ալեքսանդրացի: Թեոդոսոս Մեծի ժամանակակից հեղինակ է (379—395 թ.): Գրել է ընդհանուր ժամանակագրություն Χωρογραφία οἰκουμενική վերնագրով: Ներակացին օգտվել և անունով հիշում է Քե

«Աշխարհացոյց»-ում: Այսպես, Եվրոպայի աշխարհագրությունն անցնելուց առաջ Շիրակացին պատմում է օգտվելու մասին հետևյալը և դրում. «Եւ զոր որովհետև բոլանդակեցաք դՀատարակախաւսութիւնս, ակամեմք պատմել զաւրանձնութիւն նոցա ըստ գրից Պապայ Ալեքսանդրացւոյ...» (Մուբր. «Աշխ.» էջ 13): Այս մասին մանրամասն տե՛ս Սեն-Մարտենի «Mémoires» II, էջ 304—305, պրոֆ. Ք. Պատկանյանի Армянская география, էջ IV—V, ակադ. Հ. Մանանդյան, «Որ. առեղծ. լուծումը», էջ 22—23 և մեր «Որ. աշխ. հեղ. հարցի. չուրջ» աշխատության աղբյուրներին վերաբերվող դլուխը, էջ 101—104):

38. Պողիկարպոս: Շիրակացին օգտվել և հիշում է նրան իր Ցայտնութեան ճառում ծննդյան տոնի միաշաբաթի լինելու կապակցությամբ: «Բայց առացին ոմանք վասն աւուր սրբոյ Ցայտնութեան եթէ յուրբաթու հանդիպեցաւ, վասն զի յուրբաթու եղեւ լինելութիւն առաջին մարդոյն. եւ ոմանք՝ ի շաբաթու: Բայց ես հաւանեալ եմ սրբոյն Պողիկարպոսի, զի նա աշակերտ էր Յովհաննու աւետարանչի, եւ ականջալուր ամենայն պատմութեանց փրկչին. եւ նա ասէ ի միաշաբաթիջ դիպեալ ծննդեանն» (Մնացորդք բանից, էջ 14):

39. Պտղոմէոս: Նշանավոր հույն աստղաբաշխ աշխարհագրագետ, որ ապրել է մեր թվականության II դարում: Նրա արժեքավոր աշխատություններից է «Աշխարհագրություն»-ը, որից մեծ չափով օգտվել է Շիրակացին իր «Աշխարհացոյց»-ի մեջ և մի քանի տեղ անունով հիշում է նրան: Այս մասին մանրամասն տե՛ս Սեն-Մարտենի „Mémoires“ II, էջ 304—305, պրոֆ. Ք. Պատկանյանի Армянская география, էջ IV—V, ակադ. Հ. Մանանդյան («Որ. առեղծ. լուծումը», 22—23 և մեր «Որ. աշխ. հեղ. հարցի. չուրջ», աշխատության աղբյուրներին վերաբերվող դլուխը, էջ 101—104):

40. Պաղոս Աղեքսանդրացի: Շիրակացին օգտվել է իր Աստղաբաշխության մեջ և մի ամբողջ գլուխ թարգմանել նրանից՝ վերնագրում հիշելով նրա անունը. «Պօղոսի Աղեքսանդրացւոյ նախերգան ի ներքնաժուժենէ յօժ»:

41. Սովփար Մենացի: Շիրակացին օգտվել է Սովխար Մենացուց և հիշում է իր «Աշխարհացոյց»-ում՝ երկրի չափի մասին խոսելիս. «Իբրեւ տարակուսեալ դնա, յաղագս հարաւոյ անբնակին եւ հիւսիսոյ լերանց ձմեռնացելոցն, ընդ որով թաղեալ կարծեմ դաբեղակին. քանզի յառաջադոյն Սովխարայ Մենեցւոյ առացեալ էր, թէ «երկայն է չափ երկրի» որպես դիտեալ բնականութեան մարդկան» (Մուբր. «Աշխարհացոյց», էջ 8):

42. Տյուբիկոս: Չնայած Շիրակացին իր աշխատություններից ոչ մեկի մեջ չի հիշում Տյուբիկոսից օգտվելու փաստը, սակայն ինքնակենսագրությունից երևում է, որ Տյուբիկոսն է հանդիսացել Շիրակացու հոգևոր հայրն ու ուսուցիչը: Տյուբիկոսի դասախոսությունները իր աշխատությունների մեջ, անկասկած, մեծ չափով օգտվել է Շիրակացին:

43. Փիլոս: Տե՛ս այս մասին Ապարանի մասին բերած տեղեկությունը:

44. Փիլոն Երրայեցի: Եկեղեցական նշանավոր տեսաբան: Շիրակացին նրանից օգտվել է իր Ջատկի ճառում (տե՛ս էջ 16), Տիեզերագիտության

մէջ (տե՛ս էջ 8, 28), «Ճաղատս չարժման երկնից... »աչխատութեան մէջ (տե՛ս էջ 34), և ժամանակագրութեան մէջ: (էջ 37):

45· Փիլոխեն: Բ. Սարգիսյանը ենթադրում է, որ Շերակացու ժամանակագրության մեջ արված այն ակնարկը, թէ «Որպէս ունի յաղագս այսորիկ (խոսքը Բրխատոսի մի բնութեան մասին եղած վեճին է վերաբերում) անսուտ վիշատակարանացն պատմութիւն» (էջ 59), Փիլոքսենի «Պատմութիւն Եվեսոսի ժողովոյն» աշխատությանն է վերաբերում:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայագիտության մեջ քաղաքացիություն առացած այն կարծիքը, որ իբր VII դարը հայոց պատմության «ավերածության» դարն է, իսկ VII դարի կուլտուրան—հայ կուլտուրայի «ցեխագարը»-ը, չի հաստատվում սկզբնաղբյուրների քննական ուսումնասիրությամբ: Ճիշտ է, VII դարում, Հայաստանի առանձին շրջաններում ավերածություններ տեղի ունեցել են, սակայն Հայաստանի տնտեսական և կուլտուրական կյանքն ամբողջությամբ առած իր զարգացման և վերելքի շրջանն է ապրել:

2. Տնտեսական և կուլտուրական կյանքի այս զարգացմամբ է պայմանավորված VII դարի մատենագրական բազմաթիվ արժեքների, հատկապես դիտական օրիգինալ գրականության ստեղծումը Հայաստանում: Հայաստանը VII դարում վայելում է նաև իր ճարտարապետական կոթողներով (Զվարթնոց, Հռիփսիմե և այլն): Նյութական կուլտուրայի և մատենագրության տվյալները վկայում են, որ VII դարը մեր կուլտուրայի զարգացման ոսկեղենիկ դարերից մեկն է հանդիսացել:

VII դարի հայ դիտական գրականության գլխավոր մասը (տոմար, աշխարհագրություն, մաթեմատիկա, տիեզերագիտություն և այլն) կապվում է Անանիա Շիրակացու հեղինակության հետ:

3. Շիրակացուց մեզ հասած աշխատությունների ուսումնասիրությունից պարզվում է, որ Շիրակացին է հանդիսացել հայ դիտական գրականության (գրական դիտությունների գծով) հիմնադիրը: Նրա աշխատությունները գիտությամբ զբաղվող հետագա հայ մատենագրերի մեծ մասի աշխատությունների հիմնաքարերն են հանդիսացել (Նարեկացի, Կոգեոն, Գրիգոր Մագիստրոս, Հովհաննես Սարկավագ, Սամուել Անեցի, Հովհաննես Երզնկացի, Գրիգոր Տաթեվացի և այլն):

4. Շիրակացու աշխատությունները աղբյուրագիտական տեսանկյունով ուսումնասիրելու և հրատարակելու գործում անգնահատելի աշխատանք են կատարել՝ բանասեր Ավգերյանը, պրոֆ. Ռ. Պատկանյանը, բանասեր Գ. Տ.-Մկրտչյանը, ակադ. Հ. Օրբելին, ակադ. Հ. Մանանդյանը և պրոֆ. Մելիքսեթ-Բեկը: Վերջերս սկսվել է Շիրակացու աշխատությունների ուսումնասիրությունը ըստ առանձին մասնագիտությունների: Այդ ուղղությամբ արժեքավոր աշխատանք են կատարել՝ դոց. Աբ. Մովսիսյանը, պրոֆ. Լ. Սեմյոնովը, դոց Գ. Պետրոսյանը, հանգուցյալ պրոֆ. Ս. Հայրապետյանը և դոց. Թ. Թումանյանը: Մատենագիտական ուսումնասիրության համար լայն հնարավորություն ստեղծելու գործում հայագիտության առաջնահերթ խնդիրներից մեկն այժմ, Շիրակացու անդամահատված աշխա-

տութիւնները դրչագիր ժողովածուներից է մի հավաքելու, աղբյուրագիտական ուսումնասիրության ենթարկելու և հրատարակելու գործն է:

5· Շիրակացու ինքնակենսագրությունը մեզ հասել է երկու խմբագրությամբ—ընդարձակ և համառոտ: Պրոֆ. Ա. Գաոնկյանի («Մնացորդք բանից» էջ 1—4), Ղ. Ալիշանի («Հայապատում»), էջ 232—233 և անդլիացի դիտնական կոնիբերի (*Ananias of Shirak*), տե՛ս «Byz. Zeitschrift» 1897, էջ 372—374) հրատարակած տեքստերը պատկանում են համառոտ խմբագրությանը, իսկ Հ. Տաշյանինը (Վիեննայի Մխ. Ազգ. ցուցակ, էջ 174—176)՝ ընդարձակ: Երկու խմբագրությունների համեմատական ուսումնասիրությունից պարզվում է, որ նախնականը՝ ընդարձակ խմբագրության տեքստն է, որի լավ ընդօրինակությունը պահվել է ՀՄՄՌ Մատենադարանի № 699 ձեռագիրը:

6· ՀՄՄՌ Մատենադարանի № 699 ձեռագրի պարունակած Շիրակացու ինքնակենսագրության ընթերց տեքստը մեզ հնարավորություն է տալիս լուծելու Շիրակացու և նրա ուսուցչի հետ կապված մի շարք մութ հարցեր—Շիրակացու ծննդավայրը, Շիրակացու դործունեության ժամանակը, Շիրակացու կոստանդնուպոլիս ուղևորվելու առիթն ու պատճառը, Տյուքիկոսի ո՛ր կայսեր ժամանակակից լինելու և ո՛ր ճակատամարտում վիրավորվելու հարցերը և այլն:

7· Շիրակացու «Հարցումներ»-ի (քվարանական խնդիրների) հրատարակության կապակցությամբ աղբյուրագետ Գ. Տ.—Մկրտչյանի («Արարատ», 1896 թ. էջ 143—56, 199—208) և ակադ. Հ. Ս. Օրբելու («Вопросы и решения», стр. 10) կռահումները՝ Շիրակացու Հարցումներին՝ նրա քվարանական չորս գործողությունների աղյուսակները և ներածականը նախորդ-ները մասին, լիովին հաստատվում են:—Մի քանի տարի առաջ մեզ հաջողվեց ՀՄՄՌ Մատենադարանի ձեռագրերում հայտնաբերել Շիրակացու Ընդունելության (դուարմման), Բացադրության (Համման) և Բազմապատկման աղյուսակները ներածականների հետ միասին: (Ներկայ հրատարակիս ենք երևանի Պետհամալսարանի «Գիտական աշխատություններ»-ի XI հատորում (էջ 245—274):

8· Շիրակացու Ընդունելության, Բացդրության և Բազմապատկման աղյուսակները՝ ամբողջական ձևով մեզ հասած հնագույն քվարանական աղյուսակներն են ո՛չ միայն հայ, այլ և ամառիկ գրականության պատմության մեջ, ուստի և նրանք դուրս են գալիս սեղակսն նշանակություններից և առանում են համաշխարհային նշանակություն:

9· «Վեցհատարեակ» կամ «Եօթնադրեանք» կոչվող տեքստի վրա հայագիտության մեջ նայվել է որպես ախթարական նշանակություն ունեցող երկրորդական մի աշխատության (պրոֆ. Ն. Ադոնց, Ղ. Ալիշան, Գ. Զարբհանելյան և ուրիշները): ՀՄՄՌ Մատենադարանի ձեռագրաց ժողովածուում մեզ հասած «Վեցհատարեակ» կամ «Եօթնադրեանք» կոչվող տեքստի ուսումնասիրությունը մեզ բերեց միանգամայն հակառակ եզրակացության: Պարզվեց հետևյալը. ա) որ «Վեցհատարեակը» տարբեր տեքստ է «Եօթնադրեանք»-ից, բ) որ «Եօթնադրեանք»-ը կազմված է XIII դարում ոմն վարդանի կողմից, գ) որ «Վեցհատարեակ»-ն ունի մի շարք խմբագրություններ և դ) որ «Վեցհատարեակ»-ի հնագույն տեքստը Շիրակացու քվարանության մի հատվածն է հանդիսանում:

10. Մեզ հաջողվել է վերծանել Շիրակացու «Վեցհատարեակ» աշխատությունը: Նա վեցհատար թվի բաժանումն է տվել, տասնամոր և հազարամոր թվերի վրա:

ՀՍՍՌ Մատեն. № 1267 (1089) ձեռագրում Շիրակացու «Աշխարհացոյց»-ից հետո ընդօրինակված է Թվաբանական մի ընդարձակ աղյուսակ, որը, մեր կարծիքով, Շիրակացունն է և չարաշրված պիտի լինի «Վեցհատարեակ»-ից հետո:

11. Շիրակացու «Հարցումներ»-ին հաջորդել է նրա «Մրախճանակներ»-ը, (ուրախական թվաբանական խնդիրները), որոնք մենք հայտնաբերել և հրատարակել ենք երբեմն. Պետհամալսարանի «Գիտ. աշխ.»-ի XI հատորում:

12. ՀՍՍՌ Մատենադարանի № 3457 ձեռագրում Շիրակացու անունով մեզ հայտնի է դարձել երեք «Մրախճանակներ», (որից մեկը թերի): Այդ «Մրախճանակներ»-ները Շիրակացու հեղինակությանը պատկանելը հարցական է:

13. ՀՍՍՌ Մատենադարանի ձեռագրաց ցուցակում, № 1999 ձեռագրի բարի վրա, Շիրակացու անունով, հարցականով դրամցված է թվաբանական երկու խնդիր: Այդ խնդիրները Շիրակացուն վերագրելը կասկածելի է: Այդ առթիվ անհրաժեշտ է ունենալ համոզեցուցիչ կռվանները:


Արդ՝ սկսեցուք ըստ Պապայ Ագեքսանդրացւոց երկրագրութեան, որ ըստ ինքնագիր բոլորակն կղզւոցն Պաղոմեայ Տիեզերագրութեանցն չափուց, սկսեալ յայրևել գաւառն կրկնակի է հիւսիսոյ և հարաւ: Բայց սկսանի այրևել գաւառին յանձանաւէթ երկրէ Սիենացւոցն, անցանելով ընդ Տապրաբանիա կղզոյ ստորոտն և ընդ Նիլղոս գետոյ վտակն, և ընդ ամենայն եթովպացւոյն, ըստ հարաւոյ կողմանէ թէոքիմաց լերինն, որ կոչի Աստուածոց աթոռ, ձկնկեր եթովպացիսն, յանձանաւէթ երկիր: Իսկ ովկիանոս է զկողմամբք զեփիւռոս հողմոյ: Սկսանի քան և մի մանէ զայնութիւնն, առ ձկնկեր եթիոպացիս, և 168b
թէոքիմաց լերամբք, և պատէ զարևմուտս մինչև // ի սպառ լայնութիւն չափոյ՝ դառնայ ընդ հիւսիսի յարևելս մինչև ի վաթառն մասն լայնութեան, որ է հանդէպ կարկինեան ծոցոյն Պոնտոսի առ Քեռսոնիս: Եւ անտի յառաջ՝ անձանաւէթ երկիր. և պատէ զմնացեալ մասունս հիւսիսոյ, և զարևելս, և զհարաւ և քան մասն յարևմտից՝ մինչև ցնոյն Ովկիանոս: Իսկ զաւելիսն քան զայս չափ, չէ ուրեք տեսեալ կամ ծանուցեալ, վասն այնորիկ անձանաւէթ կոչի երկիր և Ովկիանոս: Եւ է Ովկիանոս ծանաւթ նաւադնացութեամբ կղզիք վեց հանդէպ Ներքսագոյն Լիբիոյ, որ երանելեաց կղզիք կոչին: Եւ զոցա ըստ արևմտից՝ վեց կղզի այլ է: Եւ սոցա ի հիւսիսոյ են չորս կղզիք հանդէպ Մաւրիտանիա, և Նեղուցն, որ կոչի Սեհեաք, այսինքն

7 Ə զկասբիականաւն չիմ
7—8 Ə պահաց փոխ պատահաց
43 Ə Մորիտանիա

է ևբինևակ քան զևբին մղոն ունի յայնութիւն տեղւոյն, որ գնաստքար
Էլանէ յՈվկիանոսէ և ծնանի զՑունաց ծովն, որոյ յարևմտից կոյ
աչէ կղզի մի: Իսկ Ովկիանոս երթևալ ընդ հիւսիսոյ և դարձեալ ընդ
յարևելս առնէ երկու կղզիս, որ կոչին Բրխտանացւոց աշխարհք: Եւ
կղզի մի այլ, որ զՍկանդլէ անուանի, յորում Դուքք բնակ են: Եւ քան
169a դոյս կղզիս, այլ նաւադնացութիւն չիք և ոչ // հասեալ է մարդ անդ-
վառն այնորիկ կոչի անծանաւթ ծով: Մտանեն և գնաք քսան և մի
յարևմտեայ յՈվկիանոս:

Իսկ երեք ծովք զրով երկիր չուրջ է: Առաջին ծով Հնդկացին,
որ կոչի կարմիր ծով, յորմէ ծոցոյ Էլանեն Գաբսից և Արաբացւոց
ծովք: Իսկ յարևելից Սիւնացւոց աշխարհաւն, և ի հիւսիսոյ՝ Հընդ-
կաւք և Գաբսից և Արաբացովք. իսկ յարևմտից՝ Եղիպտացովք և
Եւոպացովք:

Երկրորդ ծով՝ Ցունաց, որ ծնանի յՈվկիանոսէ և լայնացեալ ձգի
մինչև Լևսորիս. եւ սահմանի՝ յարևելից Ասորւովք և Փիւնիկեցովք:
իսկ յարևելից հարաւոյ՝ Հրէաստանիւ մինչև ցեղխարաս. իսկ յարև-
մտից հիւսիսոյ՝ Մէջերկրեայք մինչև զՔաղկիդոնն, յորմէ ծոցոյ Էմեկ
Գնաւոսի ծովն և ձգի մինչև ցեղեր. իսկ հիւսիսոյ՝ եւոպի մինչև
զՍևեսիէ. իսկ հարաւոյ՝ Լիբիա մինչև ցնոյն Սևեսիէ:

Երրորդ ծովն՝ Վրկանի, որ կոչի կասրից ծով: Ձգի երկայնութիւն
նոցա ի բերանոյ Երասխայ և Կուր գետոյ՝ մինչև ցմուտս Պողխով-
մեանայ գետոյն: Եւ սահմանի յարևմտից Հայովք. իսկ յարևմտից
հիւսիսոյ՝ Ազուանովք: իսկ հիւսիսոյ՝ Սկիւթացովք. իսկ յարևելից՝
ապգան, որ կոչի Աբա Ամբաստակիք. իսկ յարևելից հարաւոյ՝ Վըր-
կան աշխարհաւն. իսկ հարաւոյ՝ Մարաւք, Գնդաւք և Դիզմովք և
Կասբիւք՝ մինչև // ի մուտս Երասխ գետոյ:

169b Նոյնպէս յերկիր բաժանեալ յերիս՝ յեւոպէ, ի Լիբիա, և յԱսիա:
եւ ունի զարևմտեան հիւսիսային կողմն Եւոպի մինչև Տանաիս
գետ. և զարևմտեան հարաւային կողմն Լիբիա մինչև ի Կարմիր ծով:
Իսկ յայսոցիկ սահմանաց յարևելակոյս հիւսիսոյ և գհարաւ՝ գԱՀկն
Ասիա ունի մինչև ցանծանաւթ երկիր, զորս որոյ մնծադոյն է քան զայլ
հաւտածս: Իսկ մէջոց աշխարհի բնակութիւն մարդկան Գողովճոս
ցերջանիկն Արաբիա ասէ, բայց ես ոչ հաւատամ, քանզի ցերջանիկն
Արաբիա ասեաւրանն ծագս երկրի կոչէ, ուստի եկն ցԱսիա
հարաւոյ: Բայց մէջ լսի, որ մի չափ հնոտիացութիւն ունի ի
ծայրեցն և ցեղերացն, և այն է երուսադէմ, որում սատուածային
դիրք վիպէն, քնակեա և բան չափուցն Գողովճայ երկայնաւտա-
պատ է յարևելս կոյս: Այլ դերիս չափս ի մի դնելով նկարագրեցուք:
Սապէս և հարաւային ուղ ունի դայ քան զհնդիսային քան

---

7 Ə չկայ փոխ չիք
10 Ə երկրորդ փոխ երեք
19 Ə ցեղր
20 Ə Լիբրի
26 Ə Մօրօք
28 Ə նուագր
34 Ə ասէ... ասեաւրանն չիմ

Պատմչական չափուն, զոր երկու ի մի եղեալ կերպագրեցուք զերկայնութիւն չափոյն. ուժմանն ամբողջ պահեցուք, վասն զի նեղ է, և զհարիւր կրկնեցուք. և լինի չիսուն, այնպէս նման գրեցուք: Նոյն գունակ և բուռ հարաւոյ այրեցական դաւառին կրկնեցուք զուժ-
170a քին՝ չորս, և բերէ սուտրատպէս բուռ նմանու // Քեան Պատմչական երկրագրութեանց:

Եւ արդ՝ սրովհետև բովանդակեցաք զհասարակութիւնն, այսուհետև սկսեցուք պատմել աշխարհ աշխարհ առանձինն ըստ զրոյց զեպագրից Տեղագրութեանց Պատրիարքութեան, սկիզբն արարիալ յԱրեմանայ Ոսկեհանոսէ, ի Սպանիա աշխարհէ:

ԱՍՏԱՆԱՒՈՐ ԱՇԽԱՐՀ ԵՒՐՈՊԻԱՑ ԵՐԿՈՏԱՍԱՆ

Առաջին՝ Սպանիա երեքանկիւնի ինն ձեռ կալով ի մէջ ծովուց արևմտից կղզի, սահմանի յարեւմտից և ի հիւսիսոյ Ոսկեհանոսէ, իսկ յարևելից՝ Պիւռենէ լերամբ. իսկ ի հարաւոյ՝ Ծունաց ծովու: Բաժանի նա փոքր աշխարհս երիս, որք ունին զաւառս բազումս և զքաղաքս, որս անուամբ յիշատակել աշխատութիւն անշահ համարեցաք: Եւ ո՛չ միայն զդաւառս և զքաղաքս՝ այլ խորհեցաք միայն զերկ զերկինն անուանիս և զգետս հզաւրս և զքաղաքս հոյակապս: Եւ թէ այլ ինչ նշանաւոր՝ ինդրով ի բաց զթիւս և զչափս և զանձրամանարար պատմութիւնս:

Երկրորդ՝ Բրետանացւոցն է, որ ևն երկու կղզիք ի հիւսիսային Ոսկեհանոսէ, ի վերոյ կոչմանէ Սպանիոյ: Եւ անուն արևմտեան կղզոյն Իւտրատնիա. և է զարեհատաձև հզիդիէն, յորում դնեաք հզաւրք վիշտասան և ապրք բազումք: Իսկ անուն արևելեան // կղզոյն Ա-
170b ղաւիոն, որ է մեծ քան զնա: Եւ է ապրեալճև բազմաճիւղք, յորում դնեաք հզաւրք քսան և հինգ և յոյժ մեծատաւ անուամբ: Եւ չուրջ կղզեաւն մանունք կղզիք քառասուն և մի. և Թուղիս մեծ կղզի:

Երրորդ՝ Գաղիոս է, յարևելից կալով Սպանիոյ: Եւ սահմանի ի հիւսիսոյ և յարեւմտից Ոսկեհանոսէ. իսկ ի հարաւոյ և յարևելից՝ Ծունաց ծովուն: Եւ բաժանի Գաղիոս յաշխարհս չորս, յորում են լերունք մեծամեծք երկուս, զնոք հզաւրք քսան և իննն, և կղզիք չուրջ չորեքտասան: Ունի և քաղաքս և ապրս բազումս: Ապրն վիրանդ լինի և ի նմա. և հզաւրս գոմէշ սպիտակ և սպանող մարդոյ:

Զորրորդ՝ Գերմանացւոցն է, յելից կալով Գաղիոյ, առ հիւսիսային Ոսկեհանոսէ մինչև զՄարմատացւոց լերունս և ցԴանուբ գետն: Ունի Գերմանիա ապրս հինգ, յորոց մի՝ Գուէք: Ունի և լերունս անուանիս

---

2 Ə զի չիՀ
7 Ə արով փոխ որովհետև
7 Ə բովանդակեցաք գհասաքակաթաւոյթ-քիւնն չիՀ
8 Ə զաքաղարս փոխ աշխարհս
12 Ə Առաջին չիՀ
13 Ə մի փոխ իմն
14 Ə Գաբիենա
17 Ə միայն չիՀ
19 Ə բազմապաւ փոխ զմանրամասնաբար
23 Ə Նեղրաճնիա
27 Ə կղզիս
33 Ə մարդոյ չիՀ
38 Ə գուեգք

երթս: Ունի զեռս հզաւրս մեսասան և կղզիս լինն: Ունի անառատ
չորս՝ յոյժ մեծածառս: Ունի և երկաթկարասիթիւնս:

Հինգերորդ՝ Դաղմատիա է, յարևելից Գաղիոսի և առ երբ Գերմանիոյ: Եւ սահմանի· յարևելից Դանուբ գետոյ ակամբքն, իսկ ի հիւսիսոյ յարևելից նոյն Դանդոյ գաբձոլքն· իսկ ի հարաւոյ Ցունիոն ծոցաւն: Եւ ունի Դաղմատիա աշխարհս վեց, և քաղաքս և գաւառս բազումս: Ունի և լերունս վեց, և զեռս քան և կղզիս հինգ: Եւ լինի ի Դաղմատիոյ զազան մի որպէս եղն մեծ, բռնոս անուն, որ զիրն ձգէ որսորդացն և սպրէ:

171a // Վեցերորդ՝ Իտալիա է, յարևելից Գաղիոյ և առ երբ Դաղմատիոյ՝ ի հարաւոյ կուսէ: Եւ սահմանի· ըստ արևմտից և հիւսիսոյ Ապենիացովքն և Ոիւէ լերամբքն· իսկ ի հիւսիսոյ և յարևելից Ցունականն և Ադրիական խորշիւն· իսկ ի հարաւոյ Տիւռենական պիղադոսիւն: Եւ ունի Իտալիա աշխարհս վեց, և քաղաքս, և գաւառս բազումս: Ունի լերունս և զեռս վիշտասան, և կղզիս եւթնևտասն, յորոց մինն՝ Գոնդիա է, ուսուի՝ Պիղատոն: Ունի և մայրաքաղաքս՝ զհռոյակատն Ռաւենն և պմեծն Հռոմ: Բայց ի Իտալիա համարք և այլ աշխարհ մի կաւբսիկ անուն՝ ի Սկիւռնիայ կղզոյն՝ չորս հարիւր մղոնաւս չրջապատեալ, յորում գաւառք երեքտասան, և զեռք վեց, և մի ոսկի անուն լեառն, ուր ոսկի և արծաթին հատանի, երկրաւսակ ծներկ:

Եւթներորդ՝ Սատդոնիա է, մեծ կղզի հուսք կալով ընդ Ծովիսս կղզին քան հարաւ կոյս երկայն ձևով՝ ի հիւսիսոյ ի հարաւ կոյս: Եւ ունի զեռս հինգ, և լերունս չժաքս, և ամուր տեղիս, յորում քաղաքս լինն, և գաւառս քան· մանր կղզիք՝ լինն: Եւ չրջապատութիւն Սարդոնիայի՝ լինն հարիւր ութսուն:

Ութերորդ՝ Սիկիլիա է, մեծ կղզի, յարևելից կալով Սարդոնիոյ կղզոյն: Եւ է Սարդոնիա երկքանկիւնի ձևով ծայրէ ի ծայր հարիւր մղոն, յորում գաւառք հինգ, քաղաքք լինն, զեռք լիններսասան, կղզիք վիշտասան, լիրու·//նս երկուս՝ Պաւթինոս, յորմէ զեռք բղխեն և
171b բաւականս, որ կատարն հանապազ հրով առչորի: Եւ է Սիկիլիա յոյժ արդաւանդ:

Իններորդ՝ Սարմատացւոց հասարակն է, յարևելից կալով Գերմանացւոց՝ առ հիւսիսային Ովկիանոսիս մինչև յանծանաւթ երկիր և ցմոպալա լեառն, յորմէ Եւրոպ Տանայիս զետն: Եւ ունի Սարմատիա աշխարհս վեցքունս՝ ի քրիստոնէից գիտաւն ցամաք կղզի և ի հեթանոսաց բազումս: Ունի և զլերունս եւթն, և զետս երեքտասան, և մօքր լիճ մի, և կղզիս երկուս: Ունի և բազինս երկուս, մին կոչի Ասկանդրուս և միւսն՝ Կեղարուս:

Տասներորդ՝ Թրակացւոց աշխարհն յարևելից կալով Դաղմատիոյ: Եւ ունի Թրակիայ մօքր աշխարհս եւթն, մի մեծ, յորում են Սկղտունեիացւոց ազգն քան և հինգ, որոց մօխանակ մտին գումքն: Ունի և

---

1 Ե Ունի զետս... կղզիս լինն չիմ
6 Ե քաղաքս... լերունս վեց չիմ
8 Ե և փոխ որ
11—12 Ե Ապիտցովքն
18 Ե Կաւսիկ
34 Ե Դանդոյ փոխ Տանայիս
35 Ե Իրմնէից փոխ ի քրիստոնէից
41 Ե գումքն

լերինս և կղզիս և լիճս, և քաղաքամայր վերջանիկն Կոստանդինուպաւլիս:

Մեւտոսանեւրորդ՝ Մակեդոնիա<է>, յելից կալով Յունական պետդոսին, առ երի Դազմատիոյ և Թրակիոյ՝ ի հարաւ Թոզլով զեղջաց:
372a Եւ ունի Մակեդոնիա լերինս վեց, և դետս տասն, և դաւառս երեսքսան, քաղաքս վեչտասան, ծովս վեց, և կղզիս // չորս: Եւ լինի ի Մակեդոնիա մարմարիոն կանաչ սպիտակախայտ:

Երկոտասաներորդ՝ Եղլադա է, առ երի կալով Մակեդոնիոյ ի մէջ պետդոսից: Եւ ունի եղլադա փոքր աշխարհս վեց՝ զԵպիրոս, զՔեա, զԱատիկէ, զերկու տպատաժ և զկրետ մեծ կղզի և զՊեղոպոնեոս ցամաք կղզիս: Ունի և լերունս, և դետս, և դաւառս, և քաղաքս և կղզիս բազումս յոյժ: Ունի և մեհեանս երիս՝ զԻւռիա, և զԱրտեմիա և զՊոսիդինոս: Եւ ունի մայրաքաղաք հոյակապն զԱքէոն: Ունի ջուր ի կղզոյն զՄիւռտոյոյ, որ անպատճառ այր և անդր հոսի, ուր խոթասոյդ եդև Աբիսոտոէլ:

ԱՇԽԱՐՀ ԼԻԲԻԱ ՈՒԹ

Առաջին՝ Մաւրետանիա Տինգիտանիա է, որ տարածի ի Սեմտոյ, առ հարաւ կոյս, առ Արևմտեայ ովկիանոսիս: Եւ ունի Մաւրետանիայս լերունս վեց և դետս վեչտասան, աղս վեչտասան և Պիւռն Պոնդիոն, որ է հրաբոյն դաշտ:

Երկրորդ՝ Մաւրետանիա է Կեստոնիսեան, յելից կալով Տինգետանեոյ, տարածի ի հարաւոյ կոյս, առ ի չեզ զելիւք: Եւ դետս ունի Եւթենեւտան և փոքրալիճս երիս, և լերինս հինգ, քաղաքս բազումս, և դաւառս քան և հինգ և պղնձիղողանոցս երկրին: Լինին այսոքս և ընտիր կինաբառիս, այսինքն // զեղ կարմիր:
373b

Երրորդ՝ Ափրիկէ է, յելից կալով Մաւրետանիոյ, առ ծովիզերբն: Եւ բաժանի Ափրիկէ յերկուս աշխարհս և մի այլ առանձնական, որ Տափարաւիան անուանի: Եւ ունի Ափրիկէ լերունս ութ, դետս ութեւտասան, դաւառս քառասուն և մի, լիճս ութ, ծովս հինգ, կղզիս վեչտասան, և քաղաքս բազումս. և կարկիդոնիա մայր քաղաքաց: Լինի և յԱփրիկէ բանճար ինչ գետաստս անուն, զոր երեք ուտէ ոչ՝ զհայրենեսն մոռանայ: Լինի անդ և կարմիր յակուռդ: Լինի անդ և սոխ, բայս վախուկ ի ծովս, որ երեսք յարև և յստղ՝ կարծրացեալ քարանայ:

Զորրորդ՝ Կիւռենական, որ է Պաւնդապաւլիս, յելից կալով Ափրիկոյ, յերի ծովիզերբ: Ունի դաւառս մետասան և դետս երիս, և լիճ մի, և կղզիս երկուս, քաղաքս բազումս, և Հերակլեան լերունս, և զանազանաբեր երկիրն, և տեղիս ինչ նորաբերդ զաքանուտս, և զերկ կրնական, պարտէզան և քարայրս Դակենիկացոցն:

---

8 Ə Մակեդոնիա
10 Ə զՊեղոպոնէս
30 զԻռիա
10 զկրետ չիմ
14 Ə այրս փոխ այր
17 Ə Տինգանիա (ամենուրեմ այսպես)
21 Ə Կեստոնիսեան

Հինգերորդ՝ Մարմաւական է Լիբի և ամենայն եղիպտոս, յելից կալով հիւսիսական աշխարհին, առ Լիբ Ծովեզերն արեմտեայ ընդ երկճղին Կաբմիր ծովուն: Եւ ունի եգիպտոս լերինս երկոտասան և գուբս երկուս չինաւածոյս և լիճս երիս ինքնեզս, և երիս լիճս այլ
5 զոր Նեղոսի վտակքն առնեն: Եւ գետս ունի դնեզոս, որ է Գհհան
173a Ունի և գետս քառասուն և մի, // և քաղաքս բազումս և մայրաքաղաք զմեծն Ադեքսանդրիա: Ունի և կղզիս Յունաց ծովուն մեառասան, և է Կաբմիր ծովուն երիս: Ունի և կղզիս գետակուս և պանտձրև. երկիր:

10 Վեցերորդ՝ ենտոս Լիբի, որ քարտմանի Ներ(ք)ապոյն եմիսպիա, յելից կալով Յարեմտեայ ծովուն Ովկիանոսի, առ այլեալ գառեան: Եւ ունի ենտոս Լիբի լերունս ութ, եւ գետս քան եւ մի, լիճս վեց, եւ կղզիս երեքտասան: Եւ ճարակին դենտոս Լիբիա ոզոս վիշտասան, ածեալ եւ բաժանեալ յետ աշտարակին: Եւ են բնակիչք աչխարհն աստեղիկ սեաւք, եւ ձկնակերք, եւ մարախակերք· որ են գլխաւոր ազգք՝ Նատապին, վուն, քաւիմաքան, կըրնատապին եւ այլ բազումք: Լինին եւ թղուկ(ք) մատ է Յովկիանոս Սալատակ լերինն: Անցանեն ընդ Լիբի եւ ընդեղջիւք գազանք Յովկիանոսէ է Նիլոս, ուր կոկոդրիլոս գազանն անցանեն ընդ Լիբի եւ այլ գազանք, որ կոչին ափինդր, մարդակերք են եւ գինեսէրք:

20 Եւթներորդ՝ Վերին եմիսպիա է, յելից կալով ենտոս Լիբիոյ եւ յերի եգիպտոսէ առ կարմիր ծովուն, Արաբացւոց ծովուն, անցանելով գայրեալ գառեան հարաւակոյս առ Նեղբսապոն եմիսպացիովք ցնոյն սահմանէ ենտոս Լիբի: Եւ ունի եմիսպիաս այս փոքր աչխարհս երիս՝ դիարբառնա, եւ գնգանիա եւ գՏրոգլոդիտիկին եւ գառեան ոզոյզ երեսուն եւ վեց: Ունի գետս երիս, եւ լերունս տասն: Ունի եւ կղզիս յԱրաբացւոց ծովին քան եւ եւթն: Ունի եւ գմարերս երկիր եւ խնկաբերս եւ գկինամոնաբեր գառեան:

173b //Ութերորդ՝ Ներքին եմիսպիա է, որ սկսանի յԱրեմտեական անծանաւթ երկրէ՝ յերի կալով Ովկիանոս եւ ենտոս Լիբիոյ: Ի հարաւոյ
30 սահմանի անծանաւթ երկրաւն, առ որով բնակեալ են երկրագործքն եմիսպացիք· ի հարաւոյն կողմանէ յայրեալ գառեան մերկ վիշտասմարդք: Եւ յերի նոցա ըստ հիւսիսոյ, առ Ովկիանոսիս, Զինակիս եմիսպացիք, յորում կենդանի ինչ առյոս անուն՝ աչխարանման երկակենցաղ եւ ձկնակեր: Առ որով Սմակեանք եմիսպացիք, յորում
35 առեւծաչուն գազանն: Որոյ ըստ հիւսիսոյ փոքրեղջերք եմիսպացիք, յորում կենդանի ինչ նման գանուզոտ մարդամարդս եւ անուշահոտ: Առ որով զեռնկէ եւ գեռմոնայք, յորում քաղծասկր եւ մարդամարդք եւ ընծուղաք: Որոց ի հարաւոյ մինչեւ ցնիլոս աչխարհն մի եմիսպացոց, յորում փիղք սպիտակք, եւ կղջիւրակնջիւք եւ վագերք: Որոց
40 արեւելից կողմունք՝ յորում վագրածիք, եւ այծամարդք եւ ինձք գիշեզկահասյուզք: Եւ սոցա ի հարաւոյ աչխարհ մի առ անծանաւթ

---

8 Յ գանանձն
9 Յ ենտոս
10 Յ քաբքմանէ
24 Յ Տոլոդիտիկն

երկրաւ, յորում պատան ինչ կանացն ունելով պլուխ եւ ձեռս, ապա
174a անձն // չորքոտանի պատանի: Այլ մարդակերպ պատան ինչ՝ մերկ, չանգինճիթք, եւ մեծամանդք, ոտիւրք որպէս առիւծակապիկք: Որոց
ելից բարձրապատառճուանք եմոպացիք, եւ այլք մինչեւ ցկուանի լեառն,
5 յորում լինի քաւչք սպիտակք, դաւարաւորք եւ բեռնաւորք: Որոց յելից կուսք են պարասացիք: Եւ ի ներքոյ սոցա՝ մարդակեր եմոպացիք,
յորում պատան ինչ հրաշանչ վարպանման: Եւ ապամնդաւ պատան,
որ նման կոմղից է, անցանէ ընդ հուր եւ չիջուցանէ:

ԱՇԽԱՐՀԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՍԻԱՑՒՈՑ ՔԱՌԱՍՈՒՆ ԵՒ ՉՈՐՍ

10 Առաջին բաժին Ասիա է: Եւ ունի Ասիա կողմունս կողմունս: Եւ
նաեւ կոչումն Մէջերկրեայս, որք մտանեն ի մէջ Ցունաց ծովուն եւ
Պանտոսի:

Առաջին՝ Բիւթանիա է, յելից կալով Քաղկեդոնի ջաղաքին կոստանդնուպոլսի: Եւ ունի Բիւթանիա լերինս, եւ դետս վեց, եւ
լիճս մի, եւ կղզիս: Ունի եւ մայրաքաղաքս երիս՝ զնիկիա, զՔաղկեդոն, զնիկոմիդիա, որք ունին ընդ ինքեանս քաղաքս երիսբառասուն եւ
15 վեղաքաղաքս ծովեզերեայնս եւ վաճառատեղիս: Լինի ի Բիւթանիա
հոդ սպիտակ, որ մանր ապակեայ եւ ցանելով ի վերայ ցորենոյ ի
քանդուկս ճիճի չուտէ:

174b Երկրորդ՝ Միւսիա է, որ կոչի եղեարնատուս, առ երի կալով Բիւ-
20 թանիոյ: Եւ ունի Միւսիա լերինս երիս, դետս երկուս, կղզիս երկուս,
քաղաքս քառասուն եւ մի, եւ մայրաքաղաքս Ծովեզերեայ դիւրդիկոն,
յորում տաճարն է Աստուծոյ անուանեալ Հրաշից:

Երրորդն՝ Ասիա առանձնակ է, յերկի կալով Միւսիոյ, առ ծովուն: Եւ ունի Ասիա փոքր աչխարհս չորս՝ զԻւղիա, զԵւոդիա,
25 զՊեռնա, զԿաւիա: Ունի Ասիա լերինս հինգ, եղիս ոստս, դետս հինգ,
քաղաքս հնգետասան, մայրաքաղաքն զԵփեսոս, եւ այլ եւս՝ վեց: Լինի
Ասիա մազդրի խիժ ի ծառոց:

Չորրորդ՝ Լուսիա է, յելից կալով Ասիոյ: Ունի Լուսիա լերունս
եղիսս, դետս երիս, կղզիս հինգ, քաղաքս երիս եւ մայրաքաղաքն
30 Զմիւռնիա: Եւ լինի ի Լուսիա խունկ, զիւրին, եւ արաւէ՝ ի ծառոյ
ծորելոյ որպէս զխիժ լոյծ, որպէս մեղր կամ որպէս մրուր:

Հինգերորդ՝ Փռիւգիա է, յելից կալով Աւանձնակ Ասիոյ, յերի
Լուսիոյ: Եւ ունի յինգեան Փռիւգիա աչխարհս Պիսիդիա, որոյ
մայրաքաղաքն՝ Անտիոք եւ այլ քաղաքք քան եւ վեց, ուր ասեն
35 զինեալ տապանն Նոյի, մայրաքաղաք Լաւոդիկիա, եւ այլ քաղաքս
քառասուն: Եւ աչխարհս Մաղասատիա, որոյ մայրաքաղաք Իգիկիա
եւ այլ քաղաքք երեսուն: Եւ ունի Փռիւգիա լեառն Դիդոն, // եւ զեւս-
175a հինգ, եւ լիճս չորեքտասան եւ գաչտս մեծամեծս:

---

7 Ց աչբաչունչ
8 Ց կոպից է փոխ կոմղից է
12 Ց Բիւրգինիա փոխ Բիւթանիա
13 Ց վեց չիմ
14 Ց մի չիմ
15 Ց ոսկին չիմ
25 Ց եպեր փոխ երեքտասան
16 Ց ի չիմ
21 Ց ծովեզերեայս
21 Ց դիդոդիկոն
26 Ց մեծ փոխ հնգետասան
27 Ց խիժ փոխ խիժ
30 Ց միմուռիա

Վեցերորդ՝ Ոռոխա է, յելից կալով Բիւթանիոյ եւ առ երի փոխադիոյ մինչեւ ցՈռնդոսի ծով: Եւ ունի Ոռոխա մայրաքաղաք կդաւիդիպալիս, ընդ որս այլ քաղաքս հինգ: Եւ դնա ունի զՈռոխենոս զերկքարմատեան:

Եւթներորդ՝ Պափղագոնիա է, յելից կալով Ոռոխա աշխարհին եւ առ երի ծովուն Պոնտոսի: Ունի զնոս երկուս, մայրաքաղաք զԴերմանիապալիս, որ բերդն Գանդրեայ: Ունի եւ այլ քաղաքս հինգ, եւ բերդս մեռասան եւ գաւառս վաթսուն եւ մի:

Ութերորդ՝ Գաղատիա Առաջին է, յելից կալով Փռիւգիոյ եւ առ երի Պափղագոնիոյ: Եւ լեառն ունի զերկրորդն Դիդիմոս: Եւ գնոս զնոյն, որք յառաջասացեալ աշխարհս Թաւիին:

Իններորդ՝ Գաղատիա Երկրորդ է, յելից կալով Փռիւգիոյ եւ առ երի առաջին Գաղատիոյ մինչեւ ցՊանդիւլիա: Ունի լերինս եւ գնոս անուանս, որ յառաջասացեալ գնոքն անկանէին եւ որք զլճա առնեն:

Տասներորդ՝ Պանդիւլիա է, յելից կալով Լիւկիոյ եւ առ երի Գաղատիոյ: Ունի յինքեան փոքունս աշխարհս հինգ, եւ լեառն մի, գնոս 175b չորս, կղզիս երկուս, եւ քաղաքս քառասի: // Լինի ի նմա խունկ ատիեբակի Թիոյ միոյ ի կերուածէ ճճոյ:

Մեռասաներորդ՝ Իսաւրիա է, յելից կալով Պանդիւլիոյ, առ երի ծովուն հանդէպ կիպրոս կղզոյ: Եւ ունի լեառն զՏաւրոս, եւ գնոս Ոռիմակոդոս. ի նմա մայրաքաղաք Սելեւկիա, եւ այլ քաղաքս քառն եւ հինգ: Եւ լինի յաշխարհս այս խունկ ատիեբակ, կուճաբա, զոմփեա, կալամոս, ամիներքեան ի ծառոյ ծորելոյ՝ ի ճճոյ միոյ կերուածոյ:

Երկոտասաներորդ՝ Լիկայոնիա է, յելից կալով Գաղատիոյ եւ առ երի Իսաւրիոյ, ունելով զտարածումն իւր ի դաշտս ընդարձակս, եւ լերինս, եւ գնոյն գնոս եւ լիճս:

Երեքտասաներորդ՝ Կապադովկիա Երկրորդ է, յելից կալով զգաղատիոյ և առ երի Լիկայոնիոյ, ունելով մանուսս լերինս եւ գնոս. եւ յաշխարհին տարածեալ ի դաշտս ընդարձակս:

Զորեքտասաներորդ՝ Լիւտոդոռոս է, յելից կալով Պափղագոնիոյ եւ առ երի Կապադովկիոյ ծովու: Ունի եւ լերինս փոքունս եւ բազումս, եւ գնոս հզաւրս զիւռինս, եւ այլ մանուսս:

Հինգտասաներորդ՝ Պոնտոս Պոլեմոնական է, յելից Պոնտոսի եւ առ երի Պոնտոսի ծովու: Ունի լերինս փոքունս եւ դժուարաւայրս, եւ 6 35 գնոս զԹոմոդոռոսն, եւ մանուսս:

Վեցտասաներորդ՝ Կապադովկիա Առաջին է, յելից կալով Երկրորդ 176a Կապադովկիոյ, առ երի Պեղոմենական Պոնտոսին, որ ունի լեա// ռն զԱնտիտաւրոս, եւ այլ փոքունս, եւ գնոս զմելաս եւ այլ զաղիս է:

Եւթեւտասաներորդ՝ Կիլիկիա, յերի Առաջին եւ Երկրորդ Կապադոկիոյ, յելից կալով Դիկոնիոյ եւ Իսաւրիոյ: Լերինս ունի զՏաւրոս, եւ

---

1 Ə Մռոխա
3 Ə ընդ որով փոխ ընդ որս
10 Ə գերորդ Իսիմոս փոխ Դիդիմոս
12 Ə Դամմասիա փոխ Գազատիա
19 Ə Իսաւրիա
20 Ə Կիւռոս փոխ Կիպրոս
21 Ə ի նմա... և այլ չիմ
25 Ə Կապակ (?) Սաւռիոյ փոխ Սաւռիոյ
26 Ə և լերինս... լիճս չիմ
27 Ə Տասներեքերորդ ամբողջ հատվածը բացակայում էր ձեռագրում, լրացրել ենք W-ից:
33 Ə զնիւռնիս փոխ զիւռնիս
35 Ə մասուիս փոխ մանուիս

դեաս վեց, եւ մայրաքաղաքս երկուս՝ դՏարսոն եւ զԱնաբզաբա. եւ այլ քաղաքս բազումս, եւ բերդս, եւ գրունս երկուս՝ ելանելոյ Առաքեաց: Եւ Կիլիկիա է ամենաբեր հանդոյն երկրին Ցորդանանոյ:

Ոլթեւտանեւորդ՝ Կիպրոս կղզի է, յելից կալով Պանֆիւլական պաղեդոսին, առ երկ Խաւռոյ եւ Կիւլիկիոյ: Եւ ունի Կիպրոս լեառն սՕրմիմպոս, եւ դեաս երիս: Լինի ի նմա լառատ՝ ի ցողոյ անկեալ դեառոյ կռոսի ի Թաւիւրն զվարդս, եւ մաւրուա քաւչից: Եւ ունի Կիպրոս զաահմանս իւր ի յերկարն մասունս երիս եւ մասն մի, իսկ լայնն՝ մասն մի:

Ինննեւտանեւորդ՝ Հայք են, յելից կալով Լիկիոյ, առ Տաւրոս լերինն: Եւ ունի լերինս երիս, եւ դեաս երիս, եւ գրունս երկուս՝ ելանելով յԱառուց:

Քսաներորդ՝ Առաջին Հայք են, յելից կալով Կապադովկիոյ, առ
1766 երկրորդ Հայոց: Եւ սահմանի յելից Եփրատու. եւ լեառն// ունի
Ամպկնոս, եւ դեաս զԱլիւս եւ այլ մանունս:

Քսան եւ մեներորդ՝ Երկրորդ Հայք են, որ կայ յելից Կապադովկիոյ. եւ երկայն տաբածի մինչեւ յԵփրատ: Եւ ունի այլ դեաս երկուս, եւ լերինս բազումս եւ մեծամեծս:

Քսան եւ երկուերորդ՝ Պոնտոս Կապադովկիա է, յելից կալով Պոնտոսի Պոնդոսի, առ ի ծովուն ցՄոսքական լերունս, որ բաժանեն զնա եւ զնդ Մեծ Հայս: Ունի լերինս երեք, եւ դեաս չորս:

Ահա կատարեցաւ ի Միջերկրայէս կոչկցեալ:

Քսան եւ երեքերորդ՝ Սարմատացւոց աշխարհն հասարակն է, որ բաժանեալ է արեւելեան ծայրիւն Ռիպիոս լերամբ եւ Տանայիս գետով եւ Միւռիս ծովակաւս. եւ անտի զնդ Կովկասացին լերինն՝ առ Վրաց եւ Աղուանից՝ մինչեւ ցկասբից ծովն: Եւ ունի Սարմատիա լերունս զՇանթայիսն եւ զՔիսկանն, եւ այլ լերինս եւ դեաս բազումս, եւ զեւթանասնեւոտակիսանն Աթել, յորում ամբանայ ազգն Բասլաց: Եւ քնակին ի Սարմատիա ազգք բազումք, որք են այսոքիկ. Ծազիրք, Բուխք, Բարսիլք, Աղչեղք, Ասիսաղք, Թաղաւորական Սարմատք. Զխակերք, Նախճամատակիանք, ՈրՉյակերք, Սիսիկացիք, Միթռիկացիք, Սմաղոնք, Ալանք, Խերուրք, Քուգիւրք, Սիյիմք, Արդաւատք, //Մարդոյք, Թակոյիք, Արզողք, Գամանք, Փինճք, Դուտղք, Ծոնք, Ասիւրք Ծանաւրք՝ յորում Ալանաց դուռն, եւ Մինճին դուռն, Թուիք, Ծուիք, Քիսք, Մարդակերք, Ցիսաւտք, Գուդամակարք, Դուխցուկք, Դիզոյք, Ղևկք, Տալպասուանք, Ադուտականք, Խենուկք, Շիպղք, Ճիղաք, Ձեղոյք, Կասբք, Փուխք, Շրուանք, Ծարանք, Թաւտապարտաք, Հնճմատակք, Իժմախք, Փասխ, Քոսխ, Փոքրոնակ, Բաքանք, Մագուլիք, մինչեւ ցկասբից ծովն՝ յորս բազումն կովկասու հալի, ուր ածեալ է պսպրխան Դարբանդայ՝ աշտարակ յհնոյն՝ ի ծովուն կացուցեալ:

3 Ə ի կիլիկա փոխ և կիլիկիա է
6 Ə Ղանգանան փոխ լաղան
9 Ə մանն մի փոխ մասն մի
11 Ə եւ ունի չիմ
18 W մեծամեծս քսան և երկու
24 Ə Ուպիա փոխ Թիպիա
29 Ə որք են այսոքիկ չիմ
31 Ə Միթռիկացիք չիմ
36 Ə Դիզոյք չիմ
38 Ə Ղեղայք, Կասբք չիմ
40 Ə Կոկոսա փոխ Կովկասայ

Խակ ի հիւսիսոյ նորա՝ Հանձ. եւ քաղաք նոցա Վաստաչան, եւ այլք
ընդ նմա. եւ թագաւորն հիւսիսոյ է հակառակ՝ որ է աջր կապարաց, և
դշխոյն քաղուհի է, Աթոռնն, որ է կին հակառակ ի բարեյաց ար-
քին:

Բաան եւ չորեքտրոյ՝ կողքիս է, այսինքն եգեր, յերից կալով
Պոնտոս ծովու, առ երի Սարմատաց, առ Վրաց եւ մեծ Հայովք. եւ
ունի եգեր փոքր աշխարհս չորս՝ զՄասնեացիսն, զԵպռեւիկիս, զՄոզիս,
զՃանիս, որք են Ցապտիք: Ունի յերկիս բազում, եւ գետս, եւ գաւա-
ռս, եւ քաղաքս, եւ բերդս, եւ զեղաքաղաքս եւ վաճառատեղիս:

Բաան եւ հինգերտրոյ՝ Վեհիս է, այսինքն Վիրք, յերից կալով
177b եգեր, առ երի Սարմա//տաց, առ կուկասու մինչեւ ցԱզգաստանից սահ-
մանն, եւ Հայոյ սահմանն, առ կուր գետով: Եւ գաւառք են ի Վիրս
այսոքիկ. Կաղաղէք, Աբռատհանք, Շաւշեթ, Զաւախք, Սամցխէ, Աճա-
րա, Թորգով, Աքիսխ, Տաոնեցիս, Մանգլեայ փոր, Բուհէ փոր, Բաղ-
նա փոր, Թռևղք, Կանգարք, Տաշիր, եւ Աչառ, եւ Գուան, Երզնկս,
Բուղդիճ, Կաուխիս, Սոսխուժէթ, Խանձիս, Ճիբաս, Զամ, Բազգա-
լեթ, Կխուռեթ, Երցոյ, Նեկի, Թիանեթ, Ծուխս, Քեթ, Զեղէթ, Վեղեա-
ցիխուռեղդա, Շուշք, Պարսատր, Ծորախոր, Զորսիխոր եւ քաղաք
Վրաց Տփղիսք, Սամշուղէ, Մծխեթի, ուր սուրբ խաչն է: Ունի եւ
բերդս եւ գետս յի ձկամբք:

Բաան եւ վիցերտրոյ՝ Աղուանիս է, այսինքն Ադուանք, յերից կալով
Վրաց առ երի Սարմատաց առ կուկասու մինչեւ ի Կասբից ծովն եւ
ցՀայոյ սահմանն առ կուր գետով: Եւ ունի Ադուանք գաշտս արգա-
ւանդս, եւ գետս բազումս, եւ եղեգունս հաւասր, եւ քաղաքս, եւ բեր-
դս, եւ զեղաքաղաքս: Եւ գաւառք են այսոքիկ. Եվանի, Բեխ, Քամբե-
ճան, Հաղմազ, Շաբէ, Գեղաւու, Ոստան, Հարանդ, Իմաթ, Պանան,
Բազաց գաշտ, Իրազկան. եւ այլ գաւառք, զոր ի Հայոց հանեալ է. Շա-
178a կաշէն, Գարգմար, //Քուռատխուռնես, Կողբ, Ազուէ, Թուչքաստակ, Թա-
ռոտաստակ, Ռոտապատակ, Մեծ Կուանք, Մեծ Իրանք, Գիանք, Հարճլանք,
Գաձանք, Մոխանք, Վակունիք, Փոքր Հարանդ, Սխտիկան, Ռոտաս-
տակ, Բերձոր, Այսոս մինչեւ ի խառնումն Երասխայ ի Կուր գետս:

Բաան եւ եւթներտրոյ՝ Մեծ Հայք են, յերից կալով Կասպկիոյ
եւ Փոքր Հայոց, առ Եփրատ գետով, մերձ Տարօն լեռն, որ բաժա-
նէ զնա ի Միջագետաց: Եւ ի հարաւոյ սահմանի Աղձնեաստանէ եւ
դառնայ առ Աբրպատականէն ընդ Մարս մինչեւ ի ժուռս Երասխայ
եւ կառնէ ծով. իսկ ըստ հարաւոյ առ երի կալով Ադուանից եւ Վրաց
եւ կառնէ ծով. իսկ ըստ հարաւոյ առ երի կալով Ադուանից եւ Վրաց
եւ Կասբից

Վասպուրական, Սիւնիք, Արցախ, Փայտակարան, Ուտիացիք, Գուգարք, Տայք, Այրարատ: Արդ կամիմ զդուստ մանրամասնաբար պատմել, թէ եւ ոտիւք ինչ աշխատիցեմ ի գիր եւ ի քարտէզ:

1685 Արդ ունին բարձր Հայք դաւառս բնն. Դարանաղի, Առիւ,// 5 Մզուր, Եկեղեաց, Մանանաղի, Դերջան, Սպեր, Շատախմբ, Կաբին: Եւ քան անուանդ, որդաբեր բարձր քան զամենայն երկիր, քանզի ի չորս կողմանս տձակ է: Գետս ունի, եւ լերանս, եւ երկս բազումս, եւ հաւս պիտանիս, եւ ջերմուկս, եւ ագս, եւ գայլ պարբառութիւնս, եւ քաղաք գիարնոյն:

10 Երկրորդ՝ Զորրորդ Հայք լերկ կայ Բաբձր Հայոց. եւ դաւառք են ի նմա ութ. Խորձեան, Հաշտեանք, Պաղնատուն, Բաղահովիան, Ծոփք, Անձիթիք, Գարիք, Գեղիք: Եւ ունի Զորրորդ Հայք բերդս, եւ գետս, եւ լերինս եւ բերդիկ: Ունի եւ երիս, եւ հաւս, եւ ձկունս, եւ ի գաղանաց՝ գաւեժ:

15 Երրորդ՝ Աղձնիս առ Տիգրիս գետով կայ. եւ դաւառս ունի տասն. ԶԱրդն, գՆերկերտ, գԲեզ, գԳեղթիկ, գՏաւսիկ, Սադաս, Վանայ ձոր, գԱնբհելիս, գԳղկղ, գԱարնոյ ձոր, գԱանասունս: Ունի նաեւ եւ երիսք, տուսկ եւ զղձոր, եւ հաւ՝ զդեղհուկ:

Զորրորդ՝ Տարօնեւրան յերից կայ Զորրորդ Հայոց: Դաւառք են 20 նորա վեցտասան. Խոյք, Ասպահունիք, Տաքաւն, Արշամունիք, Մարգաղէ, Դասատարաւորք, Մուրատճառուկ, Դալաս, Հաբք, Վարաժնունիք, Բզնունիք, Երնեաբք, Ազիովիտ, Ապահունիք, Կոբ, Խոբխորունիք: Ունի եւ ծովն Բզնունեաց երկայն հարեւր մղոն եւ ի լայն՝ վեթ-179a սուն: Ունի եւ գպղպեն, եւ մեղր եւ մա// չիամիրկ եւ պիտակ, եւ եր- 25 կաթ, եւ նաեւ:

Հինգերորդ՝ Մոկք յերից կալով Աղձնեաց, յամուրս Տաբոս լերինն: Դաւառս ունի ինն, գԽշայր, գԽշոց մեծ եւ գԽշոց դաւառ, գԱռաւնից ձոր, գՄիջա, գԱռանձնակ Մոկս, գԱրքայից դաւառ, գԱղպատակաց ոլիս, գՋերմաձոր: Եւ ունի ի մրգոց արշակ եւ մանրա- 30 գար եւ ի գապանաց՝ ինձ գեղեցկատեսուց, եւ հաւուց՝ կաքաւս:

Վեցերորդ՝ Կորճկք յերից կայ Մոկաց առ Ասորեստանիս: Եւ դաւառս ունի մեւսասան. գԿորդիս, գԿորդիս վերին, գԿորդիս միջին, գԿորդիս ներքին, գԱյոտեան, գՄոքդոնս, գԲոխրոնս, գԲարատուենս, գՁահուկ, գՓոքր Աղբակ: Եւ ունի գաւիկ. եւ ի պաղոց՝ շահգա- 35 նակ:

Եւթներորդ՝ Պարսկահայք յերից կայ Կորճկից առ Ատրպատականիս: Ունի դաւառս բնն, որ է. Կուռճան, Մարգ, Թրատիս, Ազուերս, Բռնաս, Տարերս, Զարեհաւան, Զարեւանդ, Հեր: Եւ ունի երկս, ցեղ եւ ագծեամն:

40 Ութներորդ՝ Վասպուրական ի մոկից է Պարսկահայոց եւ առ երկի կորճկից: Դաւառք նորա երեսուն եւ հինգ. եւ ոտգոքիկ- Ռշտուա-

1 Ə Արձախ
5 Ə Գղիք փոխ Սպեր
17 Ə Նոյնգ փոխ Նաեւ
20 Ə Տաբոն
21 Ə Մարկաստաւ
28 Ə Մոգս
32 գԿորդիս... գԿորդիս ներքին չիմ
40 Կասբրական փոխ Վասպուրական

նիք, Տոսբ, Բոդունիք, Արճիշահովիտ, Բոսիզովիտ, Կուզանովիտ, Դառնի, Աբբերանիք, Բժունիք, Աննեոյա, Անձաւացիք, Տրապատուսնիք, Երուանդունիք, Մարզաստան, Արտազ, Ախէ, Աղբակ մեծ, Անձախէ ձոր, Թոռնաւան, Ճուաշ, Առուտ, Կրճունիք, Մենծունիք, Պալունիք, Դուխան, Աղանուտա, Պատապարունիք, Արտաշեան, Արտաւանեան, Բաքեան, // Գարնիման, Դպրիկան, Տադրեան, Վաթաժնունիք, Գողմն դիւնեւէա, Նախճաւան, յորում քաղաքն, եւ Մարանդն:

Իննևերորդ՝ Սիւնիք յերկիր կայ Այրարատոյ ի մէջ երասխայ եւ Արցախայ: Ունի գաւառս երկոտասան. Երնջակ, Ճահուկ, Վայոց ձոր, Գեղարքունիք, եւ Ծովն, Սոսք, Աղահեճ, Ծղունիք, Խաչանդ, Բաղք, Զորք, Արեւիք, Կաւառական: Լինի ի նմա՝ մուրտ, եւ գևրեր, եւ նուռն, եւ արմաւիք:

Տասերորդ՝ Արցախ յերկիր կայ Սիւնեաց: Եւ գաւառք են նորա երկոտասան, զոր Աղուանքն ունին. Մեծ Խաչանդ, Վակունիք, Բերձոր, Մեծքանք, Մեծկունք, Հարջլանք, Մուխանք, Պիանք, Պածկանք, Սիսականք, Բուանիք, Բուսախիտանէս, Կողբ, յորում լինի քարափունկ:

Մեւտասաներորդ՝ Փայտակարան յերկիր կայ Ուտիոյ առ երասխաւ: Ունի գաւառս երկոտասան. Հրաքոտպերժ, Վարդանակերտ, Եւճնփորակեան Բաղինն, Բոռնկան, Ռոմնիքաղա, Բաղանուտ, Բուռոսպիճան, Հանկ, Աքիլ, Բազաւան, Սպանդարանպերժ, Որմզդպերժ, Աւստ: Լինի ի նմա լամբակ անբաւ և գարի ինքնաբոյս:

Երեքտասաներորդ՝ Ուտիք է, մտից կայ Երասխայ, ի մէջ Արցախայ եւ Կուր գնացոյ: Եւ ունի գաւառս, զոր Աղուանք ունին, եւ Բն. Արտաւսվա, Տոմ, Ռուտպտակ, Աղաւե, Տուչկատակ, Գարզմուն, Շակաչէն, Ուտի առանձնակ, յորում Պարտաւ քաղաք: Եւ լինի // ի նմա ձիթենի, վարանդենի եւ յասմիկ եւ հասոց կատակ:

Չորեքտասաներորդ՝ Գուգարք ի մտից կայ Ուտիոյ: Եւ ունի գաւառս, զոր Վիրքն ունին, լինի՝ զՁորափորը զԿողբափոր, Ծորափոր, Տաչիր, Թռնդք, Կանգարքս, Արտահանք, Զաւախք, Կաղարթք: Լինի ի նմա անասուն, եւ հաճար ծառ, եւ սրովիլ եւ տատասիլ:

Հնգետասաներորդ՝ Տայք առ եղերբ կայ ամրոցաւք եւ բերդաւք կառուցեալ: Եւ ունի գաւառս ութ. զԿողբնբաց փոր, զՊարտիզաց փոր, զձմահատաս, զբոխա, զՈքաղէ, զԱղուդրաձոր, զԱրտեաց փոր: Եւ լինի Տայս՝ քուղ, եւ նուռն, ազատոր, սրովիլ պտղախունկ նուշ:

Վեցետասաներորդ՝ Այրարատ ի մէջ կայ յառաջասացեալ աշխարհացդ: Եւ գաւառք են ի նմա քսան. Բասեան, Դաբեղեանք, Աբեղեանք, Հաւունիք, Արշարունիք, Բաղրեւանդ, Ծաղկոտն, Ճակառք, Մահեացոտն, Կողբայաւտ, Աշոց, Նիպ, Կոտայք, Մաղազ, Վարժնունիք, Ոստանն, Դունայ քաղաքն, Արածոյ կողմն մինչեւ զդաշտն Շա-

---

7 Ə մարմանտոք փոխ Մարանդ
8 Ə Սունիք
9 Ə ձահուկ
12 Ə ամրոցաւքիք
19 Ə «Գաւառս» բառից հետո լրդմիջարկված է «զոր այժմ Աղբյուրասահանն ունի»,
23 Ə Մի գլուխ սխալմամբ ավել է նշանակել, Թողնում ենք նույնությամբ
29 Ə գնոզ, գիրքոց փոր
35 Ə նշուշ փոխ նուշ

բուբ: Եւ ունի Ալբարատ լերունս, գետս, եւ դաշտս պիտանիս, եւ
լերս, եւ հաւս եւ գամենայն պարարտութիւն, եւ գծովակն Գայլատու,
եւ որդն սիգաբերեալ արմատոց առ ի զարդ կարմրութեանն դունոյ. Եւ
1806 գմայր ևկեղեցեացն ի Քաղաւորաբնակ եւ յարքայանիստ // Վաղարշապատ
5 քաղաքի:

Ահա կատարեցաւ ամենայն Հայք:

Բասեն եւ ուխերորդ՝ Ասորիք յելից կալով իւրեանց ծովուն եւ
հիւսիսոյ Հրէաստանին: Եւ ունի Ասորիք փոքր աշխարհս լինն, լերունս-
անուանիս՝ գԼիբանան եւ գԿարմէղոս, եւ գետս հզաւրս գԾորդանան,
եւ քաղաքս բազումս, եւ մայրաքաղաք գԱնտիոք, եւ գԴամասկոս,
10 գկն(ս)րիմ եւ գԱմասիա. եւ դգրունս երկունս, եւ վայրս ընդարձակս,
եւ պիտանիս եւ բերրիս:

Բասեն եւ իննևերորդ՝ Հրէաստան է, յելից կալով Փիւնիկական պա-
դաշտին: Եւ սահմանի Եգիպտոսիս եւ ազատաժ Արաբիոյ: Եւ ունի
Հրէաստան աշխարհս երիս՝ գՊաղեստիա, գՄամաբիա եւ գԻդումէան,
15 եւ լինն երիս՝ գՏիբերիադայ եւ գՄեռեալ ծովն, եւ գետ գԾորդանան:
Ունի եւ քաղաքս բազումս, եւ մայրաքաղաք զսուրբն Երուսաղէմ: Եւ
է Հրէաստան քաղցրաբեր, պաղատից եւ անուշահոտ, որ բղխէ գկաթն
եւ գմեղր:

Երեսներորդ՝ Ազատաժ Արաբիա, յելից կալով Եգիպտոսի եւ արեւ-
20 մտից ճղի կարմիր ծովուն՝ ընդ որ անցն Իսրայէլ, յերի կալով Ասոր-
ւոց եւ Հրէաստանի: Եւ ունի Ազատաժ Արաբիա փոքր աշխարհս եր-
կու՝ գՏաճկաստան եւ գՓառանխես՝ յորում զոունն Աբրահամու
բաշխեցեն լինել. եւ այլ եւս երիս աշխարհս. եւ գետս՝ եւ ոչ մի:

Երեսն եւ մեներորդ՝ Մինշագետք են, յելից կալով Ասորւոց առ Եփ-
181a րատ գետով, եւ ի մտից Ասորեստանիս առ Դիկղաթ գետով; յերի // կա-
լով մեծ Հայոց: Ունի լերունս երկու, եւ գետս երկու, եւ քաղաքս
բազումս, յորոց մինն է Ուռհա՝ ուր անձեռագործ պատկերն է Փրկչին:

Երեսն եւ երկուերորդ՝ Բաբելացիք, յերի կալով Մինշագետաց առ
Դիկղաթաւ մինչեւ ցՊարսկային ծոցն. եւ ունի աշխարհս չորս՝ զԱկո-
30 դա, զԲասրա, զԲաբելոն, զՏիսբոն: Եւ գետ ունի գեփրատայ վտակսն
եւ գԴիկղաթայ: Եւ ունի այլ քաղաքս եւ գաւառս բազումս: Եւ լինի
ի սահմանս աշտարիկ ակն սարդիոն եւ ոսկէքար: Եւ է Բասրա սահ-
նային վաճառաւոր, եւ ևկը նաւաց Հնդկաց եւ սահմանն կողմանց արե-
ւելից:

35 Երեսն եւ երեքերորդ՝ Անապատ Արաբիա է, յերի կալով Միջա-
գետաց ըստ հիւսիսոյ, յելից կալով Ազատաժ Արաբիոյ եւ ի մտից
Յուժաստանի: Եւ ունի Անապատ Արաբիա ազգս լինն, բայց լեառն եւ
գետ՝ ոչ մի:

Երեսուն եւ չորրորդ՝ Երջանիկն Արաբիա է յերի կալով ազատաժ
40 Արաբիոյ մասնէ ընդ միջ խորշից կարմիր ծովուն որպէս ցամաք կըղ-
զի: Եւ է աշխարհս սահմանաբեր: Եւ ունի յինքեան ազգագաւառս յի-
սուն եւ չորիս, լերունս ոսան, գետս չորս, աղբիւր մի, եւ կղզիս բա-

---

10 W կըրիմ
10 W Սամարիփոխս գԱմասիա
22 Ə գՓառանխես, [յորում Մարա]
21—22 Ə երկու չիմ
23 Ə լինելչիմ

պումա: Եւ է աշխարհս ամենաբերս եւ ամենապիտուս, է որ իւրմէ աշխարհէն, եւ է որ իւմեանց եկելոցն՝ ի ճենայ եւ ի Հնդկաց: Գոռանի
181b անդ ոսկի եւ արուեստ պատուական//անդ, խունկք բազումք եւ եղջ անուշոնեք, եւ վայրք անուտուք· անտի էր եւ ի տիկինն Սարայ: Եւ բնակիչք աշխարհին ամանք քաջասահաւք են, եւ ամանք սիկսահաւք, ամանք
5 սպիտակահաւք, տխրադոյն քան զմեզ: Եւ եղք անոյշ ի նմա, եւ ծագիկք հնդեւտասան՝ հալի, ջաւրի, մաղձոպ, խալակ, քնդխաչհունա, խոյտրա, բուխտակ, նարդին, բալտասան, բան, յատմիկ, նարդան, վարդ, մանուշակ, միզադոչ:

10 Երեսն եւ հինգերորդ՝ Մարք են, որ կոչին Ռուսաի Քաղկոս, յելից կալով Հայոց եւ յերի կատրից Ծովուն: Ունի աշխարհս զայսոսիկ. զԱրպատական, զՌէ, զԴեղան, զՄոկան, զԴիղուան, զԱհմադան, զԴարբաւան, զՏատպարատան, զԱմեղ, զՌուան: Ունի լերունս եւ դաւտ, եւ զծովակն, որ կոչի Կասպուտան: Ունի քաղաքս բազումս, յորոց
15 մինն է Գանձակ Շահաստան:

Երեսն եւ վեցերորդ՝ Աբուաստան, որ կոչի Աստբեստան, այսինքն Մուծդ, յելից կալով Միջագետաց առ երի Հայոց: Ունի լերունս, եւ դաւտ, եւ քաղաք դնինուէ:

Երեսն եւ եւթներորդ՝ Եղիմացիք են, որ կոչին Ռուսաի Խորասան, յելից կալով Դիկաթայ եւ ի մուկ՝ Պարսից: Եւ ունին Եղիմացիք
20 աշխարհս զայսոսիկ. զՈւժաստան, զՄայ, զՄասպան, զԻրհրանքաւսան, զԲաշկար, զՊարմական, զԵրանշահան, զԲարխաւատ, զՆուստրաշերահան, զՄարձինահէն: Ունի դաւտ երիս եւ քաղաքս հինգ՝ յորոց մին է Գունդիշապուհ, յորում դպրեւ շարժարն
182a զրծեն: Ունի//կղզիս երկու հանդէպ իւր ի պարսկային ծովին:

Երեսն եւ ութներորդ՝ Պարսք են, որ կոչին Ռուսաի Նեմնոս, յելից կալով Ասժաստանի եւ առ երի կալով Մարաց: Ունի չինքան զբաղք աշխարհս՝ զՊարս, զԱպահան, զԱրչուն, զՀակար, զԱնահիտ, զԿրման, զՏուրան, զՄակուրան, զՄոկ, զՄրան, զԱզերպէյճան, զԱրան, զԴեբ, զՄեչխիսիկ, զՄազուն, զԱնճխրուտան, զՊահդն, զԿերուհա: Ունի եւ դաւտ, եւ կղզիս եւ քաղաքս բազումս, յորոց մին է Ռէյիր ի Պարսան քաղաք՝ յորում ամենի մարդաբերն երանի եւ գոհաբք՝ մարդարիտ այս է· դրակ, վեցդանկեան արծէ ՀՈ դամամ Ը միչխոյ, Դ դանգան, Դ պարմուչքա պարուչխա, հատիա դրամ, հաշիա դրամ, գահա դրամ:

Երեսն եւ իններորդ՝ Աբիք են, որ կոչին Ռուսաի Խորասան, յելից կալով Մարաց եւ Պարսից մինչեւ զՀնդկիս եւ յերի Վրկանի Ծովուն: Եւ աշխարհք են Աբեաց այսոքիկ· Կոմչ, Վրական, Ապրչահր, Մրաւ, Մրուզոտ, Հրեւ, Կանդչան, Նասիմանակ, Բժին, Մազկան, Գողիկան, Աղբահրամ, Հրում Ջամպ, Գերդնահճեր, Դղինուտակ, Վարջան, Ման, Շանջակասան, Բահլ, որ են Պարթեւք, Դոմխատ, Վարճմանակ, 182a Շերեմբամիկան, Դոդրան: Եւ ունի Աբիք լերունս եւ դաւտ//եւ կղզիս բազումս: Լինի հրաւ եւ մուչկ, թէպէտ եւ ոչ ապրեւ: Եւ կղզի մի՝ հանդէպ Աբեաց ի Հնդկաց ծովու, յորում խղուկք լինի երեքթեղան,

---

6 Ə և ծագիկք չիմ 8 Ə նասրան փոխ նարդան

եւ պատերազմին ընդ խորդոց հաւուց՝ վասն ճարակելոյ նոցա զանազան տատասին Հնդկաց:

Քառասներորդ՝ Սկիւթիա է, որ են նախապատարք, այսինքն՝ Թուրք. որք սկսանին յԱրել դէսից մինչեւ ցեմաւոն լեառն բարձր, եւ անտի եւս՝ ձիւն մինչեւ ցձնոտ: Եւ եմաւոն լեառն բարձր եւ երկայն քան զամենայն լերսունս: Եւ ունի Սկիւթիա ազգս քառասուն եւ երեք. Ծուղիկք, Թուխարիկք, Հնիթագք, եւ այլ խուժադուժ անուանք: Եւ ունի Սկիւթիա լերսունս եւ դէսս բազումս եւ հզաւրս, եւ զղաշտս անապատս եւ ջերմ երկիր եւ անջուր. ի նմա՝ հրազգի գաշան: Եւ են Սագիք հարուստ արուեստաւորք, վաճառականք, որ բնակեալ են ի մէջ Թուրքաստանի եւ Արեւից աշխարհին:

Քառասուն եւ մեկերորդ՝ Հնդկաստան յելից կալով Արեւից աշխարհն եւ յերի Սկիւթացւոց. եւ են հնդիկք բաժանեալ յերկուս աշխարհս, զոր բաժանէ Հոն գետ. եւ ունի ազեւմատկողմն ազգս քսան եւ ութն, իսկ արեւելակողմն ազգս եւթանասուն եւ երկու: Ամենք ի նոցանէ մարդակերք են, այլք ազեւորք եւ այլք կարճահասակք, տափակաքթիք, լայներեսք, ապիտակք. եւ ոմանք մերկիմասասակք, որք զորձս անիրաւս ոչ զործեն եւ զմարմինս կենդանեաց ոչ// 383a ուտեն: Ունի Հնդիկք լերսունս, եւ դէսս եւ կղզիս բազումս: Լինի ի Հնդիկս երկ յամօրրանման սրեղջերք, որ ապանակ զնուիւծ. եւ հրեշ երկ, եւ այլ զազան նման առիւծոյ, բայց կնճիթն սուր եւ երկայն. եւ ընձուղաք, եւ կոբեանք, եւ պապիկայք, եւ աքաղաղք վհատամաւրուք, եւ վիղք, եւ վագերք, եւ վիշապք, մեծ մրջմունք, եւ մկունք, բիշմիկայ, եւ կորկորդիլ զազան, եւ մեղջերք, որ է մեծ պազան, եւ ի վերայ ոդինն ճագք, եւ գիղի լեղուաւն ապանակ. եւ պահուճ հաւ, եւ մուղի երկ, եւ էշ եղջերաւոր: Լինի անդ ոսկի եւ արծաթ, եւ պղինձ, եւ անագ, եւ մարգարէտ եւ ակն ամենազոհար: Լինի պղպէղ, լինի եւ մըրուխ, եւ ամենայն բոյոմաճաչ, հալուէչ, փաղանդամուշկ, քափուր, ճանդան, նաչերտակ, հիւրերտակ, զոգիրտակ, գոյերտակ, կասիմոն, զովատակ, չահաւարմար, զարիչակ, եւ բազում դեղք բժշկականք: Եւ զոհաբք հալուէչից երեք՝ ընդրսանարազ՝ ժեռաւոր է ծադիսն, լիսրն ամէ զահեկան հինգ, ծամոխ, մարթան նման է, ծանր, արժէ լիսրն չորս զահեկան, քաղաքիճնիկ, թեթեւ, արժէ լիսրն երեք զահեկան:

Քառասուն եւ երկերորդ՝ Տապռոբանիա է, մեծ կղզի, քան զամենայն կղզիս, հազար հարիւր մղոն յերկայնն, հինգ հարիւր տասն 383b լայնն երի կալով: Եւ ունի կղզիս այս չուրջ զիւրեւ մանուկս հազար երեք հարիւր եւթանասուն եւ ութ: Ունի լերսունս, եւ դէսս, եւ ազգս երիստասան: Լինի ի սմա ոսկի, եւ արծաթ, եւ ակունս պատուականս եւ բոյոմաճաչ: Լինի անդ եւ փիղք, եւ ջաղերք: Եւ արք աշխարհին վարսիւք կնոջ պսակին զդէմս իւրեանց:


---

3 Ե Սկիւթիա
4 Ե Յաղի փոխ յԱրել
4 Ե ցՄատն փոխ ցեմաւոն
8 Ե այլ չիմ
7 Ե ձիւն չիմ
14 Ե ի հոն
14 Ե ունի չիմ
20 Ե Հանդիկք
24 Ե կրկորդ—փոխ կորկորդիլ
40 Ե լինի անդ և չիմ

Քառասուն եւ երեքերորդ՝ ձննաստան է, յորից կալով Սիւնեաց մինչեւ ցանծանաւաթ երկիրն: Եւ է ձննաստան ընդարձակ գաւառ աստծեալ: Եւ են ի նմա ոգիս քան եւ լինն, յորոց մինն մարդակերք են: Եւ ունին ձենք լերուն եւ վհատ բազում: Լինի ի ձննայ աչխարհին՝ զարաճնիկ, եւ հուխրոտկ, եւ բոխճնիկ, եւ կասմոն, եւ սուկոն: Ունի եւ հրէշ, եւ մուշկ, եւ սիրամարդ չատ, քրքում անբաւ: Լինի անդ ազգիշատ չատ եւ ագնիւ, վտան սրոյ եւ բնակիչքն սարսափատուր կերպատգործք, հարատաք, ընչեղք, որոց արքայն կոչի ձեմբակուր, որ նստի ի քաղաքն Սիսիայ առ անծանաւաթ երկրաւ:

Քառասուն եւ չորսերորդ՝ Սիւնեացւոց, առ երկ կալով ձննայ մինչեւ ցանծանաւաթ երկիր, յորում բնակեալ են ազգք հինք: Ունի եւ լերանս եւ գետս բազումս: Բայց անտի ցանծանաւաթ երկիրն, որ ինչ պատմին՝ անհաւատալիք են, գազանք անծանաւաթք, մարդակերք, կիանճնեալք, երկկոմիք, վիցգլուխիք, փոկասունք, վիշապատուանք, կիսահաւք, կիսամարդք, անդլուխք:

Ահա կատարեցան ամենայն տիեզերք եւ պատմութիւնք խաւսից եւ ահա կամիմ դալ ընդ համառաւատ մտնդեխագոյ առնաչափութեամբ աւժանդակարար ասպարիզատիմ վկաւորութեամբ:



XXIV. ՇԻՐԱԿԱՑՈՒ „ՄՂՈՆԱՉԱՓՔ“-Ը ԵՎ „ՕԴԱՉԱՓՔ“-Ը

Շիրակացու «Մղոնաչափք»-ի նկարա տեքստը մենք վերցրել ենք ՀՍՄՌ Մատենադարանի № 2679 ձեռագրից (թ. 208ա), որը հրատարակել է ակադ. Մանանդյանն իր «Աստղագիտ. աուղծվածի լուծումը» աշխատության մեջ: «Մղոնաչափք»-ը, ինչպես հայտնի է, «Աշխարհացույց»-ի չարաբանական մասն է: Ինչ վերաբերում է Շիրակացու «Օդաչափք»-ին, սրա նա մենք վերցրել ենք ՀՍՄՌ Մատեն. № 582 ձեռագրից: Այդ տեքստը հրատարակել ենք մեր «Աստղագիտ. վերաբերվող «Աշխարհացույց»-ի հնդկական հարցի շուրջը» աշխատության մեջ:

ՎԱՍՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄՂՈՆԱՉԱՓԻՑ

Առպարէզ ՃՀ քայլ է· քայլն Զ ոտն է· ոտն ԹԶ մատն է: Մղոնն է առպարէզ է· բուռ պարսից առպարէզն ՃԽԳ քայլ է: Մղոնն Ի քայլ է· հրապատն Գ մղոն:

Ի Դունար է Կաբրին Մ մղոն· է Կարնա է Փոռապուրա Ճ· անաւ է Կոզոնիա Ղ· անաւ է Նիկիա Ճ· անաւ է Սմառիա Զ· անաւ է Գանգրա ՃԵ· անաւ է Անդրիա Զ· անաւ է Կոռոսանդնուպոլիս ՃԻ· անաւ է Հռոմի Ղ·

Ի Դունար է Խալի ՃՀ· անաւ է Բզմոմար Զ· անաւ է Ներսա ՃԶ· անաւ է Եփրատ գետ Խ· անաւ է Դամասկոս ՃԻ· անաւ է Թաւրեզ լեան Ղ· անաւ է Երուսաղէմ Ճ:

Ի Դունար է Բերդկունս Կ· անաւ է Պարտաւ ՃԿ· անաւ է Ծովն Կասպից՝ Ղ:

Ի Դունար է Նախճեւան Հ· անաւ է Գանձակ Շահաստան ՃԻ· անաւ է Տփղիս ՃՀ· անաւ է Ակոզա Հ· անաւ է Բարա ՃԽ· անաւ է Ծովն Պարսկահայոց Ի:

Ի Գանձակէ է Նինուէ ՃԻ· անաւ է Մծբին ՃԻ· անաւ է Ներսա ՃԹ:

Ի Նախճեւանէ է Արտեւաս Մ· անաւ է Վաղդանակերտ Հ· անաւ է Փարտակարան Կ· անաւ է Ծովն Կասպից Կ:

Ի Դունար է Կողբ Ծ· անաւ է Կոստանդնեան ՃԻ· անաւ է Տփղիս ՃԽ· անաւ է Հունարակերտ Հ· անաւ է Պարտաւ Ճ:

Ճերուսաղէմէ է Անկիսանդր քաղաք Շ· անաւ է Պենտապոլիս Ռ· անաւ է Տրիպոլիս ՃԹ· անաւ է Սիրիկէ ՌՇ· անաւ է Սեփտէ Զ· անաւ է Յովկիանոս Ս:

16 Բնագրում—«Ննուէ»
22 Բնագրում—«Տոհպատրիս»

22 Բնագրում—Միխտէ փոխ Սեփտէ

Ի հարաւային ծայրէն մինչև ցհիւսիսային չըջանակն՝ ասպարէզք չիսուն և ութ բեւր: Ի սրտէ երկրէ մինչև յորում բնակեմք՝ ասպարէզք երիւս բեւր, կէս, երրեակ, հնգեակ: Ի մերմէ բնակութենէս մինչև դունդն լուսնի՝ ասպարէզք [1]քննասուն և երեք բեւր, կէս, տասնեակ: Մինչև ցդունդն վայրածուէին՝ ասպարէզք հարիւր ութսուն և չորս բեւր, երրեակ, հնգետասնեակ: Մինչև ցդունդն լուսաբերին՝ ասպարէզք չորս հարիւր եւթանասուն և հինգ բեւր, կէս, երրեակ, հնգեակ: Մինչև ցդունդն արեգական՝ <ասպարէզք>երեք հազար, [2]որ հարիւր և երեք բեւր, տասնեակ: Մինչև ցդունդն հրատին՝ ասպարէզք երեք հազար վեց հարիւր տասն և երիւս բեւր: Մինչև ցդունդն լուսնթագին՝ ասպարէզք հինգ հազար, երիւս հարիւր և չորս բեւր: Մինչև ցդունդն որ<և>աւիսն՝ ասպարէզք տասն հազար եւթն հարիւր, վաթսուն և ութ բեւր, կէս, երրեակ: Մինչև ցուխտերտզ դունդն՝ ասպարէզք չիսուն և վեց հազար, [3]որ հարիւր քառասուն և վեց բեւր, և երրեակ:Թէ հաւասայ ոք վկայասուանել:

Այս քիչ մինչև ընդայ գրատրական, վերա//ծանելոյ ի Պտղոմեոսէ նկրտրծութենէն, և վերդնդեալ ի Պտղոմեա//կան դրամատիկոս տաւղէն, և ի հազմաձկալ պատմութենէն Պապայ Ալեքսանդրացւոյ:

Ողջ լեր:

---

2 Ə լերդաշոս փոխ դաշոս
3 Ə եւ են ի նմա չիմ
9 Ə որ փոխ յորում
20 Ə հարաւանն

11 Ə ունի չիմ
16 Ə ամենայն չիմ
16 Ə և պատմութենք խաւսիք չիմ

XXV. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆԱՆԻԱՅԻ ՇԻՐԱԿԱՑՒՈՑ ՀԱՅԱՐՈՊԻ

Շերթակացու Պատմութեան հնագոյն մխայն մի ձեռագիր է հասել մեզ— այդ ՀՄՄՄ Մատենադարանի № 2679 (102) ձեռագիրն է, որն ընդօրինակ-ված է 971 թվին: Այդ ձեռագրից է արտագրված Վենետիկի Մխիթա-րյանների ձեռագիրը, որից կատարված է և հրատարակութիւնը: Նոյն ձեռագրից արտագրված մի ձեռագիր ևս ունենք մենք Մատենադարանում: Շերթակացու ներկա Պատմութիւնը մենք հրատարակում ենք անմիջապէս № 2679 մայր ձեռագրից: Չենք օգտագործել վենետիկցիների հրատարակու-թիւնը և մեր ունեցած երկրորդ ձեռագիրը, որովհետև նրանց տարբերու-թիւնը բնագրից կատարված չեղումները են միայն և ոչինչ չեն ավելացնում տեքստի վրա: Շերթակացու ժամանակագրութեան տեքստը բերում ենք ձեռագրից ստանց վերծանութեան:

Մովսէսի Խորենացվոյ եւ Անդրեասի: Սկսամ նախասացիդ. սա կե-ցեալ ամս երկերիւր եւ երեսուն՝ ծնանի դՍԼՔ: Եւ եկեաց ամս եւթն հարեւր, մինչեւ ի հարեւր երեսուն եւ հինգ ամն Մաղաղայելի: // Սէթ կեցեալ ամս երկերիւր եւ հինգ՝ ծնանի զԵնոսն. եւ եկեաց ամս Չ: մինչեւ ի քսան ամն Ենովքայ: Սորա երկուքն յարձանագրութիւնսն՝ ընդդէմ երկուց հանդերձելոցն, որպէս ասէ Յովսեպոս, թեպէտ և ուրն անյայտ է:

Ենովս, որ ասացաւ կոչել զԱստուած: Եւ ընդՀ[16] ս արդեւք այս, և կամ ուրո՞յ պատճառանաց նախն է ասացեալ կոչելոյն զԱստուած, կամ ո՞րպէս կոչէլն իմանի: Քանզի Սկսամ հաւատա-թեամբ աստուածասուեղծն. եւ սա է բերանոյ Աստուծոյ առեալ ասէ պատուէր. այլ եւ յանցուցեալ եւ ի թաւսեան երեալ, զի՛ւր են յԱստուծոյ՝ եւ ոչ յայլ ումեքէ հարցանի: Սակայն եւ զվճիռ վարձին ի նմին բերանոյ լսէ. իսկ յետոյ եւ Արկղ մերձաւոր եւ ծանուեմ Աս-տուծոյ լեալ՝ պատարագս մատուցանէ, և ընկալեալ լինի:

Արդ՝ ասցա այսպէս ընդունելութեան եւ ծանուեմութեան Աստու-ծոյ լինել, Հ[16]ը աղաղակ առաջին սա ասի կոչել զԱստուած, եւ այս յետոյ: Այլ զայդոսն վասն սորա ի տեսութենանց՝ ի հրաւիրեալսն մերը յետոյ ասելիացուք տեղւոյն: Իսկ որ առձեռնարարատան է, ասացուք: Քանզի ի պատուիրանապանցութեան զեալ առաջինն ի մարգկանէ՝ ի դրախտէն եւ յԱստուծոյ՝ չարութեան աղաղակ, որպէս ասացեալ է, զասնի արձակամանեալ: Զկնի եւ բնաւանեցոյնն Աստուծոյ՝ յորդւոցն

16 ընդՀութեան

Ազամայ՝ ի հարաւային մասն լերինն սպանանի յերկրաւրէ։ Ցետ որոյ՝ ոչ բանիւ ինչ առաւուածայնոյ, եւ ոչ յայտնութեանն ինչ իրիք եղելոյ, ի տաբակուսանս եւ յանկուսութեան ազգ մարդկան համարեալ լինի. այլ եւ ինքնահաճոյ սրտարեւ գործս. յորոց միջի սա քաջագոյնս եղեալ՝
5 ուղղութեամբ հանդիպեցաւ՝ կոչէ զԱստուած։ Իսկ կոչելոյ կրկնակի իմանել-
29 a կամ անուանել սրտիւ զնոյա գործոցելոյ, կամ յայտնակատարութիւն կարգալ։
29 a // Արդ՝ անուանել սրտիւ գործոցելոյ՝ ոչ է ի գէպ. զի ոչ բազմութեան ամաց ընդ մէջ, որ ի մոռացումն նոցա գԱստուածդ անէր անունն, եւ կամ գնոյն ինքն սրոյ անուանն. եւ ոչ գարձեալ մահու եւ
10 թողման գնա եւս յԱստուծոյ առնդնելն հասեալ է։ Ապա ուրեմն յայտնակատարութիւն կոչէ սա զԱստուած։

Ժա կնգեալ ամս ՃՂ., ծնանի զկայինան։ Եւ ևիկաց ամս ՃԺԵ, մինչեւ ի ԾԳ ամն Մաթուսաղային։

Կայինան կնգեալ ամս ՃՀ, ծնանի զՄալելէլ. եւ ևիկաց ամս
15 ՃՁ, մինչեւ ՃԼ ամն Դամեքայ։

Մալալէլ կնգեալ ամս ՃԿԵ, ծնանի զՅարետ. եւ ևիկաց ամս ՃԼ, մինչեւ ՆՐ ամն Նոյի։

Յարետ կնգեալ ամս ՃԿՒ, ծնանի զԵնովք. եւ ևիկաց ամս Պ, մինչեւ ՄՉ ամն Նոյի։

20 Ենովք կնգեալ ամս ՃԿՆ, ծնանի զՄաթուսաղային։ Եւ ևիկաց ամս Մ մինչեւ ԼՂ ամն Դամեքայ։ Եւ հաճոյ եղեալ Աստուծոյ վասն։ Սա յետ ծնանելոյ զՄաթուսաղային ամաց Մ՝ արժանի եւ հաճոյ գործ առացեալ, որպէս գիրքն որ Հանիւքայն, վասնեալ ի միջոյ ամպարշտաց, գորոյ գպատճառսն յետոյ Հատուսցուք։ Մաթուսաղայ կնգեալ ամս ՃԿԷ, ծնանի զԼամեք. եւ ևիկաց ամս ՊՒ, մինչեւ Ո ամն Նոյի. եւ անդէն խակ
25 ան ջրհեղեղային վտանգանեցաւ։

Դամեք կնգեալ ամս ՃՁԸ, ծնաւ որդի եւ անուանեաց գանուն Նոյ։ Եւ ևիկաց ամս ՇԼԷ, մինչեւ ի ՇՂԵ ամն Նոյի. եւ մնաւ չորեքհարիւրամաւք յաւագ քան զՄաթուսաղայ հայր իւր։

30 Վասն Նոյի։ Եւ ընդէր զսրդեւք գան միայն սրդոյդ անուամբ յորջորջեցաւ, իսկ վասն այսոցն ամենեցուն պարզաբար ասաց՝ թէ ծնան. զորմէ ընդդէմ իմն մարդաբեկանաց հայրն։ Ան, ասէ, հանգուցեալ
29b գնոսա ի գործս եւ ի արամաբինել ձեռաց եւ // յերկրէ՝ գոր անէծ ակր Աստուած. որ եղեւ ոչ հանգիստ, այլ ջնջումն՝ որ ինչ մնացեալ
35 ի վերայ երկրի։ Ինձ թուի, հանգուցանելն՝ գադարեցուցանել. իսկ գադարեցուցանելն գամպարշտութիւնն եւ գչարս՝ առատապէս մարդկան երկրագործոց գարուն երկրագործի։ Քանզի գհեգկարար ասաց, թէ ի գործոց մերոց, որ ի յանարէնութենէ։ Եւ ի արամաբինել ձեռաց՝ որով կատարեմք գպղծութիւնս։ Բայց սրդարեւ հանդիպեցին գոտ
40 այսմ մարդաբեկութեանն ոչ ամենեքեան, այլ կատարելքն յատաքինութեանն ոտիք. յորժամ չարիք՝ իրրեւ հեգեցաւ. ջնջեալք մարդկին, իրր առ Նոյիս մոլեալքն ի չարիս։ Իսկ սրդոյդ անուամբ՝ մնձարեաց գնա Դիր, իրրեւ գյաւետեան եւ գնչաւատուր, եւ գարժանի ժառանգ հայրենականացն ժառանգութեան։

---

27 Կեալ յետ կնգեալ

Անդրէասի: Նոյ եղեալ ամաց հինգ հարեւր՝ ծնաւ երիս որդիս՝ զՍէմ, զՔամ, եւ զՅաբեթ. եւ յետ հարեւր ամի ծննդեանն Սեմայ՝ եկն ջրհեղեղն յամի վեցհարեւրերորդի կենացն Նոյի, եւ կալաւ զերկիր ամ մի: Եւ առնէն յԱդամայ մինչեւ ի ջրհեղեղն տղք ասան, ամք Սիսբ:

Եւ եկեաց Նոյ յետ ջրհեղեղին ամս ՅԾ, մինչեւ Զ ամն Երեքայ: Եւ այս են ծնունդք Սէմայ: Սէմ էր ամաց ՃԲ, ծնաւ զԱրփաքսադ յերկրորդում ՀՋին յետ ջրհեղեղին. եւ եկեաց ամս Ե, մինչեւ ի Ճ եւ ի Ա ամն Փագղեայ:

Արփաքսադ եղեալ ամաց ՃԼԷ՝ ծնանի զԿայինան. եւ եկեաց կայինան ամս ՅԼ. մինչեւ Սաղայ: Սաղայ եղեալ ամաց ՃԼ, ծնաւ զԵբեր. եւ եկեաց ամս ՆԶ, մինչեւ յեւթնհարիւրերորդ ամն Սերուքայ:

Երեք եղեալ ամաց ՃԼԴ, ծնաւ զՓադղեկ. եւ եկեաց առ նմա ամս ՆԼԴ, մինչեւ ԼԸ ամն Նաքորայ: Եւ առաւ առ ինքեան կին դստեր Լաբանայ, որում էր եւ Փադղեկ՝ քոյր Լրպայեցւոց բարբարոսին՝ բաժանումն ընդ նմա: Եւ առնէն ի ջրհեղեղէն մինչեւ զփադղեկ տղք հինգ, ամք ՇՈԵ: Եւ յԱդամայ՝ տղք հնգետասան, ամք ՍՉԿԵ:

// Բաժինք երկրի յերից որդւոցն Նոյի, յետ ջրհեղեղին, Սէմայ, Քամայ, եւ Յաբեթի, եւ բաժինք տղոց նոցա: Եւ առնէն առհասարակ նոցա, Սէմայ անդրանկանն Նոյի՝ ի Պարսից եւ ի Բակտրիոնէ մինչեւ ի Հնդիկս. եւ ձգին մինչեւ յԻրիթկորոն: Եւ Քամայ երկրորդի որդւոցն՝ յԻրիթկորոնէ մինչեւ ի Գադիրոմն, կոյսն հարաւոյ: Եւ Յաբեթի՝ երրորդի որդւոցն՝ ի Մարաց մինչեւ ի Գադիրոմն, կոյսն հիւսիսոյին: Եւ ի Յաբեթի՝ դնան Դիղաթ, որ մեկնի լռով Մարս եւ ընդ Բարեզոմն: Եւ Սէմայ՝ զնան Արաճանի: Եւ Քամայ՝ դնան Գեհոմն, որ կոչի Նեղոս: Եւ որ խառնակեցան լեզուքն յետ ջրհեղեղին՝ էին հեթանոսունն եւ երկու: Եւ որ զաշտարակն շինեին՝ այն տղք եւ նոր լեզուքն ընդ ամենայն երկիրս սփռեցան: Եւ Նեբրովդ սկայ՝ որդի Քուշայ հեթիոպացի՝ որոյայր նոցա երկ առ ի կերակուր բաւականի:

ԵՒ ԱՅՍ ԱՆՈՒԱՆՔ ԵՆ ԵԻԹԱՆԱՍՈՒՆ ԵԻ ԵՐԿՈՒ ԱԶԳԱՅՆ

Որդիք Յաբեթի, երրորդի որդւոցն Նոյի, Գոմեր. եւ ի նմանէ Գոմերք: Մադովգ՝ եւ ի նմանէ կեղտք եւ Գաղատացիք. եւ Մադայ՝ ի նմանէ Մարք: Յաւան՝ եւ ի նմանէ Յոյնք և Հելղենք. Թոբէլ՝ եւ ի նմանէ Թեսպոք. Մոսոք՝ եւ ի նմանէ և զաւրիկացիք. Թիրաս՝ եւ ի նմանէ Թրակացիք: Քիմիմ՝ եւ ի նմանէ Մակեդոնացիք: Եւ որդիք Թիրասայ՝ Աքայեանս, եւ ի նմանէ Մորմաւոք. Եւրիփաթ՝ եւ ի նմանէ Սաւրմատք. եւ Թոդգոմ՝ եւ ի նմանէ Հայք: Եւ որդիք Յաւանայ՝ Եղիսա. եւ ի նմանէ Սիկեղացիք եւ Ամմնացիք: Թոբէլ՝ եւ ի նմանէ վիրք և Տիբրենացիք. Կիմխա՝ ուստի Հոռոմք, եւ Դաոհնացիք, եւ Թոզացիք: Ընդ ամենայն տղք հնգետասան:

Եւ ի սոցանէ էլին մեկնեցան կղզիք հեթանոսաց, որ են // կիպրացիք՝ ի կիտիացւոց, որդիք Յաբեթի: Բայց զարձեալ դառնամք եւ յայնոցիկ՝ որ են ի կողմանս հիւսիսոյ, որ տղոյակից են կիտիացւոցն:

---

18 Փադղեկ
19 Յաբեթի
22—23 Յաբեթի (ամենուրեք այս ձեւով
28 Նեբրովդ

Եւ ազգքն որ են ի Հեղաս աշխարհի՝ յայնցմանէ են, որք յետոյն փոխեցան անդր, որպէս Սահատացիքն, որ բնակեցան յԱքիկնա քաղաքի պատուականացն Յունաց, եւ Թիւրհացիք: Սերմնացիք ելին եւ պանդխտեցան, որ են ի Կաղեմաց արտւոյ Ազէնովբայ. Եւ Կարքեդոնացիք, որ են եկք ի Տիւրոսէ. եւ եթէ այլք եւս լցին, որ ասդիտկս յետոյ փոխեցան. եւ եղաղաս: Բայց ուսանիցէք զշմարտութիւն ասացեալ յաւրինաց եւ ի մարգարէից: Արդ՝ ելին, ի Յաւիթէ, ի խառնակել լեզուացն, ազգք հնդեւրոպան. Եւ ունին ազգս այսոքիկ, որ ելին ի Յաւիթէ, ի Մարաց մինչեւ ի Սպերքան, որ ձգին մինչեւ յՈվկիանոս. եւ հայկն ընդ հիւսիսի:

Մարք, Ադուանք, Լիւինք, Ազանք, Ամազոնք, Ճիղբք, Մասքութք, Հայք, Վիրք, Եգերացիք, Ծատաիք, Դամիրք, Պախազանացիք, Մոսքենիկացիք, Բիւրբէնացիք, Բազիւիկացիք, Մոսխենիկացիք, Կոլքացիք, Մեղանք, Ղենացիք, Սարմատք, Սաւրմատք, Մէոտացիք, Սկիւթացիք, Տաւրացիք, Թրաւկացիք, Բասպանացիք, Իլիւրիկացիք, Մակեդոնացիք, Յոյնք, Ղերացիք, Իտուրացիք, Հոնք, Դաւնացիք, Ցաղիւզացիք, Կաղաբրացիք, Ոմխիկացիք, Ղառեծացիք, որ են Հոռոմք, Տիբենացիք, Գաղատոնք, Կեղտք, Ղեղիտոխանոնք, Կեպտիքերք, Գաղիացիք, Ակիւտանացիք, Իլիւրիանոնք, Բասպանք, Կերտանացիք, Ղեւտոխանացիք, Վակիացիք, Կերնացիք, Բրիտանիկեցիք, որ ի կղզիսն բնակեալ են:

31a // Եւ այս ազգք են՝ որ գիտեն ի սոցանէ դպրութիւն: Իրերացիք, Ղառենացիք՝ որով Հռոմքն վարին, Սպանիացիք, Յոյնք, Մարք, Հայք: Եւ են սահմանք սոցա ի Մարաց՝ ընդ կողմն հիւսիսոյ մինչեւ ի Գաղիրովմ: Եւ ձգին ի Պաւտամիտով դեռոյ մինչեւ ի Մառուսիա, որ է Իլիւմն: Եւ սոյա են ազգք եւ երկիրք նոցա:

